


ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ս. ԲՆՏԻՍՅԱՆ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

**ВОСТОКОВЕДЧЕСКИЙ  
СБОРНИК**

**II**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1964.


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵՆՏՐ

ՈՒՅԵ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՈՒՅԵ-5235

II



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԱ ՀՐԱՏՄՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1964

**Ժողովածուն նվիրված է Մերձավոր և Միջին արևելքի երկրների  
պատմության, տնտեսության և կուլտուրայի, նրանց արտաքին և  
ներքին քաղաքականության ակտուալ պրոբլեմների ուսումնասիրու-  
թյանը:**

**Сборник посвящен изучению ряда актуальных вопросов  
истории, экономики и культуры стран Ближнего и Среднего  
Востока и их внутренней и внешней политики.**

**Խմբագրական կազմի անդամներ**

**Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ, Հ. Մ. ԵԳԱՆՅԱՆ, Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,  
Ե. Գ. ՍԱԴԳՅԱՆ, ՀԱԶԻՑԵ ԶԵԿԻ**

**Редакционная коллегия:**

**О. Г. ИНДЖИКЯН, Г. М. ЕГАНЯН, Н. О. ОГАНЕСЯН,  
Е. К. САРКСЯН, АДЖИЕ ДЖНДИ**

**ԻՐԱՔԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ 1952 ԹՎԱԿԱՆԻ ԵՆՈՒՅԹՆԵՐԸ  
ԵՎ ՆՐԱՆՅ ՏԵՂԸ ԻՐԱՔԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ  
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Արևելքի երկրների հետպատերազմյան շրջանի պատմության ընդհանուր գիծը՝ նրանց պայքարն է գաղութակալության; իմպերիալիզմի կապանքները փշրելու և ինքնուրույն ազգային զարգացման ուղի դուրս գալու համար: Այդ տեսակետից բացառություն չէ նաև Իրաքը, որի ժողովուրդը տվել է մի շարք հերոսամարտեր իր ազգային իղձերն իրականացնելու ճանապարհին: Իրաքի ժողովրդի պայքարն ընթացել է երկու ուղղությամբ. պայքար ներքին բարեփոխումների համար և պայքար օտարերկրյա իմպերիալիզմի դեմ, որը տնտեսական և քաղաքական ստրկացման էր ենթարկել երկիրը: Այդ պայքարի պատմության կարևոր էջերից է Իրաքի աշխատավորների 1952 թվականի, և հատկապես, նոյեմբերյան ելույթները:

Այս հարցը պատմագրության մեջ չի լուսաբանված: Նրա մասին միայն համառոտակի և թուուցիկ նշվում է Իրաքին և արաբական ազգային-ազատագրական շարժումներին նվիրված աշխատություններում և կամ ժողովածուներում: Մինչդեռ, 1952 թ. նոյեմբերյան ելույթներն արժանի են հատուկ ուսումնասիրության, քանի որ նրանք հանդիսանում են Իրաքի հետպատերազմյան ազգային-ազատագրական շարժման կարևոր էտապներից մեկը:

Սակայն նախքան բուն ելույթների պատմության շարադրմանն անցնելը անհրաժեշտ ենք համարում համառոտակի նկարագրել Իրաքի սոցիալ-տնտեսական վիճակը:

Իրաքը հետամնաց գյուղատնտեսական երկիր է: Նա ժամանակակից իմաստով արդյունաբերություն չունի, իսպառ բացակայում են մետալուրգիան, մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը և այլն: Շատ թե քիչ զարգացած է թեթև արդյունաբերությունը՝ տեքստիլ, կաշվի, սննդի և այլն:

Իրաքի հիմնական հարստությունը նավթն է, որը սակայն ամբողջովին գտնվում է օտարերկրյա նավթային մոնոպոլիաների ձեռքին: Նրա հիմնական շահագործողը «Իրաք Պետրոլիում» ընկերությունն է, որը միավորում է անգլիական, ամերիկյան և ֆրանսիական կապիտալը: Օտարերկրյա ընկերությունները նավթից հսկայական շահույթներ էին ստանում: Այսպես օրինակ, Իրաքում 1952 թ. արդյունահանվել է 18.216.940 տոննա նավթ: Դրանից «Իրաք Պետրոլիում» ընկերության մաքուր շահույթը կազմել է 182 միլիոն դոլլար<sup>1</sup>, այսինքն յուրաքանչյուր տոննայից նա ստացել է 10 դոլլար շահույթ: Իսկ ի՞նչ էր ստանում Իրաքի կառավարությունը նավթի հանույթից և վաճառքից: Մինչև 1952 թ. փետրվարի 3-ի պայմանագիրը նա օտարերկրյա ընկերություններից ստանում էր ցնդամենը 20 ցենտ յուրաքանչյուր բարրելի (1 անգլիական բարրելը հավասար է 163,65 լ.) համար և դա այն ժամանակ, երբ բարրելը վաճառվում էր 2 դոլլարով: Ինչպես տեսնում ենք տարբերությունը հսկայական է՝ 10 անգամ:

Իմպերիալիստական այս կողոպուտը չէր կարող դժգոհություն չառաջացնել Իրաքի աշխատավորների և ազգային բուրժուազիայի մոտ: Իրաքում, հատկապես Իրանի դեպքերից հետո, ավելի ու ավելի տեժեղացավ նավթարդյունաբերության ազգայնացման պահանջը: «Իրաք Պետրոլիում»-ի ղեկավարները հաշվի առնելով Իրանի դասերը և Իրաքում տեղի ունեցած ժողովրդական մի շարք ցույցերը, «ողջամտություն» ցուցաբերեցին և վճռեցին որոշ զիջումների դիմել, քան թե զրկվել բոլորից: 1952 թ. փետրվարի 3-ին Իրաքի կառավարության և «Իրաք Պետրոլիում»-ի միջև կնքվեց նոր նավթային համաձայնագիր, որը սահմանեց 50/50-ի սկզբունքը, այսինքն Իրաքն այսուհետև ստանալու էր նավթից ստացվող շահույթների 50 տոկոսը: Սա մի զիջում էր, որ օտարերկրյա իմպերիալիստները կատարեցին հակառակ իրենց կամքի: Սակայն պետք է նշել, որ 50/50 տոկոսի սկզբունքը երբեք չպահպանվեց: Իրաքը փաստորեն ստանում էր շահույթների ոչ թե 50, այլ 35 տոկոսը:

Օտարերկրյա կապիտալն ուղղակի խեղդում էր Իրաքի էկոնոմիկան: Դրա լավագույն օրինակը կարող է հանդիսանալ Ջարգացման խորհրդի (Development Board) քաղաքականությունը: Ջարգացման խորհրդը ստեղծվել էր 1950 թ.: Նա կազմված էր օտարերկրյա՝ անգլիական, ամերիկյան և այլ մասնագետներից և փաստորեն Իրաքի կառավարությունից անկախ էր: Օտարերկրյա իմ-

<sup>1</sup> «Правда», 11 июня 1953 года.



պերիալիստները խորհուրդը դարձրին մի գործիք, որպեսզի դրա միջոցով երկրի զարգացման համար առանձնացված միջոցները փոշիացնեն, ծախսեն երկրորդական խնդիրների վրա և խանգարեն Իրաքի ինդուստրիալիզացիային: Դա երևում է թեկուզ հետևյալ փաստերից. 1952—1953 թթ. նախատեսվել էր ռոոգման վրա ծախսել 1 մլն. 64 հազար դինար, շենքերի կառուցման վրա՝ 2 մլն. 650 հազար, ճանապարհների վրա՝ 2 մլն. 933 հազար և արդյունաբերության վրա 5 մլն. դինար<sup>1</sup>: Ճանապարհների և շենքերի (պալատներ, հյուրանոցներ և այլն) վրա ավելի շատ է ծախսվել, քան թե արդյունաբերության: Այդ փաստն ինքնին բնորոշ է Ջարգացման խորհրդի քաղաքականության համար:

«Ալ-Ախբար» թերթը քննադատելով Ջարգացման խորհրդի զործունեությունը նշում էր, որ նա իր քաղաքականությունը հարմարեցնում է Արևմուտքի շահերին: Իսկ «Ալ-Իզդա» թերթը ամփոփելով Ջարգացման խորհրդի երկու տարվա աշխատանքների արդյունքները իրավացիորեն եկել է այն եզրակացության, որ նա նվազագույն ուշադրություն անգամ չի դարձրել որևէ իսկապես կարևոր պլանի վրա: Թերթը դա բացատրում էր նրանով, որ խորհրդի գործունեությունը որոշողը եղել են իմպերիալիստական պետությունները:

Իրաքի ազգային արդյունաբերության զարգացմանը չէին նպաստում նաև երկրում գոյություն ունեցող օրենքները: Այդ օրենքները ազգային արդյունաբերությունը չէին ապահովում օտարերկրյա ուժեղ մրցակիցներից: Դրա հետևանքով քիչ էր այն մարդկանց թիվը, որոնք համարձակվում էին իրենց կապիտալը ներդնել արդյունաբերության մեջ: Քիչ էին արդյունաբերական զանազան ընկերությունները, որոնք կոչված էին առաջնակարգ գեր խաղալ երկրի էկոնոմիկայում: 1952—1953 թթ. Իրաքում եղել է մասնավոր 9 արդյունաբերական, 13 առևտրական, 1 տրանսպորտային և 9 խառն ընկերություններ, որոնց ընդհանուր կապիտալը եղել է մի շնչին գումար՝ ընդամենը 2 մլն. 123 հազ. դինար: Իրաքի ընդդիմադիր ուժերը պահանջում էին երկրի արդյունաբերությունն ապահովել համապատասխան պաշտպանությամբ: Սակայն Իրաքի կառավարությունը խուլ էր մնում այս կենսականորեն անհրաժեշտ պահանջի հանդեպ:

<sup>1</sup> UN Summary of Recent Economic Developments in the Middle East 1952—1953, New York, 1954, p. 61.

Ինչպես նշվեց, Իրաքը գյուղատնտեսական երկիր էր: Սակայն գյուղատնտեսությունը նույնպես գտնվում էր զարգացման ցածր մակարդակի վրա:

Հողը շնայած ձևականորեն համարվում էր պետական, բայց իրականում կենտրոնացված էր շեյխերի և կալվածատերերի ձեռքում: Նրանց պատկանող հողակտորները համնում էին հարյուր և նույնիսկ հազար հեկտարների: Ֆեոդալները իրենց ձեռքում կենտրոնացնելով երկրի հողային տարածությունների մեծ մասը գյուղացիության գերակշռող մեծամասնությանը դատապարտել էին հողազրկության: Գյուղացիները ստիպված էին կամ վարձով աշխատել կալվածատիրոջ մոտ և կամ որևէ հողամաս վարձակալել, որի համար նրանք վճարում էին բերքի 2/5-ից մինչև 3/7-ը: Դրանից հետո գյուղացուն շատ քիչ բան էր մնում և նա կիսաքաղց կյանք էր վարում:

Ֆեոդալական հարաբերությունների վրա հիմնված Իրաքի գյուղատնտեսությունը չէր կարողանում ապահովել երկրի պահանջները: Նա ապրում էր խոր ճգնաժամ:

Իրաքի գյուղատնտեսության ծանր վիճակը չէր կարող շահահաստացնել երկրի հասարակայնությանը: Գյուղացիները, հասարակության առաջադեմ խավերը հանդես էին գալիս ռեֆորմների, ֆեոդալական հարաբերությունները լիկվիդացնելու պահանջով: Իրաքի ազգային-դեմոկրատական պարտիայի օրգան «Ալ-Ահալի»-ն քննարկելով հողային հարաբերությունների հարցը Իրաքում, նշում էր, որ անհրաժեշտ է գյուղատնտեսությունը վերակառուցել, վերացնել խոշոր, ֆեոդալական հողատիրությունը և զարկ տալ մանր հողատիրությանը: Արաբ ազգերը,—գրում էր թերթը,—եկել են այն գիտակցության, որ բոլոր շարիքների հիմքը ֆեոդալիզմն է, որը աշխարհի շատ մասերում վերացվել է, բայց շարունակում է տիրապետող մնալ արաբական մի շարք երկրներում<sup>1</sup>:

Ֆեոդալական այս սիստեմը, միահյուսված իմպերիալիզմի հետ, ոչ միայն արգելակում էր արդյունաբերության զարգացումը, այլև պատճառ հանդիսանում երկրի աղքատության և կյանքի ցածր մակարդակի: 1952 թվականին ապրուստը համեմատած նախապատերազմյան՝ 1939 թվականի հետ թանկացել էր ավելի քան հինգ անգամ<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «The Iraq Times», Baghdad, October 15, 1952.

<sup>2</sup> Statistical Abstract, Baghdad, 1956, p. 158.

1952 թվականին Իրաքում ուսումնասիրություններ կատարեց Միավորված Ազգերի Կազմակերպության սննդի և գյուղատնտեսության կազմակերպության ներկայացուցիչը: Իր կատարած ուսումնասիրությունների հիման վրա նա ներկայացրեց մի զեկուցագիր, որի մեջ գրում էր. «Մեր հետազոտությունները պարզ դարձրին, որ թերասնումը համընդհանուր է: Բացի բարձր դասակարգերից, տրոնք տառապում են գերուտելուց, պետք է ասվի, որ բնակչության 75—80%-ը չի ստանում ոչ լավ և ոչ էլ բավարար սնունդ: Երեխաների մեծ մասը թերզարգացած են աճի և քաշի տեսակետից, մեծահասակները նույնպես շունհն համապատասխան քաշ<sup>1</sup>: Այս բոլորից հետո մի՞թե զարմանալի է, որ Իրաքում շափազանց բարձր է մահացության և հատկապես երեխաների մահացության տոկոսը: 1952 թվականին Բաղդադում ծնվել է 9726 մարդ և նրանցից մահացել՝ 1331-ը: Իսկ ամբողջ երկրում 1952 թվականին ծնվել է 41037 մարդ և մահացել՝ 18063-ը<sup>2</sup>: Մահացության այսպիսի բարձր թիվը պետք է բացատրել նյութական կյանքի վատ պայմաններով և առողջապահության գործի վատ դրվածքով:

Իրաքի աշխատավորների մոտ մեծ դժգոհություն էր առաջացնում նաև օտարերկրյա՝ անգլիական և ամերիկյան իմպերիալիստների միջամտությունը Իրաքի ներքին գործերին: Նրանք հատկապես հանդես էին գալիս 1930 թ. անգլո-իրաքյան պայմանագրի դեմ, որը սահմանափակել էր Իրաքի սուվերենությունը, Իրաքը վերածել բրիտանական իմպերիալիզմի ռազմական բազայի: Իրաքի աշխատավորները պահանջում էին վերջ տալ իմպերիալիզմի շահերը արտահայտող ու պաշտպանող քաղաքականությանը և վարել շեղոք ու ինքնուրույն քաղաքականություն, այնպիսի քաղաքականություն, որը համապատասխաներ Իրաքի և արաբական մյուս երկրների շահերին ու պահանջներին: Ահա այսպիսին էր իրադրությունն Իրաքում 1952 թ.:

Իրաքում իշխող այս իրադրության պայմաններում էր, որ տանջված ու թշվառ ժողովուրդը մեկ անգամ ևս ոտքի ելավ պաշտպանելու իր և իր երկրի շահերն ու ազատությունը: 1952 թ. հունվարին հուզումներ սկսեցին Բաղդադում և երկրի մի շարք վայրերում: Հունվարի 27-ին աշխատավորները ցանկանում էին նշել Իրաքի ժողովրդի 1948 թ. հակաանգլիական ցույցի շորրորդ տա-

<sup>1</sup> Doris Adams, Iraq's People and Resources, Los Angeles, 1958, p. 76.

<sup>2</sup> Statistical Abstract, 1952, Bagdad, 1954, pp. 63, 69.

րեգարձը: Իրաքի աշխատավորները ամեն տարի նշում էին այդ օրը, իրենց հարգանքը մատուցելով Իրաքի ազատության համար ընկած մարտիկների հիշատակին:

Կառավարությունն սպասում էր այդ բանին: Ոստիկանական ուժերը և զորամասերը նախօրոք մարտական պատրաստության մեջ դրվեցին: Հունվարի 27-ի վաղ առավոտից սկսած զինված ոստիկանական ուժերը ավտոմեքենաներով շրջում էին Բաղդադի փողոցներով, որպեսզի կանխեն որևէ ելույթ: Ոստիկանությունն արգելեց ուսանողներին պսակ դնելու 1948 թ. ելույթների զոհերի գերեզմաններին: Սակայն կառավարության ձեռք առած բոլոր միջոցառումներն ու խստությունները չկարողացան կանխել ժողովրդական ելույթները: Այդ օրը Բաղդադում տեղի ունեցավ մեծ ցույց, որը ճնշելու համար կառավարությունը դուրս բերեց ոստիկանական խոշոր ուժեր: Տեղի ունեցավ ընդհարում ցուցարարների և ոստիկանների միջև, որի ժամանակ վերջիններս խաղաղ ցուցարարների վրա կրակ բացեցին: Նրանցից մի քանիսը վիրավորվեցին: Կառավարությունը ճնշեց այդ ցույցը և նրա մասնակիցներից շատերին ձերբակալեց:

Իրաքի աշխատավորների 1952 թ. հունվարյան ցույցը մի ավելորդ անգամ վկայում էր նրանց վճռականության մասին՝ պայքարելու իրենց երկիրն ստրկացնող իմպերիալիստական ամեն մի ոտնձգության դեմ:

Իրաքի աշխատավորներին շատ էր հուզում նավթի հարցը: Նրանք հանդես էին գալիս նավթարդյունաբերության ազգայնացման պահանջով: Ինչպես նշվեց, 1952 թ. փետրվարի 3-ին Իրաքի կառավարության և օտարերկրյա նավթային երեք ընկերությունների միջև կնքվեց նոր նավթային համաձայնագիր, որով նավթի շահույթից ստացվող Իրաքի բաժինը բարձրացվեց մինչև 50%-ի, սակայն կոնցեսիոներներն պահպանեցին իրենց բոլոր իրավունքները:

Նավթի վերաբերյալ այս նոր համաձայնագիրը չբավարարեց և չէր էլ կարող բավարարել Իրաքի հասարակայնությանը: Ծայր առավ խոր դժգոհություն և զայրույթ: Իրաքի ժողովուրդը պահանջում էր չվավերացնել երկրի տնտեսական շահերին վնասող այդ պայմանագիրը: Նա պահանջում էր ազգայնացում: Դրան ամեն կերպ դիմադրում էին օտարերկրյա մոնոպոլիաները և նրանց շահերը պաշտպանող Իրաքի կառավարությունը: Պրեմիեր-մինիստր Նուրի Սաիդը, որին անվանում էին «անգլիական գործիք», հանդես գալով ժողովրդի պահանջի դեմ, նշում էր, թե նավթի ազգայ-

նացումը կնշանակի լրիվ անկում, որը կառաջացնի գործազրկու-  
թյուն և տնտեսության կատաստրոֆա, գուցե ավելի վատ, քան թե  
իրանում<sup>1</sup>: Նա փորձում էր ժողովրդին վախեցնել տնտեսական քայ-  
քայման մույլ հեռանկարներով, որպեսզի ապահովեր նավթային  
ընկերությունների տիրապետությունը Իրաքում: Սակայն ժողո-  
վուրդն այդ հարցին նայում էր այլ կերպ. նա գտնում էր, որ երկրի  
էկոնոմիկան ուժգին թափով կզարգանա, եթե նավթային արդյու-  
նաբերությունն ազգայնացվի և նրանից ստացվող եկամուտները  
ծախսվեն արդյունաբերության, գյուղատնտեսության ու կուլտուրա-  
յի զարգացման համար:

1952 թ. փետրվարի 18-ին Իրաքի քաղաքական պարտիաների  
կոչով երկրում սկսվեց համընդհանուր գործադուլ ուղղված նավ-  
թային համաձայնագրի դեմ: Վախեցած կառավարությունը փողոց  
դուրս բերեց զինվորական ուժեր: Ոստիկանները բռնի կերպով  
ստիպում էին առևտրականներին բացել իրենց խանութները: Պրե-  
միեր-մինիստր Նուրի Սաիդը երկու անգամ պաշտոնապես դիմեց  
ժողովրդին և սպառնաց, որ նավթային նոր համաձայնագրի դեմ  
հանդես եկողների նկատմամբ ձեռք կառնվեն ամենադաժան մի-  
ջոցները: Փետրվարի 15-ին իշխանությունները, վախենալով ուսա-  
նողական ցույցերից, 15 օրով փակեցին Իրաքի բոլոր սւլտանա-  
կան հաստատությունները<sup>2</sup>: Սակայն փետրվարի 28-ին նրանք հար-  
կադրված եղան կրկին բացել դրանք: Հենց այդ օրն էլ Բաղդադի  
ուսանողները դասադուլ հայտարարեցին, պահանջելով ազատ ար-  
ձակել իրենց այն ընկերներին, որոնք ձերբակալվել էին համընդ-  
հանուր գործադուլի ժամանակ:

Իրաքի կառավարության ձեռք առած ուժերստիվ միջոցները  
չէին կարող կանգնեցնել ժողովրդական շարժումը: Ապրիլի 14-ին  
Բաղդադում տեղի ունեցավ մի նոր, հզոր հակաիմպերիալիստական  
ցույց, ուղղված Նուրի Սաիդի կառավարության դեմ: Ցուցարարները  
առաջադրելով մի շարք պահանջներ, հանդես էին գալիս ընդդեմ  
նավթային նոր համաձայնագրի: Նուրի Սաիդը դաժանությամբ  
ճնշեց այդ ցույցը: Գնդակոծության ժամանակ սպանվեցին երկու  
և վիրավորվեցին 37 հոգի: Մի շարք ցուցարարներ ձերբակալվե-  
ցին և բանտերը նետվեցին<sup>3</sup>:

<sup>1</sup> „The Iraq Times“, Baghdad, February 12, 1952.

<sup>2</sup> «Ам-Шарк», Бейрут, 16 февраля 1952 года.

<sup>3</sup> «Ам-Шарк», Бейрут, 15 апреля 1952 года.

Կառավարութիւնը հայտարարեց, որ նավթային նոր համա-  
ձայնագրի դեմ ուղղված այս շարժումը կազմակերպել են կոմու-  
նիստները, որոնք իբր իրենց հրահանգները ստանում են արտա-  
սահմանից: Իրաքի կառավարողները դիմում էին նման հերյուրան-  
քի, երբ ընկնում էին նեղ դրութեան մեջ:

Իրաքի կոմունիստները, որոնք գտնվում էին ընդհատակում,  
հանդիսանում էին իրենց երկրի ազատութեան գործին փոխարին  
ամենահետևողական մարտիկները: Նրանք իրենց գործունեութեան  
մեջ ղեկավարվում էին ոչ թէ «օտարերկրյա հրահանգներով» այլ  
իրենց ժողովրդի շահերով:

Իրաքի ժողովրդի պայքարը շահագեցրեց նավթարդյունաբերու-  
թեան ազգայնացմանը: Իրաքի կառավարութիւնը ճնշեց ժողովրդա-  
կան ելույթները և պահպանեց օտարերկրյա իմպերիալիստների  
դիրքերը Իրաքում: Սակայն պետք է նշել, որ վերը նշված ելույթ-  
ները նպաստեցին նավթից ստացվող շահույթներից Իրաքի բաժնի  
ավելացմանը: Իմպերիալիստները վախենալով, որ ժողովրդական  
շարժումների հետևանքով կարող են զրկվել նավթից ստացված  
ամբողջ շահույթներից՝ ավելի «նպատակահարմար» գտան դրանց  
մի մասը զիջել Իրաքին: Սա, անշուշտ, Իրաքի աշխատավորական  
մասսաների որոշակի հաջողութունն էր:

1952 թ. Իրաքում ծավալված ժողովրդական շարժումների մեջ  
կարևոր տեղ է բռնում Իրաքի աշխատավորների պայքարը իրենց  
տնտեսական դրութեան բարելավման համար: Այդ տեսակետից  
հատկապես պետք է նշել Հաբբանիայի և Բասրայի բանվորների  
ելույթը:

Հաբբանիան Անգլիայի ռազմական բազան էր, որտեղ աշխա-  
տում էին իրաքցի բանվորները: Նրանց տրվող աշխատավարձը  
ցածր էր, ադմինիստրացիան թույլ էր տալիս ամեն տեսակ կամա-  
յականութուններ ու բռնութուններ: 1952 թ. հունիսի 9-ին Հաբբա-  
նիայի բանվորները գործադուլ հայտարարեցին: Նրանք պահանջ-  
ում էին աշխատավարձի բարձրացում և աշխատանքային կողմնորո-  
կիրատում: Բացի դրանից գործադուլավորները պահանջում էին  
վերջ տալ բանվորներին կամայականորեն աշխատանքից հեռաց-  
նելու պրակտիկային, որն ընդհանրապես մեծ տարածում ունեւր  
Իրաքում: Ինչպես տեսնում ենք, Հաբբանիայի բանվորները, բացի  
տնտեսական պահանջից առաջադրում էին իրենց դասակարգային  
շահերն ու իրավունքները պաշտպանող պահանջներ: Ադմինիստրա-  
ցիան հրաժարվեց կատարել բանվորների պահանջները: Տեղի ունե-

ցավ ընդհարում բանվորների և անգլիական ռազմական ոստիկանության միջև: Անգլիական իմպերիալիստներին օգնության հասավ Իրաքի ոստիկանությունը: Իրաքի ոստիկանությունը անգլիական ռազմական ոստիկանության հետ միասին հունիսի 11-ին կազմակերպեց գործադուլավոր բանվորների գնդակոծում<sup>1</sup>: Սպանվեց մեկ և ծանր վիրավորվեց 7 բանվոր: Ոստիկանները բանվորների կամքը կոտրելու համար հրկիզում են նրանց տները և մոտ 60 հոգու շղթայակապ ուղարկում «Կարրամադի» բանտը:

Հաբեանիայի բանվորների հետ կատարած այս դաժան հաշվեհարդարը խոր զայրույթ է առաջացնում ողջ Իրաքի աշխատավորության մեջ: Բաղդադի, Բասրայի, Կիրկուկի, Մոսուլի, էրբիլի և այլ վայրերի բանվորները իրենց համերաշխությունն են հայտնում Հաբեանիայի գործադուլավորներին: Այսպես օրինակ, Կիրկուկի նավթամուղի բանվորները (նավթամուղը Կիրկուկը միացնում էր սիրիական Բանյաս նավահանգստի հետ), իրենց դասակարգային համերաշխությունը հայտնելով Հաբեանիայի բանվորներին, գործադուլ են հայտարարում և դադարեցնում նավթի ուղարկումը Բանյաս: Բացի դրանից ավելի քան 2—3 օր ոտքով փնջով նրանք կազմակերպում են մասսայական երթ դեպի Բաղդադ, որպեսզի իրենց բողոքը հայտնեն Իրաքի կառավարությանը<sup>2</sup>: Հաբեանիայի անգլիական ադմինիստրացիան հանդիպելով բանվորների անկոտրում դիմադրությանը, հարկադրված է լինում զիջել: Նա հայտարարում է, որ պատրաստ է քննարկել գործադուլավորների պահանջները և բավարարել դրանց մի մասը: Միայն դրանից հետո բանվորները վերսկսում են իրենց աշխատանքը:

Իր կազմակերպվածությամբ և հետևողականությամբ առանձնապես աչքի է ընկնում Բասրայի նավահանգստային բանվորների օգոստոսյան գործադուլը: Նրանք պահանջում էին աշխատավարձի բարձրացում, աշխատանքից հեռացված իրենց ընկերների վերականգնում և կառավարության կողմից արգելված տրսֆուսպորտային աշխատողների արհմիության գործունեության թույլտվություն: Նավահանգստի ադմինիստրացիան հրաժարվեց բավարարել այս պահանջները, որից հետո՝ օգոստոսի 23-ին նավահանգստային բանվորները գործադուլ հայտարարեցին<sup>3</sup>: Սակայն նրանք իրենց

<sup>1</sup> «Ас-Сарха», Бейрут, 24 июня 1952 года.

<sup>2</sup> «Новое время», № 19, 1959 года.

<sup>3</sup> ЦГАОР СССР, ф. 4459, оп. 24, ед. хр. 1056, л. 26, 1952.

պայքարում միայնակ չէին: Շուտով նրանց միացան Բասրայի էլեկտրակայանի և ջրմուղու բանվորները: Նրանք դադարեցրին ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարումը: Իրաքի կառավարությունը, ըստ իր սովորության, գործադուլավորների դեմ հաճեց ոստիկանների, ինչպես նաև բանակի մեքենայացված զորամասեր: Այն փաստը, որ կառավարությունը հարկադրված էր բանվորների դեմ հանել մեքենայացված զորամասեր, խոսում է այն մասին, թե ինչքան համերաշխ, կազմակերպված էր Բասրայի բանվորների ելույթը: Ոստիկանությունը իր հսկողության տակ է վերցնում էլեկտրակայանը և ջրմուղը: Բանվորները դուրս են գալիս ցույցի: Ոստիկանները և զինվորները կրակ են բացում, որի հետևանքով զոհվում են 3 և վիրավորվում 36 բանվորներ: Սակայն դա չի վհատեցնում գործադուլավորներին: Նրանք շարունակում են իրենց պայքարը հանուն իրենց դասակարգային շահերի: Այն ժամ Իրաքի կառավարությունը դիմում է անլուր ստորության: Նա անգլիացիների համաձայնությամբ, Բասրայի մոտ գտնվող և Մեծ Բրիտանիային պատկանող Շայբա ռազմական բազայից Բասրա է տեղափոխում անգլիական զինվորների, որոնք պետք է փոխարինեին գործազուլ անող բանվորներին: Այլ կերպ ասած, անգլիական զինվորները հանդես էին գալիս շտրեյկբրեյքերների դեմ: Դա խոր զայրույթով ընդունեցին գործադուլավորները: Նրանց պայքարը վեր է ածվում անգլիական իմպերիալիզմի դեմ ուղղված ելույթի, որի ժամանակ անգլիական զինվորների գնդակներից վիրավորվում են մի քանի բանվորներ: 1952 թվականի օգոստոսի 26-ին, զոհված բանվորների թաղման ժամանակ տեղի է ունենում մեծ միտինգ, որին մասնակցում են մոտ հինգ հազար աշխատավորներ<sup>1</sup>: Ցույցը տեղի ունեցավ «մեզ հաց է հարկավոր և ոչ թե փամփուշտ» լոզունգի ներքո: Ցուցարարները բողոքելով Իրաքի կառավարության և անգլիական զորքերի գործողությունների դեմ, պահանջում էին դատի տալ նրանց, ովքեր մեղավոր էին խաղաղ բանվորների գնդակոծման մեջ:

Հանդիպելով բանվորների այսպիսի կազմակերպված դիմադրության, նավահանգստի ադմինիստրացիան հարկադրված եղավ զիջել և բավարարել գործադուլավորների պահանջի մի մասը: Օգոստոսի 26-ին բանվորներն կրկին անցան աշխատանքի: Սա խոշոր հաղթանակ էր Բասրայի և ոչ միայն Բասրայի բանվորների համար: Դա վկայում էր այն մասին, որ Իրաքի բանվորների մոտ ավելի ու

<sup>1</sup> Տե՛ս ЦГАОП СССР, ф. 4459, оп. 24, ед. хр. 1056, л. 25, 1952.



ավելի էր աճում դասակարգային ինքնագիտակցությունը: Դա միա-  
ժամանակ ցույց էր տալիս, որ եթե բանվորները կազմակերպված  
են և նրանց մոտ ուժեղ է դասակարգային համերաշխության գա-  
ղափարը, ապա նրանց համար սարսափելի չեն ո՛չ ոստիկանական  
և ո՛չ էլ զինվորական զնդակները:

1952 թ. ելույթների մեջ հարկ է նշել նաև Շայբայի անգլիա-  
կան ուղամա-օղային բազայի բանվորների սեպտեմբերյան ելույթը:  
Պատճառը բանվորների ժանր տնտեսական վիճակն էր: Նրանք  
պահանջում էին աշխատավարձի բարձրացում, աշխատառնքային  
կողմնակի կիրառում և այլն: Սակայն այս ելույթի նշանակությունը  
դրանով չէր սահմանափակվում: Այս կարգի պահանջներ Իրաքում  
ընդհանրապես շատ են առաջադրվել: Շայբայի բանվորների պա-  
հանջների մեջ կային երկու կարևոր կետեր, որոնք մինչ այդ քիչ էին  
նկատվում Իրաքի բանվորների պահանջներում: Դա ութ ժամյա  
բանվորական օրվա և արձակուրդների պահանջներն էին<sup>1</sup>: Իրա-  
քում բանվորական օրը շատ երկար էր և նրա տևողությունը փաս-  
տորեն կախված էր տեղերի ցանկությունից: Բացի դրանից, բան-  
վորները զուրկ էին արձակուրդ ստանալու իրավունքից: Այն բանը,  
որ Իրաքի բանվորները արդեն հանդես էին գալիս աշխատանքային  
օրվա կրճատման և արձակուրդ ունենալու պահանջներով, ինքնին  
նշանակալից երևույթ էր, որը վկայում էր նրանց դասակարգային,  
գիտակցության բարձրացման մասին:

Սակայն, Շայբայի բանվորները շարողացան հասնել իրենց  
պահանջների իրագործմանը: Նրանց գործադուլն ավարտվեց ան-  
հաջողությամբ:

1952 թ. գործադուլներ և ելույթներ են տեղի ունենում նաև եր-  
կրի մյուս մասերում:

Բանվորական և ուսանողական ելույթների հետ միասին 1952 թ.  
Իրաքում ծավալվում են նաև ագրարային շարժումները: Հողագործիկ  
Ֆելլահը հանգես էր գալիս ընդդեմ ֆեոդալի: Գյուղացիները շատ  
հաճախ փորձում էին բռնագրավել ֆեոդալներին պատկանող հո-  
ղամասերը, հրաժարվում էին կատարել զանազան պարհակներ և  
այլն: 1952 թ. գյուղացիական ելույթների մեջ առանձնապես պետք  
է նշել, Կուտ ալ-Ամարայի շրջանի գյուղացիների հոկտեմբերյան  
ելույթը: Այդ շրջանում ֆեոդալական շահագործումն առանձնապես  
մեծ չափեր էր ընդունում: Հատկապես բարձր էր ֆեոդալին վճարվող  
ռենտայի չափը: Եվ ահա կիսաքաղց ու տանջահար ֆելլահները

<sup>1</sup> «Аль-Ахрам», Бейрут, 17 сентября 1952 года.

ոտքի են հընում: Նրանք հրաժարվում են ֆեոդալներին վճարել բնավարձը<sup>1</sup>: Շարժումն ընդունում է մեծ շափեր: Կուտ ալ-Ամարայի գյուղացիների ելույթը ճնշելու համար ֆեոդալներին օգնության է գալիս կառավարությունը: Նա գյուղացիական շարժման վայրն է ուղարկում մեքենայացված ոստիկանության մեծ խմբեր, որոնք և ճնշում են գյուղացիների ելույթը:

Այս բոլորը վկայում է, որ Իրաքում գնալով խորանում էր քաղաքական ու տնտեսական ճգնաժամը, հասունանում էին վճռակաճ գեպքեր, որոնք պետք է լուծում տային երկրի առջև ծառայած խնդիրներին: Իրաքի հայրենասեր ուժերը պահանջում էին.

Վերացնել անգլո-իրաքյան 1930 թ. պայմանագիրը: Դա մի անիրավահավասար պայմանագիր էր, որն Անգլիան փաթաթել էր Իրաքի վզին և նրան իրենից կախման մեջ դրել: Համաձայն այդ պայմանագրի Անգլիան Իրաքում ուներ երկու ռազմական բազա, իսկ Իրաքի բանակը վարժեցնում էին անգլիացի հրահանգիչները: Պատերազմի սպառնալիքի դեպքում Անգլիան իրավունք էր ստանում օգտագործել Իրաքի բոլոր երկաթուղային և ջրային ուղիները, օդանավակայանները և այլն: Իրաքը պարտավոր էր Անգլիայի հետ խորհրդակցել արտաքին քաղաքականության բոլոր հարցերի շուրջը:

Պայմանագիրը սահմանափակում էր Իրաքի սուվերենությունը: «Ազ-Չաման»-ը նշում էր, որ այն պետք է անմիջապես վերացնել և չփոխարինել որևէ նման պայմանագրով: Թերթը գրում էր, որ եթե Իրաքին որևէ սպառնալիք չի, ապա բնակիչները իրենք կպաշտպանեն երկիրը և դրսի օգնության կարիքը չի չինի: Իսկ «Ալ-Ախբար» թերթը նշում էր, որ պայմանագիրը սահմանափակում է Իրաքի սուվերենությունը և մեծ վնաս հասցնում նրա հեղինակությանը միջազգային գործերում: Իրաքի աշխատավորները պահանջում էին էվակուացնել անգլիական զորքերը Իրաքից:

Անգլո-իրաքյան պայմանագրի վերացման հարցը հանդիսանում էր Իրաքի առջև կանգնած և անհապաղ լուծում պահանջող կարգինալ հարցերից մեկը: Հակառակ ժողովրդական մասսաների պահանջին, Իրաքի կառավարությունը հանգես էր դալիս այդ ստորկացուցիչ պայմանագրի պահպանման օգտին, արյան մեջ խեղդելով անգլիական իմպերիալիզմի դեմ ուղղված ժողովրդական ամեն մի ելույթ:

Իրաքի հայրենասիրական ուժերը պահանջում էին նաև չմիա-


<sup>1</sup> «Ориан», Бейрут, 9 октября 1952 года.

ՌԱ-5235

նալ այսպես կոչված «Միջին արևելյան հրամանատարություն»-ը, որը ցանկանում էին կազմակերպել ԱՄՆ-ը՝ Անգլիայի և Թուրքիայի ակտիվ աջակցությամբ: Այդ պլանը, որ առաջ քաշվեց 1951 թ. և կրկնվեց 1952 թ. նախատեսում էր մեկ ռազմական բլոկի մեջ միավորել Միջին և Մերձավոր արևելքի բոլոր երկրները, այդ թվում և Իրաքը: ԱՄՆ-ի իմպերիալիստները իրենց ագրեսիվ նպատակները քողարկելու համար նշում էին, որ արաբական երկրներին, իբր, դրսից վտանգ է սպառնում: Մերկացնելով ամերիկյան ագրեսորների այդ մեքենայությունները, Սովետական կառավարությունը 1952 թ. հոկտեմբերի 28-ի իր նոտայում նշում էր. «Մերձավոր և Միջին արևելքի երկրներին ոչ ոք չի սպառնում և նրանց նախաձեռնությունները չէ, որ ծագել է միջին արևելյան հրամանատարություն ստեղծելու առաջարկությունը»: Արաբական երկրների, այդ թվում և Իրաքի ժողովրդական մասսաները վճռականորեն հանդես եկան արևմտյան իմպերիալիստների պլանների դեմ: Մինչդեռ Իրաքի կառավարությունը հավանություն տվեց ռազմական այդ բլոկի ստեղծման գաղափարին: Դա դժգոհության նոր ալիք բարձրացրեց Իրաքում: 1952 թ. ապրիլի 14-ին Բաղդադում տեղի ունեցավ հակաիմպերիալիստական մեծ ցույց ուղղված «միջինարևելյան հրամանատարություն» ռազմական խմբավորման մեջ Իրաքը ներգրավելու նուրի Սաիդի կառավարության քաղաքականության դեմ<sup>1</sup>: Նուրի Սաիդը արյան մեջ խեղդեց Իրաքի հայրենասերների այդ ելույթը: «Ալ-Ահալի» թերթը նշում էր, որ Իրաքի ժողովուրդը բազմիցս մամուլի և իր քաղաքական կազմակերպությունների միջոցով հայտարարել է, որ ինքը չի ցանկանում մասնակցել իմպերիալիստական սխեմայով կազմված նման որևէ պակտի: Սա էր Իրաքի ժողովրդի դիրքն այդ հարցում, որը Իրաքի կառավարությունը համառորեն չէր ցանկանում հաշվի առնել:

Իրաքի պրոգրեսիվ ուժերի մյուս կարևոր պահանջն էր անցկացնել տնտեսական ռեֆորմներ և երկրում հաստատել դեմոկրատական ազատություններ: Իրաքի ժողովուրդը հանդես էր գալիս երկաստիճան ընտրությունների վերացման և ուղղակի ընտրական սիստեմ կիրառելու պահանջով: Երկրի հայրենասեր ուժերը իրավացիորեն նշում էին, որ Իրաքի կոնստիտուցիան վեր է ածվել թղթի կտորի և երկիրը կառավարվում է ռեակցիոն օրենքների հավաքածուով, օրենքներ, որոնք սահմանափակում էին դեմոկրատա-

<sup>1</sup> «Правда», 29 января 1952 года.  
<sup>2</sup> «Ориан», Бейрут, 26 ноября 1952 года.



կան ազատութիւնները և մարդու տարրական իրավունքները: Ահա այս հարցերն էին, որոնք հուզում էին Իրաքի առաջադեմ հասարակայնութիւնը: Հարցն առանձնապես սրվեց պառլամենտական ընտրութիւններ անցկացնելու կարգի կապակցութեամբ: Արդո՞ք այն առաջվա նման թողնել երկաստիճան, թե՞ դարձնել ուղղակի: Իրաքի աշխատավորները և պրոգրեսիվ ուժերը պահանջում էին ընտրութիւնները դարձնել ուղղակի, նշելով, որ երկաստիճան ընտրութիւնները լայն հնարավորութիւններ են տալիս զանազան մեքենայութիւնների և կեղծիքի: Կառավարութիւնը գտնում էր, որ երկաստիճան սիստեմը պետք է պահպանել: Ուղղակի ընտրութիւնների հակառակորդներն այն փաստարկն էին բերում, որ ժողովրդի 92% անգրագետ է, հետևապես, չի կարելի վստահել նրանց: Սա բացարձակապես չհիմնավորված տեսակետ է: Ծթե նրանք չեն վստահում ժողովրդին դեպուտատ ընտրել ուղղակիորեն, ապա ինչո՞ւ են վստահում ձայնավոր ընտրելու: Չէ՞ որ այդ անգրագետ ժողովրդի ընտրած ձայնավորն է, որ երկրորդ աստիճանում ընտրելու է դեպուտատ: Բանի էութիւնն այն է, որ երկաստիճան սիստեմի պայմաններում Իրաքի ղեկավարները շրջանները հնարավորութիւն էին ստանում պառլամենտ անցկացնել իրենց ցանկացած մարդկանց: Մլուս կողմից չպետք է կարծել, որ եթե սահմանվեին ուղղակի ընտրութիւններ, ապա Իրաքում ամեն ինչ կփոխվեր: Ուղղակի ընտրութիւնները պանացեա չեն, որոնք կարող են լուծել սոցիալական ամեն մի խոց: Հարցն այն է, որ ուղղակի ընտրութիւններն ավելի քիչ հնարավորութիւններ են տալիս ընտրական կոմբինացիաներ և մեքենայութիւններ կատարել և ավելի լայն հնարավորութիւններ են տալիս ժողովրդին՝ ազդելու ընտրութիւնների ելքի վրա:

Այսպիսի լարված մթնոլորտում Իրաքի քաղաքական պարտիաները 1952 թ. հոկտեմբերի վերջերին մի հուշագիր ներկայացրին խնամակալին: Նրանք պահանջում էին չեղյալ հայտարարել անգրոիրաքյան պայմանագիրը, ձեռնպահ մնալ «միջինարևելյան հրամանատարութեան» միանալուց, անցկացնել հողային ռեֆորմ, փոփոխութիւն մտցնել ընտրական սիստեմում՝ սահմանելով ուղղակի ընտրութիւններ, փոփոխութիւններ մտցնել կոնստիտուցիայում և սահմանափակել Պալատի միջամտութիւնը ամեն մի հարցում<sup>1</sup>: Իր պատասխանում խնամակալը՝ Արդուլ Իլահը հրաժարվեց բավարարութիւն տալ նրանց պահանջին, նշելով, որ երկրում գործերն

<sup>1</sup> „The Iraq Times“, Baghdad, October 30, 1952.

ընթանում են բավարար: Խնամակալի պատասխանը խոր դժգոհու-  
հուլթյուն առաջացրեց երկրում, որն ավելի ուժեղացավ պրեմիեր-  
մինիստր Մուսատյա Գալ-Ումարի այն հայտարարությունից հետո,  
որ ընտրական սիստեմում ոչ մի փոփոխություն տեղի չի ունենա-  
լու և առաջիկա պառլամենտական ընտրությունները տեղի են ունե-  
նալու երկաստիճան սիստեմի հիման վրա: Դրան պատասխան  
Իրաքի շուրջ քաղաքական պարտիաները հայտարարեցին, որ իրենք  
բոլորովին են ենթարկելու ընտրությունները: Դրությունը երկրում  
խիստ սրվեց: Ժողովրդական ելույթները կարող էին պոռթկալ ամեն  
մի առիթով: Այդպիսի առիթ հանդիսացավ դեղադործական և քի-  
միական Կուլեջի երեք ուսանողներին ծանր վիրավորելը: Իրենց  
իրավունքների պաշտպանման համար պայքարող՝ կուլեջի ուսանող-  
ների հետ դատաստան տեսնելը ալեկոծեց ողջ Իրաքը: 1952 թ.  
նոյեմբերի 21-ին Բաղդադի բոլոր կուլեջիների ուսանողությունը հա-  
մերաշխության դասադուլ հայտարարեց: Շուտով դասադուլը համ-  
ընդհանուր բնույթ ընդունեց: Նոյեմբերի 22-ին լարվածությունը  
հասավ իր գագաթնակետին: Այդ օրը տեղի ունեցավ բազմահազա-  
րանոց ցույց՝ ուղղված Իրաքի կառավարության և օտարերկրյա իմ-  
պերիալիզմի դեմ: Կառավարությունն ըստ իր սովորության ցու-  
ցարարների դեմ նետեց խոշոր ոստիկանական ուժեր, որոնք խա-  
ղաղ բնակչության դեմ կիրառեցին զենք և արտասովաբեր ուժերը:  
Ջնայած դրան ցուցարարները հերոսական դիմադրություն էին  
ցույց տալիս ոստիկաններին: Ցուցարարները կրում էին «Մենք խա-  
ղաղություն ենք ցանկանում», «Կորչեն խարդախ ընտրությունները»,  
«Կորչեն անգլո-ամերիկյան իմպերիալիստները», «Կորչի անգլո-  
իրաքյան պայմանագիրը» լոզունգները:

Ստեղծված ճգնաժամային պայմաններում խնամակալը հրա-  
վիրեց կառավարության նիստ, որին մասնակցեցին նաև օպոզիցիա-  
յի լիդերները: Աբդուլ Իլահը փորձում էր նրանց աջակցությունը  
ձեռք բերել և ոչ մի զիջում չկատարելով հանդարտեցնել երկիրը:  
Սակայն օպոզիցիայի լիդերները հայտարարեցին, որ նրանք կա-  
ռավարությանը չեն պաշտպանի, քանի դեռ նա չի համաձայնվի  
անցկացնել ուղղակի ընտրություններ:

Ժողովրդական ելույթները շարունակվում էին և ավելի լայն  
ծավալ ընդունում: Նոյեմբերի 22-ին որոշեցին ընդհանուր գործա-  
դուլ հայտարարել մամուլի աշխատողները: Շուտով Բաղդադում  
լուր է ստացվում, որ ոտքի է ելել նաև գավառը: Դա ավելի է ոգևո-  
րում ցուցարարներին: Ժողովրդական ելույթների ճնշման տակ  
Մուսատյա Գալ-Ումարի կառավարությունը նոյեմբերի 28-ին հրա-

ժարական տվեց: Ջամիլ ալ-Մադֆային կազմեց նոր կառավարութիւն, որը, սակայն հարկադրված էր հենց նույն օրը հրաժարական տալ: Այսպիսով ժողովրդական ելույթները քշում տանում են Իրաքի կառավարությունները, որոնք կատարելով օտարերկրյա իմպերիալիստների կամքը, չէին ուզում երկրում բարեփոխումներ կատարել և Իրաքը դուրս բերել ազատ զարգացման ուղի: Նոյեմբերի 22-ից հետո փաստորեն դրութեան տերը դառնում է ժողովուրդը:

Նոյեմբերի 23-ին մի նոր հզոր ցույց է տեղի ունենում Բաղդադում, որին մասնակցում են մոտ 20000 մարդ: Ցուցարարները հարձակվում են կառավարական շէնքերի վրա: Նրանք հրկիզում են ամերիկյան դեսպանությանը կից ԱՄՆ-ի ինֆորմացիոն ծառայության շէնքը, քարեր են նետում անգլիական դեսպանության հասարակական կայանի Բյուրոյի շէնքի վրա, շնայած այդ դեսպանատները պաշտպանվում էին իրաքյան ուժեղ ոստիկանական խմբերի կողմից: Աբդուլ Իլլահը և ֆեոդալական վերնախավն ու շեյխերը վախենալով ժողովրդական ապստամբության հետագա ծավալումից, որն արդեն սպառնում էր նրանց իշխանության գոյությունը և տեսնելով, որ օստիկանությունն անզոր է ճնշելու ելույթները, ապստամբների դեմ հանում են Իրաքի բանակը: Իրաքի բանակի զլխավոր շտաբի պետ գեներալ Մուհամմեդ Նուրեդդինը խնամակալի հրամանով կազմում է նոր կառավարություն: Սա կոնստիտուցիայի նոր խախտում էր, որովհետև Իրաքի Կոնստիտուցիան արգելում է զլխավոր շտաբի պետին նշանակել պրեմիեր-մինիստր: Սակայն Իրաքի կառավարողները ոչնչի առջև կանգ չէին առնում, միայն թե փրկեն իրենց իշխանությունը:

Գեներալ Նուրեդդինի հրամանով բանակը գրավում է մայրաքաղաքի բոլոր կարևոր ստրատեգիական կետերը: Փողոցներում պարեկություն էին անում զինվորական մասերը, տանկերը և զրահամեքենաները<sup>1</sup>: Բաղդադի կայազորի պետ գեներալ Աբդուլ Մուսթաֆալի ալ-Ամինի հրամանով Բաղդադում մտցվում է ռազմական գրություն: Նա միաժամանակ զգուշացնում է ժողովրդին, որ բանակին հրաման է տրված կրակել մարդկանց ամեն մի հավաքախմբի վրա<sup>2</sup>: Չնայած այս խիստ միջոցառումներին և զգուշացումներին նոյեմբերի 23-ին երեկոյան Բաղդադի փողոցներով անցնում են ցուցարարներ, որոնք գոչում են «Կորչի Մուհամմեդ Նուրեդդինը:

<sup>1</sup> «Аль-Мыср», Каир, 29 ноября 1952 года.

<sup>2</sup> «Орнан», Бейрут, 26 ноября 1952 года.

Մենք չենք ուզում գլխավոր շտաբի պետին<sup>1</sup>: Իրաքի ժողովրդի համար Նուրեդդինը նույնպես անընդունելի էր, քանի որ նրանից սպասելիքներ չուներ:

Մուհամմեդ Նուրեդդինի կառավարություն կազմելը խոսում էր այն մասին, որ շնայած ժողովրդական հզոր ելույթներին Իրաքի կառավարող կլիկը և արևմտյան իմպերիալիստները կարողացան պահպանել իրենց տիրապետությունն ու դիրքերը: Հաղթանակած ռեակցիան դաժան հաշվահարգար տեսավ Իրաքի հայրենասերների հետ: Փակվեցին բոլոր առաջադիմական թերթերը, ցրվեցին բոլոր լեզալ պարտիաները, ձերբակալվեցին ցույցերին մասնակցած մեծ թվով բանվորներ, ուսանողներ, վաճառականներ, ինչպես նաև օպորտյունիստ պարտիաների մի շարք լիդերներ: Ձերբակալվածների թվումն էր նաև Իրաքի ազատության համար մարտնչող պոետ Մուհամմեդ Մահդի ալ-Ջավահիրին:

Սակայն Իրաքի կառավարողները լավ էին հասկանում, որ անհնար է ոչ մի զիջում չկատարել ժողովրդին, քանի որ կարող են ժողովրդական նոր ելույթներ ծագել: Այգ պատճառով Իրաքի կառավարությունը հարկադրված եղավ փոփոխություններ մտցնել ընտրական սխեմայում. երկաստիճան ընտրական սխեմայում փոխարինվեց ուղղակի ընտրական սխեմայով, որը, անշուշտ, Իրաքի ժողովրդի խոշոր հաղթանակը պետք է համարել:

Բացի դրանից կառավարությունը ձեռք առավ տրոշ միջոցներ մատակարարումը կարգավորելու ուղղությամբ, իջեցվեցին բանջարեղենի և մրգերի վրա դրվող հարկերը և այլն: Ինչ խոսք, որ այս միջոցառումները կիսատ-պուստ էին և չէին կարող բավարարել ժողովրդի պահանջները: Իրաքի ժողովրդը պահանջում էր իջեցնել ոչ միայն և ոչ այնքան բանջարեղենի և մրգերի վրա դրվող հարկերը, այլ ցորենի և գյուղատնտեսական մյուս կարևոր մթերքների վրա դրվող հարկերը, մթերքներ, որոնք կազմում էին ժողովրդի հիմնական և կարևոր սնունդը: Սակայն այգ ուղղությամբ կառավարությունը ոչ մի քայլ չէր ցանկանում ձեռնարկել: Նա պարզապես մանր և ոչ էական զիջումներով ուզում էր ժամանակ շահել, հանդարտեցնել կրքերը և առաջվա պես անփոփոխ թողնել իրերի վիճակը:

Եթե Իրաքում 1952 թ. տեղի ունեցած ելույթները և հատկապես Նոյեմբերյան իրադարձությունները չհանգեցրին ռեակցիոն ռեժիմի կործանմանը, ապա դրա պատճառը պետք է փնտրել այդ

<sup>1</sup> «Аль-Мыср», Каир, 29 ноября 1952 года.

ելույթների անկազմակերպվածության մեջ: Իրաքի կոմունիստական պարտիան գտնվում էր ընդհատակում և զրկված էր շարժումներն իրեն ձեռքը վերցնելու և կազմակերպելու հնարավորությունից: Իսկ Իրաքի լեզալ քաղաքական պարտիաներից և ոչ մեկը գործողության պարտիա չէր: Նրանք հիմնականում սահմանափակվում էին մամուլում և ժողովներում բողոքներ հայտարարելով, խնամակալին հուշագրեր ներկայացնելով և այլն: Այսպիսի տակտիկան շարժումը դատապարտում էր պասիվության և անկազմակերպվածության, որից մեծ վարպետությամբ օգտվում էր Իրաքի ռեակցիոն կլիկը:

Այնուհանդերձ մեծ է Իրաքի աշխատավորների 1952 թ. ելույթների պատմական նշանակությունը: Այն կայանում է նրանում, որ՝

1. առաջին անգամ Իրաքի պատմության մեջ մտցվեց ուղղակի ընտրական սիտեմ. 2. Շնորհիվ այդ, ինչպես նաև արաբական մյուս երկրներում տեղի ունեցած ժողովրդական լայն շարժումների, իմպերիալիստները ստիպված եղան ժամանակավորապես հրաժարվել Մերձավոր և Միջին արևելքում ռազմական բլոկ ստեղծելու իրենց ագրեսիվ պլաններից: 1953 թվականին ԱՄՆ-ի պետական քարտուղար Զ. Ֆ. Դալեսը Մերձավոր արևելքի երկրներում շրջագայություն կատարելուց հետո ստիպված եղավ հայտարարել, որ Միջին արևելքի պաշտպանական (իմա ագրեսիվ—ն. չ.) կազմակերպության ստեղծումն ավելի շուտ ապագայի, քան թե ներկայի հնարավորություն է և որ այն չի կարելի դրսից փաթաթել նրանց վզին<sup>1</sup>: 3. Իրաքի աշխատավորները հասան իրենց տնտեսական պայմանների որոշ բարելավման, առանձին դեպքերում իրավունքների որոշ ընդլայնման և աշխատանքային օրվա որոշ կրճատման: 4. Նա որոշակի հավատ ներշնչեց աշխատավորներին իրենց ուժերի նկատմամբ: Աշխատավորները հասկացան, որ կազմակերպվածության ու վճռականության դեպքում իրենց համար սարսափելի չեն ո՛չ ոստիկանական և ո՛չ էլ ռազմական ուժերը, որ իրենք կարող են հասնել հաղթանակի:

Օտարերկրյա իմպերիալիզմի և ներքին ռեակցիոն կլիկի դեմ ուղղված Իրաքի աշխատավորների 1952 թ. ելույթները կարևոր էտապ հանդիսացան Ֆեյսալ-Նուրի Սաիդի ռեժիմը տապալելու ճանապարհին:

Ինչպես նշել է Իրաքի նախկին պրեմիեր-մինիստր Աբդել Քերիմ Կասրմը Իրաքի 1958 թ. հուլիսի 14-ի ռեյուցիան նախապատ-

<sup>1</sup> „Iraq“, Public Services Division, Department of State, Washington, 1957, p. 15.



ըստովի կը Իրաքի աշխատավորների 1948, 1952 և 1956 թթ. հզոր  
հիւսիսներով: Առանց այդ հիւսիսների անհնար կլինէր հոգիսի 14-ի  
և կոլեկտիւի համեմատաբար արագ հաղթանակը:

Н. О. О Г А Н Е С Я Н

ВЫСТУПЛЕНИЯ ТРУДЯЩИХСЯ ИРАКА В 1952 ГОДУ  
И ИХ МЕСТО В НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОМ  
ДВИЖЕНИИ СТРАНЫ

Р е з ю м е

В статье, на основе иракских, английских и русских источников, дается социально-экономическое положение страны, освещается борьба народных масс против иностранного империализма и существующего в Ираке реакционного монархического режима. Народные массы и демократические силы Ирака боролись за улучшение экономического положения страны, за национализацию нефтяной промышленности, выступали против англо-иракского договора 1930 г. и создания «Средневосточного командования». Одним из наиболее важных выступлений трудящихся масс и демократических сил Ирака явилось ноябрьское восстание 1952 г., свергнувшее правительство Мустафы аль-Умари, а затем и Джемала аль-Мадфай. Впервые в истории Ирака была введена прямая избирательная система и осуществлены некоторые меры по улучшению экономического положения народных масс.

Выступления 1952 г. и, в частности, ноябрьское восстание явились серьезным ударом по режиму Фейсалия-Нури Саида.

ՇԱՔՐՈՑԵ ՄՇՈՑԻ

ԻՐԱՔՈՒՄ ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ  
ՇԱՐԺՄԱՆ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Երկրորդ համաշխարհային պատերազմում Սովետական Միության հաղթանակը մեծ ազդեցություն ունեցավ Արևելքի կախյալ ժողովուրդների, այդ թվում և քուրդ ժողովրդի, ազգային ազատագրական շարժման վրա: Խոսելով Իրաքում ծավալված քրդական ազգային-ազատագրական շարժումների մասին, անհրաժեշտ է նշել, որ դրանք Իրաքի ժողովրդի ընդհանուր դեմոկրատական պայքարի մի մասն էին: Իրաքի քուրդ աշխատավորությունը, որը արաբաշխատավորության հետ կրում էր միևնույն զրկանքները, միայն նրա հետ համատեղ պայքարի միջոցով կարող էր հասնել իր ազգային նպատակների իրագործմանը: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո քրդական ազգային-ազատագրական շարժումն Իրաքում՝ գյուղացիական լայն մասսաների, առաջավոր մտավորականության, նոր զարգացող բուրժուազիայի և ֆեոդալական խավի որոշ մասի պայքարն էր՝ հսկուն Իրաքի սահմաններում քրդերի ազգային իրավունքների ճանաչման: Դեռևս նախքան երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը քրդական ազատագրական շարժման մասնակիցների համար ավելի պարզ դարձավ, որ նրանք սպասելիքներ չունեն արևմտյան տերություններից:

Պատերազմի տարիներին քուրդ աշխատավորական մասնաները գտնվում էին տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններում: Քաղաքական այն քուրդ գործիչներին, որոնք հակասոցիալական և հակակառավարական տրամադրություն ունեին, Իրաքի կառավարությունը թույլ չէր տալիս հեռանալ Սուլեյմանիեից: Սակայն, 1943 թվականին Շեյխ Ահմադ Բարզանիի եղբայր Մուստաֆա Բարզանին, որը նույնպես ստորագրություն էր տվել դուրս չգալ Սուլեյ-

մանիբից, գաղտնի մեկնեց Բարզանի շրջանը: Մուլլա Մուստաֆայի գալուտը մեծապես ոգևորեց Բարզանի բնակիչներին և նրանք ապստամբվեցին Իրաքի կառավարության դեմ: Կառավարության ուղարկած ոստիկանական շոկատի և բարզանցիների միջև տեղի ունեցավ առաջին լուրջ ընդհարումը. ոստիկանական շոկատը ամբողջապես գերի վերցվեց: Ապստամբությունը շուտով լայն թափ ստացավ, ընդգրկելով հատկապես Մոսուլի և էրբիլի շրջանները: Իրաքի Քուրդիստանի տարբեր ծայրերից նորանոր խմբեր էին գալիս և միանում բարզանցիներին: 1943 թ. սեպտեմբերից մինչև 1944 թ. մայիսը ապստամբների և կառավարական զորքերի միջև տեղի ունեցան մի շարք արյունալի մարտեր: Ապստամբությունը ճնշելու համար կառավարությունը ստիպված եղավ մի ամբողջ բանակ ուղարկել<sup>1</sup>, որի ընդհանուր հրամանատարությունը դրվեց անգլիական զենեքալ Բրոմիլոյի վրա: Դրա հետ մեկտեղ Իրաքի կառավարությունը քրդական մի քանի քաղաքական գործիչների առաջարկեց միջնորդի դեր խաղալ ապստամբների և կառավարության միջև: Այդ ժամանակ Իրաքյան Քուրդիստանում հակակառավարական, ապստամբական տրամադրություններն այնքան ուժեղ էին, որ ապստամբներին և կառավարությանը հաշտեցնելու մտադրություն ունեցող քրդական քաղաքական գործիչներն անգամ չհամարձակվեցին դիմել այդ քայլին: Դրանից հետո կառավարությունը օգնության համար դիմեց Իրաքում գտնվող անգլիական դեսպան Կորնվալիսին: Վերջինս խոստումնալից մի նամակ ուղարկեց ապստամբության ղեկավարներին և իր կառավարության անունից առաջարկեց տրոշակի պայմաններով դադարեցնել ապստամբությունը: Հետաքրքրական է նշել, թե ինչպես Կորնվալիսը ճարպիկ կերպով օգտագործում էր Սովետական Միության նկատմամբ քրդերի ունեցած համակրանքը: Նամակում ասվում էր, որ Իրաքը Անգլիայի և ՍՍՌՄ-ի դաշնակիցն է ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող պատերազմում և հավաստիացնում էր նրանց, որ ՍՍՌՄ-ի դաշնակից Անգլիան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կաշտպանի քրդերի ազգային ինքնավարության պահանջները: Դրանից հետո ապստամբների և կառավարության ներկայացուցիչների միջև սկսվեցին բանակցություններ:

Նուրի Սայիդի կառավարությունը Մուստաֆա Բարզանու հետ տարվող բանակցություններում տրպես իր կառավարության ներկայացուցիչ նշանակեց անպորտֆել մինիստր, ազգությամբ քուրդ

<sup>1</sup> St. Langriss and F. Stoakes, Iraq, London, 1958, p. 207.

Մաշիդ Մուստաֆային: Որոշ ձգձգումներից հետո, վերջապես, ապստամբների համար նպաստավոր համաձայնություն կայացավ: Կառավարությունը ապստամբների հետ համաձայնության եկավ հետևյալ հարցերի շուրջը.

1. Կառավարության կողմից ազատ են արձակվում ապստամբության ձեռքակալված մասնակիցները:

2. Ապստամբները պահպանում են իրենց զինված ուժերը և զենքերը, ներառյալ Իրաքի բանակից խլվածները:

3. Քուրդիստանում արար չինովնիկների փոխարեն նշանակվում են քրդեր:

4. Քուրդիստանի մատակարարումը (պարենով և արդյունաբերական ապրանքներով) իրագործվելու է արդարացի սկզբունքներով:

5. Իրաքի Քուրդիստանը կուլտուրայի և կրթության բնագավառում ստանում է ինքնավարական իրավունքներ. բացվում են դպրոցներ և հիվանդանոցներ<sup>1</sup>: Սակայն հաշտությունից որոշ ժամանակ անց, երբ կառավարությունը կարողացավ ի մի բերել իր ուժերը, Իրաքի ռեգենտ Աբդուլ Իլահը հրաժարվեց պառլամենտի հաստատմանը ներկայացնել քրդերի իրավունքների մասին օրենքի նախագիծը: Դա հասցրեց Նուրի Սայիդի կաբինետի անկման և նրա տեղը գրավեց Ռամդի-Պաշային: Նոր կառավարությունն սկսեց հալածել ապստամբություն մասնակիցներին: Կառավարության հակաքրդական քաղաքականությունն ավելի ընդգծվեց. ուժեղացան չինովնիկների կամայականությունները և քրդերի ազգային իրավունքների ոտնահարումը: 1945 թ. իրաքյան Քուրդիստանում նոր ապստամբություն բռնկվեց և այս անգամ ավելի լայն թափ ստացավ: Նորից շարժման գլուխ կանգնեց Մուլա Մուստաֆան: Ապստամբները պահանջում էին Իրաքի սահմաններում ճանաչել քուրդ բնակչության ինքնավարական իրավունքները, անհրաժեշտ պայմաններ ստեղծել քրդական մշակույթի զարգացման համար, բարելավել լուսավորության և առողջապահության գործը, քրդական շրջանները ապահովել պարենային և արդյունաբերական ապրանքներով: Կառավարությունը իր բանակի գրեթե կեսը, ինչպես նաև 6 հազար ոստիկաններ, ուղարկեց ապստամբության շրջանը: Գործի դրվեց ավիացիան: Ապստամբությունը ճնշելու համար մոբիլիզացվեցին 25 ումբակոծիչներ և կործանիչներ: Ապստամբների դեմ գործող

<sup>1</sup> L. Rambout, „Les kurdes et le Droit“, Paris, 1947, p. 78.

բանակի ընդհանուր հրամանատարությունը հանձնարարվեց Իրաքի բանակում ծառայող անգլիական զիներալ Ռոնտենին:

Այդ ժամանակ Մուլա Մուստաֆան կազմեց 4—5 հազար հոգուց բաղկացած ջոկատ, որի հրամանատարական կազմը հիմնականում բաղկացած էր Իրաքի բանակի քուրդ սպաններից: Բարզանցիների ապստամբությանը հարեցին նաև քրդական մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ: 1945 թ. օգոստոսի 7-ին Իրաքի բանակի հրետանին սկսեց զնդակոծել քրդական գյուղերը, իսկ հետևակը փորձեց առաջ շարժվել: Առաջին իսկ մարտերից բարզանցիների ջոկատները Դալես գյուղի մոտ ջախջախեցին և փախուստի մատնեցին Իրաքի կառավարական զորքերին: Իրաքի բանակի շորս գումարտակ ջախջախելուց հետո ապստամբները հակահարձակման անցան: Շուտով նրանց հաջողվեց գրավել Ջախո, Աքրա, Ամադիա, Ջերար և Ռեանդուզ քաղաքները: Մուլա Մուստաֆան իր զորքով իջավ հարթավայր և արդեն գտնվում էր էրբիլ քաղաքից 20 կմ հեռավորության վրա: Նկատի առնելով ստեղծված դրությունը Իրաքի կառավարությունը ստիպված եղավ էվակուացնել 11 ուղղման բազաներ: Ամբողջ իրաքյան Քուրդստանում ուղղման դրություն մտցվեց, սկսեցին գործել ուղղա-դաշտային դատարանները: Դիմելով Իրաքի բանակի զինվորներին ապստամբները հայտարարում էին, թե քրդակամ ջոկատները, «պաշտպանում են միայն քուրդ ժողովրդի օրինական իրավունքները և չեն պայքարում արաբ ժողովրդի դեմ»: Ապստամբներն Իրաքի բանակի արաբ և քուրդ զինվորներին առաջարկում էին «եղբայրական արյունը չթափել և հրաժարվել քրդական ջոկատների դեմ կռվելուց»<sup>1</sup>:

Նկատի առնելով անգլիական իշխանությունների միջամտության վտանգը, ապստամբները նամակ ուղարկեցին նրանց՝ պահանջելով չմիջամտել իրենց ներքին գործերին: Սակայն, երբ ապստամբները մոտեցան Կիրկուկին, անգլիական ինքնաթիռները սկսեցին անխնա ուժակոծել քրդական շրջանները: Ռմբակոծվեց քրդական ավելի քան 55 գյուղ, ընդ որում 5 գյուղ, այդ թվում և բուն Բարզանը, հողին հավասարեցվեց: Ապստամբները կանանց և երեխաներին փոխադրեցին լեռնային դժվարամատչելի վայրեր, իսկ իրենք ճեղքելով թշնամու օղակը բարձրացան սարերը, որտեղ շարունակեցին պարտիզանական կռիվները: Տեղի ունեցած ընդհարումների ժամանակ նրանք խփեցին կառավարական զորքերի 9

<sup>1</sup> Шамзини С. А., Национально-освободительное движение курдов 1941—1945 гг., стр. 13.

ինքնաթիռ, գրավեցին մի քանի ռադիոկայաններ և մեծ քանակությամբ ռազմամթերք: 1945 թ. սեպտեմբերին ապստամբները կռվով նահանջեցին դեպի Իրանի սահմանները և միացան Իրանում ծավալված քրդական դեմոկրատական շարժմանը<sup>1</sup>:

Ազատագրական շարժման մասնակիցների դիմադրությունը կոտրելուց հետո Իրաքի կառավարությունը սկսեց դաժան հաշվհարդար տեսնել նրանց հետ: Քուրդիստանում սկսեց մոլեգնել տեռորը: Կառավարությունը ի բացակայություն մահվան դատապարտեց Մուլլա Մուստաֆա Բարզանուն: Բարզանի շրջանն անվտանգ դարձնելու նպատակով կառավարությունը տեղի բնակիչներին սկսեց երկրի մյուս, կլիմայական անբարենպաստ պայմաններ ունեցող շրջանները տեղափոխել: Իրաքի կառավարությունը Քուրդիստանում երկար ժամանակ ռազմական դրություն էր պահպանում: Ամբողջ Իրաքով մեկ սկսեցին դեմոկրատներին հետապնդել և բանտերը նետել: Ապստամբությունը ճնշելուց հետո կառավարությունը հատուկ դաժանություններ հաշիվ էր տեսնում Իրաքի բանակի այն քուրդ սպանների նկատմամբ, որոնք անցել էին ապստամբների կողմը և ակտիվորեն պայքարել կառավարական պատժիչ զորքերի դեմ: Շարժման առավել ակտիվ մասնակիցները մահապատժի ենթարկվեցին: Չնայած գործադրվող դաժան միջոցներին, քրդական ազատագրական շարժման ակտիվ մասնակիցները իրենց խիզախ էին պահում, չթաքցնելով ժողովրդի ազատագրման գործին մինչև վերջ նվիրված լինելը: Նրանք անարգանքի սյունին էին գամում Իրաքի ծախու կառավարողներին և նրանց անգլիական հովանավորներին: Երբ ապստամբության ակտիվ մասնակից, մահվան դատապարտված կապիտան Մուստաֆա Խոշնավին մոտեցրին կախաղանին, դիմելով ոստիկաններին նա հայտարարեց. «Դահիճներ, ասացե՛ք ձեր տերերին, որ իմ արյան վրեժը կլուծվի: Ծա չեմ հավատում ձեր ուժերին... ես հպարտանում եմ այն մտքով, որ իմ անունը հայրենակիցների կողմից կհիշվի այն անոնների հետ, որոնք իրենց կյանքը զոհեցին են Քուրդիստանի վեհություն և երջանկության համար»<sup>2</sup>: Անօրինակ կամք և հերոսություն ցուցաբերեց նաև մայրիզադ Աբդուլ Ազիզը: Նա հայտարարեց. «Իմ և իմ ընկերների արյունով է շրված ազատության ծառը: Ուզում եմ հոռալ, որ նա շուտով կծաղկի և ազատություն ու երջանկություն կտա հայրենիքին: Մահ իմպերիալիստներին և նրանց ստոր ծառաներին»<sup>3</sup>: Բացառիկ

<sup>1</sup> St. Longriss and F. Stoakes, Iraq, London, 1958, p. 209.

<sup>2</sup> Bulletin du Centre d'Etudes kurdes № 4, 1949, Paris, p. 10—11.

<sup>3</sup> Նույն տեղում:

ներստության օրինակներ ցուցաբերեցին մահվան դատապարտված կապիտան Հեյրուլյա Արդուլ Քերիմը, լեյտենանտ Մահմեդե Մահմեդը և ուրիշներ: Այսպիսով, 1945 թ. իրաքյան Քուրդիստանում բռնկված ապստամբական շարժումը պարտություն կրեց, որի պատճառները հետևյալն էին.

1. Ապստամբական շարժումը որոշ թափ ստացավ, սակայն չընդգրկեց ամբողջ իրաքյան Քուրդիստանը:

2. Չնայած շարժման մասնակիցների մի շարք փորձերին (թուղիկների տարածում և այլն), քրդական ազատագրական շարժման և արար աշխատավորների՝ Իրաքի կառավարության և անգլիական տիրապետության դեմ մղվող պայքարի միջև կապը թույլ էր:

3. Եթե բարդանցիները և նրանց միացած քրդաբնակ այլ շրջանների բնակիչները պայքարում էին իրաքյան կառավարության և անգլիական իմպերիալիզմի դեմ, ապա քրդական ֆեոդալական ավագանու որոշ մասը գտնվում էր անգլիական գործակալների ազդեցության տակ. նա կամ չէր մասնակցում քրդական ազատագրական շարժմանը, կամ, որոշ դեպքերում, օգնում էր շարժումը ներսից թուլացնելուն: «Բարզանու ապստամբության անհաջողության պատճառը,—գրում են Լոնգրիզը և Ստոակսը,—այն էր, որ կառավարությունը քաղաքական և ֆինանսական միջոցներով իր կողմը գրավեց Բարզանու համախոհներին»<sup>1</sup>:

1946 թ. հունիսին, Իրաքում կառավարության գլուխ կանգնեց Արշադ-ալ-Ումարին: Ալ-Ումարիի կառավարությունը ազգային ազատագրական շարժումը ճնշելու համար դիմեց ամենադաժան միջոցների, սկսեց ամենուրեք հետապնդել ազգային կազմակերպությունները: Այդ ժամանակ էր, որ Կիրկուկում տեղի ունեցան Կաուր Բագի արյունալի դեպքերը: Ավելի քան վեց հազար գործադուլավոր անգեն բանվորներ հավաքվեցին Կիրկուկի մոտակայքում գտնվող Կաուր Բադում, որպեսզի իրենց պահանջները ներկայացնեն նավթային կոմպանիային: Ոստիկանությունը զնդակոծեց բանվորներին: Մի քանի բանվորներ սպանվեցին, շատերը վիրավորվեցին, ձերբակալվեցին գործադուլի ակտիվ մասնակիցները: Չնայած կառավարության ձեռնարկած միջոցառումներին, ժողովրդական հուզմունքը փնալով աճում էր: Այդ պայքարին ակտիվորեն մասնակցում էր նաև արաբ և քուրդ ուսանողությունը: 1948 թ. սկզբին Բաղդադի իրավաբանական կոլեջի ուսանողները անգլո-իրաքյան նոր՝ պորտոմոտյան պայմանագրի դեմ ուղղված ցույց կազմա-

<sup>1</sup> St. Longriss, F. Stoakes, Iraq, 1958, London, p. 210.

կերպեցին: Ոստիկանութիւնը գնդակոծեց ցույցի մասնակիցներին, որը խոր զայրույթ առաջացրեց ժողովրդական մասսաների մեջ: Ի նշան իրավաբանական կռիւի ուսանողների հետ միասնութեան դասադուլ հայտարարեցին նաև մյուս կռիւների և բուհերի ուսանողները: Նրանք փողոց դուրս եկան «Կորչի՛ պայմանագիրը», «Պահանջում ենք Իրաքի անկախութիւն» լոզունգներով: Իրաքի ազգային-ազատագրական շարժման մասնակիցները գիտեին, թէ ինչ է թաքնված անգլո-իրաքեան պայմանագրի ետևում: Նրանց համար դժվար չէր հասկանալ, որ «համատեղ պաշտպանութեան» իրավունքը Անգլիային ազատ հնարավորութիւն էր տալիս հանդես գալ որպէս ազգային ազատագրական շարժման ճնշող, որը պետք է կատարեր իր պայմանագրային պարտքը:

Ժողովրդին հանգստացնելու համար կառավարութիւնը սկզբում որոշ զիջումների դիմեց. ազատեց բանվորներին, բացեց իրավաբանական կռիւը: Միևնույն ժամանակ Իրաքի կառավարական պատվիրակութիւնը կոնդուկտ շարունակում էր գաղտնի բանակցութիւնները: Կոնդուկտ անգլիական իմպերիալիզմի հավատարիմ լակեյներ, սենատի նախագահ Նուրի Սայիդի և այդ ժամանակվա պրեմիեր-մինիստր Ջարրի կողմից ստորագրված Պորտամուտի պայմանագիրը ոչնչով չէր տարբերվում 1930 թ. ստրկացուցիչ պայմանագրից: Հարբանիայի և Շայբեյի ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակութիւն ունեցող ավիացիոն բազաները շարունակում էին մնալ Անգլիայի ձեռքում: Անգլիական զորքերը իրավունք ստացան ազատորեն շարժել Իրաքի տերիտորիայով: Իրաքի կառավարութիւնը հույս ուներ դրանք օգտագործել երկրի ազգային ազատագրական շարժումները ճնշելու նպատակով: Անգլիական իմպերիալիստներն Իրաքի բնակչութեան ուսերին դրեցին «արտաքին սպառնալիքի» հետ կապված պարտավորութիւնները: Դրա համար պայմանագրով նախատեսվում էր ստեղծել «համատեղ պաշտպանութեան կոմիտե», որը պետք է կոորդինացներ «պաշտպանական բնույթի աշխատանքները: Պայմանագիրն Իրաքի բանակը կապում էր անգլիականի հետ: Իրաքի զինվորական ստորաբաժանումները պարտավոր էին, ինչպէս երկրի ներսում, այնպէս էլ դրանից դուրս համագործակցել անգլիական զորամասերի հետ:

Պայմանագրի տեքստի հրապարակումը այն աստիճան վատ ընդունվեց ժողովրդական մասսաների կողմից, որ նույնիսկ երկրի ձախ ուժերից հեռու կանգնած տարրերը սկսեցին հանդես գալ գրաքննադատութեամբ: Օպոզիցիայի առաջին շարքերում գտնվող արաբ և քուրդ ուսանողները հունվարի 17-ին որոշեցին որպէս բողոք



եռօրյա դասադու հայտարարել: Հունվարի 20-ին ոստիկանությունը կրակ բացեց պառլամենտի շենքին մոտեցող ուսանողների վրա: Շատ ուսանողներ սպանվեցին և վիրավորվեցին: Հաջորդ օրը ոստիկանության ձեռքով սպանվեցին իրենց վիրավոր ընկերներին այցի եկած երկու ուսանողներ: Հուլիսին ընդգրկեց մյուս շրջանները: Բաղդադում կազմակերպված բողոքի ցույցի մասնակիցները ենթարկվեցին զնդակոծման: Նույն ժամանակամիջոցում լարված վիճակ էր ստեղծվել Իրաքի գրեթե բոլոր քրդաբնակ շրջաններում, Կիրկուկից մինչև էրբիլ:

«Սալեհ Ջաբրի կառավարությունը,— գրում էր Լոնդոնում լույս տեսնող «Նայնթինս սենչըրի էնդ աֆթըր» ժուռնալը,— որը փետրվարի 15-ին Անգլիայի հետ կնքեց պորտամուտյան պայմանագիրը, տապալվեց Բաղդադի կենտրոնում գտնվող կամուրջի վրա տեղի ունեցած արյունալի մարտից հետո, որի ժամանակ սպանվեցին 32 ցուցարարներ և անհայտ թվով ոստիկաններ: Ցույցի մասնակիցները հակազդուհի էին գնում ոստիկանության դեմ, ոստիկաններին գցելով Տիգրիսի ջրերը... Հուլիսին մայրաքաղաքով շահմանափակվեցին: «Փողոցը» տիրապետում է նաև քրդական մայրաքաղաք Սուլեյմանիեում, Հյուսիսային Իրաքում, էրբիլում, նավթային կենտրոններում՝ Կիրկուկում և Մոսուլում<sup>1</sup>: Պորտամուտյան պայմանագրի դեմ Սուլեյմանիեում տեղի ունեցավ բողոքի մեծ ցույց: Կառավարությունը քրդական պրոֆմպերիալիստական ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչների մասնակցությամբ զնդակոծեց ցուցարարներին. սպանվեցին և վիրավորվեցին բազմաթիվ քուրդ հայրենասերներ:

Երկրում ստեղծված լարված վիճակը հասցրեց այն բանին, որ Ջաբրի կառավարությունը հրաժարական տվեց: Անգլիական իմպերիալիզմի հլու կամակատար, երկրի դեմոկրատական շարժման մոլի թշնամի նուրի Սայիդը ժողովրդի զայրույթից փրկվելու համար ապաստան գտավ Թուրքիայում: Երկրից փախավ նաև Ջաբրը: Ստեղծված պայմաններում Իրաքի պառլամենտը ստիպված էր հրաժարվել պայմանագիրը հաստատելուց: Այսպիսով, «համատեղ պաշտպանություն» ստեղծման նոր փորձը ձախողվեց: 1948 թ. մարտի կեսերից արաբա-պաղեստինյան պատերազմի պատրվակով երկրում արտակարգ դրություն մտցնելուց հետո, նորից սկսվեց ուսանողների հարձակումը երկրի առաջագիծ ուժերի դեմ: Այդ ուսանողների ուժեղացավ հատկապես 1949 թվականի վերջերից, երբ նորից

<sup>1</sup> Nineteenth Century and after, VI, 1948.

կառավարության գլուխ կանգնեց Նուրի Սալիզը: Զինվորական դատարանները գործում էին օր ու գիշեր, բանտ ու համակենտրոնացման ճամբարներ ուղարկելով Իրաքի հայրենասերներին, ազգային-ազատագրական շարժման ներկայացուցիչներին: Հակաիմպերիալիստական ընդհանուր դժգոհության պայմաններում Իրաքի կառավարությունը և նրա իմպերիալիստական տերերը մտածում էին նոր միջոցներով ներքին հրատապ խնդիրներից շեղել ժողովրդական մասսաների ուշադրությունը: Դրանից ելնելով նրանք չէին խորշում ազգամիջյան ընդհարումներ հրահրել արաբների և քրդերի մեջ: Իրաքի քրդական հասարակայնության լայն խավերի մեջ գնալով ուժեղանում էին հակաիմպերիալիստական շարժումը: Եթե առաջին համաշխարհային պատերազմից հետո շատ թե քիչ պատրանք կար, թե անգլիական կառավարությունը «հովանավորում է քրդերին», ապա երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այն բուրժուազիան չբացավ: Թե ինչպես էր Անգլիան վերաբերվում քրդական ազատագրական շարժումներին, կարելի է դատել հենց անգլիական մամուլից: Այսպես. անգլիական «Ուորլդ Ռեվյու» թերթում 1946 թ. հունիսին Վիտոլդ Ռաժկովսկին հանդես եկավ մի հոդվածով<sup>1</sup>, որի վերնագիրն արդեն բավական է քրդական ազատագրական շարժումների նկատմամբ անգլիական իմպերիալիստների ունեցած վերաբերմունքը հասկանալու համար: Հոդվածը վերնագրված էր «ԵՎԸ մեկ վտանգավոր կետ—Քուրդիստան»: Դրանում նշվում էր, որ իմպերիալիստական տիրապետության դեմ ըմբոստացող «կետերի» թվին ավելացավ ևս մի նոր «կետ»: «Մերձավոր արևելքում այժմ տիրող դրության կապակցությամբ,—գրում էր Ռաժկովսկին,— հրատապ է դառնում Քուրդիստանի վերաբերյալ հարցը»: Թերթն իր երկուդն էր հայտնում, որ քրդական շարժման ղեկավարները ձրգտում են բոլոր քրդերի ազատագրմանը, իսկ դա «կնշանակի նավթային բոլոր շրջանների ներգրավում Քուրդիստանի մեջ, որը ձեռնտու չէ Անգլիային և նրա արբանյակներին»: Մուռ հայելու մեջ ներկայացնելով Սովետական Միության քաղաքականությունը գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների նկատմամբ, հոդվածագիրն ասում է. «Ռուսաստանը համակրում է քրդական շարժմանը, որովհետև աչք ունի նավթի վրա»: «Քրդերին շարժման մեջ դնող առաջին քայլը Ուրմիա լճից արևմուտք քրդական ինքնավար հանրապետության ստեղծումը եղավ: «Քրդական Պիեմոնտի» ստեղծումից հետո հնարավոր կլինի և Իրաքի դեմ քրդերի ընդհանուր ապստ-

<sup>1</sup> «World Review». 14.VI.1946.

տամբություն հռչակել, դրա համար էլ,—եզրակացնում է հոգվածագիրը,—հեշտ է հասկանալ, թե ինչու այս երկու երկրների կառավարութիւնները շտապեցին պայմանագիր կնքել, նպատակ ունենալով ընդհանուր ճակատ ստեղծել՝ ընդդեմ ռուսների հնարավոր հարձակման, որի մեջ քրդերը կարող էին հրահրողի դեր խաղալ<sup>1</sup>։ Հոգվածի հեղինակը հակված լինելով քրդերի դեմ թուրք-իրաքյան միջոցառումները կազմակերպելու անհրաժեշտութեան տեսակետին, փաստորեն ցույց է տալիս Անգլիայի թշնամական դիրքը քրդական ազատագրական շարժումների նկատմամբ։

Ազգային-ազատագրական շարժման մեջ ակտիվ դեր էր խաղում Իրաքի կոմունիստական պարտիան։ Չնայած ընդհատակյա ծանր պայմաններին, նա օգտագործում էր բոլոր միջոցները՝ ազգային-ազատագրական պայքարին կազմակերպված բնույթ տալու համար։ Նա քուրդ հասարակայնութեան մեջ աշխատանք էր տանում Իրաքի կոմպարտիայի քրդական սեկցիայի միջոցով։ Քրդական սեկցիայում ընդգրկված էին Քուրդիստանի հասարակայնութեան առաջավոր տարրերը։ Կոմպարտիան արարեց քուրդ աշխատավորութեանը պայքարի էր կոչում ընդդեմ ընդհանուր թշնամու Կոմպարտիայի քրդական սեկցիայի ծրագրում ասված էր. «Քրդերի և արաբների միջև փոխըմբռնում և եղբայրական կապերի ամրապնդում երկու ժողովուրդների ազատագրման բազայի վրա. համագործակցութիւն բոլոր ազատ արաբների հետ, նրանց կազմակերպութիւնների և պարտիաների հետ... հանուն ազատագրական պայքարի, ժողովուրդների երջանկութեան և քրդերի ու արաբների իղձերի իրականացման»։ Իրաքի կոմպարտիան առաջին պլանի վրա էր գրնում արաբների և քրդերի միասնական հակաիմպերիալիստական պայքարի հարցը։ Հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական շարժման առաջավոր դիրքերում էին գտնվում երկրի արդյունաբերական շրջանների բանվորները։ Հայտնի է, որ արդյունաբերական (հատկապես նավթային) օբյեկտների զգալի մասը գտնվում է երկրի հյուսիսային մասում, որտեղ մեծ թիվ են կազմում քուրդ բանվորները։ Նրանք բազմիցս գործադուլներով և զինված ելույթներով պահանջում էին վերացնել աշխատանքի ծանր պայմանները, բարձրացնել աշխատավարձը, քրդական փոքրամասնութեանը ազգային ինքնավարութեան իրավունքներ տալ։ 1946 թ. ամռանը Իրաքում ստեղծվեց արհմիութիւնների կապի կոմիտե։ Նույն տարին, Կիրկուկի նավթային ձեռնարկութիւնների հազարավոր

<sup>1</sup> „World Review“, 14.VI.1946.

բանվորներ հայտարարեցին երկրում ամենախոշոր գործադուլը, որը տևեց 13 օր: Գործադուլավորները պահանջում էին արհմիությունների գործունեության ազատություն, աշխատավարձի բարձրացում, սոցիալական ապահովության ֆոնդի ստեղծում, քրդերի և արաբների համար այնպիսի իրավունքների ապահովում, որպիսիք ունեին օտարերկրացիները: Իրաքի կառավարությունը ամենավարագ կերպով ճնշեց գործադուլը: Գործադուլի մասնակիցներին գնդակոծեցին թնդանոթներից, շատերին բանտ նետեցին: Կիրկուկում քուրդ, արաբ և թուրքմեն բանվորները ցույց տվեցին հերոսության օրինակ: Ոչ կառավարության ճնշումը, ոչ օտարերկրյա ձեռնարկատերերի խոստումները չէին կարող բանվոր դասակարգին ետ պահել պայքարից: Մեկ տարի անց, Կիրկուկում բռնկվեց մի նոր, ավելի մեծ գործադուլ, որին մասնակցեցին նավթային ձեռնարկությունների մեծ մասի բանվորները<sup>1</sup>: Այդ պայքարի հետևանքով նավթային կոմպանիաները միլիոնավոր դինարների վնաս կրեցին: Սակայն այս գործադուլը ևս ճնշվեց: Ձեռնարկությունների մեծ թվով բանվորներ հեռացվեցին աշխատանքից: Ընդ որում օգտվելով առիթից, ոստիկանական գործակալների մասնակցությամբ և ցուցումով ձեռնարկատերերը աշխատանքից առաջին հերթին հեռացնում էին ազատագրական, դասակարգային պայքարի առավել աչքի ընկնող մասնակիցներին:

Իրաքի քրդական ազատագրական շարժման մասնակիցները հասկանում էին, որ արաբական ժողովուրդների ազատագրական պայքարը պայքար է նաև իրենց՝ քրդերի ազատագրման համար, որ իմպերիալիստական ճակատի թուլացումը ազգային ազատագրական շարժման հաջողության կարևոր պայման է: Եգիպտոսի դեմ իմպերիալիստական ագրեսիայի ժամանակ Բասրայի դոկերները հրաժարվեցին բեռնաթափել անգլիական և ֆրանսիական նավերը, իսկ Կիրկուկի նավթագործները միասեցին նավամուղը և պայթեցրին անգլիական հրապատոսության շենքը: Այդ նույն ժամանակ, հատկապես քուրդ և արաբ երիտասարդների ջանքերով, ինչպես իմպերիալիստական ագրեսիայի դեմ բողոքի, ցույցեր կազմակերպվեցին Մոսկուում:

Իրաքի կոմպարտիան մեծ աշխատանք էր տանում ներքին և արտաքին հետադիմական ուժերի դեմ պայքարի ազգային ճակատ կազմակերպելու համար: ՃԱԽՕՐ մեր ամենահրատապ խնդիրը, —

<sup>1</sup> Кузнецов А. А., Ирак под властью британского империализма. Труды ин-та востоковедения АН СССР, вып. 6, 1951, стр. 44.

ասում էր Իրաքի կոմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար Յուսեֆ Սալմանը (Ֆահեդ),—համարվում է բոլոր աշխատավորների շանքերի միավորումը հանուն գլխավոր, անհետաձգելի խնդրի իրագործման—ազգային ճակատում միավորվելու: Այս խնդրի իրականացման անհրաժեշտությունը մինչև վերջ հասկացել են ոչ միայն գիտակից հայրենասերները, այն սկսել է ավելի շատ հասնել ժողովրդական մասսաների գիտակցությանը, որոնք պահանջում են իրագործել այն: Ազգային ճակատն արդեն տեսություն չէ, որը կարիք ունենար քննարկման: Տարբեր երկրների փորձը ցույց է տվել, որ դա ունակցիայի և իմպերիալիզմի ուժերը կանախեցնելու միակ ուղին է, ունակցիայի ոչնչացման և նրա շղթաներից ճնշված ժողովրդի ազատագրման միակ գործուն գնալը<sup>1</sup>: Իրաքի կոմունիստական պարտիան հանդես էր գալիս որպես երկրի բոլոր դեմոկրատական ուժերի միասնական ճակատ ստեղծելու նախաձեռնող:

Իրաքի կառավարողները դաժան հաշվեհարդար էին տեսնում ազգային-աղատադրական շարժման մասնակիցների հետ. սակայն նրանք առանձնապես դաժանություն և տմարդիորեն էին վարվում Իրաքի ազատագրական շարժման աննկուն ղեկավարների՝ կոմունիստների հետ: Իրաքի հազարավոր խիզախ հայրենասերներ տանջանքների էին ենթարկվում բանտերում, համակենտրոնացման ճամբարներում, զնդակահարվում էին ու կախաղան բարձրացվում: Գաղտնի ոստիկանության գործակալները 1947 թ. Բաղդադում ձերբակալեցին Իրաքի կոմպարտիայի Կենտկոմի մի խումբ անդամների, այդ թվում գլխավոր քարտուղար Յուսեֆ Սալմանին (Ֆահեդ): Ժողովրդական բողոքի ճնշման տակ Ֆահեդի և նրա զինակիցների նկատմամբ կայացված մահվան դատավճիռը փոխարինվեց տաժանակրոնությամբ: Սակայն երկու տարի անց, նուրի Սայիդի պնդումով նրանց նկատմամբ դատական նոր պրոցես սկսվեց: Ֆահեդը և Իրաքի կոմպարտիայի ԿԿ-ի քաղբյուրոյի անդամներ Զաքի Բասիմը և Հուսեյն Աշ Եաբիբին մահվան դատապարտվեցին (կախաղանի միջոցով): 1949 թ. փետրվարի 14-ի առավոտյան այդ անմարդկային վճիռն ի կատար ածվեց: «Ծն մեռնում եմ որպես կոմունիստ, իսկ կոմունիզմը մահից ուժեղ է»,—մահապատժից առաջ հպարտորեն հայտարարեց Ֆահեդը: Հրաժեշտ տալով իր մորը, Զաքի Բասիմն ասաց. «Դ՛նչո՞ւ եք բալիս, մայրիկ, դուք պետք է

<sup>1</sup> Милованов и Сейфуль-Мулюков, Ирак вчера и сегодня, М., 1960, стр. 44.

հպարտանաք այն բանով, որ ձեր որդին մեռնում է իբրև կոմունիստ: Գիտցեք, որ եթե ինձ վիճակվեր նորից աշխարհ գալ, ես նորից կընտրեի այն ուղին, որով անցել եմ»<sup>1</sup>:

1954 թ. Նուրի Սայիդը սկսեց իրագործել երկրի ազգային-ազատագրական շարժման մասնակիցների դեմ ուղղված նոր ծրագիր: Արգելվեցին քաղաքական բոլոր պարտիաները, 1955 թվականի օգոստոսի 22-ին հրապարակվեց «Իրաքի քաղաքացիությունից զրկելու մասին» օրենքը, ըստ որի Մինիստրների խորհուրդը իրավունք էր ստանում ներքին գործերի մինիստրի առաջադրմամբ Իրաքի քաղաքացիությունից զրկել կոմունիստական գործունեության մեջ մեղադրվող երկրի յուրաքանչյուր քաղաքացու:

1955 թ. փետրվարի 24-ին Իրաքը և Թուրքիան ստորագրեցին Բաղդադի պակտը: Ապրիլի 4-ին այդ պակտին միացավ նաև Անգլիան. նրան հետևեց Պակիստանը, որը պակտին միացավ սեպտեմբերի 23-ին, իսկ 1956 թ. հոկտեմբերի 19-ին Իրանը: Մերձավոր և Միջին արևելքում ծավալվող ազգային-ազատագրական շարժումների դեմ պայքարելը պակտի մասնակիցների հիմնական հարցերից մեկն էր: Չնայած այդ բանը քողարկված պահերու բոլոր փորձերին, շուտով այն պարզ դարձավ լայն հասարակաճությունը: Այս տեսակետից հետաքրքիր տեղեկություններ է տալիս Բեյրութում հրատարակվող «Բալկան է Մուսլան Օրիան» բյուլետենում լույս տեսած հոդվածներից մեկը. 1955 թվականի օգոստոսի 16-ին բյուլետենը հրատարակեց «Այժմյան թուրք-իրաքյան բանակցությունների անդրկուլիսյան կողմը» հոդվածը: Այնտեղ ցույց է տրված, թե ինչպես թուրք-իրաքյան կառավարողները գեռես երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում արդեն եռանդուն աշխատանք են կատարել քրդական ազատագրական շարժումների դեմ համատեղ պայքարելու համար: Բաղդադի պակտը փաստորեն այդ ուղղությամբ առաջին քայլը չէր, այլ դրա շարունակությունը նոր պայմաններում: «Մի կարճ ինֆորմացիայում, — ասվում էր բյուլետենում, — բավականին փոքր՝ աննկատ մնալու համար, բուրժուական մամուլը օգոստոսի սկզբին հաղորդել է, որ իրաքյան ոստիկանության պետ Բախուջաթ աթ-Թիախը կժամանի Ստամբուլ՝ «ինտերպոլի սեսիային մասնակցելու համար» (ինտերպոլ — քրեական ոստիկանության միջազգային հանձնաժողով): Իրաքի ներքին գործերի մինիստր Սայիդ Կազասը աթ-Թիախի հետ միասին Բաղդադից Անկարա էր ուղեվորվել, որպեսզի թուրքական ոստիկանության հետ բանակցություն-

<sup>1</sup> Бюллетень ТАСС, № 80, 1949.

ներ սկսի «Թուրքիայի և Իրաքի միջև բարեկամության և բարի դրացիական հարաբերությունների մասին» 1946 թ. պայմանագրի կենսագործման վերաբերյալ:

Բյուլետենի վկայության համաձայն 1946 թ., երբ Թուրք-իրաքյան հետադիմականները միջոցառումներ էին մշակում քրդական ազատագրական շարժումների դեմ միասնաբար պայքարելու նպատակով, նրանք իրենց այդ մտադրությունը քողարկում էին «Տիգրիս գետի ջրերը բաժանելու վրա հսկողություն սահմանելու մասին» խոսակցություններով: Այդ ժամանակ թղթակիցները գեներալ Նուրի Սայիդին այսպիսի մի հարց են ուղղել. «Դուք չէ՞իք բարեհաճի, պարոն մինիստր, մեկնաբանել այն հաղորդումները, որոնց համաձայն, մոտ ժամանակներս ստորագրված պայմանագրին կից լրացուցիչ արձանագրությունը վերաբերում է քրդերի դեմ Թուրքերի և իրաքցիների համատեղ միջոցառումներին, որոնք երկու երկրների զինված ուժերին կթուլատրեին քրդերին հետապնդելիս անցնել նրանց պետությունների սահմանները»: Այդ 1946 թ. մարտի 29-ին էր, երբ գեներալ Նուրի Սայիդը այդ պայմանագրի ստորագրման կապակցությամբ պրես-կոնֆերանս էր կազմակերպել Անկարայի «Անկարապալաս» հյուրանոցում: Նուրի Սայիդն այդ ժամանակ «Դաժան հայացք նետելով հարց տվողին, պատասխանեց, որ արձանագրությունը իբր վերաբերում է միայն Տիգրիսի ջրերի բաժանման վրա հսկողություն սահմանելուն»<sup>1</sup>: Նուրի Սայիդի կողմից Թուրքիայի հետ կնքած այդ պայմանագիրը Իրաքում լուրջ դիմադրության հանդիպեց: Արաբական և քրդական դեմոկրատական հասարակայնությունը կռահում էր, թե ինչ կարող է թաքնված լինել Թուրք-իրաքյան կառավարողների կնքած պայմանագրի ետևում: Պայմանագրի նկատմամբ օպոզիցիոն տրամադրությունն այնքան ուժեղ էր, որ նույնիսկ պառլամենտի շատ դեպուտատներ և սենատորներ հանդես եկան դրա դեմ և այդ էր պատճառը, որ այն միայն մեկ տարի հետո հաջողվեց հաստատել (1947 թ. մարտին, Սալեհ Ջաբրի կաբինետի կողմից):

«1949 թ., — շարունակում է նույն հոդվածագիրը, — արդեն խոսքը գնում էր կոմունիզմի դեմ մղվող պայքարի մասին, իսկ իրականում դա նշանակում էր, կամ ավելի շուտ կոչ էր. «Խփիր քրդերին»: Քանի որ այն, ինչի մասին Կազասը հայտարարում է որպես «կոմունիզմի դեմ պայքարի կազմակերպում», այն ինչ ռաբրի ծերուկ Նուրին» ուզում էր ներկայացնել որպես «Տիգրիս գետի ջրերի բաշխ-

<sup>1</sup> „Balkan et Moyen-Orient“, 1955, № 55, 16.VIII.

ման վրա հսկողութեան սահմանում ոչ այլ ինչ էր, եթե ոչ քրդերի դեմ ուղղված դիսկրիմինացիոն միջոցառումների ընդունում<sup>1</sup>։ Անդրադառնանք թեկուզ «Կոմունիստների դեմ պայքարելու մասին թուրք-իրաքյան համագործակցութեան հարցին» նույն «Բալկան է Մուսլան-Օրիան» բյուլետենը այդ առթիվ գրում էր. «Գրեթե բոլոր, ոչ մեծաթիվ թուրքական կոմունիստները, կամ նրանց համակրողները, գտնվում են բանտերում, կամ Թուրքիայի սահմաններից դուրս, համենայն դեպս ոչ Իրաքում, մենք կարող ենք այդ բանում հավաստիացնել Կադասին, ինչպես նաև Աթ-Թիյախին և այդ պատճառով դժվար է պատկերացնել, թե իրաքյան ոստիկանները այդ բնագավառում ի՞նչ օգնություն կարող էին ցույց տալ իրենց «թանկագին» թուրք կոլեգաներին...։ «Կոմունիստական» պատրվակը քննադատութեան չի դիմանում», — եզրակացնում է ամսագիրը։

Այսպիսով, թուրքական և իրաքյան կառավարությունները իրենց քաղաքականութեան հիմնական հարցերից մեկը համարում էին քրդական շարժումների դեմ միասնական պայքարը։

Վերը հիշատակած բյուլետենը վերջում դրո՞ւմ է, որ իրաք-թուրքական միջոցառումների «օբյեկտը կլինեն կոմունիստները (սա ինքնին հասկանալի է), բայց հավասարապես և քուրդ ազգայնականները և պարզապես քրդերը, որոնց միակ մեղքն այն է, որ կոչվում են քրդեր։ Խոսքը հակաքրդական միջոցառման մասին է, որտեղ քուրդ կոմունիստներին հատուկ ուշադրություն են դարձնելու<sup>3</sup>։

Սակայն քրդական շարժումների դեմ իրագործվող հալածանքները չէին կարող նրա մասնակիցներին ետ պահել պայքարից։ Իրաքի հայրենասիրական ուժերի հետ միասին քրդական հասարակայնության լայն խավերը ակտիվորեն պայքարում էին երկրի ռեակցիոն կառավարության և նրա քաղաքականութեան դեմ։ Այստեղ տեղին է Իրաքի դեմոկրատական ուժերի դեմ կիրառվող հալածանքների կապակցությամբ հիշել քուրդ դեմոկրատ գործիչներից մեկի խոսքերը. «Ովքեր էլ տվում են նրանք լինեն՝ քրդեր, թե ոչ քրդեր, կոմունիստներ, կամ ոչ կոմունիստներ, մարդիկ, որոնք ապրում են Իրաքում, ենթարկվում են աներևակայելի տեռորի։ Սակայն, երե-

<sup>1</sup> „Balkan et Moyen-Orient“, 1955, № 25, 16.VIII.

<sup>2</sup> Նույն տեղում։

<sup>3</sup> Նույն տեղում։



խայտոթյուն կլինեն մտածել, թե այսպես կարող է միշտ շարունակվել<sup>1</sup>:

Բաղդադի ազրեսիվ պակտի կնքումից հետո, նրա դեմ արարների և քրդերի պայքարը շարունակվում էր նոր ուժով: Այդ պայքարի ակտիվ մասնակիցներն էին իրաքյան Քուրդիստանի աշխատավորներն ու մտավորականությունը: Ամբողջ մեկուկես տարի երկրի ժողովուրդը գործադրում էր պայքարի ամենաբազմազան ձևեր՝ ցույցեր, ազգային տարրեր խավերի միավորում ազգային պարտիայի շուրջը, որն ուղղված է Բաղդադի պակտի և Նուրի Սալիհի կառավարության դեմ, խնդրագրեր, որոնք ստորագրվում էին բազմաթիվ քաղաքացիների կողմից, գործադուլներ, որոնք տեղի էին ունենում Բաղդադում, Բասրայում, Սուլեյմանիեում, Կիրկուկում և այլ քաղաքներում: Սուլեյմանիեի, ինչպես նաև նրա հարևան ջրդական շրջանների բնակչությունը ակտիվորեն մասնակցեց այն հուժկու պայքարին, որ 1956 թվականի նոյեմբերին բռնկվեց երկրում: Իրաքի կառավարության պրոիմպերիալիստական քաղաքականության դեմ ուղղված ելույթներին մասնակցեց նաև գյուղացիությունը: Գյուղացիական ապստամբությունները պոռթկացին Միջին Եփրատում, էրբիլում և Սուլեյմանիում, որտեղ կառավարությունը պատժիչ արշավախմբեր ուղարկեց: Հակաիմպերիալիստական այդ պայքարում Իրաքի քուրդ աշխատավորությունը ավելի էր ամրապլնդում իր կապերը արաբ աշխատավորության հետ:

Ետպատերազմյան տարիներին Իրաքի ազատագրական շարժման նկատմամբ ուրույն դիրք էին գրավել ԱՄՆ-ը: Նրանք ամեն կերպ աշխատում էին թաքցնել իրենց թշնամանքը արաբական և քրդական ազատագրական շարժման նկատմամբ: Սակայն Բաղդադի պակտը, որն իր ծայրերից մեկով ուղղված էր Միջին-արևելյան ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ, փաստորեն սկզբից ևեթ կազմակերպվեց ԱՄՆ-ի նախաձեռնությամբ, որոնք և տոն էին տալիս նրա աշխատանքներին:

Չնայած ԱՄՆ-ը պաշտոնապես չմտավ Բաղդադի պակտի մեջ, բայց աչալրջորեն հսկում էր նրա գործունեությունը: 1956 թ. ապրիլին Բաղդադի պակտի երկրների արտաքին գործերի մինիստրների խորհրդի երկրորդ, Թեհրանում կայացած նիստում, Միացյալ Նահանգներն այդ «Խորհրդի հրավերով պակտի տնտեսական և քայքայիչ գործունեության դեմ պայքարող կոմիտեի անդամ դարձան,

<sup>1</sup> „Balkan et Moyen-Orient“, № 25, 16.VIII.1955.

առանց պակտի անդամ լինելու<sup>1</sup>։ Քիչ անց, Միացյալ Նահանգները սկսեցին ավելի եռանդուն մասնակցել պակտի գործունեությանը, հատկապես պատրաստակամութուն հայտնելով ռոզնել պայքարելու իրենց երկրների տերիտորիաների դեմ ուղղված կոմունիստական ագրեսիայի որևէ սպառնալիքի դեմ<sup>2</sup>։ Պարզ էր, որ «կոմունիստական «քայքայիչ» գործունեություն» կամ «տերիտորիալ ամբողջականություն» մասին խոսակցությունների ետևում, թաքնված էին ազգային ազատագրական, իսկ տվյալ դեպքում նաև քրդական ազգային ազատագրական շարժումների դեմ պայքարելու պլանները։ Վերը նշված կոմիտեի գլխավոր խնդիրն էր հետապնդել ազգային-ազատագրական շարժման յուրաքանչյուր մասնակցի։ Այսպես, Իրաքի ոստիկանությունը բանտ նետեց քուրդ հայտնի դեմոկրատ բանաստեղծ Աբդուլա Գորանին այն բանի համար, որ նա իր բանաստեղծություններում հանդես էր եկել Կորեայում ամերիկյան ագրեսիայի դեմ։

Քրդական ազատագրական շարժման նկատմամբ արևմտյան իմպերիալիստական տերությունների գրաված դիրքի վրա մեկ անգամ ևս լույս է սփռում Բեյրութի՝ վերը հիշատակած Ռալֆիան է Մուսայան Օրիան» բյուլետենում հրատարակված հոդվածներից մեկը։ 1955 թվականի ապրիլ-մայիս ամիսների մի քանի համարներում նա «Քուրդիստան» վերնագրով հոդվածաշար տպագրեց։

Միջին արևելքի երկրներն իրենց ռազմական պլացդարմը դարձնելու պլանների մեջ, նշում է բյուլետենը, անդու-ամերիկյան իմպերիալիզմը հատուկ ուշադրություն է դարձրել Քուրդիստանին և քրդական շարժումներին։ «Եթե քրդական հարցը անմիջականորեն վերաբերում է Անկարային, Բաղդադին և Թեհրանին,— գրում է Ռալֆիան է Մուսայան Օրիան»-ը ապա այդ հարցի նկատմամբ մշտապես հետաքրքրություն են հանդես բերում հյուսիս-ատլանտյան պակտի անդամ երկրները, շնայած առաջին հայացքից դա որոշ չափով տարօրինակ է թվում<sup>3</sup>։

«Պենտագոնը,— գրում էր Ռալֆիան է Մուսայան Օրիան»-ը հուլյսը դնում է հետամնացության և անկուտուրականության վրա, որի մեջ ապրում են քրդերը Իրաքում, Քուրդիստանում և Իրանում, որպեսզի նրանց հավաքագրի իր խաչակրաց արշավանքին մասնակցելու համար<sup>4</sup>։ Սակայն, զանազան միջոցներով (բյուլետեններ, գրակա-

<sup>1</sup> Department of State publication 6572 „Background“, Iraq, 1958, p. 15.

<sup>2</sup> Նույն տեղում։

<sup>3</sup> „Balkan et Moyen-Orient“, № 24, VIII, 1955.

<sup>4</sup> Նույն տեղում։

նություն, ռադիոհաղորդումներ և պրոպագանդման այլ եղանակներ) քրդերին խաբելու ամերիկյան իշխանութիւնների ջանքերը ակնհայտորեն շոշափելի արդյունքի չէին հասցնում: Ալինելով հետամնաց, քրդերն այնուամենայնիվ զրկված չեն որոշ առողջ դատողութիւնից, որը նրանց հուշում է, թե ինչն է համարվում արդարացի և ինչն է հակասում նրանց շահերին<sup>1</sup>: Հարկավոր է ընդգծել, որ նույնիսկ ֆեոդալական վերնախավի շատ ներկայացուցիչների մոտ ետպատերազմյան տարիներին այն համոզմունքն է տիրապետում, թե քրդերը ոչինչ չունեն սպասելու արևմտյան իմպերիալիզմից:

Արտասահմանում այն կարծիքն է տարածված, — սովետական ժողովուրդը Պ. Դեմշենկոյի հետ զրուցելիս ասաց Իրաքի քուրդ բեգերից մեկը, — որ իբր ԱՄՆ-ը և Անգլիան ձգտում են անկախ պետութիւն մեջ քրդերին միավորել. դա ճիշտ չէ: Ինքներդ դատեցեք, իմպերիալիստների ինչի՞ն է պետք դա: Հիմա նրանք տնօրինում են իրանական և թուրքական Քուրդիստանում, նույնիսկ պատրաստվում են այնտեղ հրթիռային բազաներ ստեղծել: Քրդերի ազատ պետութիւն մեջ նրանք չեն կարողանա օգտվել այդպիսի ազդեցութիւնից և, հետևաբար կկորցնեն այն, ինչ հիմա ունեն: Կավ հայտնի է, որ քրդական առավել աչքի ընկնող լիդերները Քուրդիստանի բոլոր մասերում հանդես են գալիս իմպերիալիզմի դեմ, իսկ ժողովուրդը անգլիացիներին և ամերիկացիներին համարում է իր թշնամիները<sup>2</sup>:

Ամերիկյան «Թայմ» ամսագիրը դառնութիւնով ընդունում էր քրդերի մեջ ամերիկյան պրոպագանդայի ձախողման փաստը: Այսպես, դրա վկայութիւնով քրդերի միայն աննշան մասն է կարդում այն հաղորդումները, որոնք հրատարակվում են ամերիկյան ժողովրդական կողմից, քրդերեն լեզվով:

«Իսկ ինչո՞ւ քրդերը այլևս չեն տնկնդրում այն ճառերին, որոնք գալիս են Արևմուտքից, այլ, ընդհակառակը լսում են «Կարմիր ռադիոն» հարց է տալիս «Թայմ»-ը: «Այդ բանը տեղի է ունենում այն պատճառով, որ քրդերը համոզվեցին, թե Արևմուտքից եկած խոստումները ոչինչ չարժեն և Արևմուտքը ձգտել է միշտ շահագործել իրենց: Սկզբում խոսքը գնում էր վիլսոնի սկզբունքների մասին: Անգլո-ամերիկյան ամենանշանավոր գործիչները հավաստիացնում էին, որ այդ սկզբունքները կկիրառվեն նաև քրդերի

<sup>1</sup> „Balkan et Moyen-Orient“, № 24, VIII, 1955.

<sup>2</sup> «Современный восток», № 1, 1960 г., стр. 34.

նկատմամբ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ  
ամբողջ Միջին արևելքում տարածվել էին հարյուր հազարավոր  
նկարներ, որոնց վրա պատկերված էր Ամերիկայի պրեզիդենտ  
Ռուզվելտը: Այդ նկարների ետևում քրդերեն լեզվով դրված էր «Մենք  
Ձեզ չենք մոռանա»: Անգլիական դիվանագետներն իրենց հայտա-  
բարություններով մինչև այնտեղ հասան, որ քրդերին խոստացան  
թույլ տալ Ալեքսանդրիտի ծոցի կողմից ելք ունենալ դեպի ծովը<sup>1</sup>:

Սակայն ետպատերազմյան ժամանակաշրջանի ամբողջ պատ-  
մությունը ցույց է ավել, թե Անդրովկիանոսյան ռաբրի քեռիները  
ինչպես էին օգնության ձեռք մեկնում քրդական ազգային-ազա-  
տագրական շարժման մասնակիցներին: Ընդհակառակը, այն պա-  
հից, երբ Իրաքը մտավ Միջին արևելյան ռազմական բլոկի մեջ,  
երկրի բնակչությունն սկսեց ոստիկանական դաժան տեղերի են-  
թարկվել: Իրաքի բնակիչներից մեկը վեց ամսվա բանտարկության  
դատապարտվեց այն բանի համար, որ ձխաղաղություն և բարգա-  
վաճում մաղթանքով մի նամակ էր ստացել: Ընդ որում այդ նա-  
մակում ձխաղաղությունն բառը բոլորովին կապված չէր ձխաղաղու-  
թյան կողմնակիցների շարժման հետ: Իրաքում բանտերը չէին  
բավարարում հազարավոր արաբ և քուրդ քաղաքական բանտարկ-  
յալներին տեղավորելու համար, բանտարկյալներ, որոնց Անգլիայի  
գաղութների մինիստրության դրածո Նուրի Սայիդն ուզում էր ուղն-  
չացնել անգլո-թուրք-իրաքա-պակիստանյան պակտին—դեմ լինելու  
համար:

\* \* \*

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո,  
քրդական ազգային-ազատագրական շարժումները ծավալվեցին

1 Ի դեպ, պետք է նշել, որ բյուզնտենը ուշագրավ նյութ է տալիս երկրորդ  
համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայի քաղաքականության նկատ-  
մամբ Թուրքական քրդերի ունեցած վերաբերմունքի մասին: Բյուզնտենը վկա-  
յում է, որ անգլիական հետախուզական ծառայության աշխատակից գնդապետ  
Էլֆինստոնի խոստման համաձայն «Թուրքիայի քրդերը երկրորդ համաշխարհա-  
յին պատերազմի ժամանակ Թուրքիայի հիտլերյան բլոկի կողմից պատերազմի  
մեջ մտնելու դեպքում պետք է պատերազմական գործողություններ սկսեին նրա  
դեմ: Այս հանգամանքը որոշակի նշանակություն ունեցավ հիշյալ կոնֆլիկտի  
ժամանակ: Առայժմ այդ բանը հաստատող ուրիշ փաստեր չկան կամ չեն գտնվել,  
սակայն մի բան պարզ է, որ որոշակի պայմանների դեպքում իմպերիալիստա-  
կան տերությունները ձգտում են ժողովուրդների ազգային ազատագրական, շա-  
հագործող պետությունների տիրապետության դեմ ուղղված շարժումներն օգտա-  
գործել իրենց նպատակների համար:

նոր ուժով: Այդ շարժումները ժամանակ առ ժամանակ ունեցել են մակընթացություններ ու տեղատվություններ, սակայն. ընդհանուր առմամբ զարգացել են վերընթաց գծով և կրել են արտահայտված հակաիմպերիալիստական բնույթ:

Իրաքի քրդական ազդային-ազատագրական շարժման մասնակիցներն իրենց նշանակալից ավանդն ունեցան երկրի սև ռեժիմի տապալման և ռեսպուբլիկական կարգերի հաստատման գործում:

Ш. МГОИ

ИЗ ИСТОРИИ ПОСЛЕВОЕННОГО  
НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОГО  
ДВИЖЕНИЯ КУРДОВ В ИРАКЕ

Р е з ю м е

После второй мировой войны начался новый этап национально-освободительного движения народов стран Ближнего и Среднего Востока. На борьбу поднялись и курдские трудящиеся Ирака. Их борьба явилась частью общей национально-освободительной борьбы иракского народа. В статье автор останавливается на таких вопросах национально-освободительного движения, как восстание 1943—1945 гг. в Иракском Курдистане, совместные мероприятия турецкого, иракского и иранского правительств, направленные против курдских выступлений, участие курдских народных масс в борьбе против багдадского пакта и т. д.

Характерным для курдского национально-освободительного движения этого периода является его антиимпериалистическая направленность и тесная связь с борьбой трудящихся арабов.

ՆԱՎԹԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԵՐԸ

Լիակատար քաղաքական ու տնտեսական անկախություն ձեռք բերելու նպատակով պայքարի ելած Մերձավոր արևելքի ժողովուրդների համար իրենց երկրում օտարերկրյա մոնոպոլիաների առկայությունն այլևս համարվում է անցյալից ժառանգություն մնացած անհանդուրժելի մի դրություն: Ինչպես նշում է արաբ տնտեսագետ Աշրաֆ Լյութֆին, Մերձավոր արևելքի նավթարդյունաբերության պատմության մեջ արդեն անցել է այն ժամանակաշրջանը, երբ արաբ ժողովուրդը դեռ պասսիվ սպասում էր, որ օտարերկրյա ընկերություններն իրեն բաժին շնորհեն իր սեփական նավթի շահույթներից<sup>1</sup>:

Եթե մինչև վերջին ժամանակներս պայքարը Մերձավոր արևելքի նավթի համար կրում էր միջմոնոպոլիստական, միջիմպերիալիստական բնույթ, իսկ նավթարդյունաբերող երկրները հանդիսանում էին օտարերկրյա մոնոպոլիաների լոկ օբյեկտներ, ապա այժմ այդ երկրներից մի քանիսն արդեն ձգտում են նավթի ինքնուրույն քաղաքականություն վարել: Արաբական երկրներում հետզհետե ավելի են գիտակցում, որ նավթային մոնոպոլիաների դեմ հաջող պայքար մղելու համար անհրաժեշտ է հանդես գալ միասնական ճակատով:

Մերձավոր արևելքի նավթարդյունաբերող երկրներում տարբեր քաղաքական ուժեր, նավթի հարցում տնեն իրենց սեփական մոտեցումը: Այդ երկրների ռեակցիոն ուժերը՝ ֆեոդալ-կալվածատերերը, ազգային բուրժուազիայի աջ թևը, կոմպրադորական բուրժուազիան և այլն, օտարերկրյա մոնոպոլիաների հետ սերտ և անվերապահ համագործակցության կողմնակից են: Նրանք փաստորեն

<sup>1</sup> Տե՛ս Ashraf Lutfi, Arab oil. A Plan for the Future, Beirut, 1960, see front flap.

Ներկա գոյավիճակի մեջ տրևէ փոփոխութիւն մտցնելու դեմ են: Հակառակ բեռում են գտնւում աշխատավորական ամենալայն մասսաները, որոնք կառավարութիւններից պահանջում են անհապաղ իրենց ձեռքը վերցնել ազգային այդ վիթխարի հարստութեան տնօրինումը: Միշին դիրքերում է գտնւում ազգային բուրժուազիայի մեծ մասը՝ տեղական արդյունաբերական բուրժուազիան և մանր բուրժուազիան, որոնք մեծ տատանումներ են ցուցաբերում և ձգտում են նավթի հարցում ևս կոմպրոմիսային լուծումների հասնել: Եվ վերջապես, միացյալ ճակատ կազմած արաբական դեմոկրատական ուժերը (մինչև ավելի արմատական փոփոխութիւններ ձեռք բերելը) պահանջում են ուժեղացնել վերահսկողութիւնն օտարերկրյա նավթային ընկերութիւնների վրա, բարձրացնել արաբական երկրներին տրվող շահույթները, նավթային ընկերութիւններում ավելացնել տեղացի աշխատավորների, մասնագետների և ղեկավար պաշտոնյաների թիւը, կոնցեսիոն առանձնաշնորհումները մասամբ սահմանափակել և այլն:

Նավթային մոնոպոլիաների շրջաններում այս նոր տենդենցների նկատմամբ առաջացել են տարրեր տեսակետներ: Այս շրջանների մի թւը դեմ է որևէ զիջման և իր մենաշնորհի իրավունքները մինչև վերջ պաշտպանելու կողմնակից է: Մյուս թւը համաձայն է բանակցութիւնների միջոցով որոշ զիջումներ անել, որպեսզի ամեն ինչ շկորցնի և փրկի իր նախկին դիրքերի գեթ մի մասը:

\* \* \*

Տնտեսական անկախութեան համար մղվող պայքարի շնորհիվ Մերձավոր արևելքի նավթարդյունաբերութեան ասպարեզում արդեն տեղի են ունեցել որոշ տեղաշարժեր: Օրինակ՝ հանդես են եկել «առևտսայդեր» ընկերութիւնները, որոնց գործունեութեան հետևանքով խախտւում են խոշոր մոնոպոլիաների նախկին հեգեմոն դիրքերը: Ներկա հողվածում նպատակ ունենք հատկապես ծանրանալ մոնոպոլիստական ընկերութիւնների դեմ արաբական երկրների պայքարն արտահայտող մի այլ փաստի՝ նավթի արաբական կոնֆերանսների վրա:

Նավթի արաբական կոնֆերանսներ ասելով նկատի ունենք նավթի կոնգրեսները, նավթի արաբական էքսպերտների Զիդդայի կոնֆերանսը, ինչպես և նավթ արտահանող երկրների կազմակեր-

1 Տե՛ս «Արևելագիտական ժողովածու» № 1», Երևան, 1960, էջ 140—153:

պության (Organization of Petroleum Exporting Countries—OPEC) երկու ժողովները, որոնք բոլորն էլ, ինչպես հորվածում պիտի նշվի, նպատակ ունենին թուլացնելու կոնցեսիոն ընկերությունների միահեծան տիրապետությունը:

Մերձավոր և Միջին արևելքի նավթարդյունաբերության ավելի քան կեսդարյա պատմության մեջ առաջին անգամ՝ 1959 թ. ապրիլի 16-ին, ՄԱՌ-ի մայրաքաղաք Կահիրեում տեղի ունեցավ արաբական երկրների նավթի կոնգրեսը: Պետք է նշել, որ նախքան այս կոնգրեսը, Արաբական լիգայի հովանավորությամբ տեղի ունեցան նավթի արաբական էքսպերտների նախապատրաստական մի շարք հանդիպումներ:

Այս կոնգրեսի գլխավոր նպատակներից մեկն էր միջոցներ փնտրել՝ գործող կոնցեսիոն ընկերությունների նկատմամբ համաարաբական մի համընդհանուր ու միասնական քաղաքականություն վարելու համար:

Կոնգրեսի առաջին պլենար նիստին ներկա էին 520 պատվիրակներ արաբական 9 երկրներից: Որպես դիտորդներ մասնակցում էին Իրանի և Վենեսուելայի, ինչպես նաև նավթային ընկերությունների 35 ներկայացուցիչներ:

Կոնգրեսում արաբական պատվիրակների շարքերում կային քաղաքական տարբեր հոսանքների ներկայացուցիչներ: Արաբ պատվիրակներից շատերն առաջարկում էին օտարերկրյա կոնցեսիոն ընկերությունների նկատմամբ պահանջները շափավորել: Գլխավոր զեկուցող Մուհամեդ Սալմանն իր բացման ճառում սկզբից ևեթ ներկաներին հասկացրեց, թե ժողովին չեն եկել իրենց զայրույթն ու թշնամանքն արտահայտելու նավթային օտար ընկերությունների նկատմամբ: Նա շեշտեց, որ կոնգրեսը քաղաքական ամբիոնի չպետք է վերածել ու հարցերը պետք է քննարկել զուտ տնտեսական ասպեկտով: Եվ իսկապես, արաբական երկրների ազգային բուրժուազիայի աջ թևի ներկայացուցիչներին մեծ մասամբ հաջողվեց կոնգրեսում տեղ շտալ քաղաքական բնույթի ելույթներին: Դրանից շատ գոհ մնացին օտարերկրյա մոնոպոլիաները և նրանց թիկունքում կանգնած ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարող շրջանները:

Պլենար նիստին հաջորդեցին երեք դեկավար կոմիտեների նիստերը: Այնտեղ կարդացվեց 69 զեկուցում:

Ուշադրության արժանի զեկուցումների և առաջարկությունների թվում հիշենք Սաուդյան Արաբիայի պատվիրակության կողմից ներկայացված «Սուվերեն պետության իրավունքները՝ կոնցեսիոն պայմանագիր կնքելու և դրան ենթարկվելու սահմանները որոշե-



լու հարցի նկատմամբ» շատ հետաքրքիր զեկուցումը: Այդ զեկուցման մեջ առաջ քաշվող գլխավոր միտքն այն էր, որ ամեն մի սուվերեն պետություն իրավունք ունի հրաժարվել կոնցեսիոն պայմանագրի պարտավորություններից, եթե պայմանները, իր կարծիքով, չեն համապատասխանում երկրի շահերին: Նման առաջարկությամբ հանդես գալը պետք է բացատրել այն բանով, որ Սառաչյան Արաբիան ձգտում էր բարելավել կոնցեսիոն պայմանները և բարձրացնել նավթի շահագործումից ստացվող եկամուտները:

Կոնգրեսում Լիբանանի պատվիրակության ղեկավար Էմիլ Բուատանին առաջարկություն մտցրեց, որ նավթ արդյունահանող արաբական երկրները նավթից ստացվող շահույթների 5% հատկացնեն «Արաբական զարգացման և վերակառուցման բանկի» ստեղծմանը: Արաբական բանկ ստեղծելու նրա առաջարկը, ըստ երևույթի, նպատակ ունեւր նավթի շահագործումից ստացվող եկամուտների մի մասն ուղղել երկրի արդյունաբերական այլ ճյուղերի զարգացմանը, նավթի ասպարեզը հավերժ թողնելով օտարերկրացիների ձեռքում:

Կոնգրեսում համաարաբական մագիստրալ նավթամուղ կառուցելու առաջարկությամբ հանդես եկավ Սառաչյան Արաբիայի պատվիրակության ղեկավար Աբդուլլահ Թարիֆին: Նա պահանջում էր, որ այդ ծրագրի իրագործման համար անհրաժեշտ գումարները տրամադրեն Մերձավոր արևելքի նավթն սպառող եվրոպական երկրների ֆինանսական շրջանները և, մասամբ, արաբ կապիտալիստները:

Նիստերին ներկա բոլոր արաբ պատվիրակներն էլ համաձայն էին ընկերությունների հասցեին ուղղված այն մեղադրանքին, որ նրանց կողմից վարվող գների քաղաքականության հետևանքով արաբական երկրների կառավարություններին հասնող եկամուտները սահմանափակվում են:

Կոնգրեսն ընդունեց բանաձև, որը, սակայն, գործնական ոչ մի առաջարկություն չէր պարունակում: Դա, ավելի շուտ, նիստերում հայտնված ցանկությունների, մի տեսակ, ամփոփումն էր: Այնտեղ ասված էր, որ կոնգրեսին ներկա բոլոր պատվիրակները համաձայն են նավթի շահագործման մեջ տեղական կառավարություններին հասնող եկամուտների բաժնի ավելացմանը: Նրանք անհրաժեշտ են գտնում հետագա մի քանի տարվա ընթացքում ստեղծել զուտ տեղական կապիտալով և նախաձեռնությամբ ընկերություններ՝ զբաղվելու նավթարդյունաբերության բոլոր ճյուղերով, որոնք պետք է գործեն օտարերկրյա նախկին կոնցեսիոն ընկերություն-

ներին զուգահեռ: Այնուհետև, բանաձևում արձանագրվեց այն առաջաբեր, ըստ որի նախատեսվում է ստեղծել նավթի արդյունահանման, արտահանումների և պաշարների կոնսերվացման միջոցառումների կոորդինացման հարցերով զբաղվող մի կազմակերպություն, որտեղ ներկայացված լինեն նավթարդյունահանող բոլոր արաբական երկրները:

Գների հարցում պատվիրակները համաձայնեցին ընկերությունների առաջ պահանջ դնել, որպեսզի նրանք հետագայում տեղական իշխանություններին տեղյակ պահեն մտցրած փոփոխությունների մասին: Կոնգրեսը ճանաչեց Սաուդյան Արաբիայի ներկայացուցչի կողմից առաջարկված համաարաբական նավթամուղ կառուցելու ծրագրի խոշոր նշանակությունը, նշեց արաբական նախաձեռնություններ նավթամշակման գործարաններ ստեղծելու, ինչպես և դրանց սպասարկման համար տեղացի տեխնիկներ, ինժեներներ և ղեկավար աշխատողներ պատրաստելու անհրաժեշտությունը: Կոնգրեսի մասնակիցները նպատակահարմար գտան ամեն տարի կոնգրես գումարել նոր ծառայող հարցերը քննելու և նախորդ որոշումների իրագործման ընթացքն ստուգելու համար<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, կոնգրեսը խոշոր հաջողություններ ձեռք չբերեց և կոնկրետ միջոցառումներ չձեռնարկեց: Արաբական երկրների նավթարդյունաբերությունն ընդհանուր վիճակի մեջ կարևոր փոփոխություններ մտցնող որոշումներ չընդունվեցին: Օտարերկրյա ընկերությունների դեմ ելույթները քիչ էին և շատ մեղմ: Կոմպրոմիսների կողմնակիցներին հաջողվեց զսպել քիչ թե շատ համարձակ պահանջները: Սակայն, այս բոլորով հանդերձ, անվիճելի է, որ կոնգրեսը հանդիսացավ մի առաջընթաց քայլ (ճիշտ է՝ շատ փոքր, բայց և շատ օգտակար), քանի որ այն արաբների միացյալ առաջին լուրջ ճիգն էր՝ նավթարդյունաբերության ասպարեզում տնտեսական անկախություն ձեռք բերելու համար մղվող պայքարում:

Կոնգրեսից մի քանի ամիս անց, 1959 թ. հոկտեմբերի 25-ին, Ջիզդայում (Սաուդյան Արաբիա) տեղի ունեցավ Արաբական լիգային կից նավթի արաբական էքսպերտների կոմիտեի 7-րդ նիստը: Այստեղ քննարկվեցին մի շարք հարցեր, հատկապես՝ կոնգրեսում ներկայացված առաջարկությունները, ինչպես, օրինակ՝ արաբական

<sup>1</sup> "World Petroleum", June 1959, pp. 8—10; The Petroleum Times, March 13, 1959, pp. 168—169; Ibid, April 24, 1959 pp. 335—336; Ibid, May 8, 1959, pp. 356—358.

նավթատար նավատորմ ստեղծելու և արաբական մագիստրալ նավթամուղ կառուցելու հարցերը և, որ ամենահետաքրքիրն էր, Իրաքի պատվիրակության կողմից ներկայացված «Արաբական նավթի կոորդինացված քաղաքականությունն վարելու» ծրագիր-պայմանագիրը: Վերջինս առաջարկում էր մշակել նավթի օրենսդրություն, որին պետք է ենթարկվեին պայմանագիրն ստորագրող արաբական երկրների կառավարությունները՝ կոնցեսիոն ընկերությունների հետ իրենց հարաբերությունների ժամանակ: Այս ծրագիր-պայմանագրի մյուս հոդվածներով նախատեսվում է. պայմանավորվող կողմերի միջև փորձի և ինֆորմացիայի փոխանակում, պաշարների կոնսերվացիոն միջոցառումների համատեղ գործադրում, համատեղ պայքար՝ կոնցեսիոն պայմանների բարելավման համար, նոր կոնցեսիաներ շնորհելու ժամանակ տեղական կապիտալով և նախաձեռնությամբ կազմված ընկերություններին նախընտրություն տալը, օտարերկրյա կոնցեսիոն ընկերություններում աշխատող արաբների կոնտինգենտի ավելացում, ընդհանուր ճիգերով Արաբական լիգային կից տեխնիկներ, մասնագետներ, ղեկավար պաշտոնյաներ պատրաստելու նպատակով ինստիտուտների և վարժեցման կենտրոնների ստեղծում, օտարերկրյա կոնցեսիոն ընկերությունների կողմից չօգտագործվող տերիտորիաները հտ վերցնելու իրավունք և այլն և այլն<sup>1</sup>:

Ինչպես գիտենք, կոնգրեսում ընդգծվեց արաբական երկրների կողմից նավթի միասնական քաղաքականությունն վարելու անհրաժեշտությունը: Արաբ էքսպերտների կոնֆերանսում Իրաքի պատվիրակության կողմից առաջարկվող ծրագիր-պայմանագիրը արաբների այդ ցանկությունը կոնկրետացնելու, այսպես ասած, կյանքի կոչելու փորձ էր: Եվ եթե ծրագրում նախատեսված պայմաններն իսկապես իրագործվեին, ապա, ի՛նչ խոսք, որ խոշոր նվաճում կլինեին արաբների համար, և դրանով նավթարդյունաբերության մեջ նրա, եթե տշ լրիվ, ապա մեծ չափով ինքնուրույն և միասնական քաղաքականություն վարելու առաջին հիմքերը դրված կլինեին:

Ինչ վերաբերում է արաբական նավթամուղ կառուցելու հարցին, էքսպերտները գտան, որ նրա կառուցումը ֆինանսապես և տեխնիկապես չի արդարացվում: Դա շատերի մոտ տարակուսանք առաջացրեց, մանավանդ, որ այդպիսի նոր մագիստրալ նավթա-

<sup>1</sup> The Petroleum Times, November 20, 1959, p. 738; Middle East Economic Survey, vol. III, № 1, 1959.

մուղ կառուցելու ծրագրեր մշակում էին հենց իրենք՝ նավթային ընկերությունները: Ըստ էության, այս հարցում դիմելով օտարերկրյա մասնագետների կարծիքներին, կոնֆերանսի մասնակիցները սխալ եզրակացությունների էին հանգել: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ կոնֆերանսին մասնակցող արար էքսպերտների շարքում դեռևս խոշոր թիվ էին կազմում կոմպրոմիսների կողմնակիցները, ապա նրանց՝ նման եզրակացությունները միանգամայն հասկանալի կդառնան:

Նավթի առաջին կոնգրեսից հետո կոմպրոմիսային քաղաքականության կողմնակիցները նավթային մոնոպոլիստական շրջանների նույնպես կոմպրոմիսների կողմնակից թեի հետ համատեղ մշակեցին մի շարք ծրագրեր, որոնք իրենց կոնկրետ արտահայտությունը գտան side by side-ի՝ այսինքն «կողք-կողքի գործելու» նոր սկզբունքի մեջ:

Այդ սկզբունքի էությունն այն է, որ առանց դիպչելու արդեն գոյություն ունեցող կոնցեսիաներին, անհանց բոլորովին վերացնելու օտարերկրյա ընկերություններին նոր կոնցեսիաներ շնորհելու հավանականությունը, դրանց զուգահեռ, կողք-կողքի մրցակցության հավասար պայմաններով, ստեղծվեն տեղական կապիտալով ու նախաձեռնությամբ նավթային ընկերություններ: Նոր ստեղծվող արարական նավթային այս ընկերությունները պիտի զբաղվեն ինչպես հետազոտման, այնպես էլ արդյունահանման, մշակման, փոխադրության և վաճառահանման ճյուղերով: Այս առաջարկի հեղինակներ հանդիսացան ՄԱՌ-ի և կոնֆերանսում որպես դիտորդ մասնակցող Վենեսուելայի ներկայացուցիչները: Օտարերկրյա նավթային ընկերությունների ներկայացուցիչները (նույնպես դիտորդ) իրենց հավանությունը տվեցին այս առաջարկին, ձևացնելով, թե դրանով զիջում են անում: Նրանք փաստորեն տակտիկական նահանջ էին կատարում որպեսզի այս կերպ կազմվող ընկերությունները ժամանակի ընթացքում իրենց ոլորտի մեջ ներգրավեն և նրանց՝ «հավանական մրցակիցներից» վերածեն «հավանական գործակիցների»: Սակայն այս ծրագրի դեմ արտահայտվեց օտարերկրյա նավթային ընկերությունների այն թևը, որը դեմ էր կոմպրոմիսների:

Վենեսուելայում այժմ արդեն կազմվել ու սկսել են գործել այդպիսի ընկերություններ: Եգիպտոսում նույնպես որոշ ժամանակից ի վեր արդեն գործում են զուտ տեղական կապիտալով և նախաձեռնությամբ նավթային ընկերություններ, ինչպես նաև խառն ընկերություններ, որոնց մասնակցում են օտար և տեղական կա-

պիտալը և հաճախ կառավարությունը: Իսկ Իրաքում, Սաուդյան Արաբիայում և Քուվեյթում այս կարգի ընկերությունները դեռևս մեծ մասամբ գտնվում են կազմավորման էտապում: Սակայն զուտ տեղական կապիտալով և նախաձեռնությամբ կազմված ընկերությունների թիվը շատ քիչ է, իսկ եղածները դեռևս չեն հասել գործունեության այնպիսի աստիճանի, որ ի վիճակի լինեն խախտել գոյություն ունեցող օտարերկրյա կոնցեսիոն ընկերությունների գոյավիճակը:

Ամերիկյան նավթային մոնոպոլիաների շրջանների ներկայացուցիչ Հարիս Ստիվենսոնը նշում է, թե «կողք-կողքի» սկզբունքը չպետք է սարսափ ազգի, քանի որ դեռ հայտնի չէ, թե այն ինչպիսի տարածում կգտնի և կամ ինչպիսի մասշտաբներ կընդգրկի<sup>1</sup>: Բացի այդ, նա գտնում է, որ այդ սկզբունքի հետ համաձայնվելու դեպքում մոնոպոլիաները ժամանակի ընթացքում իրենց հսկողության տակ կվերցնեն տեղական ընկերությունները:

Սակայն, եթե տեղական կապիտալով և նախաձեռնությամբ ստեղծված կողք-կողքի գործող այս ընկերություններին հաշոգրվի ազատվել կաշկանդող սահմանափակումներից, երկրի նավթարդյունաբերության գլխավոր դիրքերը նվաճել ու դառնալ պայմանավորող ուժ և գործն ընդհուպ հասցնել նավթային պաշարների ազգայնացմանը, ապա այդ ժամանակ «կողք-կողքի» սկզբունքն իր շատ դրական դերը խաղացած կլինի տնտեսական անկախության համար մղվող պայքարում:

Նավթի արաբական առաջին կոնգրեսին և Ջիդդայի՝ նավթի արաբական էքսպերտների կոնֆերանսին հաջորդեց «Նավթ արտահանող երկրների կազմակերպության» (Organization of Petroleum Exporting Countries կամ կրճատ՝ OPEC-ի) հիմնադիր ժողովը, որն իր աշխատանքներն սկսեց 1960 թ. սեպտեմբերի 10-ին Բաղդադում: Ժողովին մասնակցեցին Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, Իրանի և Վենեսուելայի ներկայացուցիչները: Այս ժողովին շմասնակցեցին արաբական մյուս երկրները, և նախաձեռնությունն այս անգամ Արաբական լիգային չէր պատկանում: Ժողովի առաջնահերթ նպատակն էր միջոցներ որոնել՝ նավթային մոնոպոլիաների կողմից վարվող գների քաղաքականության վրա հսկողություն սահմանելու համար: Ժողովն ընդունեց որոշում՝ կազմակերպության մեջ ընդունելու նավթարդյունաբերող բոլոր այն երկրները, որոնք ցանկություն կհայտնեն:

<sup>1</sup> „World Petroleum“, February 1960, p. 39

OPEC-ի ստեղծման գլխավոր դրդապատճառը եղավ այն, որ 1960 թ. օգոստոսին նավթային մոնոպոլիստական ընկերությունները, առանց շահագրգռվող երկրների հետ խորհրդակցելու, Մերձավոր և Միջին արևելքի նավթի գների մեջ միակողմանի փոփոխություններ մտցրին: Մոնոպոլիստներն այդպիսի միջոցառման էին դիմել, արհամարհելով նավթի առաջին կոնգրեսում այդ մասին եղած զգուշացումները և նյութական մեծ վնաս հասցնելով արաբական նավթարդյունաբերող երկրներին: OPEC-ի առաջին ժողովն այս ուղղությամբ կոնկրետ միջոցառումներ չառաջարկեց, այլ, ավելի շուտ, կազմակերպչական բնույթի որոշումներ ընդունեց:

Այս ժողովին հաջորդեց նավթի արաբական երկրորդ կոնգրեսը, որը տեղի ունեցավ Բեյրութում (Լիբանան) և տևեց վեց օր՝ 1960 թ. հոկտեմբերի 17-ից 22-ը: Կոնգրեսում նշվեց, որ արաբական հասարակայնությունը հիասթափված է այն բանից, որ նավթի արաբական առաջին կոնգրեսում եղած բոլոր առաջարկությունները կոնցեսիոն ընկերությունների կողմից արհամարհվեցին. օրինակ, նավթի գների մեջ 1960 թ. օգոստոսին մտցվեցին 2,5-ից մինչև 6% -ի հասնող փոփոխություններ՝ առանց նախօրոք խորհրդակցելու տեղական իշխանությունների հետ:

Երկրորդ կոնգրեսում մի քանի նոր առաջարկություններ արվեցին: Սաուդյան Արաբիայի պատվիրակությունն առաջարկեց նավթարդյունահանման մաքսիմում քվոտաներ ընդունել, հիմնվելով նավթարդյունաբերող երկրների պաշարների վրա: Այս առաջարկությունը միջարարական հետագա մրցակցությունը սահմանափակելու նպատակ ունի: Ինչպես հայտնի է, Քուվեյթից հետո Սաուդյան Արաբիան նավթի պաշարներով ամենահարուստն է, ուստի նման որոշում ընդունելով, նա ձգտում էր ապահովել իր առաջավոր դիրքերը: Այդ առաջարկությունը վիճաբանություններ առաջացրեց, և ոչ մի որոշում չընդունվեց:

Ավելի սուր վիճաբանությունների տեղիք տվեց Սաուդյան Արաբիայի նավթային վարչության խորհրդատու Հենդրիքսի ելույթը, որն առաջին կոնգրեսին ներկայացրած նրա առաջարկության առավել մշակված վարիանտն էր, ինչպես նաև Աբդալլահ Թարիքիի ելույթը, որը վերաբերում էր անմշակ նավթի գների հարցին:

Հենդրիքսը, պաշտպանելով իր նախկին թեզն այն մասին, թե պետությունների ստվերեն իրավունքն է միակողմանիորեն չեղյալ համարել կոնցեսիոն պայմանագրերը, եթե նրանք անհամատեղելի են երկրի և ժողովրդի շահերի հետ, այս անգամ հենվում էր անգլիական, ֆրանսիական և իսլամական օրենսդրությունների

մեջ եղած բազմաթիվ հոգվածների, որոշումների և նախադեպերի վրա: Հենդրիքսը պնդում էր. 1. Ինչպես տեղական, այնպես էլ միջազգային օրենսդրության մեջ կոնցեսիոն պայմանագրի կապակցությամբ կառավարությունների և նավթային ընկերությունների փոխհարաբերությունները կարգավորող նախատեսումներ չկան: 2. Կան միջազգային առևտրական փոխհարաբերությունները կարգավորող իրավական երկու սիստեմներ՝ անգլո-սաքսոն կամ անգլո-ամերիկյան և ֆրանսիական: Հենվելով այս իրավական երկու սիստեմների օրենսդրությունների, ինչպես և նախադեպերի վրա, Հենդրիքսը եզրակացնում է, որ երբ երկրի և ժողովրդի շահերը պահանջում են, կառավարություն իրավական բոլոր հիմքերն ունի՝ շեղյալ համարելու իր և մի ուրիշ իրավական անձնավորության հետ ստորագրված որևէ պայմանագիր:

Հենդրիքսի առաջ քաշած թեզը մեծ մտահոգություն պատճառեց մոնոպոլիաների ներկայացուցիչներին, որովհետև այն կարող էր հիմք ծառայել բոլոր կոնցեսիոն պայմանագրերը հարցականի տակ դնելու համար և դառնալ օտարերկրյա մոնոպոլիաների դեմ մղվող նոր կամպանիայի սկիզբը: Նավթային ընկերությունների իրավական խորհրդատուները հանդես գալով, փորձեցին հերքել Հենդրիքսի բոլոր պատճառաբանությունները: Ռեյլը՝ Արամկո ընկերության իրավական խորհրդատուն, ամփոփելով նավթային մոնոպոլիաների տեսակետներն այս հարցի կապակցությամբ պնդեց, թե 1. եթե տեղական և միջազգային օրենսդրությունները այդ մասին նախատեսումներ չունեն, ապա կառավարության և օտարերկրյա ընկերությունների միջև կնքված պայմանագրերն իրենց հոգվածներով և պայմաններով հանդիսանում են ad hoc, կողմերի փոխհարաբերությունները կարգավորող օրենք: 2. Օրենսդրության մեջ ընդունված երկու սկզբունքները ա) պայմանագիրը կողմերի համար պարտադիր օրենք է, և բ) pacta sunt servanda (այսինքն պայմանագրերը պետք է հարգվեն) պայմանագրերը կողմերի համար պարտադիր լինելու իրավական հիմք են հանդիսանում:

Արաբ իրավաբան Սիկսեկը<sup>1</sup>, անդրադառնալով Հենդրիքսի և Ռեյլի տեսակետներին, տալիս է իր գնահատականը և առաջարկությունները առաջ քաշված հարցերի վերաբերյալ: Սակայն, Սիկսեկը արաբական ազգային բուրժուազիայի աջ թևի ներկայացուցիչն է,

<sup>1</sup> Simon G. Siksek, The Legal Framework for Oil Concessions in the Arab World, The Middle East Research and Publishing Center, Beirut, 1960, pp. 43—61.

ուտի պաշտպանելով հանդերձ մի շարք կոնցեսիոն պայմանների բարելավման առաջարկը (օրինակ՝ եկամտոնների վերանայում, ընկերություններում տեղական վերահսկողության և մասնագետների ու ղեկավար պաշտոնյաների թվի ավելացում և այլն), կողմնակից է կոմպրոմիսների և օտարերկրյա ընկերությունների հետ համագործակցելու գաղափարին: Ուտի, նա այս հարցում ևս առաջարկում է միջին դիրք բռնել: Հարկավոր է նկատի ունենալ, ընդգծում է Սիկսեկը, որ կառավարություններն իրենց ազատ կամքով են շնորհում կոնցեսիաները: Կատարելով խոշոր կապիտալ ներդրումներ, կազմակերպելով հետազոտական աշխատանքներ և ստանձնելով այդ բոլորի հետ կապված անորոշություններն ու ռիսկերը, կոնցեսիոն ընկերություններն իրավունք ունեն պահանջելու պայմանագրերը միակողմանի կերպով չեղյալ համարելու դեմ ապահովություն: Նման ապահովություններ, հաճախ նախատեսված են լինում սլայմանագրերում, հետևաբար պայմանագիրը, ինչպես Սիկսեկն է պնդում, երկու կողմերի համար պարտադիր այն հիմնական օրենքն է, որը պիտի կարգավորի նրանց փոխհարաբերությունները:

Քանի որ պայմանագիրը հիմնական օրենք է և կողմերի համար պարտադիր, ուրեմն, չի կարելի միակողմանիորեն անտեսել կամ չեղյալ համարել այն՝ բացի, իհարկե, այն դեպքից, երբ այդ մասին երկու կողմերի համաձայնությունը կա: Ինչ վերաբերում է դրուժյան և պայմանների փոփոխման հետևանքով պայմանագիրը վերանայելու և կամ չեղյալ համարելու անհրաժեշտության հարցին, ապա Սիկսեկի կարծիքով, այդ ևս հնարավոր է լուծել, բայց միայն փոխադարձ համաձայնությամբ, բանակցությունների և կամ արբիտրաժի (իրավարարության) միջոցով:

Սիկսեկի այս պատճառաբանությունները փաստորեն նպատակ ունեն նպաստավոր պայմաններ ստեղծել՝ հօգուտ կոնցեսիոն ընկերությունների: Սակայն, եթե դիմենք իր իսկ գրքում *clausula rebussis stantibus* սկզբունքի մասին հայտնի իրավագետների տարբեր կարծիքներին, ապա կտեսնենք, որ այդ հանգամանքը (այսինքն չենք ապայանագրերը մնում են ուժի մեջ այնքան ժամանակ, որքան պայմանները և դրուժյունը չեն փոխվել) նրանց մեծ մասի կողմից ընդունվում է որպես միջազգային օրենքի դոկտրինաներից մեկը: Հետևաբար, դա պետք է համարվի հիմնավոր պատճառաբանություն՝ կոնցեսիոն պայմանագրերը վերանայելու կամ չեղյալ համարելու իրավունքի համար:

Արդարև, Սիկսեկի իսկ ասելով, միջազգային օրենքով ընդունված այս դոկտրինայի համաձայն՝ դաշնագիրը (կամ տվյալ դեպ-



քում պայմանագիրը—Ն. Ք.) պարտադիր է կողմերի համար միայն այնքան ժամանակ, որքան հանգամանքների և գրութայն մեջ կենսական փոփոխություններ չեն մտցվել<sup>1</sup>։

Եթե այդպես է, ուրեմն, Սաուդյան Արաբիայի նավթային հարցերի վարչության կողմից Կահիրեի նավթի համաարաբական առաջին կոնգրեսի ապրիլի 18-ի նիստում առաջ քաշված դրույթը, իրավական տեսակետից հիմնավորվում է միջազգային օրենքում ընդունված այս սկզբունքով։ Իսկ որ պայմանագրերի ստորագրման ժամանակաշրջանից մինչ այժմ պայմանների և իրադրության մեջ փոփոխություններ տեղի ունեցել են, դրանում՝ ոչ մի կասկած։

Անդրադառնալով մոնոպոլիաների կողմից վարվող գների քաղաքականության հարցին, արաբ պատգամավորների մեծ մասն իր զայրույթը հայտնեց և բողոքեց այն բանի դեմ, որ տեղական իշխանությունների հետ նավթային ընկերությունները չեն խորհրդակցում։ Սաուդյան Արաբիայի պատվիրակության ղեկավար Քարիֆին ընդգծեց, որ Մերձավոր և Միջին արևելքի նավթի գները 1948 թ. հիմնվում էին Արևմտյան Եվրոպայի պարիտետի վրա, որը հետագայում փոխվեց Նյու-Յորքի պարիտետով։ Այս փոփոխության հետևանքով, ինչպես հետո որն է ընդգծում, Մերձավոր արևելքի նավթարդյունահանող երկրները նյութապես տուժել են, մինչդեռ ընկերությունները 1949—1959 թթ. մինչև 5 միլիարդ դոլլարի օգուտ են քաղել<sup>2</sup>։

Շարունակելով իր մեղադրանքները կոնցեսիոն ընկերությունների հասցեին, Քարիֆին՝ տեղական իշխանությունների և ընկերությունների հետագա փոխհարաբերությունները կարգավորելու համար հետևյալ առաջաբերություններն արեց. 1. մայր (այսինքն հիմնադիր) ընկերությունների և Մերձավոր արևելքում գործող արգյունահանող (օպերատիվ) ընկերությունների շահերի անջատում։ Այդ դեպքում արգյունահանող ընկերությունն աղատված կլինի մայր ընկերությանը ենթարկվելու ստիպողականությանից ու կվարի անկախ քաղաքականություն։ Սակայն, ըստ երևույթին, այս առաջարկության նկատմամբ խոշոր մոնոպոլիաների դժգոհությունը մեղմացնելու նպատակով, Քարիֆին նպատակահարմար է գտնում այդ անել՝ արգյունահանող ընկերության բաժնեթղթերը փոխանցելով մայր ընկերության բաժնետերերին։ Փոխանցման այդ գործողու-

<sup>1</sup> Simon G. Siksek, op. cit., p. 80.

<sup>2</sup> Middle East Economic Survey (Supplement) vol. III, № 52, 4 November 1960.

թյունը, մեր կարծիքով, ավելի շուտ ձևական բնույթ է կրելու և իրերի իսկական դրույթյան մեջ փոփոխություն չի մտցնելու: 2. Ընկերության կենտրոնատեղին փոխադրել այն վայրը, որտեղ արդյունահանող ընկերությունն է գործում, և վարչական կազմի մեջ անպայման մտցնել տեղական ներկայացուցիչներ: 3. Մայր և դուստր ընկերությունների միջև առևտրական գործարքների ժամանակ շրջանցումների և կեղծ գործարքների առիթ շտալու նպատակով, անմշակ նավթի առք և վաճառքը կատարել պայմանագրերի միջոցով, ինչպես այդ պիտի արվեր երկու օտար ընկերությունների միջև: Այժմ դա կատարվում է արդյունահանող ընկերության (տրվյալ դեպքում դուստր ընկերության) և շուկայահանող ընկերության (տվյալ դեպքում մայր ընկերության և կամ մի այլ դուստր ընկերության) միջև, հաճախ մեկի համար ոչ շահավետ պայմաններով, երբ միտումնավոր պակասեցվում է տեղական իշխանություններին հասանելիք եկամուտների բաժինը:

Քարիքիի այս առաջարկությունները, ինչպես և նրա զեկուցման մեջ ընկերությունների հասցեին ուղղված քննադատությունը խոշոր վիճաբանությունների առիթ դարձան:

Լիբանանի պատվիրակության անգամ էմիլ Բուատանին իր ելույթում պաշտպանեց առաջ քաշված առանձին առաջարկությունները, բայց միաժամանակ փորձեց մեղմացնել դրանք, ավելի ընդունելի դարձնելու համար օտարերկրյա կոնցեսիոն ընկերություններին, իսկ անմշակ նավթի գների շուրջը ծագած վեճերի ժամանակ էմիլ Բուատանին փաստորեն պաշտպանեց ընկերություններին, հայտնելով, թե գները որոշվում են շուկայում՝ առաջարկի և պահանջարկի արժեքի օրենքի գործողության համաձայն: Այնինչ հայտնի է, որ մոնոպոլիստական պայմաններում գները որոշվում են շուկայից դուրս, գրասենյակներում:

Արամկո-ի ներկայացուցիչ Ռ. Բրոզհամը փորձեց հերքել արարների մեղադրանքներն ընկերությունների հասցեին: Սակայն, Բրոզհամի պատճառաբանությունները, որոնց մեծ մասը փաստերից զուրկ հայտարարություն եղավ, չկարողացան համոզել ներկաներին: Խոսելով եկամուտների բաշխման ժամանակ ընկերությունների կողմից կատարվող շրջանցումների մասին, արաբ պատվիրակներից շատերը կոնգրեսում ընդգծեցին, որ հոնորարների բաշխման 50/50%-ի համամասնության սկզբունքն ընդունվելուց հետո, Սաուդյան անմշակ նավթի որոշյալ գներով (posted prices) բարրելը 1,75 դոլլար պետք է հաշվվեր, սակայն հետագայում հայտնաբերվեց, որ Արամկո-ն իր մատյաններում արձանագրում էր միայն

1,42 դուլլար: Երբ Սաուդյան Արաբիայի իշխանություններն այս մասին հարց տվեցին ընկերությանը, նա պատասխանեց, որ այդ զեղչերը նպատակ ունեն դուրսը ընկերություններին մրցակիցների նկատմամբ ավելի բարենպաստ պայմաններ տալ: Սակայն, ինչպես ընդգծեց Սաուդյան Արաբիայի պատվիրակը, իրենք 32% ստանալու համար չէ, որ ստորագրել են 50/50%-ի համամասնության համաձայնագիր: Այդ համամասնությունն այժմ փաստորեն, վերածված է 32/68-ի:

Կոնգրեսը փակվեց հոկտեմբերի 22-ին: Վերջին Երեսուցի կոնգրեսին ներկա բոլոր արաբ պատվիրակները միաձայն ընդունեցին հետևյալ բանաձևերը:

1. Կոնգրեսը պաշտպանում է արաբական երկրների այն բոլոր պահանջները, որոնք ուղղված են կոնցեսիոն ընկերություններից ավելի բարենպաստ պայմաններ ձեռք բերելու: Կոնգրեսի մասնակիցները (արաբական երկրների—Ղ. Թ.) հույս են տածում, որ կոնցեսիոն ընկերությունները կընդառաջեն այդ պահանջներին:

2. Կոնգրեսը դատապարտում է նավթային ընկերությունների կողմից, առանց շահագրգռված կառավարությունների հետ խորհրդակցելու, ընդունած միակողմանի որոշումը՝ անմշակ նավթի գների իջեցման մասին:

3. Կոնգրեսը հանձնարարում է նավթարդյունաբերող արաբական երկրների կառավարություններին՝ ուժեղացնել իրենց ճիգերը և ամեն կերպ բարձրացնել նավթարդյունաբերության մեջ տեխնիկական, տնտեսական և իրավական շահագրգռվածությունն արաբների մոտ:

4. Եվ, վերջապես, առաջարկում է ամեն տարի հոկտեմբերի առաջին երկուշաբթի օրվանից սկսած գումարել կոնգրես:

Նավթի կոնգրեսների և կոնֆերանսների աշխատանքները լայն արձագանք գտան արաբական մամուլի էջերում:

Լիբանանում լույս տեսնող Ալ-Ջարիդա (الدجريد) թերթի հոկտեմբերի 23-ի համարում դեպուտատ Հաֆիզը, անդրադառնալով երկրորդ կոնգրեսում ընդունված բանաձևերին, ընդգծեց, թե այդ որոշումների միջոցով արաբական կառավարություններն իրենց վճռականությունը հայտնեցին՝ տեղական նախաձեռնությունը նավթարդյունաբերության մեջ ուժեղացնելու և նավթից ստացվող եկամուտները բարձրացնելու մասին: Սակայն, հոգվածագրի կարծիքով, կոնգրեսը, ավելի շուտ, օսիմպոզիումի՝ բնույթ էր կրում և օգտակար եղավ այնքանով միայն, որ այնտեղ տարրեր արաբական

երկրների պատվիրակները կարողացան իրենց ձայնը լսելի դարձնել:

Ալ-Անվար (الانوار) պրոգրեսիվ թերթը կոնցեսիոն ընկերությունների կողմից արաբների պահանջները բավարարելու առթիվ հուլիսի տաժեղը համարեց չափազանց խոշոր լավատեսություն, քանի որ նրանք այդ առաջարկությունների հետ չեն համաձայնի: Հետևաբար, գրում է թերթը, արաբների համար ամենաճիշտը կլինի հետևել կոնգրեսում առաջ քաշված այն առաջարկությանը, որը խորհուրդ էր տալիս օգտվել սովետներն պետության ունեցած իրավունքից՝ չեղյալ համարելու պայմանագրերը, երբ նրանք երկրի և ժողովրդի շահերի հետ անհամատեղելի են համարվում<sup>2</sup>:

Բեյրութում լույս տեսնող «Ալ-Սահաֆահ» (الصحاف) պրոգրեսիվ թերթը, պաշտպանելով արաբական պատվիրակների կողմից կոնգրեսում առաջ քաշված բոլոր տեսակետները և ընդունված բանաձևերը, խիստ դատապարտում է արաբ այն անձնավորություններին և թերթերը, որոնք հանդես են գալիս արևմտյան տեսակետների պաշտպանությամբ և ձգտում են մեղմացնել նրանց մեղքերը: Թերթի ասելով՝ նրանք արաբ «կվիսլինգներ» են, որոնց տեսակետները ոչ մի արաբ հայրենասերի կողմից պաշտպանություն չի գտնի<sup>3</sup>:

ՄԱՌ-ի թերթերից «Ալ-Գումհուրիայի»<sup>4</sup> հոկտեմբերի 28-ի համարում նասր Ալ-Դին Ալ-Նաշաշիբիի ստորագրությամբ լույս տեսավ մի հոդված՝ նվիրված Երկրորդ կոնգրեսի աշխատանքներին:

Նաշաշիբին ընդգծում է, թե կոնգրեսում՝ սովետական դիտորդների ներկայությունը մեծապես օգնեց հերքելու անգլո-ամերիկյան ընկերությունների կողմից գների իջեցումը բացատրող կեղծ պատճառաբանությունները: Այնուհետև, անդրադառնալով կոնգրեսում կարգացված զեկուցումներին, ինչպես և դրանց շուրջը տեղի ունեցած մտքերի փոխանակություններին ու վիճաբանություններին, թերթը գտնում է, որ բոլորին պարզ դարձավ արաբների և անգլո-ամերիկյան ընկերությունների միջև գոյություն ունեցող տարաձայնությունների իսկական ծավալը: Նաշաշիբիի կարծիքով, կոնգրեսի դրական արդյունքն այն եղավ, որ նույնիսկ սկեպտիկները գտնում են, թե կոնգրեսի, Վաշինգտոնի և Փարիզի կառավարությունները պիտի վերջ ի վերջո ստիպեն կոնցեսիոն ընկերություններին, որոշ

1 «Ալ-Ջարիդա» (الجريدة) 23 հոկտեմբերի, 1960 թ.:

2 «Ալ-Անվար» (الانوار) Բեյրութ, 23 հոկտեմբերի, 1960 թ.:

3 «Ալ-Սահաֆահ» (الصحاف) Բեյրութ, 29 հոկտեմբերի, 1960 թ.:

4 «Ալ-Գումհուրիա» (الجمهورية) Կահիրե, 28 հոկտեմբերի, 1960 թ.:

դիջումներ անել, եթե չեն ուզում արաբական նավթը բոլորովին կորցնել: Կոնգրեսի մյուս օգուտն այն եղավ, որ նա արաբների տեսակետները պաշտպանող համաշխարհային հասարակական կարծիք ստեղծեց և ցույց տվեց, թե արաբներն արդեն սկսել են զբաղվել նավթի հարցերով և լրիվ ի վիճակի են այդ բանն անել:

Դժբախտաբար, ընդգծում է նաշաշիբին, օտարերկրյա ընկերություններին հաջողվեց կաշառել մի շարք արաբ ներկայացուցիչների, որոնք փորձեցին պաշտպանել արաբների հակառակորդների տեսակետները: Օտարերկրյա մոնոպոլիաները, չգոհանալով կաշառելուց կոնգրեսին մասնակցող այդ կարգի հայրենադավ արաբներին, մեծ գումարներ տրամադրեցին նաև տեղական մամուլի անկայուն և ծախու հատվածին՝ հանդես գալու համար արաբական երկրների իսկական շահերի հակառակորդների տեսակետների պաշտպանություն: Վերջապես, ասում է հոգվածագիրը, կոնգրեսն առիթ ստեղծեց մերկացնելու մոնոպոլիաների նենգ մեքենայությունները: Գիտեի՞նք, արդյոք, ասում է նաշաշիբին, որ մեր նավթի շահագործումով օտարերկրյա ընկերությունները տարեկան 1,3 միլիարդ դոլար են կորզում: Գիտեի՞նք արդյոք, որ Վենեսուելայում օգուտների 70%-ը կառավարությանն է գնում և միայն 30%-ն է ընկերություններին մնում:

Ինչպես և պիտի սպասվեր, եվրոպական թերթերի մեծ մասը հանդես եկավ մոնոպոլիաների շահերի պաշտպանությամբ:

Անդրադառնալով նավթի արաբական երկրորդ կոնգրեսի արշյունքներին, սովետական տարբեր պարբերականներ ընդգծեցին, որ կոնգրեսը չկարողացավ մշակել պահանջների մի ամբողջական և կոնկրետ ծրագիր, չկարողացավ մերժել 50/50%-ի համամասնության սկզբունքը: Չկարողացավ սահմանել անհրաժեշտ միջոցառումներ այն դեպքերի համար, երբ կոնցեսիոն ընկերությունները մերժեն ենթարկվել կոնֆերանսի որոշումներին: Սակայն, ընդհանուր առմամբ, կոնգրեսում ընդունված բանաձևերը, նշում էր «Новое время»-ն, կոչված են պաշտպանելու արաբների շահերը և անկասկած դրական գեր են խաղալու այն նավթարդյունահանող երկրների համար, որոնք այժմ շահագործվում են արևմտյան մոնոպոլիաների կողմից<sup>1</sup>: Պատահական չէ, ուրեմն, որ Բեյրութում ընդունված որոշումներն իմպերիալիզմի լագերում մտահոգություն և ջղագրգռություն են առաջացրել:

<sup>1</sup> «Новое Время», 1961, № 2.

Միջարարական քաղաքական կնճռոտ փոխհարաբերությունների պայմաններում 1961 թ. հոկտեմբեր ամսին Ալեքսանդրիայում տեղի ունեցավ նավթի արաբական երրորդ կոնգրեսը: Սիրիան նոր էր անջատվել Միացյալ Արաբական ռեսպուբլիկայից, իսկ Իրաքը կոնգրեսին չէր մասնակցում Քոստայի շուրջը առաջացած քաղաքական նոր բարդությունների հետևանքով: Իմպերիալիզմի դեմ իրենց պայքարում արաբների միասնականությունը մասամբ խախտվել էր և այդ զգալի չափով անդրադարձավ ժողովի ընթացքի վրա: Կոնգրեսի մասնակից արաբական երկրներից շատերը ուղարկել էին համեմատաբար ցածր մակարդակի ներկայացուցիչներ: Նախկին կոնգրեսների ժամանակ խոշոր ակտիվություն ցուցաբերած և մոնոպոլիաների գործունեությունը խիստ քննադատած արաբ ղեկավարներին մի քանիսը, այս անգամ, նշանավոր եղան իրենց լուծվյալ և, վերջապես զեկուլյցների մեծագույն մասը զուտ տեխնիկական և գիտական բնույթ էր կրում: Ըստ հնարավորին խուսափել էին ընդգրկել քաղաքական հարցերը: Ու այդ բանի համար, իրենց գոհունակությունը հայտնեցին նավթային մոնոպոլիստական շրջանների ներկայացուցիչները:

Այս նույն շրջանների համար շատ մխիթարական եղավ նաև Հենդրիքսի հետադարձը: Նրա զեկուլյցի վերնագիրն էր՝ «Վաղվա նավթային կոնցեսիոն համաձայնագրերը»: Իր նախորդ զեկուլյցների հակառակը, Հենդրիքսը այս անգամ իր բոլոր առաջարկությունները ներկայացնում էր՝ նախ մեղմացած ձևով, ապա որպես ապագային իրագործելի ծրագրեր: Նա փաստորեն իր թեզը ներկայացնում էր որպես ակադեմիկ վիճաբանությունների արժանի մի տեսություն:

Ի՞նչ չլինեին նախկին կոնգրեսներում առաջ քաշված առաջարկությունների մասին անդրադարձները ու մի քանի բողոք՝ ընդունված նախկին որոշումների թերակատարումների վերաբերյալ, ինչպես նաև առաջին անգամ լինելով աշխատավարձերի և աշխատանքային տեսակների վերագնահատման մասին թեև երկշտ, բայց և այնպես հետաքրքիր զեկուլյցը, ապա հակված կլինեինք ասել, թե նավթի արաբական երրորդ կոնգրեսը մի տեսակ նահանջ եղավ նախկին կոնգրեսների հետ համեմատած:

Աշխատավարձի հարցի վերաբերյալ զեկուլյցը խոշոր հետաքրքրություն առաջացրեց ոչ միայն կոնգրեսին ներկա արհմիութենական շրջանների ներկայացուցիչների մոտ, այլև դրսում ժողովի աշխատանքներին հետևող բանվորական լայն շրջաններում: Առաջարկվեց սահմանել աշխատավարձի մի նիմում, ինչպես և աշ-

խատանքային ստանդարտ օրենքներ՝ կիրառելի արաբական բոլոր նավթարդյունաբերող երկրների բանվորության նկատմամբ, իհարկե, տեղական որոշ առանձնահատկությունները հաշվի առնելուց հետո:

Խոշոր վիճաբանությունների առարկա դարձավ բանվորության և գրասենյակային պաշտոնեության միջև աշխատավարձի և աշխատանքային պայմանների եղած խոշոր տարբերությունների համար: Ելույթ ունեցողներից շատերը ընդգծեցին, թե ընկերությունների կողմից վարվող քաղաքականությունը կոչված է աշխատողների միջև ստեղծել տարրեր խավեր:

Ինչպես պիտի նկատենք ուրեմն, այս կոնգրեսը մյուս ճակատներում իր բազմաթիվ նահանջներով հանդերձ, աշխատանքային պայմանների, աշխատավարձի, աշխատավորների միջև շերտավորումներ ստեղծելու մոնոպոլ ընկերությունների փորձերի և նման այլ հարցերին անդրադառնալով, անկասկած մի առաջընթաց քայլ եղավ:

Ամփոփելով կարելի է նշել, որ նավթի արաբական կոնգրեսներում տիրող դրության մեջ հիմնական փոփոխությունների հանգեցնող առաջարկություններ չարվեցին: Սակայն, ընդհանուր առմամբ, չպետք է թերազնահատել նավթի արաբական կոնգրեսների, ինչպես և Լքսպերտների կոնֆերանսների ու այլ ժողովների դրական դերը՝ գեթ այն պատճառով, որ դրանք հանդիսանում են այս ասպարեզում մի նոր էտապի արտահայտություն, այն էտապի, երբ Մերձավոր արևելքի արաբական երկրների նավթի իսկական տերերը դուրս են եկել իրենց նախկին պասսիվ վիճակից, և նրանցից շատերն սկսել են վարել նավթի իրենց սեփական ու ինքնուրույն քաղաքականությունը, որի հետևանքով այժմ արդեն հանդես են գալիս որպես պայմանավորող ուժ: Իսկ այդ ուժի հետ այլևս չի կարելի հաշվի չնստել:

Նոր էտապի արտահայտություն էր նմանապես՝ OPEC-ի հանդես գալը, որը մի նոր հարված էր նավթի միջազգային կարտելներին: Արդարև, քանի դեռ տնտեսապես թույլ զարգացած երկրներն ի վիճակի չեն անկախ կերպով մուտք գործելու միջազգային շուկա, նրանք փորձում են իրենց արդարացի շահերը պաշտպանել միասնական ճակատ կազմելով նավթային կարտելների բոլոր տեսակի կամայականությունների դեմ: Սա էր այն հիմնական նպատակը, որի համար ստեղծվեց OPEC-ը, որը փաստորեն հակա-կարտելային մի կազմակերպություն է: OPEC-ի գոյությունը և այդ կազմակերպության անգամների վճռականությունը կոչված են խախտելու միջազգային նավթարդյունաբերության կարտելների դիրքերը,

նախկին գոյավիճակը: Չպետք է մոռանալ, որ արդյունահանված նավթի ավելի քան 2/5-ը և միջազգային շուկա մտնող նավթի 4/5-ը՝ բաժին է ընկնում այն երկրներին, որոնք այժմ այս կազմակերպության սֆերամ են:

\* \* \*

Իրանի նավթի ազգայնացման փորձը, Եգիպտոսի կողմից Սուեզի ջրանցքի ազգայնացումը, Իրաքում ռեսպուբլիկական կարգերի հաստատումը, 1958 թ. Նոյեմբերին Խանեկինի շրջանի նավթային հարստությունների պետականացումը, 1959 թ. մարտի 24-ին Իրաքի պաշտոնապես դուրս գալը Բաղդադի պակտից, Նույն թվականի ապրիլի 16-ին Կահիրեում տեղի ունեցած արաբական երկրների նավթային առաջին կոնգրեսը և այնտեղ ընդունված որոշումները, նոր նավթային խմբավորումների կամ outsiders-ների մուտք գործելու երևույթը, հին կոնցեսիոն պայմանների վերանայման համար հետզհետե ծավալ ստացող տրամադրությունները, իրենց նավթային հարստությունների նկատմամբ Մերձավոր և Միջին արևելքի կառավարությունների շահագրգռվածության աճը (որն իր արտահայտությունն է գտնում ընդերքի հարստությունների վերաբերյալ ընդունված օրենքներում, դեկրետներում, ստեղծվող հսկիչ մարմիններում և այլն) նավթի արաբ էքսպերտների Ջիդդայի կոնֆերանսը, նավթի համաարաբական երկրորդ ու երրորդ կոնգրեսները, OPEC-ի երկու կոնֆերանսները, արաբական մամուլում կոնցեսիոն ընկերությունների դեմ ծավալված կամպանիան, ժողովրդական լայն մասսաների այն ելույթները, որոնք պահանջում են իրենց ձեռքը վերցնել սեփական հարստությունների տնօրինումը՝ ահա էտապներ այն պայքարի մեջ, որը նպատակ ունի նշված երկրները իմպերիալիզմից տնտեսապես ազատագրել: Ծիշտ է, կարտելների դեմ ազգային-ազատագրական պայքարի հաջողությունները դեռևս համեստ են, սակայն չպետք է մոռանալ, որ տակավին 6 կամ 7 տարի առաջ շատերի համար նույնիսկ այսքանն աներևակայելի էր թվում:

Այս նոր երևույթի առաջացմանը մեծ չափով նպաստել է սոցիալիստական հզոր լազերի կողմից տարվող հետևողական քաղաքականությունը, նրա եղբայրական, սնշահախնդիր օգնությունը տնտեսապես թույլ զարգացած երկրներին: Այդ լազերի քաղաքականությունը սահմանափակում է մոնոպոլիաներին՝ իրենց կամքը թելադրելու հնարավորությունները և խթանում եկամտատների ու այլ հարցերի նկատմամբ արաբների կողմից ներկայացվող պահանջները:



Այսպիսով, այս նոր երևույթները կարելի է դիտել որպէս տեղաշարժ՝ մոնոպոլիաների անառարկելի տիրապետութեան վերացման ուղղութեամբ: Դա միաժամանակ մի խոշոր առաջընթաց քայլ է նախարդունարեւելեան ասպարեզում տնտեսական անկախութեան ձեռք բերելու ճանապարհին: Սակայն մեկ մոնոպոլ կազմակերպութեանը մյուսով փոխարինելով կամ մեկի կողքին մյուսի հանդես դառնալ, մի շարք տեղական ընկերութեաների ասպարեզ իջնելով, արարների մի քանի պահանջների առաջ տեղի տալով՝ իմպերիալիզմի շահագործողական էութեանն այս երկրներում դեռևս չի փոխվում:

Մերձավոր և Միջին արևելքի երկրների տնտեսութեանը, այդ թվում նաև նախարդունարեւելեանը, կսկսի ազատ զարգանալ, երբ առհասարակ կվերացվի օտարերկրյա մոնոպոլիաների հսկողութեանը, երբ նրանք դուրս կվերադառնան այդ շրջաններից, և ժողովուրդներն իրենք կդառնան իրենց հայրենիքի բոլոր հարստութեանների տերեր:

А. К. ТУРЯНЦ

## АРАБСКИЕ КОНФЕРЕНЦИИ ПО НЕФТИ

### Резюме

Наличие иностранных монополий в странах Ближнего Востока, борющихся за экономическую независимость, является нетерпимым наследием прошлого.

Если до последних лет борьба за ближневосточную нефть носила межимпериалистический характер, а нефтепромышленные страны являлись лишь объектами иностранных монополий, то сейчас некоторые из этих стран уже стремятся к самостоятельной нефтяной политике. В арабских странах все больше сознают, что для успешной борьбы против нефтяных монополий необходим единый фронт. Борьба за экономическую независимость в области нефтепромышленности Ближнего Востока пошатнула прежнюю гегемонию крупных монополий.

В статье рассматриваются арабские конференции по нефти, которые явились одним из факторов борьбы арабских стран против иностранных монополий. «Арабские конференции по нефти» — это конгрессы, конференция арабских экспертов

нефти в Джидде, а также два собрания Организации стран, экспортирующих нефть (ОПЕС), которые ставили своей целью ослабление позиций иностранных концессионных компаний. Анализируя новые тенденции в кругах нефтяных монополий и различные отношения монополий к ним, автор показывает, что беспощадная эксплуатация стран Ближнего Востока империализмом отнюдь не отменяется с выходом на арену нескольких местных компаний или с уступками некоторым требованиям арабов. Попытки иностранных монополий и местной реакции сохранить существующее положение путем компромиссов вызывают решительное противодействие арабских народов, продолжающих борьбу за свою экономическую независимость.

Экономика, в том числе и нефтепромышленность, Ближнего Востока может непрерывно развиваться лишь с ликвидацией контроля иностранных монополий. Только тогда эти страны станут экономически и политически вполне независимыми.

Հ Ո Վ Է . Թ Ո Փ Ո Ւ Զ Յ Ա Ն

Հ Ա Յ Ա Շ Ե Ա Տ Ա Վ Ո Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը  
Ս Ի Ր Ի Ա Յ Ի Ե Վ Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ի Ա Չ Գ Ա Յ Ի Ն - Դ Ե Մ Ո Կ Ր Ա Տ Ա Կ Ա Ն  
Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ Ն Ե Ր Ի Ն 1947—1952 թթ.

Մեր ձավոր արևելքի արաբական երկրներում հայ դեմոկրատական շարժումները ունեն իրենց ազգային որոշակի առանձնահատկությունները, կոնկրետ խնդիրներն ու նպատակները և կազմում են ժողովրդական այն շարժումների բաղկացուցիչ մասը, որոնք ծավալվում են այդ երկրներում իմպերիալիզմի և ֆեոդալիզմի դեմ՝ ազգային-ազատագրական ռևոլյուցիոն պայքարի դրոշի ներքո: Այդ շարժումների պատմության միջով կարմիր թելի նման անցնում է օտարերկրյա զավթիչների և ներքին ռեակցիոն տարրերի դեմ անհաշտ պայքարի գիծը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի իմպերիալիստները կորորինացված քաղաքականություն էին վարում՝ Սիրիայում և Լիբանանում ֆրանսիական իմպերիալիստների մեկնումով ստեղծված, այսպես կոչված, «վակուումը» լցնելու համար: Անգլո-ամերիկյան իմպերիալիստները բացահայտորեն միջամտում էին նրանց ներքին գործերին, տապալելով իրենց ոչ-ցանկալի կառավարությունները և այլն:

1947—1952 թթ. անգլո-ամերիկյան իմպերիալիստների բացորոշ միջամտությամբ իշխանության գլուխ կանգնեցին Լիբանանում Ռիադ Սուհի և Բեշարա էլ-Խուրիի կլիկը, Սիրիայում՝ Չախմ, Հինավի և Չիչեքլի զինվորական դիկտատորները: Մի կողմից իրենց հակա-ժողովրդական իշխանությանը սպառնացող վտանգը հեռացնելու, մյուս կողմից էլ ազատ ձեռքերով Սիրիան և Լիբանանը ազդեցիկ բլոկների և պակտերի մեջ ներգրավելու նպատակով, այդ ռեակցիոն կառավարողները վայրագ հալածանք ծավալեցին ազգային-դեմոկրատական ուժերի, հիմնականում աշխատավորական կազմակերպությունների և պարտիաների դեմ:

Պայքարի այդ դժվար օրերին, Սիրիայի և Լիբանանի հայ աշխատավորական մասսաները հանդես եկան արաբ աշխատավորության կողքին, անգլո-ամերիկյան իմպերիալիզմի և նրա տեղական գործակալների գաղութացման պլանների դեմ:

Սիրիայում ապրում են մոտավոր թվով 135.000<sup>1</sup>, և Լիբանանում՝ 90.000 հայեր<sup>2</sup>, որոնց հիմնական մասը տարբեր ձեռնարկությունների բաժնավորներ ու ծառայողներ են, գյուղացիական և արհեստավորական որոշ խավեր<sup>3</sup>: Նրանք անցել են հակաիմպերիալիստական պայքարի հերոսական ուղի, կերտել են ոգեշնչող, ուսանելի դրվագներ, որոնք միահյուսված են արաբ աշխատավորության ռևոլյուցիոն-ազատագրական մարտնչումների պատմության հետ:

Մենք կփորձենք բարձրացնել 1947—1952 թթ. հայ և արաբ աշխատավորության համատեղ պայքարի մի քանի դրվագներ:

1947 թ. ֆրանսիական բանակների մեկնումից հետո ԱՄՆ-ի նավթային մոնոպոլիաների ներխուժումը մի կողմից, բրիտանական իմպերիալիզմի «մեծ Սիրիայի» ծրագիրը մյուս կողմից սպառնում էին Սիրիայի և Լիբանանի անկախությանը:

ԱՄՆ-ի իմպերիալիստները ճնշում էին գործադրում Սիրիայի և Լիբանանի վրա, այդ երկրների տերիտորիաներով Պարսից ծոցի նավթը Միջերկրական ծով փոխադրելու իրավունք պահանջելով:

Լիբանանում, հավանություն տալով ԱՄՆ-ի մոնոպոլիաների պահանջին, Բեշարա էլ-Խուրիի հակաժողովրդական կլիկա սրեց ներքին իրադրությունը: Ժողովրդական բողոքի ելույթներից վախենալով, պառլամենտը շհամարձակվեց վավերացնել կառավարության և մոնոպոլիաների միջև կայացած համաձայնագրի նախագիծը: Սակայն, ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով, կառավարող կլիկը ցրեց պառլամենտը և որոշում ընդունեց 1947 թ. մայիսի 25-ին

1 «Ջաբթոնք», Բեյրութ, 15 սեպտեմբերի, 1954 թ.:

2 Նուրս տեղում, 19 օգոստոսի 1953 թ.:

3 Սիրիայում հայերը համախմբված են գլխավորապես Հալեպ, Դամասկոս, Լատակիա, Հոմա, Տարաուս և այլ քաղաքներում, ինչպես նաև Ղընըմիե, Յաղուբիե, Արամո, Դեյր էլ-Ջոր, Քեսար, Հասիլե, Ռագդա, Արաբ Բունար, Ռաս էլ-Այն, Ջարաբլուս, Կամըլլիե և այլ գյուղական վայրերում: Լիբանանում հայերի մոտ 80% -ը բնակվում է Բեյրութ, Տրիպոլի, Ջահլե, Ասիդա, Սուր և այլ քաղաքներում, իսկ մնացյալը՝ Լեռնալիբանանի և Բեկաայի գյուղերում:

ընտրություններ կատարելու մասին: Այդ ռազմավարության հետին միտքն էր՝ նոր պաշտպաններ կազմել ախպիսի տարրերից, որոնք թեև արտահայտվեին մոնոպոլիաների հետ գործարքի մտնելու քաղաքականությանը:

Հետադիմական ուժերի համախմբում ստեղծելու նպատակով, Քեշարա էլ-Խուրիի պրոպագանդիստական ապարատը խոստում էր «կարմիր վտանգի» ուրվականի մասին, առասպելներ հյուսում կոմունիստական «հավանական պետական հեղաշրջման հարվածի» մասին և այլն: Հարավային Լիբանանի և Քեկայի ֆեոդալ-կալվածատերերից կազմվեց ընտրական բլոկ, որի հաջողությանը նրապատելու համար հավաքագրվեցին ֆալանժների, զովմի սուրիների, դաշնականների պարտիաները, ինչպես նաև ուրիշ ռեակցիոն կազմակերպություններ:

Լիբանանի դեմոկրատական ճակատի հիմնական ուժը կազմում էին Լիբանանի կոմունիստական պարտիան և Արհմիությունների ֆեդերացիան<sup>1</sup>, որոնց շուրջ էր համախմբված այդ երկրի աշխատավորության ճնշող մեծամասնությունը: Այդ ճակատի հետ էին նաև Ս. Դ. հնչակյան, ռամկավար ազատական պարտիաները, Լիբանանահայ «Լեհրածնունդ միությունը» և մի շարք հայ առաջադիմական կազմակերպություններ, որոնք ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Լիբանանի հայությունն ընտրություններին մասնակցում է երկու դեպուտատի իրավունքով, Լիբանանի կոմունիստական պարտիայի հայկական հատվածի հետ միասին ստեղծեցին լիբանանահայ դեմոկրատական ճակատը: Դա, հայ աշխատավորության և բուրժուազիայի հայրենասեր խավերի ճակատն էր, որը ձգտում էր հայկական մասսաները մասնակից դարձնել Լիբանանի ազգային անկախության ամրացման ուղղությամբ կատարվող ջանքերին:

1 Կոմիտեերնի լուծարքից հետո, 1943 թ. դեկտեմբերին Սիրիայի և Լիբանանի կոմունիստական պարտիայի համագումարը, ի նկատի ունենալով, որ այդ երկրներում առաջացել են սոցիալ-քաղաքական միանգամայն տարբեր պայմաններ, որոշում ընդունեց ստեղծել Լիբանանի և Սիրիայի առանձին կոմպարտիաներ: 1945 թ. Փարիզում, ԱՀՖ կոնգրեսում Մուստաֆա էլ-Արիսը հայտարարեց, որ կոմունիստական արհմիությունները իրենց շարքերում Լիբանանում հաշվում էին 30.000, Սիրիայում՝ 18.000 բանվորներ: 1947 թ. Լոնդոնի կոմունիստական պարտիաների կոնֆերանսի տվյալներով 1941—1946 թթ. Լիբանանի կոմունիստական պարտիայի անգամների թիվը 1.500-ից բարձրացել էր 15.000-ի, Սիրիայում մոտավորապես նույն թվից՝ 8.000-ի: Դա, իհարկե, պատկառելի ուժ էր այդ թույլ զարգացած երկրների համար:

Ապրիլի 29-ի պաշտոնական հայտարարությամբ, լիբանանահայ դեմոկրատական ճակատը նշում էր. «Հայ դեմոկրատական ճակատը բաղկացած հնչակյան, ռամկավար ազատական, կոմունիստ և վերածնունդ կուսակցությունների և կազմակերպությունների, ինչպես նաև այլ միությունների, իր վերջին նիստին մեջ քրննելով լիբանանի ընտրական կացությունը և նկատի ունենալով հայ և եղբայրական արաբ ժողովուրդներու հասարակաց շահերը, որոշեց՝ ա) Առաջիկա լիբանանի խորհրդարանական ընտրությունց մասնակցիլ միացյալ և միակամ դեմոկրատական ճակատով, բ) Ամբողջ հայ ժողովուրդը հրավիրել իր ձայները կեդրոնացնել դեմոկրատական ճակատի նշանակած երկու անկուսակցական հարգված ազգայիններու վրա..., գ) Մասնակցիլ այն ցանկին, որ կբաղկանա դեմոկրատ լիբանանի ուժեղացման և անոր ժողովրդին շահերուն ծառայող անձնավորություններն»<sup>1</sup>:

Ֆեոդալ-կալվածատերերի բլոկի համար նշանակությունից զուրկ չէին հայկական քվեները: Հայտնի է, որ Բեյրութի մի շարք թաղերում և արվարձաններում, առանձնապես Մեդավարում, Կարանտինայում և Բուրջ-Համուդում հայկական քվեները որոշիչ դեր են կատարում ոչ միայն հայ, այլև արաբ պառլամենտական թեկնածուների հաջողության գործում: Այդ ընտրական տեղամասերում, քործելով Բեշարա էլ-Խուրիի ոստիկանության հովանավորության ներքո, դաշնակ տեռորիստները տճրաբույր մթնոլորտ ստեղծեցին հայ դեմոկրատական ճակատի ընտրապայքարը ջլատելու նպատակով: Մայիսի 12-ին, դաշնակները սպանեցին կոմունիստ Պողոս Նաթրըրյանին, որը Բուրջ-Համուդում Սիս թաղի ընտրական տեղամասի եռանդուն աշխատողներից էր<sup>2</sup>: Մայիսի 18-ին, նրանք դաշունահարեցին լիբանանի հայրենադարձության կոմիտեի նախագահ Հրանտ Տևեջյանին<sup>3</sup>: Դաշնակ տեռորիստների՝ անգամ ձեռնարկ անելու նպատակով լիբանանի հայրենադարձության կոմիտեի նախագահ Հրանտ Տևեջյանի սպանությունը, դրվատում էին հայ և արաբ աշ-

նշանակալից երևույթ էր այն, որ բացի «Ժողովուրդի ձայն», «Զարթոնք» և «Արարատ» հայկական թերթերից, լիբանանի նաև արաբական մամուլի առաջավոր օրգանները՝ «Տեխնոլոգի», «Սաուդ էլ-Ահրար», «էլ-Հատեֆ», «Սաուդ էլ-Շաաբ» և այլն, անդրադառնալով Նաթրըրյանի սպանությանը, դրվատում էին հայ և արաբ աշ-

1 «Ժողովուրդի ձայն», Բեյրութ, 1 մայիսի, 1947 թ.:

2 Նույն տեղում, 14 մայիսի, 1947 թ.:

3 Նույն տեղում:

խատավորութեան համատեղ պայքարը իմպերիալիզմի և նրա տեղական գործակալների դեմ: Հայտնելով, որ Նաթըրյանը սպանվեց «արաբների և հայերի թշնամի օտարների կողմից զինված հայ ոճրագործի գնդակով» «Սաութ Էլ-Շաար» թերթը նշում էր. «Մենք արարենք, երգվում ենք [...], որ բոլոր հայ հայրենասեր դեմոկրատների կողքին պիտի պայքարենք մաքրելու համար Լիբանանի հողից այն կեղտը, որ դաշնակցութուն է կոչվում...»<sup>1</sup>:

Մայիսի 25-ի պառլամենտական ընտրութիւններն ամենևին չհանդիսացան ժողովրդական կամքի արտահայտութունը: Սարսափի, ճնշման և խարդախութեան միջոցով, Բեշարա Էլ-Խուրիի հակաժողովրդական կլիկին հաշողվեց «հաղթանակ» տանել...: Հունիսի 4-ի պաշտոնական հայտարարութեամբ Լիբանանի կոմունիստական պարտիայի հայկական հատվածի կազմակերպության բյուրոն հաղորդում էր, որ բանակը, ժանդարմերիան, ոստիկանութիւնը, մինիստրութիւնների ծառայողները, ինչպես նաև տարբեր պարտիաների զինված խմբերը կոպիտ կերպով միջամտեցին հօգուտ կառավարական ցանկի հաշողութեանը<sup>2</sup>: Դատապարտելով «...ուղղակի միջամտութիւնները... և մասնավորապես խաղաղ ժողովրդի վրա բացված կրակոցը», Լիբանանահայ դեմոկրատական ճակատը նշում էր, որ «մտնակոխվեցավ ինչպես արաբ ժողովրդի, այնպես ալ հայ ժողովրդի ջախջախիչ մեծամասնութեան կամքը»<sup>3</sup>: Կամայականութիւնն ու խարդախութիւնն այնպես բացահայտ էին, որ բողոքում էին նաև Նրանք, ովքեր օգնել էին Բեշարա Էլ-Խուրիի նախընտրական պայքարին: Ֆալանժների կազմակերպության օրգան «Էլ-Ամալը» գտնում էր, որ «սարսափի, ճնշումի, բիրտ ուժի, խարդախութեան միջոցով է, որ կառավարութիւնը հաջողեցավ երկրին տալ խորհրդարան մը»<sup>4</sup>: Այդ ընտրութիւնների հակաժողովրդական էութիւնը բացահայտելու տեսակետից հատկանշական երևույթ է նաև այն, որ անգամ Բիշարա Էլ-Խուրիի եղբայրը՝ Սելիմ Էլ-Խուրին, բողոքելով մայիս 25-ի պարտիայի դեմ, ի վերջո հրաժարվեց իր դեպուտատական աթոռից<sup>5</sup>:

Մայիսի 25-ի ընտրութիւններով՝ Լիբանանում ազգային բուրժուազիայի իշխանութիւնը փաստորեն փոխարինվեց ֆեոդալ-

<sup>1</sup> صوت الشعب بيروت ٢٢ ايار ١٩٤٧

<sup>2</sup> «Ժողովրդի ձայն», Բեյրութ, 8 հունիսի, 1947 թ.:

<sup>3</sup> Նույն տեղում, 4 հունիսի, 1947 թ.:

<sup>4</sup> Նույն տեղում, 3 հունիսի, 1947 թ.:

<sup>5</sup> Նույն տեղում, 10 հունիսի, 1947 թ.:

կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի օլիգարխիայով: Այդ նոր իրադրությունը հետևանք էր այն բանի, որ ազգային բուրժուազիան, վախենալով «կարմիր վտանգի» ուրվականից, շուրջագլուխ գործակցել բանվոր դասակարգի ավանգարդի հետ: Զրկվելով աշխատավորական մասսաների հենարանից, ազգային բուրժուազիան նախ խճճվեց կոմպրոմիսային խաղերի մեջ, ապա հարկադրվեց իշխանությունը հանձնել Լիբանանի անկախության թշնամիներին: Լիբանանի կոմպարտիայի նախագահ Ֆարաջալա Հելուփ վկայությամբ, այդ «ընտրություններով» իշխանության ղեկի մոտ կանգնեցին «իմպերիալիզմի ծառաներն ու գործակալները, Լիբանանի, Սիրիայի և արաբական երկրների թշնամիները, օտար գրավման և օտարներին առանձնաշնորհումներ տալու կողմնակիցները»<sup>1</sup>:

Լիբանանի ներքին դրության մասին զեկուցելով, Լիբանանի կոմպարտիայի քարտուղար Նիկոլա Շաուփն նշում էր, որ իմպերիալիզմի դրածո պառլամենտը իրավունք տվեց ամերիկյան Տայպ Լայնին վերահսկողություն կատարելու հաղորդակցության ճանապարհների, երկաթուղիների, օդանավակայանների, նավահանգստների վրա, ինչպես նաև առանց մաքսի ներմուծումներ կատարելու համար:

ԱՄՆ-ի իմպերիալիստների և հակաժողովրդական կառավարող կլիկի միջև կնքված պայմանագրին «փրկարար դեր» վերագրելով, Բեյրութի դաշնակցական օրգանը ցնծությամբ գրում էր. «Ամերիկյան Անգլիայի հետ այն տերությունն է, որոնք հետամուտ են իրենց մենաշնորհները տեղական բնակչությանց բարիքին ի սպաս դնելու [...] Արդար պիտի չըլլար անտեսել... ամերիկյան օժանդակության ծրագրներու մարդասիրական կողմը...: Մարդասիրական բարձր առաքելություն մը վիճակված է Միացյալ Նահանգներուն»<sup>2</sup>: Դաշնակները ուզում էին հասարակ մարդկանց հավատացնել, որ ԱՄՆ-ի մոնոպոլիաները Տայպ Լայնի խողովակներով պետք է հոսեցնեն ոչ թե արարակամ նավթը, որից նրանք ստանում էին հսկայական շահույթներ, այլ «աշխատանքի եռուզեռ, նյութական բարօրություն» պիտի բերեն Սաուդյան Արաբիայի, Անդրհորդանանի, Սիրիայի և Լիբանանի ժողովուրդներին:

Ի հակակշիռ ԱՄՆ-ի մոնոպոլիաների ձեռք բերած արտոնությունների, բրիտանական իմպերիալիստները փորձում էին ուժե-

<sup>1</sup> صوت الشعب بيروت ٢ حزيران ١٩٤٧

<sup>2</sup> «Ազգակ», Բեյրութ, 28 սեպտեմբերի, 1947 թ.:



լացնել իրենց քաղաքական և զինվորական ազդեցությունն արաբական երկրներում:

Համա-խալափական բլոկ, և հետագայում, Թուրքիա-Անդրհորդանան կամ Իրաք-Անդրհորդանան ֆեդերացիա կազմելու ձախող փորձերից հետո, բրիտանական իմպերիալիստներն առաջ քաշեցին մեծ Սիրիայի ծրագիրը: Նրանք երազում էին Անդրհորդանանի և Սիրիայի միավորումով կազմել մի ընդարձակ պետություն, որի կազմի մեջ մտնելու էին նաև Պաղեստինի և Լիբանանի տերիտորիաների մոտավորաններով բնակեցված մասերը:

1947 թ. սեպտեմբերին բրիտանական իմպերիալիստների ներշնչումով «Պաղեստինի միջազգային քննիչ հանձնախմբին» ուղարկած իր հուշագրով: Բեյրութի մարոնիտ համայնքի կրոնապետ Մորարակը նշում էր, որ Պաղեստինը և Լիբանանը արաբական երկրներ չեն և պահանջում էր Լիբանանում «հիմնել ազգային քրիստոնյա հայրենիք», իսկ Պաղեստինում՝ «հրեական ազգային հայրենիք»<sup>1</sup>:

Իբրև Լիբանանի անկախության դեմ կոպիտ ոտնձգություն, Մորարակի հուշագիրը խոր զայրույթ առաջացրեց արաբական երկրներում: Ժողովրդին ուղղված հատուկ հայտարարությամբ հանդես գալով, Լիբանանի կոմունիստական պարտիան նշում էր, որ անգլո-ամերիկյան իմպերիալիստները և նրանց տեղական գործակալները «դավեր են նյութում, ծրագրեր կազմում Լիբանանի անկախությանը վերջ տալու համար», որ «մեծ Սիրիայի» ծրագիրը դատապարտում են իսլամ և քրիստոնյա բոլոր լիբանանցիները, ինչպես նաև՝ Սիրիայի և մյուս արաբական երկրների հայրենասերները, որ այդ ծրագրի կողմնակիցները «իմպերիալիզմի գործակալներն են, Լիբանանում՝ դովմի սուրի պարտիան, Սիրիայում՝ Մոսլիման եղբայրների կազմակերպությունը և դաշնակները»<sup>2</sup>: Լիբանանի անկախության դեմ Մորարակի և նրա իմպերիալիստական տերերի նյութած դավերը մերկացնելով, հայ կոմունիստները, հընչակյանները, ռամկավարները և վերածննդականները «բոլոր հայերու անուճով» հրապարակած իրենց «կոչում» նշում էին. «Լիբանանահայերը, որոնք Լիբանանի ժողովրդին կողքին մասնակցած են Լիբանանի անկախության համար մղված պայքարին և այժմ բոլոր լիբանանցիներու հետ, առանց դավանանքի խտրության կմասնակցին Լիբանանի անկախության, անոր հանրապետական

<sup>1</sup> «Ժողովուրդի ձայն», Բեյրութ, 1 հոկտեմբերի, 1947 թ.:

<sup>2</sup> صوت الشعب بيروت ۲۹ ايلول ۱۹۴۷

վարչաձևին, բոլոր լիբանանցիներու միասնակության և ժողովուրդներու միջև բարեկամական և արաբական եղբայրական կապերուն պաշտպանության, կդատապարտեն Մոբարակի կողմի Պաղեստինի համար միջազգային քննիչ հանձնախմբին ներկայացված հուշագիրը, զոր կնկատեն վնասաբեր լիբանանցիներու միասնականության և արաբ ժողովուրդներու միջև բարեկամական և եղբայրական կապերուն»<sup>1</sup>:

Սեպտեմբերի 30-ին Լիբանանի տարբեր քաղաքներում և գյուղերում ծայր առավ համընդհանուր գործադուլ քաղաքական պարտիաների, հիմնականում Լիբանանի կոմունիստական պարտիայի և ազգային բլոկի գլխավորությամբ: Հոկտեմբերի 1-ի համարում «Ժողովուրդի ձայն» թերթը հաղորդում էր, որ «փակված են բոլոր խանութները, շուկաները և տեղի կունենան ցույցեր» Մոբարակի հուշագրին դեմ բողոքելու համար<sup>2</sup>: Լիբանանի անկախությանը սպառնացող վտանգը, առանց կրոնի ու ազգության խտրության, միավորել էր բուրժուազիայի, մանր բուրժուազիայի և աշխատավորության տարբեր խավերին: Լիբանանահայ դեմոկրատական ճակատի կազմակերպությունների ջանքերով, հայ հասարակայնությունը ակտիվ մասնակցություն բերեց այդ ելույթներին, դաշնակների կամքին հակառակ, գործադուլի ամբողջ տևողության ընթացքում փակ մնացին հայերով բնակված թաղերի խանութները:

Ներքին իրադրության առավել սրումը վտանգավոր համարելով իր իշխանության գոյության համար, Բեշարա էլ-Խուրիի հակա-ժողովրդական կլիկը ստիպված եղավ հանդես գալ Մոբարակի ծրագրի դեմ:

Անգլո-ամերիկյան իմպերիալիզմի տնտեսական և ռազմա-քաղաքական էքսպանսիան օբյեկտիվ նախադրյալներ էր ստեղծում ներքին օպոզիցիայի առաջացման համար: Մոնոպոլիաների շահերն ու քաղաքականությունն ավելի ու ավելի էին հակասում ոչ միայն բանվոր դասակարգի, այլև գյուղացիության, ինտելիգենցիայի, քաղաքի մանր ու միջին բուրժուազիայի շահերին:

Լիբանանի ներքին օպոզիցիան, որի ձևավորումը սկսվել էր մայիսի 25-ի «ընտրությունների» նախօրյակին, 1947 թ. վերջերին հասել էր կուռ կազմակերպվածության: Նրա մեջ միավորվել էին ազգային բլոկը, ֆալանժների կազմակերպությունը, Լիբանանի կոմունիստական պարտիան և ուրիշ բազմաթիվ իսլամական, քրիս-

<sup>1</sup> «Ժողովուրդի ձայն», Բեյրութ, 1 հոկտեմբերի, 1947 թ.:

<sup>2</sup> Նույն տեղում:

տոննական և դրուզական կազմակերպություններ: Օպոզիցիայի միջոցառումներին ակտիվ մասնակցում էր Լիբանանահայ դեմոկրատական ճակատը: Անընդհատ աճող օպոզիցիոն շարժումը ոչ միայն խանգարում էր անգլո-ամերիկյան իմպերիալիստների գաղութացման պլանների իրագործումը, այլև սպառնում նրանց դրածո իշխանությունը:

1947—1948 թթ. կառավարող կլիկը ոչ մի միջոցի առաջ կանգ չառավ օպոզիցիան կազմալուծելու համար: Առաջին հերթին, հակադեմոկրատական հարվածի տակ ընկան աշխատավորական կազմակերպությունները: Լուծված հայտարարվեց Լիբանանի կոմունիստական պարտիան, փակվեցին նրա ակումբները, խափանվեցին «Սաութ էլ-Շաաբ» և «Ժողովուրդի ձայն» օրգանները և մասսայական ձերբակալություններ կատարվեցին կոմպարտիայի և արհմիությունների շրջանում: Մինչև 1948 թ. կեսերը Դըկվենիի և Բաալբեկի բանտերը լցվեցին բանվոր դասակարգի և ինտելիգենցիայի առաջավոր ներկայացուցիչներով: Այդ միջոցառումների դեմ բողոքում էին ոչ միայն աշխատավորները, այլև բուրժուազիայի և մանր բուրժուազիայի տարբեր խավերը: Ռիադ Սուհին և Բեշարա էլ-Խուրիին ուղարկած իրենց բողոքագրում, Բեյրութի 80 իրավաբաններ, դրվատելով արգելափակված քաղաքացիների «անկեղծ հայրենասիրությունը» և «քաղաքացիական պարկեշտությունը», պահանջում էին նրանց անհապաղ ազատ արձակել<sup>1</sup>: Նույնբեր ամսի վերջերին ձերբակալվեց նաև Մուստաֆա էլ-Արիսը<sup>2</sup>:

Կոմունիստների դեմ ծավալված հալածանքների նպատակն էր՝ լիկվիդացնել օպոզիցիան: Թեև ոչ միևնույն վայրագություններ, այնուամենայնիվ, հալածվում էին նաև ֆալանժների կազմակերպության, ազգային բլոկի և այլ օպոզիցիոն պարտիաների ղեկավարները: Այդ մասին են վկայում Ալֆրեդ Նազգաշի, Աբդուլ Համիդ Քարամեի և ուրիշների դեմ ձեռք առնված միջոցառումները, ինչպես նաև ազգային բլոկի հերթական համագումարի արգելումը<sup>3</sup>:

Հակակոմունիստական հալածանքները ծանր հարված հասցրին օպոզիցիոն ճակատի միամտականությանը: Բանվոր դասակարգի ավանգարդի հետ գործակցող բուրժուական և մանրբուրժուական կազմակերպությունները որդեգրեցին զգուշավոր վար-

<sup>1</sup> «Արարատ», Բեյրութ, 21 հունիսի, 1948 թ.:

<sup>2</sup> Լիբանանի արհմիությունների ֆեդերացիայի նախագահ և Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի գործադիր կոմիտեի անգամ:

<sup>3</sup> «L'Orient», Beyrouth, 2 Décembre, 1948.

քագիծ ռեպրեսիայի շենթարկվելու համար: Կազմալուծվեց նաև լիբանանահայ դեմոկրատական ճակատը:

Այդ ծածկը պայմաններում հայ և արաբ աշխատավորության առաջավոր խավերը շարունակեցին համատեղ պայքարը անգլո-ամերիկյան իմպերիալիզմի և նրա տեղական գործակալների դեմ: 1948—1949 թթ. հանդես գալով մասսայական ելույթներով, հայ և արաբ աշխատավորները բողոքում էին ռեակցիայի հակադեմոկրատական միջոցառումների դեմ, պահանջում էին ազատ արձակել Ֆարաջալա էլ-Հեյուհին, Նիկոլա Շաուհին, Մուստաֆա էլ-Արիսին և մյուս արգելափակված կոմունիստներին: 1948 թ. դեկտեմբերի 2-ին, Բեյրութի մեծ սերայի առաջ համախմբվելով, աշխատավորները կառավարությունից պահանջեցին Բաալբեկի և Դըկվեմիի բանտարկյալների ազատ արձակումը<sup>1</sup>: Նույն նպատակով, աշխատավորական ելույթներ տեղի ունեցան նաև Տրիպոլիում: Այդ քաղաքում, ոստիկանությունը կալանքի վերցրեց մի շարք աշխատավորների, որոնք հակակառավարական թռուցիկներ էին ցրում ժողովրդի մեջ<sup>2</sup>: Դեկտեմբերի 31-ին, ռեակցիան ազատեց մի շարք կալանավորների, այդ թվում և կոմունիստ լրագրող Պարույր Ծրեցյանին<sup>3</sup>, աշխատավորական նոր ելույթների առաջն առնելու նպատակով:

Ծղբայրական միասնական ոգի ցուցաբերելով, Բեյրութի հայ և արաբ 500 աշխատավորներ բողոքագիր ուղարկեցին Իրաքի ընդհանուր դատախազությանը, որը, իբր թե «հայրենիքի գերագույն շահերի դեմ» գործելու ամբաստանությամբ, կալանքի տակ էր առել Բաղդադի արհմիությունների ղեկավարներին: Այդ բողոքագրով Բեյրութի աշխատավորները պահանջում էին նրանց անհապաղ ազատել<sup>4</sup>, բայց նուրիսահիդյան ռեակցիան պատժի առավելագույնին դատապարտեց նրանց: Իրաքի դատախազության անարդար վճռի դեմ բողոքելով, հայ և արաբ աշխատավորները ցույցերով հանգեսեկան Բեյրութի իրաքյան դեսպանատան առաջ<sup>5</sup>: Ցուցարարները ընդհարվեցին Բեշարա էլ-Խուրիի ոստիկանության հետ: Ցուցարարներից Նաժլա Նըմըրին, Վերժինիին և Արտաշեսյանին հանձնեցին ռեակցիայի դատաստանին: Արաբական մամուլը դժվատանքով արձանագրեց այն փաստը, որ դատավճիռը կարդալու պահին Արտա-

1 «Արաբատ», Բեյրութ, 4 դեկտեմբերի, 1948 թ.:

2 Նույն տեղում:

3 «Ջարթոնք», Բեյրութ, 1 հունվարի, 1949 թ.:

4 «Արաբատ», Բեյրութ, 14 փետրվարի, 1949 թ.:

5 Նույն տեղում, 20 փետրվարի, 1949 թ.:

շեսյանը կոչել է:—«Կեցցե՛ք Լիբանանը, անկցի բրիտանական իմպերիալիզմը»: Դրա հետևանքով էլ, դատավորը սկզբնական մեկ ամսվա արգելափակման վճիռը վերածել է երկու տարվա բանտարկության<sup>1</sup>:

Բանվորները օգնում էին Լիբանանի կոմունիստական պարտիայի այն ղեկավարներին, որոնք ընդհատակ անցնելով հերոսական ճիգեր էին գործադրում արաբներն և հայերեն բազմատիրափ թուլացիկներ և «Ժողովուրդի պայքար» պարբերականը աշխատավորական լայն խավերում տարածելու ուղղությամբ: Այդ հրատարակությունները դիմակազերծում էին տիրապետող կլիկի հակաժողովրդական արարքները, նրա ստրկաբարո հնթարկվածությունը օտարերկրյա տերերին, և անգլո-ամերիկյան իմպերիալիզմի մանյուվրները Լիբանանը հակասովետական պատերազմի պլանցարմի վերածելու համար: 1949 թ. մարտ ամսի վերջերին, մերկացնելով Ատլանտյան պակտի ագրեսիվ նպատակները, հայերեն թուլացիկներից մեկը նշում էր, որ «Սուրիան և Լիբանանը երբեք մաս պիտի չկազմեն Սովետական Միության դեմ մղվող որևէ իմպերիալիստական պատերազմի»<sup>2</sup>:

1949 թ. մարտ-նոյեմբեր ամիսներին աշխատավորական բազմաթիվ ելույթներ տեղի ունեցան Բեյրութում և Բեյրութի արվարձաններում: Կառավարող կլիկի հակակոմունիստական վարքագծից օգտվելով, գործարանատերերը պահանջում էին ի վնաս աշխատավորների վերանայել աշխատանքային օրենսդրությունը: Պատրոնների պահանջի իրավացիության մասին առասպելներ հյուսելով, ռեակցիոն թերթերը արդար գործ էին համարում այդ օրենսդրության մի շարք հոդվածների ճեղքափոխումը: Չնայած կենսամթերքների գները զգալի աճել էին և աշխատավարձը չէր բավարարում աշխատավորների առօրյա կարիքները հոգալուն, հակաժողովրդական կլիկը օրակարգի հարց դարձրեց աշխատավարձի կրճատումը: Այդ քայլի դեմ բողոքող աշխատավորական ելույթներ տեղի ունեցան Աշրտֆիհ և Մազրաա թաղերում, խնչպես նաև Մտարատի և Բուրջի կենտրոնական հրապարակներում: Ոստիկանությունը հարձակվեց Բուրջի ավելի քան հազար ցուցարարների վրա: 15 ցուցարարներ վերցվեցին կալանքի<sup>3</sup>: Աշխատանքային օրենսդրության վերանայման դեմ գործադուլով հանդես գալով, կահույքագործա-

1 «Զարթոնք», Բեյրութ, 16 մարտի, 1949 թ.:

2 «Արարատ», Բեյրութ, 30 մարտի, 1949 թ.:

3 «Զարթոնք», Բեյրութ, 9 նոյեմբերի, 1949 թ.:

կան, տպարանական և այլ ձեռնարկությունների բանվորներն ու ծառայողները պահանջում էին վերաբանալ Արհմիությունների ֆեդերացիայի ակումբը և ազատ արձակել Մուստաֆա էլ-Արիսին<sup>1</sup>։ Այդ գործադուլին զորավիգ էին միջնակարգ և բարձրագույն կրթության հաստատությունների ուսանողները։

Հանրագումարի բերելով 1947—1949 թթ. իրադարձությունները, կարող ենք եզրակացնել, որ հայ աշխատավորական մասսաները և դեմոկրատական տարրերը պաշտպանում էին արաբ պրոգրեսիվ ուժերին և նրանց հետ միասին ակտիվորեն պայքարում ներքին ռեակցիայի և անգլո-ամերիկյան իմպերիալիստների դեմ։

\* \* \*

Սիրիայում անգլո-ամերիկյան իմպերիալիստական հակասությունները առավել սրությամբ դրսևորվեցին 1949 թ.։ Այդ արտահայտվում էր, մի կողմից «մեծ Սիրիայի» ծրագրի դեմ ամերիկյան իմպերիալիզմի խանգարիչ միջոցառումներով, մյուս կողմից էլ Արամկոյի պլանների իրագործման դեմ բրիտանական իմպերիալիզմի հարուցած դժվարություններով։

Հայտնի է, որ Սիրիայի պառլամենտական ընտրությունները, որոնք տեղի տևեցան 1947 թ. հունիսի 7-ին, շարժարացրին անգլո-ամերիկյան իմպերիալիզմի ակնկալությունները։ Սիրիայի ազգային պարտիան, որը վարում էր պրո-իմպերիալիստական քաղաքականություն, ծանր պարտություն կրեց։

Սիրիայի հայությունը կարողացավ իր կամքն արտահայտել շնորհիվ այն բանի, որ ընտրությունները տեղի ունեցան համեմատաբար խաղաղ մթնոլորտում։ Սիրիահայ դեմոկրատական ճակատի թեկնածուն ընտրվեց պառլամենտի դեպուտատ։ Հալեպի միջաբե հայկական թաղերում՝ Համիդիե, Մեյդան, Շեյխ Մագսուտ, Դավուդիե, Արզուբ, Հյուլլուկ, Սուլեյմանիե և այլն, որտեղ դաշնակները հույս ունեին ստանալ ձայների 80%-ը, ճնշող մեծամասնությամբ քվեարկել էին Սիրիահայ դեմոկրատական ճակատի թեկնածուի օգտին<sup>2</sup>։

Ընտրությունների հետևանքով իշխանության գլուխ անցավ Սիրիայի ժողովրդական պարտիան, որը հրկրի անկախությունը պաշտպանելու համար թույլ չէր տալիս Արամկոյի նավթամուղի

<sup>1</sup> «Զարթոնք», Բեյրութ, 16 նոյեմբերի, 1949 թ.։

<sup>2</sup> «Ժողովրդի ձայն», Բեյրութ, 25 հունիսի, 1947 թ.։

անցկացումը և միաժամանակ հակադրվում էր «մեծ Սիրիայի» ծրագրի իրագործմանը:

1948 թ. արար-հրեական պատերազմի հետևանքով, Պաղեստինի տերիտորիայի մի մասի՝ Անդրհորդանանի կցումից հետո, առաջին պլան քաշվեց Սիրիայի և Հորդանանի միացման խնդիրը, իբրև գործնական քայլ «մեծ Սիրիայի» ստեղծման ճանապարհի վրա: Այդ ուղղությամբ բրիտանական իմպերիալիզմի գործադրած ճնշումներից պաշտպանվելու համար, ժողովրդական պարտիայի կառավարությունն ստիպված ամերիկյան իմպերիալիզմին զիջումներ կատարելու ուղին ընտրեց:

1949 թ. մարտի 30-ին, երբ այդ բանակցություններն ավարտվում էին հօփուտ Արամկոյի, տեղի ունեցավ Սիրիայի առաջին պետական հեղաշրջումը, գնդապետ Հյուանի Ջաիմը պաշտոնանկ արեց ռեսպուբլիկայի պրեզիդենտին, ցրեց պառլամենտը և երկրում հաստատեց զինվորական դիկտատուրա: Արաբ հրապարակախոս Ժ. Օ. Շաթթարը գրում էր. «Անգլիան, Արամկոյի Սուրիո հողամասնանցներու արտոնագիր-համաձայնագրի նախօրյակին, առաջացուց և հաջողուց Սուրիո առաջին պետական հարվածը Հյուանի Ջաիմի գլխավորությամբ<sup>1</sup>: Գործելով բրիտանական իմպերիալիզմի դիրեկտիվներով, Հյուանի Ջաիմը Սիրիայի կապերը սերտացրեց Իրաքի, Հորդանանի և Թուրքիայի հետ, ի նախապատրաստություն մեծ Սիրիայի ծրագրի իրագործման<sup>2</sup>:

Սակայն բրիտանական իմպերիալիզմի այդ մարիոնետը հետևողական չեղավ իր ստանձնած պարտավորությունների մեջ: Ապրիլի վերջերին նա հայտարարում էր, — «Բաղդադի և Ամմանի վեհապետները կկարծեն, որ ես արծաթե ափսեի մը վրա Սուրիո թագը իրենց պիտի նվիրեի, սակայն, հուսախափ եղան. սուրիական հանրապետությունը վեհապետներ չի ճանչնար և չի ուզեր մեծ Սուրիա. մենք ամեն կերպ պիտի պայքարինք այդ օտարամուտ ծրագրի դեմ»<sup>3</sup>: Ավելին. մայիսի կեսերին, Հյուանի Ջաիմի կառավարությունը հանդիսավոր կերպով հավանություն տվեց Արամկոյի առաջարկությանը<sup>4</sup>:

Բրիտանական իմպերիալիզմը դիմեց մի շարք միջոցառումների՝ խոստմնադրուժ գործակալին պատժելու համար: Նախ և առաջ, հունիսի կեսերին Իրաքը խզեց դիվանագիտական հարաբերություն-

<sup>1</sup> «Արաբատ», Բեյրութ, 30 ապրիլ, 1950 թ.:

<sup>2</sup> «Le Journal d'Egypte», Le Caire, 22 avril, 1949.

<sup>3</sup> «Արաբատ», Բեյրութ, 29 ապրիլ, 1949 թ.:

<sup>4</sup> Նույն տեղում, 20 մայիս, 1949 թ.:

ները Սիրիայի հետ<sup>1</sup>։ Հուլիսի 21-ին, կոնդոնում գումարվեց Մեր-  
 ձավոր արևելքի երկրներում հավատարմագրված բրիտանական դի-  
 վանագետների խորհրդակցությունը։ Ըստ ժ. Օ. Շաթթարի, այդ  
 խորհրդակցությունը զբաղվել է Սիրիայի նոր իրադրությամբ և  
 վճռական որոշումներ ընդունել Հյուսնի Զաիմի նկատմամբ<sup>2</sup>։ Օգոս-  
 տոսի 14-ին տեղի ունեցավ Սիրիայի երկրորդ պետական հեղաշրջ-  
 րումը։ Մի ուրիշ գնդապետ, Սամի Հինավին ձերբակալեց Զաիմին,  
 և գնդակահարեց։ Շուտով, Իրաքը և Հորդանանը վերականգնեցին  
 իրենց դիվանագիտական հարաբերությունները Սիրիայի նոր իշ-  
 խանության հետ։ Սակայն անգլո-ամերիկյան իմպերիալիստները  
 շարունակում էին իրար ձեռքից ձեռքը Սիրիան։ Դեկտեմբերի  
 19-ին, մի ուրիշ զինվորական, Ադիբ Չիչբըլին տապալեց Հինավիի  
 հշխանությունը և հաստատեց իր դիկտատուրան, որը տևեց մինչև  
 1954 թվականը։

1949 թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին, Սիրիայում զգալի աշ-  
 խուժություն ցուցաբերեցին հայ և արաբ աշխատավորները։ Հյուսնի  
 Զաիմի ռեպրեսիվական դեկրետների դեմ՝ բողոքի համատեղ ցույցե-  
 րից հետո, Հալեպի ոստիկանությունը ձերբակալություններ կա-  
 տարեց հայ և արաբ աշխատավորության շրջանում<sup>3</sup>։ Արամկոյին  
 տրված մենաշնորհի դեմ աշխատավորական ելույթների առաջն  
 առնելու նպատակով, Զաիմը կալանքի վերցրեց 40 քաղաքացիների,  
 Դրոնցից 14-ը Հալեպարենակ հայ աշխատավորներ էին<sup>4</sup>։ Երկրորդ  
 պետական հեղաշրջումից հետո, Սիրիայի քաղաքական բանտար-  
 կյալները, այդ թվում և կոմունիստները ազատ արձակվեցին, սա-  
 կայն, նոյեմբերի 15—16-ի պառլամենտական ընտրությունների  
 նախօրյակին նորից ձերբակալվեցին։ Այդ միջոցառումները պատ-  
 ճառ դարձան Սիրիայի մի շարք քաղաքներում ուսանողական և  
 բանվորական ցույցերի։ Ցուցարարները պահանջում էին վերջ տալ  
 երկրի ներքին գործերին բրիտանական միջամտություններին և շե-  
 դյալ համարել Արամկոյին տրված իրավունքները։

\* \* \*

Անգլո-ամերիկյան իմպերիալիզմի ներթափանցման հետևան-  
 քով սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր դրություն ստեղծ-  
 վեց Սիրիայի և Լիբանանի աշխատավորակաճ մասսաների համար։

1 «Արաբառ», Բեյրութ, 18 հունիսի, 1949 թ.։

2 Նույն տեղում, 30 ապրիլի, 1950 թ.։

3 Նույն տեղում, 26 մայիսի, 1949 թ.։

4 Նույն տեղում։



Սիրիայում և Լիբանանում անասելի պայմաններ էին ստեղծվել աշխատավորության առաջավոր խավերի համար: Անգլո-ամերիկյան իմպերիալիստները և ռեակցիոն կառավարողները աշխատավորության դեմ օգտագործում էին իրենց գործակալներին, այդ թվում և դաշնակիցներին: Դաշնակիցները ոչ միայն հալածում, հետապնդում և ոստիկանության դատաստանին իբրև կոմունիստ ներկայացնում էին հայ ազնիվ մարդկանց, այլև մահափորձ էին կազմակերպում ակտիվ դեմոկրատների դեմ: Դաշնակ տեռորիստների հարձակման զոհ գնացին հայրենասեր երիտասարդներ Զ. Մահսերեջյանը<sup>1</sup>, Ա. Եղիայանը և Տ. Թադևոսյանը<sup>2</sup>: Դաշնակիցներն ագրեսիվ էին նաև Սիրիայում:

1949 թ. վերջերին Լիբանանի ԿՊ ԿԿ-ը նշում էր,—«Լիբանանի բանվոր դասակարգը իր օրավարձերն ու իրավունքները պաշտպանելու համար օտար ընկերությանց և մեծ կեղեքիչներու հարձակումներու դեմ, կառավարական հալածանքի՞ն տւ բռնությանց դեմ, կսարքն գործադուլներ ու ցույցեր [հյուսիսօտեղիստներ և այլ մարզի աշխատավորներու գործադուլները Պեյրուսի մեջ, բանվորական ցույցերը Թրիփոլիի ու Պեյրուսի մեջ]: Գյուղացիները ելույթներ կունենան ավատապետներու խժոժությանց դեմ [գյուղացիներու կռիւները հարավի մեջ ընդդեմ հողերու հափշտակման ավատապետներու կողմն], երկրագործական արտադրանքի գիններու նվազեցման դեմ [հազարավոր գյուղացիներու ցույցը Պեքայի մեջ], որ կկատարվի ամերիկյան պահածոներու մրցակցության հետևանքով: Կանանց, երիտասարդության, մտավորականության և ամբողջ ժողովրդական մասսաներուն մեջ կծավալի պայքարը ի ինդիր խաղաղության [խաղաղության միջազգային օրվա առթիվ սարքված ցույցերը Պեյրուսի, Թրիփոլիի, Նապաթիի և Լիբանանի այլ շրջաններուն մեջ]: [...]: Նույն ատեն կզորանա ժողովուրդին ատելությունը ընդդեմ ամերիկյան իմպերիալիզմին և անոր գործակից անգլիական ու ֆրանսական իմպերիալիզմներուն, որոնք օր ըստ օրե ավելի կատաղությամբ իրարու հետ կմրցին ստրկացնելու համար Լիբանանը, կողոպտելու համար անոր հարստութիւնները, զայն ենթարկելու իրենց պատերազմական-զինվորական ծրագիրներուն [Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի հետ ստրկացուցիչ ծրագիր, Հավաքական ապահովության ծրագիր, Իրաք-Կու-

1 «Արարատ», Բեյրութ, 3 հուլիսի, 1949 թ.:

2 Նույն տեղում:

րիական միութեան ծրագիր, որուն կուզվի կցել նաև Լիբանանը, Քրիստոնեական «ազգային հայրենիքի» ծրագիր, և այլն...):

Ի տես տնտեսական կացութեան վատթարացման, անգործութեան ծավալումին<sup>1</sup>, առևտուրի լճացման, սնանկութեան հրու բազմացման, ապրուստի ընդհանուր մակարդակի անկման, ամերիկյան և այլ մրցակցութեան հետևանքով ազգային արդյունաբերութեան և երկրագործութեան շնչահեղձութեան, ժողովրդային զայրույթը կաճի կառավարող քլիքի դեմ, որը դավաճանութեանն ենթարկելով, խարդախութեամբ ու կողոպուտով զբաղած է, իմպերիալիզմի ու օտար ընկերութեանց կամակատարը եղած է և ոչինչ կրնէ երկրին պահանջները իրագործելու համար<sup>2</sup>: Դրութիւնը գրեթէ նույնն էր Սիրիայում:

Այդպիսին էր ներքին դրութիւնը, երբ, 1949 թ. վերջերում, համարյա միաժամանակ, գումարվեցին Սիրիայի և Լիբանանի կոմունիստական պարտիաների պլենումները, որոնք խոշոր նշանակութիւն ունեցան ազգային-դեմոկրատական պայքարի հետագա վերելքի համար<sup>3</sup>:

Լիբանանի ԿԳ ԿԿ-ի պլենումի որոշումները, որոնց հավանութիւն էին տվել նաև հայ աշխատավորութեան առաջավոր խավերը, օբյեկտիվորեն մատնանշում էին ազգային-դեմոկրատական ազատագրութեան պայքարի ուղին:

Անդրադառնալով այդ պայքարին, ԿԳ ԿԿ-ի պլենումը հայտարարում էր, որ կոմպարտիայի գլխավոր առաջադրանքներից մեկն է ազգային անկախութեան նվաճումը<sup>4</sup>, «Վերջ տալ իմպերիալիզմի և անոր գործակալներուն տիրապետութեան, իմպերիալիզմի զինակից և անոր գլխավոր հենարան ավատապետութեան մնացորդներուն, և այդպիսով սոցիալիզմի համար ճամփա բանալ»: Այդ նպատակը թիրագործելու ընդունակ միակ ուժը Լիբանանի բանվոր դասակարգն է, դաշնակցած գյուղացիական մասսաներուն և քաղաքի

1 Ըստ Բեյրութի «Ջարթունք» թերթի [22 նոյեմբերի 1949 թ.] արբական մամուլից քաղած տեղեկութեան 30.000 գործազուրկ կար Լիբանանում:

2 «Ժողովուրդի պայքարը», Լիբանանի կոմունիստ կուսակցութեան կենդրոնական կոմիտեի որոշումները: Հրատարակութիւն [մեքենագրված] Սուրիո և Լիբանանի կոմունիստ կուսակցութեանց, 1950 թ. № 12, էջ 1—2:

3 Մենք կանգ կառնենք Լիբանանի կոմպարտիայի ԿԿ-ի պլենումի որոշումների վրա, ի նկատի ունենալով այն իրողութիւնը, որ դրանք, բացի տեղական բնութի մի շարք խնդիրներից, հիմնականում նույնանում են Սիրիայի ԿԳ ԿԿ-ի պլենումի որոշումների հետ:

4 «Ժողովուրդի պայքար», էջ 7:

ու գյուղի բոլոր աշխատավորներու հետ, և այն գլխավոր ուժը, առանց որոնց աջակցության կարելի չէ հաղթել, ատիկա համաշխարհային հակաիմպերիալիստական ճակատն է, խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի ճակատը, գլխավորությամբ Սովետական Միության»<sup>1</sup>։

Դատապարտելով արատավոր այն մտայնությունը, որ իբր թե «ազգային-դեմոկրատական ազատագրության իրագործումը միայն ու միայն գլուխ կհանվի միջազգային գործոններու ուժով առանց ժողովրդի ակտիվ մասնակցության», ԿԿ պլենումը շեշտում էր, որ «Խորաքանչյուր ժողովրդի ազատագրությունը արդյունք էր իր պայքարին»<sup>2</sup>, և ժողովրդական մասսաներից պահանջում էր պայքարի ասպարեզ իջնել «...ի խնդիր իմպերիալիզմի տիրապետության տակ գտնվող եկամտի աղքատներու քարյուղ, դրամատոմ, երկաթուղի, դրամանիշ, էլեկտրականություն, ռեժի<sup>3</sup>, նավահանգիստ՝ ազգայնացման...»<sup>4</sup>։ Բացի այդ, ընդգծելով Սովետական Միության արտաքին քաղաքականության դերը գաղութային և կիսագաղութային կախյալ ժողովուրդների ազգային անկախության պայքարում, ԿԿ-ի պլենումը հաստատում էր, որ «ոչ մեկ ժողովուրդ, ներկա պատմական պահուն չի կարող իր ազգային գերիշխանությունն ու ազատությունները պահպանել առանց հենվելու Սովետական Միության վրա, առանց անոր աջակցության... Այս տեսակետի ամեն ուրացում կառաջնորդե դեպի ազգային դավաճանություն...»<sup>5</sup>։

Բարձր գնահատելով յուրաքանչյուր երկրում թեկուզ անջատաբար գործող հակաիմպերիալիստական շարժումների օգուտը դեմոկրատիայի ու սոցիալիզմի համար մղվող համաշխարհային պայքարում, պլենումը նշում էր, որ «ազգային-ազատագրական շարժումներու զարգացումը գաղութային ու կախյալ երկրները դարձուց իմպերիալիզմը խարխուլեցնող... հակաիմպերիալիստական ճակատին աջակցող գործոն մեծ ուժ... Մասսայական այս պայքարի կարևորությունը հոն է, որ անիկա կխարխուլե համաշխարհային իմպերիալիզմը իր հենարաններեն մեկուն մեջ, իր ճակատներեն մեկումս վրա, և հետևաբար կսատարե իմպերիալիզմի անխուսափելի փլուզման գործին»<sup>6</sup>։

1 «Ժողովրդի պայքար», էջ 4։

2 Նույն տեղում, էջ 7։

3 Մխախտի մոնոպոլիստական ընկերություն։

4 «Ժողովրդի պայքար», էջ 4։

5 Նույն տեղում, էջ 7—8։

6 Նույն տեղում, էջ 8։

Լիբանանի ազգային իրական անկախության իրականացումը խաղաղության համար մղվող պայքարի հետ կապելով, պլենումը դատապարտում էր կառավարող կլիկի սպառազինման քաղաքականությունը, որը առերիշ բան չէ, եթե ոչ իմպերիալիստներու պատերազմական-հարձակողական նպատակներուն ենթարկվածության արդյունք:... Զինումի կառավարական քաղաքականության իրական նպատակն է ամրացնել ու ընդարձակել հակաժողովրդական ճնշումի սարսափի մեքենան, ինչ որ կնշանակե երկիրը ծանրաբեռնել դրամական նոր ծախսերով և ժողովուրդը՝ նոր տուրքերով<sup>1</sup>: Պլենումը կոչ էր անում ժողովրդական մասսաներին անհաշտ պայքար մղել Լիբանանի տերիտորիայում ռազմական բազաներ հաստատելու ամերիկյան պլանների դեմ:

Պլենումը եզրակացնում էր, որ ազգային-դեմոկրատական ազատագրության ամեկ ուղի կա, այն է՝ ժողովրդական ուժերը համախմբել և միայն ապավինած սեփական ուժին, ժողովրդական միության ու համերաշխության, լուրջ պայքարի դուրս դալ ընդդեմ իմպերիալիզմի և ավատապետության<sup>2</sup>: Այդ պայքարը լավագույն ձևով կազմակերպելու և վարելու համար, պլենումը առաջարկում էր կազմել ազգային-դեմոկրատական ճակատ, միավորելով բանվորների, գյուղացիների, արհեստավորների, ուսանողների, ինտելիգենցիայի, մանր ու միջակ առևտրականների ու արդյունաբերողների տարբեր խավերը<sup>3</sup>:

Լիբանանի ԿՊ ԿԿ-ի որոշումները հզոր թափ հաղորդեցին աշխատավորական շարժումներին: 1950 թ. հունվարի 12-ին Բեյրութում տեղի ունեցան բանվորական ցույցեր Մուստաֆա էլ-Արիսի դատավարության դեմ բողոքելու համար: Իսկ հունվարի 19-ին, Տրիպոլիում ցուցարարները բախվեցին ոստիկանության հետ, 27 աշխատավորներ կալանավորվեցին: Հունվարի 29-ին, Բեյրութում ամերիկյան օգնության շորորոգ կետի կազմակերպության և կառավարության միջև կնքված համաձայնագրի դեմ աշխատավորների և ուսանողների ցույցերը ենթարկվեցին ոստիկանության գրոհին, սպանվեց 1 և վիրավորվեց 6 ցուցարար<sup>4</sup>: Հունվարի 31-ին, Տրիպոլիում տեղի ունեցան աշխատավորական և ուսանողական ցույցեր ընդդեմ Բեյրութի ոստիկանության վայրագությունների:

1 «Ժողովուրդի պայքար», էջ 6:

2 Նույն տեղում, էջ 11:

3 Նույն տեղում, էջ 12:

4 «Զարթոնք», Բեյրութ, 23 փետրվարի 1950 թ.:

վիրավորվեցին 3 և ձերբակալվեցին 40 ցուցարարներ: Փետրվարի 19-ին Ջահելում կայացան բանվորա-գյուղացիական նոր ցույցեր, իսկ մարտի 12-ին Բեյրութում կանանց ցույցեր էլ-Արիսի կնոջ գլխավորությամբ: Աշխատավորական ելույթներ տեղի ունեցան նաև Կորեայի պատերազմի և ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի մայիսյան հայտարարության դեմ: Մայիսյան հայտարարությունը, որը վկայում էր այդ տերությունների իմպերիալիստական դիտավորությունների մասին, խոր ընդվզում առաջացրեց նաև Սիրիայում: Դամասկոսում, Հալեպում, Հոմսում և այլ քաղաքներում տեղի ունեցան վիթխարի ցույցեր, որոնց ընթացքում ձերբակալվեցին 100, և սպանվեցին բազմաթիվ ցուցարարներ: Ամբողջ 1950 թվականի ընթացքում չի անցել մի շաբաթ, որ բանվորական, գյուղացիական, ուսանողական ելույթներ տեղի չունենային Սիրիայում և Լիբանանում:

1950—1951 թթ. Սիրիայում և Լիբանանում հզոր վերելք ապրեց նաև խաղաղության կողմնակիցների շարժումը: Ստոկհոլմի խաղաղության կոչը ստորագրողների թիվը 1951 թ. վերջերին Լիբանանում հասավ 200.000-ի, Սիրիայում՝ 265.000-ի: Ուշագրավն այն էր, որ խաղաղության կողմնակիցների կոչը ստորագրեցին նաև բուրժուազիայի ականավոր ներկայացուցիչներ, բազմաթիվ հասարակական և պետական գործիչներ, բժիշկներ, իրավաբաններ, արդյունաբերողներ և այլ զբաղմունքի տեր մարդիկ: Սիրիայի և Լիբանանի խաղաղության կողմնակիցները հատուկ պատգամավորությամբ մասնակցեցին 1951 թ. Բեռլինի երիտասարդական Ֆեստիվալին:

Բացի այդ, խաղաղության կողմնակիցները ակտիվ պայքար էին մղում Լիբանանն ու Սիրիան ազդեցիվ բռնկների և պակտերի մեջ ներգրավելու անգլո-ամերիկյան պլանների դեմ: Նրանք բողոքի հսկայական ցույցերով հանգես եկան միջին արևելքի բրիտանական զինված ուժերի հրամանատար գեներալ Բրիան Ռոբերտսոնի Բեյրութ և Դամասկոս այցելության դեմ: 1951 թ. փետրվարի 5-ին Բեյրութում հայ և արաբ բազմահազար խաղաղության կողմնակիցներ համախմբվելով Մաարատ հրապարակում գոչում էին «գեներալ, կորեք Լիբանանից»: Ձերբակալված ցուցարարների թվում կային բազմաթիվ հայ աշխատավորներ՝ Ղ. Քեստաքյան, Ժ. Իշխանյան, Հ. Լեշկյան, Գ. Գալուստյան և ուրիշներ: Գեներալ Ռոբերտսոնի դեմ ցույցեր տեղի ունեցան նաև Դամասկոսում, Հոմ-

1 «Ջարթոն», Բեյրութ, 7 փետրվարի 1951 թ.:

սում և Հալեպում: Այնուամենայնիվ, հոկտեմբերի 13-ին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի կառավարությունները հրապարակեցին «Միջին արևելյան հրամանատարություն» ստեղծելու պլանը, որի հիմնական նպատակն էր արաբական երկրները ստրկացնել «Միջին արևելքը օտար ագրեսիայից պաշտպանելու» կեղծ պատրվակի տակ: Այդ պլանը, որը նախատեսում էր օտարերկրյա զինված ուժերի տեղադրումը արաբական երկրներում, ունեցավ անփառունակ վախճան, այն մերժեցին Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի, Լիբանանի, Սաուդական Արաբիայի ժողովուրդները:

Այդ իրողության հակառակ, անգլո-ամերիկյան իմպերիալիստները տակավին փայփայում էին «Միջին արևելյան հրամանատարություն» պլանը իրագործելու հույսերը: Նրանք փորձում էին մի կողմից վարձված թերթերի միջոցով նպաստավոր հասարակական կարծիք ստեղծել այդ պլանի նկատմամբ, մյուս կողմից համառորեն, բոլոր միջոցներով աշխատում էին տարհամոզել պետական գործիչներին: 1952 թ. ապրիլին, այդ կարգի առաջելուց մի քանի օր անց ժամանեց Իսպանիայի արտաքին գործերի մինիստր Մարթին-Արտախոն: Ապրիլի 6-ին, Բեյրութի Մաարատ հրապարակում հայ և արաբ աշխատավորների համատեղ ցույցեր տեղի ունեցան Արտախոյի այցելության դեմ, ոստիկանությունը ցրեց ցուցարարներին և մեծ թվով աշխատավորների վերցրեց կալանքի<sup>1</sup>: Ապրիլի 7-ին, ցույցերը վերսկսվեցին հայկական թաղերում: Դաշնակ զինված խմբերը, որոնք շերմեռանդությամբ մասնակցում էին ոստիկանության հակաժողովրդական միջոցառումներին, հարձակվեցին Կարանտինա թաղի հայ և արաբ ցուցարարների վրա: Դաշույնի հարվածներ ստացան Գեորգ Տեր Նիկողոսյանը և ուրիշ հայ աշխատավորներ, սպանվեց մի արաբ ցուցարար<sup>2</sup>: Կարանտինայի դեպքերը լայն արձագանք գտան արաբական մամուլում, «Տելեգրաֆ», «էլ-Բայրա», «էլ-Շարկ», «էլ-Հատեֆ» և ուրիշ թերթեր, տեղ տալով բանվորական, ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների բողոքներին, պահանջում էին լուծարել ենթարկել Դաշնակցությունը<sup>3</sup>: Վերջապես, 1952 թ. օգոստոսին, անգլո-ամերիկյան իմպերիալիստները, հրաժարվելով Միջին արևելյան հրամանատարություն ստեղծելու պլանից, որդեգրեցին Միջին արևելքի պաշտպանության

<sup>1</sup> «Զարթոնք», Բեյրութ, 9 ապրիլի 1952 թ.:

<sup>2</sup> Նույն տեղում, 11 ապրիլի 1953 թ.:

<sup>3</sup> Նույն տեղում, 18 ապրիլի 1952 թ.:

կազմակերպություն ստեղծելու ծրագիրը, որը նույնպես դատապարտվեց ձախողման, շնորհիվ աշխատավորական մասսաների անհաշտ պայքարի:

1952 թ. վերջերին անգլո-ամերիկյան իմպերիալիստները խոշոր պարտություն կրեցին նաև Քեշարա էլ-Նուրիի հակաժողովրդական ռեժիմի տապալումով: Տակավին 1950—1951 թթ. աճ ծավալը, որ ստացել էին ժողովրդական շարժումները անգլո-ամերիկյան իմպերիալիզմի դեմ, այն թափը, որով աճում էին դժգոհությունները կառավարող կլիկի դեմ, պարզորեն ցույց էին տալիս, որ հետու չէ էլ-Նուրիի ռեակցիոն իշխանության լիկվիդացումը: 1951 թ. ապրիլի 15-ի պառլամենտական ընտրություններն առավել ևս վարկարեկեցին էլ-Նուրիի կլիկին, որը, դեմոկրատական ազատ ընտրություններ կատարելու խոստման հակառակ, բանակի ու ոստիկանության վրա հենվելով, սարսափի ու հալածանքի մթնոլորտում նորից պառլամենտ առաջնորդեց իմպերիալիզմի մի շարք վարձկանների, խոշոր կալվածատերերի, ֆեոդալների և այլն: Լիբանանի ներքին օպոզիցիան, որը 1948—1949 թթ. հակադեմոկրատական հալածանքների հետևանքով քայքայվել էր, այդ ընտրություններից հետո նորից կազմակերպվելով ասպարեզ իջավ պարզ ու մեկին առաջադրությամբ՝ տապալել էլ-Նուրիի հակաժողովրդական իշխանությունը: Կարճ ժամանակամիջոցում, օպոզիցիային հաջողվեց ի մի բերել, բացի զովմի, դաշնակցություն և մի շարք այլ աննշան խմբակցություններից, բոլոր բուրժուական և մանրբուրժուական պարտիաներին, և կազմել Ազգային միասնության ճակատը, որի միջոցառումներին մասնակցում էին, թեև ոչ պաշտոնապես, նաև Լիբանանի կոմունիստական պարտիան, Արհմիությունների ֆեդերացիան և խաղաղութան շարժման կողմնակիցները: 1952 թ. սեպտեմբերի տասնօրյա համընդհանուր գործադուլը և աշխատավորական ելույթները հանդիսացան էլ-Նուրիի ռեժիմին տրված վերջին և վճռական հարվածները: Սեպտեմբերի 22-ին, իր դեպուտատների ճնշող մեծամասնության... թախանձանքներին հակառակ, Քեշարա էլ-Նուրին հրաժարվեց Լիբանանի պրեզիդենտի պաշտոնից, որը վարում էր 1943 թվականից ի վեր:

Իսկ Սիրիայում, Ադիբ Չիչեքլիի զինվորական դիկտատուրայի դեմ բուրժուական տարրեր խավերի և աշխատավորական մասսաների պայքարը շարունակվեց մինչև 1954 թվականը:

1947—1952 թթ. Սիրիայում և Լիբանանում գործող ազգային-դեմոկրատական շարժումներին հայ աշխատավորության մասնակ-

ցութիսն հարցի հետազոտումը ցույց է տալիս, որ այդ երկրների հայութիւնը չի ապրում ազգային-կրօնական ինքնամփոփ համայնքի մեկուսացված կյանքով, այլ, սոցիալ-տնտեսական սերտ կապերով զոդված լինելով արաբ ժողովրդի հետ, նրա կողքին հանդես է գալիս իմպերիալիզմի և տեղական կեղեքիչների դեմ, ի պաշտպանութիւն ազգային անկախութեան, ի խնդիր խաղաղ ու բարօր կյանքի ստեղծման: Այդ պայքարի առաջապահ ջոկատ է հանդիսանում արաբ և հայ աշխատավորութիւնը: Անառարկելի իրողութիւն է նաև այն, որ արաբ ժողովուրդների քաղաքական և տնտեսական անկախութեան պայքարում միասնական ճակատով հանդես գալով, հայ աշխատավորական մասսաները նպաստում են հայ-արաբական դարավոր բարեկամութեան ամրապնդմանը:

О. ТОПУЗЯН

УЧАСТИЕ АРМЯНСКИХ ТРУДЯЩИХСЯ  
В НАЦИОНАЛЬНО-ДЕМОКРАТИЧЕСКИХ  
ДВИЖЕНИЯХ СИРИИ И ЛИВАНА  
1947—1952 года

Р е з ю м е

На основе армянских, арабских и французских материалов в статье показываются совместные выступления арабских и армянских трудящихся масс Сирии и Ливана против империализма и реакции, в защиту национальной независимости этих стран, за установление демократического строя. Приводятся также многочисленные факты о засилии американских монополий и Сирии и Ливане, о совместной борьбе арабских и армянских трудящихся против британского плана создания «Великой Сирии».



**ՄԻՋՊԱՐՏԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ ԵՎ  
ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԱՆՑՈՒՄԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆՈՒԽ**

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջերին Թուրքիայում հասունանում էր ներքաղաքական խոր ճգնաժամ, որը սերտորեն միահյուսվում էր տնտեսական և ֆինանսական ճգնաժամի հետ: Երկրի ներքաղաքական իրադրության բարդացման հիմնական պատճառը կառավարող ժողովրդառեսպուբլիկական պարտիայի<sup>1</sup> վարած ուղղմանացման քաղաքականությունն էր և այդ քաղաքականության կործանարար ազդեցությունը էկոնոմիկայի, ֆինանսների, ներքին ու արտաքին քաղաքականության վրա: Պատերազմի ժամանակաշրջանում Թուրքիան զենքի տակ էր պահում գրեթե մեկ միլիոնանոց բանակ, որը պահելու համար ծախսվում էր պետական բյուջեի նշանակալի մասը: Դրա հետևանքով ընկավ թուրքական լիրայի արժեքը, ավելացավ շրջանառության մեջ եղած թղթադրամների քանակը, ուժեղացավ ինֆլյացիան, ավելացան պետական պարտքերը, քայքայվեցին ֆինանսները և բարձրացան առաջին անհրաժեշտության ապրանքների գները:

Չպիից դուրս մեծ ուղղման ծախսերը նախապատերազմյան շրջանի համեմատությամբ 4—5 անգամ վատացրին աշխատավոր մասսաների նյութական դրությունը: Թուրքական և արևմտաեվրոպական շատ պատմաբաններ ստիպված խոստովանում են, որ պատերազմի վերջերին Թուրքիան ապրում էր տնտեսական ու ֆինանսական լուրջ ճգնաժամ<sup>2</sup>:

<sup>1</sup> 1923 թվականից սկսած իշխանությունը Թուրքիայում պատկանում էր ժողովրդա-ռեսպուբլիկական պարտիային (հետագայում՝ ԺՌՊ), որը կազմակերպվել էր 1923 թվականի օգոստոսի 23-ին Մուստաֆա Քեմալի կողմից:

<sup>2</sup> S. u. Tahsin Ünal, „1700 den 1958-e kadar Türk siyasi tarihi“, Ankara, 1958, s. 282; M. Kerrem Kamil Su, „Türkiye cumhuriyeti

Բայց երկրի ռազմականացման քաղաքականությունը, որը նորանոր զրկանքներ ու տառապանքներ բերեց աշխատավոր մասսաներին, շատ ձեռնտու էր Թուրքիայի կառավարող դասակարգերին: Լայն սպառման ապրանքների գների աճումը, սպեկուլյացիայի ծաղկումը, գյուղատնտեսական հումքի և օգտակար հանածոների, մասնավորապես քրոմի հանքաքարի արտահանումը Գերմանիա վիթխարի շահույթներ բերեցին թուրք կալվածատերերին, առևտրական ու ֆինանսական բուրժուազիային: Թուրքիայի կառավարող դասակարգերի հարստացմանը նպաստեցին նաև բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության ուժգին շահագործումը և ազգային փոքրամասնությունների՝ հույների, հայերի, հրեաների, քրդերի և մյուսների անսքող կողոպտումը: Հարկավոր է նշել, որ թուրքական վիճակագրության մեջ չկան տեղեկություններ թուրքական բուրժուազիայի և կալվածատերերի հարստացման մասին: Բայց այդ պրոցեսի մասին է վկայում բանկային ավանդների և միլիոնատերերի թվի ավելացումը: Այսպես, օրինակ, թուրք բուրժուական պատմաբան Կ. Հ. Կարպատի տվյալներով 1945 թվականին մասնավոր ավանդների գումարը բանկերում կազմում էր 582 մլն թուրքական լիրա՝ 1940 թվականի 274,6 մլն լիրայի դիմաց<sup>1</sup>: Այդ նույն ժամանակաշրջանում միլիոնատերերի թիվը կազմում էր 150<sup>2</sup>: Բանկային ավանդների գումարի և միլիոնատերերի թվի ավելացումը վկայում էր, որ պատերազմի ժամանակաշրջանում տեղի է ունեցել ազգային մասնավոր կապիտալի զգալի կուտակում և առևտրա-ֆինանսական խոշոր բուրժուազիայի դիրքերի ուժեղացում: Դրա հետ մեկտեղ Թուրքիայում է՛լ ավելի էին ուժեղացել ռեակցիայի դիրքերը ներքաղաքական կյանքի բոլոր ոլորտներում: Կոմունիստական պարտիան առաջվա նման մնում էր օրենքից դուրս հայտարարված, դաժան հալածանքների ու ռեպրեսիաների էին ենթարկվում դեմոկրատական տարրերն ու ազգային փոքրամասնությունները, ընդլայնել էին իրենց գործունեությունը պանթուրքիստական կազմակերպությունները:

tarihi", İstanbul, 1957, s. 176; S. Parsadan, C. Hunca ve Y. Gök-türk, „Adnan Menderes siyasi hayatı ve nutukları“, Ankara, 1956, s. 30; K. Brockelmann, „Histoire des états islamiques depuis les origines jusqu'à nos jours, Paris, 1949, p. 243.

<sup>1</sup> K. H. Karpat, Turkey's politics. The transition to a Multi-Party system, Princeton, New Jersey, 1959, p. 32.

<sup>2</sup> „Great Britain and the East“, London, 1945, november, p. 48.

Նրկրի տնտեսական ու ներքաղաքական դրությունը ԺՌՊ-ի հակաժողովրդական և հակաազգային ներքին քաղաքականությունը լիակատար սնանկության ակնառու վկայությունը հանդիսացավ: Բնութագրելով ռեակցիայի սանձարձակությունը պատերազմի ավարտի ժամանակաշրջանում, թուրք ըուրժուական պատմաբաններից մեկը՝ Ա. Թունջերը գրում էր, որ ԺՌՊ-ի կառավարումը «ամեն ըոպե հիշեցնում էր օսմանյան վերջին կառավարության կառավարման ձևը»<sup>1</sup>: Այս ամենը անխուսափելիորեն հանգեցրին դասակարգային ու ազգային հակասությունների հետագա սրման: Անհաջողություն կրեց նաև Թուրքիայի արտաքին քաղաքականությունը՝ ֆաշիստական Գերմանիային նրա ցույց տված օգնության և ՍՍՌՄ-ի ու հակահիտլերյան կոալիցիայի մյուս երկրների դեմ Գերմանիայի մղած պատերազմում ռեեցած անուղղակի մասնակցության քաղաքականությունը: Այս ամենի հետևանքով երկրում հասունանում էր ներքաղաքական խոր ճգնաժամ: Բայց դա ոչ միայն ԺՌՊ-ի կառավարման ու նրա ներքին և արտաքին քաղաքականության ճգնաժամն էր, այլ Թուրքիայի կալվածատիրական-բուրժուական ամբողջ կարգի ճգնաժամը:

Գյուղացիության հողազուրկ և սակավահող մասսաները հող էին պահանջում. հաճախակի էին դարձել կալվածատիրական հողերի ըռնի գրավումները և զինված ընդհարումները գյուղացիների և իշխանությունների միջև: Նկատելի աշխուժացել էր բանվորական շարժումը: Զուտ տնտեսական գործադուլներից ու ընդհարումներից բացի բանվորները ավելի ու ավելի հաճախ էին առաջ քաշում քաղաքական պահանջներ՝ կոմպարտիայի օրինականացում, բանվորական պարտիաների ու արհմիությունների կազմակերպման ազատություն, ութժամյա աշխատանքային օրվա վերահաստատում, սպեկուլյացիայի վերացում և այլն: Առաջադիմական մտավորականությունն ու դեմոկրատական մյուս տարրերը ամբողջ ժողովրդի հետ միասին պահանջում էին վերջ տալ հալածանքներին ու ռեպրեսիաներին, մտցնել դեմոկրատական վերափոխումներ, դադարեցնել ռեակցիայի սանձարձակություններն ու իշխանությունների կամայականությունները տեղերում, անցկացնել Մեջլիսի ուղղակի ընտրություններ, վերացնել արտակարգ օրենքները և հրաժարվել հակասովետական արտաքին քաղաքականությունից: Ինչպես գրում

<sup>1</sup> Acar Tuncer, Modern Türkiyenin mimarı Adnan Menderes, İzmir, 1958, s. 36.

էր «Մոնզ» թերթը, «Երկրում մասսաները ամենուրեք զգում էին վերափոխման անհրաժեշտութիւնը»<sup>1</sup>։

Դեմոկրատական վերափոխումների համար թուրք ժողովրդի մղած պայքարը ընթանում էր արտաքին այնպիսի նպաստավոր իրադրութեան մեջ, ինչպիսին է գերմանական ֆաշիզմի ու ճապոնական միլիտարիզմի ջախջախումը, կապիտալիստական աշխարհի ընդհանուր թուլացումը, համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորումն ու հետագա ամրապնդումը, գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի ուժեղացումը, մի շրջանում, երբ համաշխարհային ուժերի հարաբերակցութիւնը դասավորվել էր հօգուտ սոցիալիզմի։

Հարավ-Արևելյան և Արևելյան Եվրոպայի ժողովրդա-դեմոկրատական երկրների ազդարարային ու արմատական սոցիալական մյուս վերափոխումները մեծ ազդեցութիւն գործեցին Թուրքիայի աշխատավոր գյուղացիների ու բանվորների վրա։

Իրանական Ադրբեջանում և Քրդստանում ծավալված դեմոկրատական շարժումն ու ազդարարային վերափոխումները նույնպես բարենպաստ արձագանք գտան Թուրքիայի հողազուրկ գյուղացիների, առանձնապես Արևելյան Անատոլիայի գյուղացիների սրտերում։ Այդ տարիներին, Թուրքիայի արևմտյան սահմանի մոտ, հույն ժողովուրդը անձնվեր պայքար էր մղում անգլիական իմպերիալիզմի ու տեղական ռեակցիայի դեմ։ Հակաիմպերիալիստական պայքարի հզոր վերելք էր նկատվում Եգիպտոսում և Իրաքում։ Հնդկաստանը, Ինդոնեզիան և Բիրման դարձան ինքնուրույն պետութիւններ։

Թուրքիայի ապրած ներքաղաքական ճգնաժամի արմատները անհրաժեշտ է առաջին հերթին փնտրել ներքին պատճառների մեջ, երկրի կառավարող շրջանների բուն քաղաքականութեան մեջ։ Բայց միաժամանակ հարկավոր է ընդգծել, որ համաշխարհային սոցիալիստական սիստեմի համաշխարհային-պատմական հաջողութիւնները և ազատագրական պայքարի աճումը Արևելքի երկրներում նույնպես հսկայական ազդեցութիւն գործեցին Թուրքիայի ներքաղաքական ճգնաժամի վրա։

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ, նրա ընթացքում և նրանից հետո ԺՌՊ-ի վարած քաղաքականութիւնից ժողովրդական ամենաբարձր մասսաների գթգոհութեան հետևանքով խիստ խարխուլվել էին երկրի կառավարող շրջանների դիրքերը։ Թուրք կա-

<sup>1</sup> „Monde“, 1960, 29—30 mai.

ուավարողների դիրքերը խարխլվել էին նաև հանձին գերմանական Ֆաշիստների՝ իրենց հովանավորողներին կորցնելու և համաշխարհային կապիտալիստական սիստեմի ընդհանուր թուլացման հետեւանքով:

Թուրքական կառավարությունը պարզ գիտակցում էր իր խախտու վիճակը և այդ պատճառով պատերազմից անմիջապես հետո երկրի շատ վիլայեթներում մտցրեց ռազմական դրուվյուն և նորաճոր արյունալի ռեպրեսիաներ կիրառեց դեմոկրատական ուժերի դեմ: Թուրքական բուրժուազիան և կալվածատերերը չափազանց անհանդստացած էին իրենց իշխանության թուլացումից, ուստի և կառավարող շրջանների ներսում երևան եկան լուրջ տարաձայնություններ: Այդ տարաձայնությունները հիմնականում կրում էին ներքաղաքական բնույթ, իսկ արտաքին-քաղաքական հարցերի շուրջը նրանց միջև ոչ մի տարակարծություն չկար:

Տարաձայնությունների հիմնական հարցը էտատիզմի նկատմամբ ունեցած վերաբերմունքն էր: Հայտնի է, որ սկսած երեսնական թվականներից Թուրքիայում կիրառվում էր էտատիզմի քաղաքականություն՝ բազմաթիվ ուղղակի և անուղղակի հարկերի ձևով կուտակված ժողովրդական մասսաների միջոցների հաշվին սկսվել էր պետական արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը:

Արդյունաբերական շինարարության գործում Թուրքիային մեծ ու անշահախնդիր օգնություն էր ցույց տալիս Սովետական Միությունը: Թուրքական բուրժուազիան այն ժամանակ տնտեսապես այնքան ուժեղ չէր, որ ինքնուրույն ձեռնամուխ լիներ թանկ նստող արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությանը և նա գերադասում էր ազատ միջոցները ներդնել առևտրի, ապահովագրական գործի մեջ և այլ ուրուրտներում, տրտեղ կապիտալի շրջապտույտը տեղի է ունենում արագ, և համեմատաբար կարճ ժամկետներում կարելի է ստանալ մեծ շահույթներ:

Թուրքական առևտրա-ֆինանսական բուրժուազիայի մասնակցությունը արդյունաբերական ձեռնարկատիրությանը տեղի էր ունենում պետության հովանավորության ներքո և նրա բանկային հիմնարկների միջոցով, ինչպես նաև գործարար բանկի (մասնավոր կապիտալ) միջոցով: Բայց այն բանից հետո, երբ ուժեղացան նրա տնտեսական դիրքերը, ապա նա սկսեց ավելի մեծ ձգտում հանդես բերել դեպի մասնավոր արդյունաբերական ձեռնարկատիրությունը, որին խոչընդոտ էր հանդիսանում պետական կապիտալիզմի քաղաքականությունը: Ուստի առևտրա-ֆինանսական բուրժուազիան

սկսեց ակտիվորեն պայքարել էտատիզմի քաղաքականության խիստ սահմանափակման և մասնավոր կապիտալի, այդ թվում և օտար-երկրյա կապիտալի խրախուսման համար:

Թուրքական բուրժուազիայի տնտեսական պահանջները առանձ-նապես վառ դրսևորվեցին ագրարային ռեֆորմի օրենքի վերջնական նախագիծը և 1945—1946 Ֆինանսական տարվա պետական բյուջեի օրինագիծը մեջլիսում քննարկելու ժամանակ, ինչպես նաև Իզմիրի տնտեսական կոնգրեսում: 1946 թվականի փետրվարին Իզմիրում կայացավ տնտեսական կոնգրես: Կոնգրեսի մասնակիցները, որոնք խոշոր բանկիրներ էին, առևտրականներ, վաճառականներ ու կո-մերսանտներ, պահանջում էին սահմանազատել պետական և մաս-նավոր կապիտալի գործունեության ոլորտները, մասնավոր կապի-տալին հանձնել թեթև, սննդի ու համի արդյունաբերության ձեռ-նարկությունները և պետության իրավասության տակ թողնել ծանր արդյունաբերության ձեռնարկությունները, ինչպես օրինակ, Կա-րաբյուկի մետալուրգիական կոմբինատը և այլն<sup>1</sup>:

Տարածայնությունների մյուս աղբյուրը հետևյալն էր: Բուր-ժուական ընդդիմադիր շրջանները հասկանում էին, որ առանց իշ-խանությունը գրավելու հազիվ թե հաջողվի իրականացնել իրենց տնտեսական պահանջները և այդ պատճառով էլ նրանք հայտարա-րում էին, որ մեկպարտիական ռեժիմի հետագա պահպանումը փնաս է հասցնում կառավարման ամբողջ բուրժուական սխտեմին: Նրանք պահանջում էին բուրժուական դեմոկրատիայի նորմաների վերականգնում, օպոզիցիոն գործունեության ազատություն և ուրիշ պարտիաներ կազմակերպելու թույլտվություն: Իշխանությունը գրա-վելու համար բուրժուական օպոզիցիան որոշեց օգտվել երկրի և աշխատավոր մասսաների տնտեսական ու ֆինանսական ծանր դրու-թյունից: Վերջինս փաստորեն օգտագործում էր ԺՌՊ-ի կառավար-ման հետևանքներից ժողովրդական մասսաների արտահայտած դժգոհությունը և նրանց որպես հենարան իր կողմը գրավելու հա-մար զուտ բուրժուական պահանջներից բացի առաջ էր քաշում նաև այնպիսի պահանջներ, որ հռչակել էին իսկական դեմոկրատական ուժերը: Այս բանն արվում էր այն ակնհերև նպատակով, որ ժողո-վրդի դժգոհությունը ուղղեն իրենց համար ձեռնտու հունով և որ գա դուրս չգա ցանկացած շրջանակներից:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիան կարիք էր զգում իսկական դեմոկրատական ռեֆորմների, բայց եր-

<sup>1</sup> "Cumhuriyet", 1946, 12 şubat.

կրի կառավարող շրջանները այդ մասին լսել անգամ չէին ցանկանում: Եվ քանի որ և՛ ԺՌՊ-ին, և՛ ընդդիմադիր բուրժուազիային միավորում էր իշխանությունը բուրժուազիայի և կալվածատերերի ձեռքին պահելու ընդհանուր ձգտումը, թուրք կառավարողները որոշեցին ստեղծված ներքաղաքական դրությունից ելք որոնել կեղծ դեմոկրատական զիջումների մեջ, որոնք ըստ էության ոչինչ չէին կարողանա տալ ժողովրդին, բացի պատրանքից, բայց կամրապընդեին նրանց իշխանությունը: Այսպիսով ստացվում է, որ թուրք կառավարողները զիջումների դիմեցին, ելնելով ժողովրդի ու երկրի նկատմամբ իրենց իշխանությունը հավերժացնելու շահերից:

Վլադիմիր Իլյիչ Լենինը մատնանշում էր, որ «Իրականում բուրժուազիան բոլոր երկրներում անխուսափելիորեն մշակում է կառավարման երկու սիստեմ, իր շահերի համար մղվող պայքարի և իր տիրապետության պաշտպանման երկու մեթոդ, ընդսմին այդ երկու մեթոդը մերթ փոխարինում են միմյանց, մերթ միահյուսվում զանազան զուգակցություններով: Դա, առաջին՝ բռնության մեթոդն է, բանվորական շարժմանը որևէ զիջում անելուց հրաժարվելու մեթոդը, բոլոր հին ու իրենց դարն անցկացրած հիմնարկությունները պահպանելու մեթոդը, ռեֆորմների անհաշտ ժխտման մեթոդը... Երկրորդ մեթոդը—«լիբերալիզմի» մեթոդն է, քաղաքական իրավունքների զարգացման կողմը, ռեֆորմների, զիջումների կողմն արվող քայլերի մեթոդն է և այլն:

Բուրժուազիան մեկ մեթոդից մյուսին անցնում է ո՛չ թե առանձին անհատների շարանենք հաշվով և ո՛չ էլ պատահականությամբ, այլ նրա սեփական դրության արմատական հակասականության հետևանքով<sup>1</sup>:

Այնուհետև Վ. Ի. Լենինը գրում է, որ «Հաճախ բուրժուազիան որոշ ժամանակով հասնում է իր նպատակին «լիբերալ» քաղաքականության միջոցով, որը... ներկայացնում է «ավելի խորամանկ» քաղաքականություն: Բանվորների մի մասը, նրանց ներկայացուցիչների մի մասը երբեմն խաբվում է թվացող զիջումներով<sup>2</sup>:

Կառավարողների այդպիսի զիջումներից մեկը հանդիսացավ 1945 թվականի հունիսի 11-ի հողային ռեֆորմը: Իշխանությունների կողմից լայնորեն գովաբանված այդ ռեֆորմի հիմնական նպատակն էր կանխել հողազուրկ և սակավահող գյուղացիների սբալ-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 16, էջ 457—458:

2 Նույն տեղում, էջ 459:

քարը հողի համար և ամրապնդել կալվածատիրական և կուլակային տնտեսությունների դիրքերը:

1945 թվականի վերջին Թուրքիայի պրեզիդենտ և ԺՌՊ-ի գլխավոր նախագահ Ինենյուն հայտարարեց բուրժուական նոր պարտիաների կազմակերպման հնարավորության մասին, որը հաստատվեց ԺՌՊ-ի 1946 թվականի մայիսի համագումարի կողմից: ԺՌՊ-ի կառավարությունը, թույլատրելով բուրժուական նոր պարտիաների կազմավորումը, նպատակ էր հետապնդում հաղթահարել ներքաղաքական ճգնաժամը: Դա հիշյալ բնույթի ամենաարդյունավետ միջոցառումը հանդիսացավ: Բայց այդ որոշմամբ բավարարվեցին նաև բուրժուական ընդդիմադիր շրջանները, որոնք ստացան որպես պարտիա ձևավորվելու հնարավորություն: 1945—1946 թթ. ժամանակաշրջանում երկրում կազմվեցին բուրժուական հետևյալ պարտիաները. ազգային վերածննդի պարտիա (1945 թ. հուլիսի 18), դեմոկրատական պարտիա (1946 թ. հունվարի 7), լիբերալ-դեմոկրատական պարտիա (1946 թ. մարտի 11) և այլն<sup>1</sup>:

Երկրի կառավարող շրջանները ամեն կերպ խուշնդոտ էին հանդիսանում բանվոր դասակարգի պարտիայի կազմավորմանը: Բայց այնուամենայնիվ 1946 թ. հունիսի 6-ին կազմակերպվեց Թուրքիայի սոցիալիստական բանվորա-գյուղացիական պարտիան: Շեֆիկ Հյունյու Դեյմերի գլխավորությամբ, որը հանդիսանում էր դեռևս 1919 թվականին կազմակերպված սոցիալիստական բանվորա-գյուղացիական պարտիայի ղեկավարներից մեկը<sup>2</sup>:

Սակայն հարկավոր է նշել, որ իսկական բանվորական պարտիա կազմակերպելուց բացի, Թուրք կառավարողները առանձնահատուկ հոգատարություն ցուցաբերեցին կեղծ բանվորական պարտիաներ՝ բանվորական շարժման ներսում գործակալություն կազմակերպելու մասին: Այդպիսի պարտիաներ հանդիսացան՝ սոցիալական արդարության պարտիան (1946 թ. փետրվարի 28), Թուրքական սոցիալ-դեմոկրատական պարտիան (1946 թ. ապրիլի 26), Թուրքիայի սոցիալիստական պարտիան (1946 թ. մայիսի 14) և այլն<sup>3</sup>:

Կառավարող պարտիան բոլոր միջոցներով ձգտում էր առաջադիմական կազմակերպություններին զրկել ներքաղաքական կյան-

<sup>1</sup> Tarık Z. Tunaya, Türkiye'de siyasi partiler 1859—1952, İstanbul, 1952, s. 639—694.

<sup>2</sup> Tarık Z. Tunaya, s. 704.

<sup>3</sup> Tarık Z. Tunaya, s. 693—702.



թին մասնակցելու հնարավորությունից, որպեսզի քաղաքական ասպարեզում մնան միայն բուրժուական օպոզիցիոն պարտիաներ։ Արդեն մինչև 1946 թ. դեկտեմբերը Թուրքիայի սոցիալիստական լատվորա-գյուղացիական պարտիան արգելվել էր, իսկ ղեկավարները տրվել ղատի՝ կոմունիստական պրոպագանդայի համար<sup>1</sup>։ Դրանից հետո քաղաքական ասպարեզը մնաց բուրժուական պարտիաներին։ Այդ ասպարեզի մի ծայրին կանդնած էր ԺՌՊ-ն, իսկ մյուս ծայրին՝ բուրժուազիայի և կալվածատերերի քաղաքական կազմակերպությունները, որոնցից աչքի ընկավ և գլխավոր տեղը ղրավեց դեմոկրատական պարտիան։

Դեմոկրատական պարտիայի հիմնադիրներն էին Զելալ Բայարը (պարտիայի Կենտկոմի նախագահ), Ադնան Մենդերեսը, Ֆուադ Քյոփրյուլյուն և Ռեֆիկ Կորալթանը՝ առևտրա-ֆինանսական բուրժուազիայի, կալվածատերերի, ռեակցիոն պրոֆեսորության, ինչպես նաև շինովնիկության առավել տիպիկական ներկայացուցիչները։

1945 թվականի հունիսի 12-ին Բայարը, Մենդերեսը, Քյոփրյուլյուն և Կորալթանը ԺՌՊ-ի պառլամենտական ֆրակցիայի բյուրոյին ներկայացրին մի առաջարկություն, որով պահանջում էին պարտիայի կանոնադրության լիբերալացում։ Սակայն այդ առաջարկությունը հանդիպեց պրեմիեր-մինիստր Սարաջողլուի խիստ դիմադրությունը. նա հայտարարեց, որ վերոհիշյալ պահանջը, կարող է քննության առնվել միայն պարտիայի համագումարի կողմից<sup>2</sup>։ Պառլամենտական խումբը մերժեց այդ առաջարկությունը։

Չնայած այն բանին, որ օպոզիցիայի առաջին փորձը անհաջողության մատնվեց, Բայարը մեջլիսի նախագահությանը ներկայացրեց մի նոր առաջարկություն մամուլի օրենքի փոփոխման մասին<sup>3</sup>։ Նրա առաջարկության էությունը կայանում էր նրանում, որ ընդլայնվեն մամուլի իրավունքները, սահմանափակվի գրաքննությունը և փոփոխվեն մամուլի մասին օրենքի 17-րդ և 50-րդ հոդվածները, որոնց համաձայն իշխանությունները իրավունք ունեին փակել թերթերը։ Բայց մեջլիսը մերժեց Բայարի այս առաջարկությունը ևս։ Միաժամանակ Մենդերեսը և Քյոփրյուլյուն սկսել էին «Վաթան» թերթում քննադատել կառավարության ներքին քա-

<sup>1</sup> Anthony T. Bouscaren, *Imperial communism*, Washington 1953, p. 133.

<sup>2</sup> „Revue française de science politique“, volume IV, N1, janvier-mars, 1954, p. 140—141.

<sup>3</sup> K. H. Karpát, p. 141.

դաճանդանությունը<sup>1</sup>, որի հասար 1945 թվականի սեպտեմբերի 21-ին նրանք վտարվեցին պարտիայից<sup>2</sup>, Կորալթանը, որը պաշտպանում էր նրանց, նույնպես վտարվեց պարտիայից<sup>3</sup>, բայց նրանք երեքն էլ պահպանեցին դեպուտատական մանդատները: 1945 թվականի սեպտեմբերի 26-ին Բայարը. պարտիայից իր համախոհների վտարման կապակցությամբ սկզբում ցած դրեց դեպուտատական լիազորությունները<sup>4</sup>, իսկ դեկտեմբերի 3-ին դուրս եկավ ԺՌՊ-ից: Շուտով նրանք շորսն էլ հայտարարեցին, որ մտադիր են կազմակերպել նոր պարտիա «դեմոկրատական» անունով և ձեռնամուխ եղան պարտիայի կանոնադրության և ծրագրի մշակմանը: Մեկ ամիս հետո, 1946 թվականի հունվարի սկզբին, դեմոկրատական պարտիան ձևավորվեց պաշտոնապես: այսինքն՝ նրա կանոնադրությունն ու ծրագիրը հաստատվեցին ներքին գործերի մինիստրության կողմից<sup>5</sup>: Համառոտ այս էր դեմոկրատական պարտիայի կազմակերպման պատմությունը:

Սկզբից ևեթ հարկավոր է նշել, որ ծրագրի նախնական տեքստի և հետագայում փոփոխված տեքստերի միջև էական տարբերություն չկա, դրանք գրեթե համահման են: Ուստի մենք կօգտվենք նրա նախնական տեքստից:

Իր բազմախոստում ծրագրում դեմոկրատական պարտիան հայտարարում էր, որ պարտիայի նպատակն է պետությունը կառավարել դեմոկրատական սկզբունքներով, վերացնել գործազրկությունը, հաստատել սոցիալական ներդաշնակություն և բավարարել հասարակության բոլոր սնվամանների շահերը, սկսած գյուղացուց ու բանվորից և վերջացրած կալվածատիրոջով ու կապիտալիստով: Ծրագիրը խոստանում էր բարելավել ազգային լուսավորության, առողջապահության և արդարադատության վիճակը. նա մի շարք միջոցառումներ էր նշում գյուղատնտեսության վիճակի բարելավման և գյուղատնտեսական կոլտուրաների բերքատվության բարձրացման ուղղությամբ: Ինչ վերաբերում է արգյունաբերության բնա-

<sup>1</sup> „Vatan“, 1945, 13, 14 ve 18 Eylül.

<sup>2</sup> T a r i k Z. T u n a y a, s. 648.

<sup>3</sup> „Vatan“, 1945, 28 Kasım.

<sup>4</sup> „Vatan“, 1945, 29 Eylül.

<sup>5</sup> Դեմոկրատական պարտիայի ծրագիրն ու կանոնադրությունը հետագայում հաստատվել են մի քանի անգամ՝ պարտիայի առաջին համագումարում (1947), երկրորդ (1949) և երրորդ (1951) համագումարներում: Պարտիայի ծրագիրը անս „Türkiyede siyasi dernekler“, Ankara, 1950, s. 169—171; Tarık Z. Tunaya, s. 662—673.

դավառում դեմոկրատական պարտիայի նշած քաղաքականությունը, ապա ծրագրում ասվում էր, որ «մասնավոր նախաձեռնությունը և կապիտալները հանդիսանում են տնտեսական կյանքի հիմքը: Ուստի նրանց անհրաժեշտ է տրամադրել գործունեության նոր ոլորտներ ու պայմաններ՝ ազատության և անվտանգության առկայությամբ: Մենք համոզված ենք, որ գործունեության ոլորտի խիստ սահմանազատման պայմանով հնարավոր և նույնիսկ օգտակար է մասնավոր և պետական նախաձեռնության համագործակցությունը այն կերպ, որ նրանք խոչընդոտ չհանդիսանան միմյանց և օգնություն ցույց տան իրար» (հոդված 43)<sup>1</sup>: Այնուհետև ծրագրում ներշնչվում էր, որ «Ելնելով մասնավոր նախաձեռնության և կապիտալիստների կայունացված ու անվտանգ գործունեության շահերից անհրաժեշտ է խստորեն որոշել պետության տնտեսական գործունեության սահմանները» (հոդված 44)<sup>2</sup>: Պարտիայի ծրագրի համաձայն, պետությունը պետք է զբաղվեր ծանր արդյունաբերության ստեղծմամբ և խոշոր էլեկտրականների, երկաթուղիների, նավահանգիստների, տրանսպորտային խոշոր միջոցների ու շրմուղիների, լեռնահանքային և անտառային տնտեսության խոշոր ձեռնարկությունների շինարարությամբ, մի խոսքով այն միջոցառումներով, «որոնք մասնավոր նախաձեռնությունը և կապիտալիստները ի վիճակի չէին իրագործել կամ չէին բերի բավականաչափ շահույթ» (հոդված 45)<sup>3</sup>: Ծրագիրը պահանջում էր նաև կնքել երկարաժամկետ արտաքին փոխառություններ և թուրքական լիրայի դեվալվացիա: Դեմոկրատական պարտիայի ծրագիրը հաշվի էր առնում թուրքական խոշոր բուրժուազիայի ձգտումները, որը քիչ շահութաբեր բոլոր ձեռնարկությունները գցում էր պետության վրա, իսկ իրեն թողնում էր արդյունաբերության ամենից ավելի շահութաբեր ճյուղերը:

Ծրագրի 12-րդ հոդվածում ասված է. «Մենք մտադիր ենք օրենքից դուրս համարել քաղաքական այն ընկերությունները, որոնք նպատակ ունեն խախտել մեր երկրի անկախությունն ու տերիտորիալ ամբողջականությունը, սահմանափակել քաղաքացիների հիմնական իրավունքները, կամ թե կապված են երկրի սահմաններից դուրս գտնվող քաղաքական կազմակերպությունների հետ»<sup>4</sup>: Այս

<sup>1</sup> Tarık Z. Tunaya, s. 667.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 667—668:

<sup>4</sup> „Türkiyede siyasal derneklér“, Ankara, 1950, s. 170.

հողվածը ամբողջապես ուղղված էր կոմպարտիայի դեմ, երկրի բոլոր իսկական դեմոկրատների ու հայրենասերների դեմ, խաղաղութիւն կողմնակիցների դեմ: Իրականում, հենց այդ մարդիկ են հանդիսանում երկրի անկախության և ամբողջականութան, քաղաքացիական իրավունքների ու ազատութունների երաշխիքի ու ապահովման շերտ կողմնակիցներն ու հետևողական պաշտպանները: Պարտիայի ծրագիրը չէր թաքցնում ազգային փոքրամասնութիւններին թուրքացնելու իր ձգտումը: Այդ մասին սևով սպիտակի վրա գրված է 13-րդ հոդվածում, որ «Մեր պարտիան թուրք է համարում բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց ցեղային սլատկանելիութիւնից ու դավանանքից և նրանց համար ճանաչում է թուրքերին տրված բոլոր իրավունքները»<sup>1</sup>: «Մեր արտաքին քաղաքականութիւնը պետք է հիմնվի իրավական հավասարութեան վրա, միջազգային քաղաքական, տնտեսական և կուլտուրական համագործակցութեան վրա, կոլեկտիվ անվտանգութեան և բարի դրացիական հարաբերութիւնների վրա», ի լուր ամենքի հայտարարում էր դեմոկրատական պարտիան իր արտաքին քաղաքականութեան մասին<sup>2</sup>:

Դեմոկրատական պարտիայի ծրագիրը շատ մեծախոստում էր, դեմագոգիայի բավականաչափ մեծ բաժնով, և նպատակ ունէր խաբել այն մարդկանց, որոնք քիչ էին փորձված բուրժուական պարտիաների ծրագրերի և պրակտիկ գործերի հարցերում: Պարտիայի ծրագիրը կազմվել էր կոնստիտուցիայի վեց սլաքների հիման վրա, իսկ կոնստիտուցիան էլ, ինչպես հայտնի է, կազմված է ԺՌՊ-ի ծրագրին համապատասխան: Արդեն, միայն այս հանգամանքից ելնելով, պարզ է դառնում, որ ԺՌՊ-ի և դեմոկրատական պարտիայի ծրագրերի միջև էական տարբերութիւն չէր կարող լինել զխավորապես այն պատճառով, որ նրանք երկուսն էլ ներկայացնում և պաշտպանում են միևնույն դասակարգի՝ շահագործողների դասակարգի շահերը, որոնք շահագրգռված են իշխանութիւնը իրենց ձեռքում պահելու մեջ: Այդ երկու պարտիաները բուրժուազիայի և կալվածատերերի դասակարգի ծնունդն էին և կոչված էին հավատով ու գործով ծառայելու նրանց: Այդ պարտիաների ծրագրերի միջև էական տարբերութեան բացակայութիւնը նշում են նաև Տ. Ֆեյզի-օղլին<sup>3</sup>, Յալմաշը<sup>4</sup>, իսկ ինքը՝ Բայարը պնդում էր, թե դե-

<sup>1</sup> „Türkiyede siyasi dernekler“, s. 170.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 171:

<sup>3</sup> „Revue française...“, ibid, p. 176.

<sup>4</sup> A. E. Yalman, Turkey in my time, Oklahoma, 1956, p. 227.

մոկրատական պարտիան ժՆՊ-ից տարբերվում է Աթաթյուրքի շարադրած սկզբունքների մեկնարանմամբ և կիրառմամբ<sup>1</sup>։

Բայց ծրագրի այն հոդվածները, որոնցում խոսվում էր էտատիզմի քաղաքականության խիստ սահմանափակման, մասնավոր և օտարերկրյա կապիտալի խրախուսման և լիրայի դեվալվացիայի մասին, համապատասխանում էին հարստացած առևտրա-ֆինանսական բուրժուազիայի շահերին, որը ցանկանում էր ընդլայնել մտոնավոր-ձեռնարկատիրական գործունեության շրջանակները։ Միևնույն ժամանակ հարկավոր էր ամենայն պարզությամբ նշել, որ հենց այդ հոդվածներն էին համապատասխանում ամերիկյան մոնոպոլիաների ագրեսիվ ձգտումներին ու շահերին, որոնք արդեն կազմել էին Թուրքիան Մերձավոր և Միջին արևելքում իրենց ուղղմա-քաղաքական պլանցդարմը դարձնելու պլանները։ Ուստի պատահական չէ, որ դեմոկրատական պարտիայի կանոնադրությունը և ծրագիրը կազմելու գործին ակտիվորեն մասնակցել են ամերիկացի մի պրոֆեսոր և ամերիկյան իմպերիալիզմի վաղեմի ջատագով Յալմանը<sup>2</sup>։

Դեմոկրատական պարտիայի կազմավորումը տարբեր կերպ է բացատրվել Թուրքիայում և արտասահմանում։ Ինքը՝ Ինենյուն այդ հարցը իրականությանը հակառակ բացատրում էր հետևյալ կերպ. «Ծրկրի կարիքների համար, բնական մթնոլորտ և դեմոկրատիա ստեղծելու համար աճեցած շտ է ստեղծել մեկ ուրիշ պարտիա» (Ընդգծումը մերն է—Ռ. Կ.)<sup>3</sup>։

Թուրքական և արևմտասկզբնական մի քանի հեղինակներ այդ պարտիայի առաջացման պատճառներից մեկը տեսնում էին Ինենյուի նկատմամբ Բայարի և Մենդերեսի ունեցած անձնական թըշնամության մեջ, որոնք օպոզիցիայի մեջ էին գտնվում նրա նկատմամբ<sup>4</sup>։

Մի շարք ուրիշ հեղինակներ, ինչպես Ս. Փարսադանը, Զ. Հունջան, Ի. Գյոկթյուրքը, Կ. Կարպատը, Թ. Թոմայան և Ֆ. Հյուսյեն լրջորեն պնդում են, թե Թուրքական կառավարությունը թուլյատրել է կազմակերպել քաղաքական պարտիաներ, այդ թվում նաև դեմոկրատական պարտիան, ելնելով արտաքին-քաղաքական

<sup>1</sup> См. Г. А ко п я н, Турецкая реакция на службе американского империализма, М., 1951, стр. 6.

<sup>2</sup> „Vatan“, 1948, 18 ocak.

<sup>3</sup> „Vatan“, 1946, 2 kasım.

<sup>4</sup> А. Т и н с е р, s. 9; „Monde“, 1960, 29—30 mai.

նկատառումներից, այն է՝ քիչ թե շատ «դեմոկրատական» երևալ ֆաշիստական ուժերի պարտությունից և Թուրքիայի՝ Միավորված ազգերի կազմակերպության մեջ մտնելուց հետո<sup>1</sup>:

Բայց կան նաև հեղինակներ, որոնք դեմոկրատական պարտիայի կազմավորումը բացատրում էին այն լայն դժգոհությամբ, որ առաջացել էր երկրում կառավարման մեկպարտիական սիստեմի հետևանքով: Դրանց թվին են պատկանում Քաղաքական հանրագիտական բառարան»-ի հեղինակները, է. Զ. Կարալը, անգլիական «Ուոլդ աֆֆերս» հանդեսը և այլն<sup>2</sup>:

Ինքը՝ դեմոկրատական պարտիան իր կազմակերպման պատճառներն ու նպատակները բացատրում էր հետևյալ կերպ. «Դեմոկրատական պարտիան, որը հավատում է մեր քաղաքական կյանքը միմյանց հարգող պարտիաների օգնությամբ ղեկավարելու անհրաժեշտությանը, ստեղծել է Թուրքիայի կողմից հանրապետության դեմոկրատականացման էլ ավելի լայն կիրառման և դեմոկրատական հայացքների ու գաղափարախոսության հիման վրա ընդհանուր քաղաքականության զարգացման նպատակով<sup>3</sup>:

Կեղծ դեմոկրատական գիշումներով վերահաս ներքաղաքական ճգնաժամի հաղթահարումը, բուրժուազիայի և կալվածատերերի իշխանության ամրապնդումը և դրա օգնությամբ ժողովրդական մասսաների դեմոկրատական շարժման ճնշումը հանդիսացան այն պատճառները, որոնք ստիպեցին թուրքական կառավարությանը՝ թույլ տալու նոր պարտիաների, հատկապես դեմոկրատական պարտիայի կազմակերպումը: Ինչպես հետագայում խոստովանում էր ինքը՝ Ինենյուն, ժողովրդի զայրույթը ճնշելու համար «դեմոկրատական պարտիան ավելի շատ բան արեց, քան պաշարողական դրությունը»<sup>4</sup>:

Դեմոկրատական պարտիայի հանդես գալը ուրախությամբ ընդունեցին օպոզիցիոն բուրժուազիան և առևտրական շրջանները, կալվածատերերն ու կուլակները, որոնք նրան ցույց էին տալիս

<sup>1</sup> S. Parsadan, C. Hunca ve Y. G'aktürk, s. 37; K. H. Karpal, p. 137; Tarik Z. Tunaya, s. 647; „The Middle East 1961“, London, 1961, p. 332; F. L. Huiller, „Le Moyen-Orient contemporain“, 1946—1958, Paris, 1959, p. 178.

<sup>2</sup> Ansiklopedik politika sozlugu Istanbul, 1957, s. 96; E. Z. Karpal, Türkiye Cumhuriyeti tarihi (1918—1953), Istanbul, 1958, s. 218; „World affairs“, см. Г. А ко п я н, там же, стр. 7.

<sup>3</sup> Tarik Z. Tunaya, s. 662.

<sup>4</sup> «За прочный мир, за народную демократию», 13 октября 1950 г.

առատաձևուն սգնություն և նպաստներ՝ բջիջներ կազմակերպելու համար: Այդ պարտիայի հանդես գալը առանձին խանդավառությամբ դիմավորեցին երկրի արևմուտքում՝ Հդեյան և միջերկրածովյան առևտրա-ֆինանսական բուրժուազիան:

Դեմոկրատական պարտիայի պարագլուխները եռանդուն կերպով ձեռնամուխ եղան սկզբնական բջիջների կազմակերպմանը: Այդ պարտիայի առաջին, ստորին կազմակերպությունը հիմնվել էր Սամսոնում<sup>1</sup>: Պարտիայի մեջ առաջին հերթին մտնում էին բանկիրներն ու արդյունաբերողները, առևտրականներն ու վաճառականները, կապալառուներն ու ինժեներները, բժիշկներն ու ժուռնալիստները, կալվածատերերն ու կուլակները, փաստաբաններն ու դատավորները, կոմերսանտներն ու խանութպանները, ուսուցիչներն ու համալսարանների դասատուները և ուրիշներ:

Բայց անհրաժեշտ է նշել, որ այդ պարտիայի մեջ մտնում էին նաև բանվորներ ու գյուղացիներ, արհեստավորներ ու մանր ծառայողներ, որոնք հիասթափվել էին ԺՌՊ-ից և հավատացել նրա սոցիալական դեմագոգիային՝ ու սոցիալական բոլոր շարիքներից իրենց փրկելու նրա խոստումներին, և անփորձ էին բուրժուական պարտիաների միջպարտիական պայքարի հարցերում: Դեմոկրատական պարտիայի մեջ էին մտնում նաև ազգային փոքրամասնությունների շատ ներկայացուցիչներ, որոնք հույս ունեին, թե այդ պարտիան իշխանության գլուխ անցնելուց հետո թուրքերին հավասար իրավունքներ կտրվեն նաև իրենց: Վերոհիշյալ հանգամանքներով դեմոկրատական պարտիայի դասակարգային կազմը սաացվեց շատ խալտաբղետ. նրա անդամները պատկանում էին դասակարգային, կրոնական, ազգային տարբեր կատեգորիաների, բայց պարտիայի՝ դեկավարությունը զավթել էին առևտրա-ֆինանսական բուրժուազիան և կալվածատերերը: Այդ պարտիան շէր ստեղծվել, որ նրա գործերը տնօրինեին ստորին խավերը: 1946 թվականին Մեջլիսի՝ ժամկետից շուտ հայտարարված ընտրությունների դեպուտատության թեկնածուների ցուցակը պերճախոս վկայում է այն մասին, որ այդ պարտիայում իշխում էին նրանք, որոնց ծնունդն էր ինքը: Այդ ցուցակը լի էր բիզնեսի ու առևտրի գործամուներով, խոշոր ձեռնարկատերերով ու հողային արիստոկրատիայի ներկայացուցիչներով: Դեմոկրատական պարտիայից դեպուտատության 243 թեկնածուներից յոթը բանկիրներ էին, քառասուն երկուսը՝ կալվածատերեր ու կուլակներ, երեսունինը՝ կոմերսանտ-

<sup>1</sup> „Ansiklopedik politika sözlüğü“, s. 96.

ներ, երկուսը՝ նահանգապետեր, տասնհինգը՝ գեներալներ և սպաներ, հիսուններկուսը՝ փաստաբաններ, քառասունը՝ բժիշկներ, տասնորսը՝ կապալառու ինժեներներ, վեցը՝ պրոֆեսորներ, հինգը՝ դեղագործներ, ութը՝ թերթերի տնօրեններ ու ժուռնալիստներ և տասներեքը՝ ուսուցիչներ<sup>1</sup>։

1946 թվականի հուլիսի 28-ին կայացան մեջլիսի ուղղակի ընտրությունները։ Կառավարող պարտիան, ոստիկանությունն ու ժանդարմերիան կոպիտ ճնշում էին գործադրում ընտրողների վրա<sup>2</sup>, բայց ԺՌՊ-ի կառավարումից դժգոհությունն այնքան ուժեղ էր, որ դեմոկրատական պարտիային հաջողվեց ստանալ դեպուտատական 61 տեղ<sup>3</sup>։ ԺՌՊ-ն պարտություն կրեց այնպիսի կարևոր վիլայեթներում, ինչպես Ստամբուլի և Իզմիրի վիլայեթները, այսինքն՝ այնտեղ, որտեղ դեմոկրատական պարտիան իր կազմավորման առաջին իսկ օրից ուներ կայուն հենարան։ Դեմոկրատական պարտիան Ստամբուլում 23 դեպուտատական տեղից ստացավ 18. նա հաղթանակ տարավ նաև Անկարայում։ Մեջլիսի ընտրությունները ցույց տվեցին ԺՌՊ-ի դիրքերի լուրջ թուլացումը։

ԺՌՊ-ի պարագլուխները, վերահաս ներքաղաքական ճգնաժամը հաղթահարելու համար որոշեցին օգտվել օտարերկրա որևէ մեծ տերությունից՝ աջակցությունից։ Այդպիսի տերություն հանդիսացավ Ամերիկայի Միացյալ Նահանգները։

1947 թվականի մարտի սկզբին թուրքական կառավարությունը դիմեց ԱՄՆ-ին, խնդրելով օգնություն։ Շուտով, մարտի 12-ին, ԱՄՆ-ի պրեզիդենտ Տրումենը կոնգրեսին հղեց մի ուղերձ, որով առաջարկում էր ռազմական «օգնություն» ցույց տալ Հունաստանին և Թուրքիային։ «Տրումենի դոկտրինայի» հռչակումը, որը ձգտում էր Թուրքիան դարձնել ամերիկյան ռազմա-ստրատեգիական պլան-դարմը Մերձավոր և Միջին արևելքում, համապատասխանում էր նաև թուրքական ռեակցիայի ձգտումներին՝ պահպանելու և ամրապնդելու իր իշխանությունը ժողովրդի և երկրի նկատմամբ։ Այդ պատճառով ԱՄՆ-ի «օգնությունը» ուրախությամբ դիմավորեցին բուրժուական բոլոր պարտիաները առանց բացառության։ Այսպես, օրինակ, Բայարը հայտարարեց. «ԱՄՆ-ը ըստ արժանվույն գնահատեց թուրք ժողովրդի նշանակությունը որպես կարևորագույն գործոնի՝ Մերձավոր արևելքում և, հետևաբար, ամբողջ աշխար-

<sup>1</sup> А. Ф. Миллер, Очерки новейшей истории Турции, М., 1948, стр. 221; Б. Данциг, Турция, М., 1949, стр. 246—247.

<sup>2</sup> А. Tunçer, s. 45.

<sup>3</sup> Tarik Z. Tunaya, s. 657.



նում, Մենք Տրումենի առաջարկությունները դիմավորում ենք մեծ դու՛րսով և շնորհակալությամբ<sup>1</sup>։

Իվ Ժո-Պ-ն, և դեմոկրատական պարտիան, յուրաքանչյուրն առանձին, ձգտում էին շահել ԱՄՆ-ի բարեհաճ վերաբերմունքը, առաջինը իշխանությունը իր ձեռքում պահելու, իսկ երկրորդը՝ իշխանության դուրս անցնելու համար։

Դեմոկրատական պարտիան օպոզիցիոն լայն գործունեություն ծավալեց Ժո-Պ-ի դեմ. նա կազմակերպում էր հրապարակային ժողովներ, միտինգներ, պառլամենտական բուռն վիճաբանություններ։ Շատ հաճախ դեմոկրատական պարտիայի դեպուտատները լքում էին մեջլիսի նիստերի դահլիճը, ինչպես նաև բոյկոտի էին ենթարկում տեղական ընտրությունները։ Բնակչությանը իր կողմը գրավելու համար դեմոկրատական պարտիան քննադատության էր ենթարկում կառավարության բոլոր միջոցառումները ներքին քաղաքականության բնագավառում, ամենամուսուլ գույներով ներկայացնում երկրի տնտեսական ու ֆինանսական ծանր դրությունը։ «Դեմոկրատների» պարագլուխները պահանջում էին վերջ դնել իշխանությունների կամայակալությանը, վերացնել հակակոնստիտուցիոն օրենքները, բարձրացնել մեջլիսի դերը ներքաղաքական կյանքում, բարձրացնել բանվորների ու գյուղացիների կենսամակարդակը, իջեցնել առաջին անհրաժեշտության ապրանքների գները, բանվորներին վերապահել գործադուլի իրավունք, ընդլայնել մամուլի իրավունքները և ներգրավել օտարերկրյա կապիտալը։ Օպոզիցիան քննադատում էր կառավարությանը լուսավորության և առողջապահության ողբալի վիճակի համար, պետական ապարատի կաշառակերության և ծախվածության համար, գործադիր իշխանության լիազորությունների գերազանցման համար և պարտիական ապարատի ու պետության սերտաճման համար։ Օպոզիցիան կառավարությանը և Ժո-Պ-ին մեղադրում էր Աթաթյուրքի սկզբունքները մոռացության տալու համար և մեծ աղմուկ էր բարձրացնում նրա անձին ու սկզբունքներին իր նվիրվածության մասին։ Այդ բանն արվում էր շահադիտական նպատակով, որպեսզի շահեն Աթաթյուրքին հարգող մարդկանց աջակցությունը։ Օպոզիցիան պահանջում էր նաև, որ ռեսպուբլիկայի պրեզիդենտը չմիջամտի միջպարտիական գործերին, ապահովի ընտրությունների գաղտնիությունը և ադմինիստրատիվ օրգանների վերապարտիականությունը<sup>2</sup>։

<sup>1</sup> „Vatan“, 1947, 14 mart.

<sup>2</sup> „Revue française...“ ibid, p. 141.

Բայց Բայարը և Մենգերեսը պաշտպանում էին կառավարության արտաքին քաղաքականությունը. հատկապես նրա թշնամական քաղաքականությունը Սովետական Միության նկատմամբ: Նրանք պաշտպանում էին նաև կառավարության հալածանքները կոմպարտիայի, բանվորների և առաջադիմական մյուս կազմակերպությունների դեմ: Դեմոկրատական պարտիայի օպոզիցիոն գործունեությունը ուղղված էր միայն իշխանությունը նվաճելու, այլ ոչ թե վերահիշյալ սոցիալական աղետները արմատախիլ անելու նպատակին:

1950 թվականի փետրվարի 16-ին մեջլիսը ընդունեց № 5545 ընտրական նոր օրենքը, որի առաջին հոդվածի համաձայն այսուհետև մեջլիսի ընտրությունները պետք է տեղի ունենային մատուցող սիստեմով: Այս օրենքը ընդունվելուց հետո նոր թափով ծավալվեց «գզվուտոցը» իններորդ Մեջլիսի ընտրությունների նախօրյակին: Դեմոկրատական պարտիան հրապարակեց իր նախընտրական ծրագիրը, որը կրկնում էր իր բոլոր նախկին խոստումներն ու պահանջները և միաժամանակ քննադատում էր կառավարող պարտիայի ծրագիրը: Պարտիայի լիդերները իրենց նախընտրական ելույթներում պահանջում էին նաև կրճատել անուղղակի հարկերը, պետական ապարատի համար կատարվող ծախսերը, խոստանում էին Սև ծովի ափի հողազուրկ գյուղացիներին մասսայաբար վերաբնակեցնել Կըզըլ-Ըրմակ և Եշիլ-Ըրմակ գետերի միջև ընկած բարեբեր հողերի վրա և վարել խաղաղության ու աշխարհի բոլոր երկրների հետ բարեկամության քաղաքականություն: Դեմոկրատական պարտիայի ղեկավարները բանվորներին խոստացան նաև գործադուլի իրավունք<sup>1</sup>: Դեմոկրատական պարտիայի պարագլուխները հատուկ նախընտրական ուղևորություն սկսեցին երկրում:

Դեմոկրատական պարտիայի դեպուտատության թեկնածուների ցուցակը դարձյալ լի էր այն մարդկանցով, որոնք ամուր նստած էին նրա պարտիական թամբին:

1950 թվականի մայիսի 14-ին կայացան մեջլիսի ընտրությունները, որոնք անցան ոստիկանական ամենակոպիտ ճնշման ու կամայականության պայմաններում: Ժանդարմերիան դեպի ընտրական քվեատուփերն էր տանում ընտրողների խմբերին և ստիպում նրանց քվեարկել ԺՌՊ-ի օգտին: Կատարվել էին ընտրական բուլետենների բազմաթիվ կեղծիքներ: Ընտրություններին մասնակցել

<sup>1</sup> Eleanor Bishee, *The New Turks*, Philadelphia, 1951, p. 107.

էր ընտրողների մոտ 75%<sup>1</sup>, իսկ մնացածները փաստորեն բոլկոտի էին ենթարկել ընտրութիւնները: Կառավարող պարտիան ամոթալի պարտութիւն կրեց: Խնկնուն տանուլ տվեց մայրաքաղաքում, բայց մեղլիս ընտրվեց Մալաթիայի վիլայեթից, որտեղ նա նույնպես քվեարկվում էր: Այնքան մեծ էր ընտրողների զայրույթը կառավարութեան քաղաքականութեանից, որ շրտրվեց կառավարութեան ոչ մի անգամ, բացի Շամսուդին Գյունալթայից<sup>2</sup>: Դեմոկրատական պարտիան ստացավ ձայների 53,6%, իսկ ԺՌՊ-ն՝ 40%<sup>3</sup>, բայց մեղլիսում դեմոկրատական պարտիան ստացավ 434 դեպուտատական տեղ, իսկ ԺՌՊ-ն՝ 52<sup>4</sup>, որը հարկավոր է բացատրել ընտրութիւնների մաթորիտար սիստեմով: Միաժն Ստամբուլի վիլայեթում դեմոկրատական պարտիան ստացավ 27 մանդատ<sup>5</sup>:

Դեմոկրատական պարտիայի հաղթանակը ընտրութիւններում տարրեր կերպ մեկնաբանվեց Թուրքիայում և նրա սահմաններից դուրս: Այսպես, օրինակ, Ս. Փարսադանը, Ջ. Հունչան և Յու. Գյուկթյուրքը դեմոկրատական պարտիայի հաղթանակը բացատրում էին այն բանով, որ նա իր առջև խնդիր չէր դնում գրավել իշխանութիւնը, այլ ձգտում էր ազգը նախապատրաստել ազատութեամբ ու դեմոկրատիայով լի կյանքի, ինչպես նաև բազմապարտիական քաղաքական պայքարի<sup>6</sup>: Ֆահրիյե Յազգանը, Մերիման Սարդարլարը, Մյուսթերեմ Քյամիլ Սուն և Իոբեռ Մախտրանը դեմոկրատական պարտիայի հաղթանակը դիտում էին որպես դեմոկրատիայի հաղթանակ<sup>7</sup>:

Արևմտյան մամուլի որոշ օրգաններ դեմոկրատական պարտիայի հաղթանակը բացատրում էին մասնավոր ձեռնարկատիրութեան ազատութեան ծարավի բուրժուազիայի պաշտպանութեամբ միայն<sup>8</sup>:

Թուրքական և այլ պատմաբանների վերոհիշյալ ասույթներն ու մամուլի օրգանների կարծիքները չեն բացահայտում ընտրութիւններում դեմոկրատական պարտիայի տարած հաղթանակի իս-

<sup>1</sup> A. E. Yalman, p. 246.

<sup>2</sup> «Вопросы экономики», 1950, № 7, стр. 100.

<sup>3</sup> „Economist“, 1954, 15 may, supplement „Turkey“, p. 1.

<sup>4</sup> «Вопросы экономики», там же, стр. 100.

<sup>5</sup> A. E. Yalman, p. 246.

<sup>6</sup> S. Parsadan, C. Hunca ve Y. Göktürk, s. 51.

<sup>7</sup> Fahriye Yazgan, Meriman Serdarlar, „Türkiye Cumhuriyeti tarihi“, İstanbul, 1956, s. 170; Mükerrrem Kamil Su, s. 176; R. Mantran, „Histoire de la Turquie“, Paris, 1952, p. 126.

<sup>8</sup> „Fortune“, 1954, June; „Foreign Affairs“, 1954, July, vol. IV, p. 627; „Spectator“, 1960, 2 december, p. 889.

կական պատճառները: Այդ ճաղթանակը նոր դարաշրջան չէր բացում երկրի պատմութեան մեջ և ոչ մի կապ չունէր դեմոկրատիայի հաղթանակի հետ:

Դեմոկրատական պարտիայի ճաղթանակի պատճառներից մեկը թուրք ժողովրդի լայն դժգոհութիւնն ու հիասթափութիւնն էր ԺՌՊ-ի երկարամյա կառավարումից, որը չէր կարողացել և չէր էլ ցանկացել լուծել երկրի արմատական սոցիալական պրոբլեմները: Աշխատավոր մասսաները հույս ունեին, թե դեմոկրատական պարտիան կկարողանա ապահովել տնտեսական վերելքը, կենսապայմանների բարելավումն ու դեմոկրատական ազատութիւնները: Կոմպարտիայի և առաջադիմական այլ կազմակերպութիւնների բացակայութիւնը թուրքական շարքային ընտրողին հնարավորութիւն չտվեց արտահայտելու իր աղատ կամքը, և նրա ձայները փաստորեն բաժանվեցին այդ երկու պարտիաների միջև: Դեմոկրատական պարտիան իշխանութեան գլուխ անցավ բուրժուազիայի և կալվածատերերի բազմակողմանի աջակցութեան շնորհիւ, որոնց շահերը նա ներկայացնում ու պաշտպանում էր: Բայց դեմոկրատական պարտիայի հաղթանակը համապատասխանում էր նաև երկրի կառավարող դասակարգերի դասակարգային ընդհանուր շահերին՝ իշխանութիւնը դարձյալ մնաց հուսալի ձեռքում, շահագործողների ու ռեակցիոնների ձեռքում:

Մեջլիսի ընտրութիւններում դեմոկրատական պարտիայի տարած հաղթանակի պատճառներից մեկն էլ ԱՄՆ-ի «օգնութիւնն» էր: Թուրքական Մեջլիսի ընտրութիւնների նկատմամբ ԱՄՆ-ի կառավարող շրջանների վերաբերմունքը ելնում էր հետևյալ նկատառումներից. և ԺՌՊ-ն և դեմոկրատական պարտիան հանդես էին գալիս որպես Թուրքիայի ազգային շահերը ԱՄՆ-ի ագրեսիվ արտաքին քաղաքականութեանը ենթարկելու կողմնակիցներ: Այնպես որ, երկու պարտիաների արտաքին-քաղաքական դիրքորոշումներն էլ միասնամայն գոհացնում էին ԱՄՆ-ին: Ինչ վերաբերում է այդ պարտիաների ներքին քաղաքականութեանը՝ դեմոկրատական տարրերին ճնշելու և ռեակցիոն ուժերի դիրքերը ուժեղացնելու քաղաքականութեանը, ապա դա նույնպես համապատասխանում էր ամերիկյան իմպերիալիզմի ձգտումներին, որը հանդես է գալիս միջազգային ռեակցիայի բոլոր ուժերը իր հովանու տակ միավորելու պլաններով: Բայց ԱՄՆ-ը հաշվի էր առնում նաև այն, որ ԺՌՊ-ի էտատիզմի քաղաքականութիւնը չի նպաստում օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալի էքսպանսիային Թուրքիա, դա առաջ էր բերում ամերիկյան մոնոպոլիստների վրդովմունքը, որոնք երկ-

բարդ համաշխարհային պատերազմից հետո ուժեղացրել էին իրենց գործունեությունը կապիտալիստական աշխարհի բոլոր անկյուններում: Օտարերկրյա մոնոպոլիաներին միանգամայն բավարարում էին դեմոկրատական պարտիայի պահանջները էկոնոմիկայի բնագավառում՝ էտատիզմի սահմանափակումը, մասնավոր-արդյունաբերական ձեռնարկատիրության շրջանակների ընդլայնումը և օտարերկրյա կապիտալի ներգրավումը: Այս ամենին գումարած նաև այն, որ ԱՄՆ-ը դիտեր ժՌՊ-ի ռեժիմի անժողովրդականությունը և գերադասեց պաշտպանել դեմոկրատական պարտիային: Ուստի ԱՄՆ-ը մեծ օգնություն ցույց տվեց նրան՝ իշխանության գլուխ անցնելու գործում: Պատահական չէ, որ երբ հայտնի դարձավ դեմոկրատական պարտիայի հաղթանակի լուրը, ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտը հատուկ հայտարարությամբ շնորհավորեց Բայար-Մենդերեսի պարտիայի հաղթանակը: Սակայն հարկավոր է ընդդժել, որ եթե ընտրություններում դարձյալ հաղթանակ տաներ ժՌՊ-ն, ապա ԱՄՆ-ը կպաշտպաներ նրան, քանի որ վստահ էր, որ վերջինս առաջվա նման վարելու է պրոամերիկյան քաղաքականություն: Ինչ վերաբերում է ժՌՊ-ի տնտեսական քաղաքականությանը ապա ԱՄՆ-ը կկարողանար այն փոխել ամերիկյան մոնոպոլիաների օգտին, այդ նպատակի համար օգտագործելով իր ռազմական և տնտեսական «օգնությունը»:

Թուրքիայի կառավարման երկպարտիական բուրժուական սիստեմը սկզբից ևեթ ընդունեց նույնպիսի հակաժողովրդական ռեակցիոն բնույթ, ինչպես և կապիտալիստական սիստեմի մյուս երկրներում:

Ընտրությունների արդյունքները հայտարարվելուց հետո կազմվեց նոր կառավարություն, որի անդամներն էին միայն դեմոկրատական պարտիայից ընտրված Մեջլիսի դեպուտատները: Կառավարությունը գլխավորեց Մենդերեսը, իսկ Քյոփրյույուն գրավեց արտաքին գործերի մինիստրի պաշտոնը: Հանրապետության պրեզիդենտ ընտրվեց Բայարը<sup>1</sup>, իսկ Մեջլիսի նախագահ՝ Կորալթանը: 1950 թվականի մայիսի 29-ին Մենդերեսը Մեջլիսում հանդես եկավ նոր կառավարության ծրագրի շարադրությամբ, որով վերջինս խոստանում էր վերացնել գործազրկությունը, առողջացնել էկոնոմիկան և ֆինանսները, ճանաչել բանվորների՝ փորձադուլի և ազատ արհմիությունների իրավունքը, խոսքի ու մամուլի

<sup>1</sup> Պրեզիդենտ ընտրվելուց հետո Բայարը թողեց պարտիայի Կենտկոմի նախագահի պաշտոնը: Նրա տեղը ընտրվեց Ա. Մենդերեսը:

ազատութիւնը, ամրապնդել ազգային անկախութիւնը: Մրագրում նշվում էր նաև, որ նոր կառավարութիւնը ամեն կերպ ձգտելու է ընդլայնել տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կապերը ԱՄՆ-ի հետ<sup>1</sup>, բարեկամական հարաբերութիւններ հաստատել հարևան պետութիւնների հետ և նպաստել խաղաղությանն ամբողջ աշխարհում: Բայց Մենդերեսը առանձնապես ընդգծեց, որ իր կառավարութիւնը կենսագործելու է «Տրումենի դոկտրինայի» հիման վրա ստորագրված ամերիկա-թուրքական համաձայնութիւնը և իրականացնելու է երկրի հետագա ռազմականացումը: Կառավարութեան ծրագրում պարզ ակնարկվում էր, որ նա մտադիր է խիստ միջոցներ ձեռնարկել թուրք ժողովրդի դեմոկրատական շարժումը ճնշելու համար: Բայարը հայտարարեց նաև, որ դեմոկրատական պարտիայի կառավարութիւնը չի փոփոխելու ԺՌՊ-ի արտաքին քաղաքականութիւնը<sup>2</sup>:

\* \* \*

Դեմոկրատական պարտիայի հետագա ամբողջ ներքին քաղաքականութիւնը տւղված է եղել երկիրը ամերիկյան իմպերիալիզմի ռազմա-ստրատեգիական պլանդարմի վերածելու նպատակին: Դեմոկրատական պարտիան աջակցում էր օտարերկրյա մոնոպոլիտական կապիտալի, առանձնապես ամերիկյան և արևմտագերմանական մոնոպոլիաների ներխուժմանը: Մենդերեսի կառավարութիւնը ԺՌՊ-ից ավելի հեռու գնաց ազատութիւնն ու դեմոկրատիան, առաջադիմական ուժերին, կոմպարտիային ու ազգային փոքրամասնութիւններին ճնշելու և հալածելու ասպարեզում: Դեմոկրատական պարտիան կանգնեց ներքաղաքական կյանքի բոլոր ոլորտներում ռեակցիան ուժեղացնելու ուղու վրա:

Բայար-Մենդերեսի կառավարող կլիկը սկսեց հալածել նաև մամուլի բարժուական օրգաններին ու պարտիաներին, առանձնապես ԺՌՊ-ին, ճնշել բուրժուական ազատութիւնները. դա վկայում է, որ դեմոկրատական պարտիան ձգտում էր հաստատել իր դիկտատուրան և անցնել կառավարման զուտ ֆաշիստական ձևերի:

Արտաքին քաղաքականութեան բնագավառում Մենդերեսի կառավարութիւնը ամենակտիվ մասնակցութիւն էր տւննում ա-

<sup>1</sup> „Fortnightly“, 1951, may, p. 319.

<sup>2</sup> „Ulus“, 1950, 30 mayis.

<sup>3</sup> G. Lenczowski, The Middle East in World affairs, New York, 1952, p. 151.

մերիկյան իմպերիալիզմի բոլոր պրովոկացիաներում, որոնք ուղղորված էին խաղաղության ու դեմոկրատիայի դեմ, համաշխարհային սոցիալիստական սիստեմի ու արաբական ժողովուրդների ազատագրական պայքարի դեմ:

Դեմոկրատական պարտիայի ներքին և արտաքին ռեակցիոն քաղաքականությունը վատթարացրեց երկրի տնտեսական ու ֆինանսական վիճակը, աշխատավոր մասսաների նյութական դրությունը, որի հետևանքով է՛լ ավելի սրվեցին դասակարգային հակասությունները:

Օպոզիցիոն պարտիաները, որոնք խմբավորվել էին ԺՌՊ-ի շուրջը, որոշեցին օգտագործել ժողովրդական ամենալայն մասսաների դժգոհությունը կառավարության քաղաքականությունից և ակտիվացրին իրենց պայքարը նրա դեմ: Բայց սկսած 1960 թվականից դեմոկրատական պարտիան է՛լ ավելի ուժեղացրեց հալածանքները իշխանության համար պայքարող իր ախոյանների դեմ: Երկիրը սկսեց ապրել ներքաղաքական լուրջ ճգնաժամ, որը միահյուսվում էր տնտեսական ու ֆինանսական ճգնաժամի հետ: Բայց դա միաժամանակ դեմոկրատական պարտիայի կառավարման և կառավարման բուրժուա-կալվածատիրական ամբողջ սիստեմի ճգնաժամն էր:

Ստեղծված դրությունից ելք որոնելով, 1960 թվականի մայիսի վերջին բանակի մի խումբ բարձրաստիճան սպաներ գեներալ Զեմալ Գյուլբեյլի գլխավորությամբ կատարեցին զինվորական հեղաշրջում և տապալեցին դեմոկրատական պարտիայի իշխանությունը: Հետագայում գումարվեց Սահմանադիր ժողով, որը մշակեց նոր կոնստիտուցիա: 1961 թվականի հոկտեմբերին նոր կոնստիտուցիայի հիման վրա անցկացվեցին Մեջլիսի ընտրություններ: Ազգային պալատում դեպուտատական տեղերի մեծ մասը շահեց ԺՌՊ-ն, իսկ սենատում՝ արդարության պարտիան, որը բաղկացած էր գլխավորապես դեմոկրատական պարտիայի նախկին անդամներից ու ռեակցիոն զանազան տարրերից: Հանրապետության պրեզիդենտ ընտրվեց Զ. Գյուլբեյլը: Նոր կառավարությունը, որը կազմված է ԺՌՊ-ի և արդարության պարտիայի անգամներից, գլխավորեց Իսմեթ Ինենյուն:

Այսպիսով, իշխանությունն ընկավ առաջվա նման ֆուլյն տիրապետող դասակարգերի՝ թուրք կալվածատերերի ու բուրժուազիայի ձեռքը, որոնք չեն ցանկանում ու չեն էլ կարող լուծել երկրի արմատական սոցիալական պրոբլեմները:

Р. П. КОНДАКЧЯН

МЕЖПАРТИЙНАЯ БОРЬБА В ПОСЛЕВОЕННОМ  
ТУРЦИИ И ПРИХОД К ВЛАСТИ ДЕМОКРАТИЧЕСКОЙ  
ПАРТИИ

Р е з ю м е

В статье исследуются следующие вопросы: внутривнутриполитическая обстановка Турции после окончания второй мировой войны, кризис внутренней и внешней политики и однопартийной системы правления Народно-республиканской партии, возникновение оппозиции внутри нее, образование Демократической партии и ее приход к власти. Подвергнуты критическому анализу ошибочные взгляды буржуазных историков в вышеуказанных вопросах.



ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ

Մինչև ռեսպուբլիկական իշխանության հաստատումը Թուրքիայում գոյություն չունեին կրթության միասնական սիստեմ: Սուլթանական Թուրքիայում կրթությունը իրականացվում էր մզկիթներին կից տարրական դպրոցներում՝ «մեկտեբներում» և հոգևոր սեմինարներում՝ «մեդրեսեներում»:

Միայն XIX դարի կեսերին Թուրքիայում առաջին անգամ հիմնրվեցին պետական տարրական դպրոցներ՝ «մեկտեբի Ռուշիդիե» և «ի դադիե» պետական միջնակարգ դպրոցներ<sup>1</sup>: Այս դպրոցների բացմամբ, որոնց թիվը, ի դեպ, շատ փոքր էր, երկրում դրվեց աշխարհիկ կրթության սկիզբը: Սակայն այդ շէր նշանակում ուսուցման մեթոդի լուրջ փոփոխում. նախկինի պես վերջինս բացահայտ սխոլաստիկ բնույթ էր կրում:

Մի սեփամ չէ, որ Թուրքիայում փորձեր են կատարվել կրթության բնագավառում ռեֆորմներ անցկացնել: 1845 թվականին հրատարակված հատուկ օրենքը, որը նախատեսում էր ընդհանուր ձրի ուսուցում, սուլթանական Թուրքիայում շիրականացվեց: Նմանօրինակ փորձեր կատարվեցին երիտասարդ թուրքերի ժամանակ՝ 1910 և 1913 թվականներին:

Ազգային-ազատագրական պայքարի հաղթանակը Թուրքիայում նրա կառավարող շրջանների առջև, բնականաբար դրեց սոցիալական մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությունը: Քեմալական կառավարությունը ոչնչացրեց սուլթանաթը, հռչակեց ռեսպուբլիկա և վերացրեց խալիֆաթը: Թուրքիայի ֆեոդալաատավածատական հին կարգին փոխարինելու եկավ բուրժուական ռեսպուբլիկան:

<sup>1</sup> Lncy M. I. Garnet, The Turkish people, London, 1905, p. 164.

Ինֆորմաներ անցկացվեցին նաև լուսավորության բնագավա-  
ռում. դրանք թելադրվում էին մի շարք պատճառներով: Կապիտա-  
լիստական հարաբերությունների արագ զարգացումը, արտադրու-  
թյան ճյուղերի և գյուղատնտեսության ընդլայնումը առաջ էին քա-  
շում ազգային մտավորական կազմեր՝ ինժեներներ, ճարտարապետ-  
ներ, բարձրորակ տեխնիկներ և վարպետներ պատրաստելու ան-  
հրաժեշտությունը:

Հին դպրոցը, ուր դասավանդումը կատարվում էր սխոլաստիկ  
ծրագրերով, չէր կարող բավարարել թուրքական կառավարող դա-  
սակարգին, առաջ էր եկել ամբողջ ժողովրդական կրթությունը վե-  
րակառուցելու անհրաժեշտությունը: Պետք էր այնպիսի դպրոց,  
որտեղ ուսուցումը կատարվեր ժամանակակից սխստեմով՝ և մեծ  
ուշադրություն դարձվեր հանրակրթական կարևոր առարկաներին:  
1924 թվականի սահմանադրության 87-րդ հոդվածը «տարրական  
կրթությունը բոլոր թուրքերի համար պարտադիր և ձրի»՝ հռչակեց:  
Փակվեցին կրոնական դպրոցները՝ մեդրեսեները, դպրոցների ու-  
սումնական ծրագրերից հանվեցին բոլոր այն առարկաները, որոնք  
ուղղակի կապ ունեին մահմեդական կրոնի հետ: 1925 թ. դեկտեմ-  
բրտարակվեց դերվիշների միաբանությունը (օրդեն) վերացնելու  
մասին: Այս միջոցառումները, անշուշտ, թուլացնում էին մահմե-  
դական հոգևորականության ազդեցությունը:

1928 թ. մեջլիսը սահմանադրությունից հանեց այն կետը, որ  
ասում էր, թե «Թուրքիայի պետական կրոնը հանդիսանում է իս-  
լամը»: Մեջլիսի այդ որոշմամբ եկեղեցին անջատվեց պետությու-  
նից: Կառավարության այս և մյուս վերափոխումները անպայման  
առաջադիմական բնույթ էին կրում: Սակայն դրանք բոլորովին էլ  
չէին խոսում այն մասին, թե քեմալականները կրոնի ազդեցությունը  
լրիվ վերացնելու վճռական կողմնակիցներ էին: Լուսավորության  
մինիստրությունը շարունակում էր գյուղերի ծխական դպրոցների  
համար կրոնական դասագրքեր հրատարակել: Մինչև 1933 թվականը  
Ստամբուլի համալսարանում գործում էր աստվածաբանական ֆա-  
կուլտետ, մի փաստ, որը վկայում է թուրքական կառավարության  
անհետևողականության մասին:

1924 թվականին թուրքական մեջլիսը որոշում ընդունեց ամ-  
բողջ երկրում կրթության միասնական սխստեմ ստեղծելու մասին:  
Երկրի բոլոր ուսումնական հաստատությունները, այդ թվում նաև

<sup>1</sup> Düstur, cilt 26, 3 cu tertip. Ankara, 1945, s. 178.

օտարազդիներինը, լրիվ անցնում էին լուսավորության միևնույն տարու-  
թյան վերահսկողության տակ:

Լուսավորության ասպարեզում ռեսպուբլիկական կառավարու-  
թյան կարևոր միջոցառումներից էր այբուբենի ռեֆորմը: Առաջնե-  
րում էլ փորձեր էին կատարվել լատինական այբուբեն ընդունելու  
ուղղությամբ: Բայց մահմեդական հոգևորականությունը, որի ձեռ-  
քում էր գտնվում կրթության գործը, ինչպես նաև մտավորականու-  
թյան մի մասը դիմադրում էին: Նրանք գտնում էին, որ լատինա-  
կան այբուբենի ընդունումը թուրքական հին գրականության բոլոր  
գանձերը անհասկանալի կդառնան ապագա սերնդի համար, որ ղու-  
րանն ու մզկիթների արձանագրությունները կարելի է գրել միմիայն  
արարական տառերով<sup>1</sup>:

Բայց լատինական այբուբենի թշնամիների դիմադրությունը  
կտրվեց:

Լատինական այբուբենին անցնելու համար ոգևորող օրինակ  
ծառայեցին սովետական արևելյան ռեսպուբլիկաներում կատար-  
ված համանման ռեֆորմները:

1926 թ. մարտ ամսին Բաքվում տեղի ունեցավ թուրքագետ-  
ների կոնգրես, որի որոշումները լատինական այբուբեն ընդունելու  
մասին կարևոր նշանակություն ունեցան: Վերադառնալով կոն-  
գրեսից, թուրքական պատվիրակությունը, որի կազմում էին՝ Հու-  
սեյին Ջադե Ալին, Գուլա Մեսարինեն և Քյուվրյուլու Ջագե Մեմեթ  
Ֆուսդան, հարց բարձրացրեց լատինական այբուբենը հետազո-  
տող հանձնաժողով ստեղծելու մասին:

1926 թվականի ամռանը Մոսկվա եկավ թուրքական մի այլ  
պատվիրակություն՝ ժողովրդական կրթության գործի կազմակերպ-  
մանը ծանոթանալու նպատակով: Վերադառնալով հայրենիք, առա-  
ջինի նման այս պատվիրակությունը ևս արտահայտվեց լատինական  
այբուբեն ընդունելու օգտին<sup>2</sup>:

Այս բոլորի հետևանքը եղավ այն, որ Թուրքիայի բարձրագույն  
ազգային ժողովը 1928 թ. նոյեմբերի 1-ին օրենք ընդունեց այբու-  
բենի ռեֆորմի մասին:

Լուսավորության բնագավառի վերափոխումները և հատկա-  
պես այբուբենի ռեֆորմը դրական դեր խաղացին բնակչության գրա-  
գիտության մակարդակը բարձրացնելու գործում և ճանապարհ հար-

<sup>1</sup> ЦГАОР, фонд 4459, оп. 2, дело № 403, л. 139.

<sup>2</sup> Տե՛ս «Народное просвещение», 1926, № 8, էջ 128, ինչպես նաև  
«Новый Восток», 1926, № 13—14, էջ 457:

թեցին նրա մտավոր աճի համար: Մեծացավ ուսումնական հաստատությունների ցանցը, բացվեցին նոր բարձրագույն դպրոցներ: Ամենուրեք հիմնվեցին ուսուցչական դասընթացներ՝ նոր այբուբենին և քերականությանը ծանոթանալու համար: 1928 թ. նոյեմբերի 20-ին շափահասների մեջ անգրագիտությունը վերացնելու համար կազմակերպվեցին ստացիոնար և շարժական դասընթացներ, որոնք կրում էին «ազգային դպրոցներ» անունը: Դպրոցների ընդհանուր ղեկավարությունը ստանձնել էր Թուրքիայի պրեզիդենտ Մ. Քեմալը: Նրան շնորհվեց «գլխավոր դասատուի» կոչում: 1928—1929 ուսումնական տարում արդեն գործում էին շուրջ 20.000 դասընթացներ՝ ավելի քան 1 միլիոն այցելուներով: Ազգային դպրոցները բաժանված էին երկու՝ «Ա» և «Բ» կուրսերի: «Ա»-ն գործում էր անգրագիտների, իսկ «Բ»-ն՝ արաբերեն այբուբենը իմացողների համար: Նոր այբուբենի հետ ծանոթանալուն զուգընթաց «Բ» կուրսերի ունկնդիրները սովորում էին նաև թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն:

Ուսման դասընթացը տևում է 2—4 ամիս: Ամեն մի դասարան շաբաթական ուներ 6 ժամ: Այդ դասարաններում սովորողների թիվը լինում էր 15—40 մարդ<sup>2</sup>: Անգրագիտության վերացման կամպանիան ընթանում էր բավական արագ տեմպով: Այսպես, 1928—1929 ուսումնական տարում դասընթացներն անցնելու վկայագիր էր ստացել 500 հազար մարդ: Հետագա տարիներին սրանց թիվը պակասում է: 1949—1950 թվականներին, օրինակ, այն կազմեց 2738 մարդ<sup>3</sup>:

Բացի այդ դասընթացներից, 1932 թվականի փետրվարի 18-ին ստեղծվեցին այսպես կոչված «ժողովրդական տները», որոնք փոխարինեցին «թուրքական օջախներին»<sup>4</sup>:

«ժողովրդական տները» գործում էին մինչև 1951 թվականի օգոստոսի 8-ը և ունեին ավելի քան 1800 «Ա» խմբի և 600 «Բ» խմբի դպրոցներ: 1936—1949 թվականների միջև ընկած ժամանա-

<sup>1</sup> Tourkan Oguzkan, Adult Education in Turkey. UNESCO. Paris, 1955, № XIV, p. 18.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>3</sup> Türkiye İstatistik umum müdürlüğü, İstatistik yillığı, 1951, p. 212.

<sup>4</sup> «Թուրքական օջախները» ստեղծվել էին դեռևս երիտասարդ թուրքերի օրոք՝ պանթուրքիզմի և պանթուրանիզմի պրոպագանդան նպատակով: Դրանք իրենց նշանակությունը պահպանել էին նաև ռեսպուբլիկական կարգերի օրոք: Սակայն մասսայականություն չունենալու պատճառով 1931 թ. քեմալիստները փակեցին դրանք:

կաշրջանում «ժողովրդական տները» այցելել էին ավելի քան 700.000 ունկնդիրներ<sup>1</sup>։

«Ազդային դպրոցներն» ու «ժողովրդական տները» զգալիորեն նպաստեցին բնակչության գրագիտության մակարդակի բարձրացմանը։ Բայց Թուրքիայի բնդհանուր հետամնացության հետևանքով ժողովրդական մասսաների կրթական մակարդակի իսկական բարձրացում անդի շտենեցավ։ Ծիշտ է լուսավորության բնագավառի վերափոխությունները նպաստում էին աշխարհիկ ուսուցումը ներդնելուն, սակայն կրթության մենաշնորհը հիմնականում մնաց ունեվոր դասակարգի ձեռքին և բանվորա-գյուղացիական զանգվածներին կրթությունը սահմանափակվեց աննշան միևիմուտով։ Ահա թե ինչու անգրագիտության լրիվ վերացման խնդիրը Թուրքիայում այդպես էլ չլուծվեց։ 1950 թվականի վիճակագրական տվյալներով անգրագետները կազմում էին բնակչության 64,4%<sup>2</sup>։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ Թուրքիայի կառավարող շրջանները երկիրը ներքաշելով իմպերիալիստական ընդունելի մեջ ուղղակիապես քաղաքականություն էին վարում, անգրագիտության վերացման ընթացքը զգալիորեն դանդաղել էր։ 1958—1959 թվականների բյուջեում լուսավորության համար հատկացված էր 522,6 միլիոն լիր, այնինչ ուղղակի ծախսերի համար բաց էր թողնված 2,5 միլիարդ լիր<sup>3</sup>։ Թուրքական վիճակագրության 1955 թ. տվյալներով երկրի բնակչության 59,4%-ը անգրագետ էր<sup>4</sup>։ 1950 թվականի համեմատությամբ դա աննշան առաջընթաց էր, եթե նկատի ունենանք նաև բնակչության աճը այդ նույն ժամանակամիջոցում։

Այժմ Թուրքիայի ժողովրդական կրթության սիստեմը կառուցված է 1926 թվականի մարտի 22-ի օրենքի համապատասխան։ Ըստ այդ օրենքի երկու սեռի երեխաների համար էլ տարրական կրթությունը համարվում է պարտագիր։

Լուսավորության միևիտրության պետական սիստեմը իր մեջ ընդգրկում է բնդհանուր մասնադիտակաև կրթության բոլոր օղակները։ Հարկ է նշել, որ լուսավորության սիստեմի վերակառուցման ժամանակ շատ բան ընդօրինակվեց եվրոպական երկրների դպրոցական օրենսդրություններից։ Համաշխարհային երկրորդ պատե-

<sup>1</sup> Türkiye İstatistik umum müdürlüğü, İstatistik yılı, 1951, p. 212.

<sup>2</sup> „Akşam“, 12.VI.1952.

<sup>3</sup> „Ulus“, 3.XII.1952. Հաս պաշտենկան կուրսի ներկայումս 1 դուլ=9,2 լիր-ի։

<sup>4</sup> „Cumhuriyet“, 8.II.1957.

բազմից հետո զգալիորեն ուժեղացավ ամերիկյան ազդեցությունը, որով ԱՄՆ-ը ցանկանում էր ամրապնդել իր քաղաքական ու տնտեսական դիրքերը: 1949 թվականի դեկտեմբերի 27-ին Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև համաձայնագիր կնքվեց այսպես կոչված «էտուսավորության բնագավառում համագործակցելու մասին»: Այդ համաձայնագրի ոգով Թուրքիայի լուսավորության մինիստրությունը անցկացրեց ռեֆորմ, որը երկրի ուսումնական հաստատություններում մտցրեց կրթության ամերիկյան սիստեմ:

«Մեկ-երկու տարի հետո,— գրում է «Նի Իստանբուլ» թերթը.— դպրոցներում ուսուցումը լրիվ շափով կատարվելու է ամերիկյան սիստեմով»<sup>1</sup>, որն հանգում է «6—3—3» կարգին, ուր 6 տարին հատկացվում է նախնական դպրոցին, 3 տարին՝ «կրտսեր միջնակարգ դպրոցին» (junior high school) և նույնքան էլ՝ «ավագ միջնակարգ դպրոցին» (senior high school): Այդ սիստեմը լայնորեն օգտագործվեց Թուրքիայում:

\* \* \*

Թուրքիայում նախնական կրթությունը երկու սեռի երեխաների (7—12 տարեկան) համար էլ պարտադիր է և իրականացվում է քաղաքային ու գյուղական տարրական դպրոցներում: Առաջինները նորմալ տիպի տարրական դպրոցներ են՝ 5-ամյա դասընթացով և բաժանվում են երկու մասի. կրտսերի՝ 3 և ավագի՝ 2 տարվա տեղողություն: Գյուղական դպրոցները սովորաբար ունեն ուսուցման երեքամյա դասընթացներ: Տարրական դպրոցներում պարապմունքները սկսվում են հոկտեմբերի 1-ին<sup>2</sup>:

Ցածրաստիճան դպրոցների ուսումնական պլանների մեջ մտնում են հետևյալ առարկաները՝ Թուրքերեն լեզու, ընթերցանություն, գրություն, թվաբանություն, երկրաչափություն, գծագրություն, երգեցողություն և ֆիզկուլտուրա: Բարձրաստիճան դպրոցը, նշվածներից բացի, անցնում է աշխարհագրություն, պատմություն, քաղաքացիական իրավունք: Քաղաքային տարրական դպրոցներում ուսումնական ժամերի քանակը շաբաթվա մեջ հավասար է 26-ի, իսկ յուրաքանչյուր ժամվա տեղողությունը՝ 40—50 րոպեի: Գյուղական դպրոցներում շաբաթվա մեջ ուսումնական ժամերի քանակը նկատելի չափով պակաս է՝ հավասար է 18-ի<sup>3</sup>:

<sup>1</sup> „Yeni Istanbul“, 14.XI.1952.

<sup>2</sup> „Vatan“, 2.XI.1956.

<sup>3</sup> A bu l H. K. Sassani, Education in Turkey, Washington, 1952, p. 17.

Գյուղական տարրական դպրոցներում դասաժամերի կրճատումը բացատրվում է երեխաների զբաղվածությամբ ինչպես տնային, այնպես էլ դաշտային աշխատանքներում: Այդ է պատճառը, որ երեխաների զգալի մասը հազիվ գրել կարդալ սովորելով թողնում է դպրոցը: Երեխաների մեծամասնությունը չի կարողանում սդուվել նույնիսկ ուսման այս խղճուկ փշրանքներից, որովհետև ոչ բոլոր դուռերում դպրոց կա: Այժմ Թուրքիայում ավելի քան 35 հազար դուռից 17 հազարը դպրոց չունի<sup>1</sup>:

Թեև 1952 թվականին Թուրքիայում հաշվվում էր 20773 տարրական դպրոց, բայց զգացվում էր դպրոցների այնպիսի պակաս, ինչպես 1935 թվականին, երբ այդ թիվը ընդամենը 6112 էր: Դա բացատրվում է նրանով, որ Թուրքիայում երեխաների թիվն աճում է ավելի արագ, քան դպրոցների ընդլայնումը: Այժմ այնտեղ 3,5 միլիոն երեխաներից 1,5 միլիոնը ուսուցումից դուրս է մնացել<sup>2</sup>: նույնիսկ Ստամբուլի վիլայեթում, ուր վիճակագրական տվյալներով միայն 5 դուռեր չունեն դպրոցական շենքեր, 10 հազար գյուղական երեխաներ զրկված են դպրոց հաճախելու հնարավորությունից<sup>3</sup>:

Տարրական դպրոցների վիճակը մանավանդ անբավարար է արևելյան վիլայեթներում: Թուրքիայի ազդեցիկ թերթերից մեկը՝ «Վաթանը», խոսելով մեջլիսի նիստերի մասին, գրում է, թե դպրուստտ Ուրֆին (ՓՌՊ) իր ելույթում շեշտել է լուսավորության գործի վատ դրվածքը արևելյան վիլայեթներում<sup>4</sup>: Այստեղ ամեն տարի ավելանում է դպրոցից դուրս մնացած երեխաների թիվը: «Վան սեսի» թերթը հաղորդում է արևելյան վիլայեթներում նախնական դպրոցների լիակատար բացակայության մասին: Թերթի ասելով գրագետների տոկոսը ոչ միայն գյուղերում, այլև շրջկենտրոններում շատ ցածր է<sup>5</sup>: նման վիճակ է տիրում նաև արևելյան այլ վիլայեթներում:

Այսպես Ազրի վիլայեթում, օրինակ, 570 գյուղերից դպրոցներ ունեն միայն 122-ը: Դպրոցական շենքերի պակասի հետևանքով 15.000 երեխաներ զրկված են դպրոց հաճախելու հնարավորու-

<sup>1</sup> „Forum“, 1.IV.1960, № 145, cilt XIII, s. 6.

<sup>2</sup> „Cümhuriyet“, 30.VII.1959.

<sup>3</sup> „Aktis“, 30.XI.1959, № 257, s. 20.

<sup>4</sup> „Vatan“, 11.I.1959.

<sup>5</sup> „Van Sesi“, 17.III.1952 (տե՛ս E. Саркисов, „Положение трудящихся масс в современной Турции“, стр. 136—137.

թյունից՝, Դիարբեքիում (վիլայեթում) 652 գյուղերից միայն 183-ում կան դպրոցներ, իսկ անգրագետ երեխաների թիվը հասնում է 28 հազարի<sup>1</sup>։

Այսպիսով, դպրոցական շենքերի անբավարարության հետևանքով ժամանակակից Թուրքիայում մեծացել է ուսուցման ցանցից զուրս մնացած երեխաների քանակը։ Եթե դպրոցների աճը ընթանա այժմյան տեմպերով, ապա ընդհանուր նախնական կրթության խնդիրը անտարակույս, կլուծվի միայն շատ տասնամյակներ հետո։

Թուրքական դպրոցը գտնվում է աղքատիկ վիճակում։ Դպրոցական շենքերը չեն վերանորոգվում։ Անգամ Ստամբուլում շատ դպրոցներ տեղավորված են սարայներում և պահեստաշենքերում։ Կոնյայի վիլայեթում 32 դպրոցական շենքեր խարխլված են և անհետաձգելի վերանորոգման կարիք են զգում<sup>2</sup>։ Գյուղական շատ դպրոցներ տեղավորված են կիսաքանդ շենքերում, ուսուցման համար բոլորովին անհարմար սենյակներում, որոնք հաճախ նույնիսկ պատուհաններ չունեն։ Նրանցից շատերը չեն լուսավորված և չեն տաքացվում։

Երկիրը ագրեսիվ բլոկների մեջ ներքաշող կառավարող շրջանները «ժամանակ չունեն» զբաղվելու դպրոցական գործով։ Ռազմական, կես միլիտանոց բանակի պահպանման, բազաների կառուցման և նման այլ նպատակներով ծախսվում են հսկայական միջոցներ, մինչդեռ լուսավորությանը միայն աննշան գումարներ են հատկացվում։

1940—1955 թվականներին տարրական դպրոցների կարիքները համար հատկացվել է 1,5 միլիարդ լիր<sup>3</sup>, այսինքն գրեթե երկու անգամ պակաս, քան այն գումարը, որ միայն 1955 թվականին է արվել ուղղակի ռազմական ծախսերին։ Լուսավորության կարիքներին տրվող հատկացումները գնալով կրճատվում են։ Այսպես, պետական բյուջեի քննարկման ժամանակ ժողովրդա-ուսպուրիկական պարտիայի դեպուտատ Թուրխան Ֆեյզիօղլուն ընդգծեց, որ լուսավորության միջնորդության կապիտալ շինարարության հատկացումները 1958 թ. նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել է 18 միլիոն լիրով<sup>4</sup>։

<sup>1</sup> „Aktis“, 30.VI.1959, № 257, s. 20.

<sup>2</sup> Նույն տեղում։

<sup>3</sup> „Vatan“, 5.II.1953.

<sup>4</sup> „Zafer“, 27.VII.1956.

<sup>5</sup> „Ulus“, 1.III.1958.



Երևիսանների դպրոց շահախելու հիմնական պատճառներից մեկն էլ աշխատավոր զանգվածների նյութական ծանր դրությունն է: Ցածր աշխատավարձը աշխատավորների հսկայական մեծամասնությանը թույլ չի տալիս իր երեխաների ուսուցման ծախսերը հոգալ:

Թուրքական մամուլի տվյալներով մի աշակերտ պահելու ընդհանուր ծախսերը 1958 թվականին, 1957 թ. համեմատությամբ, 60%-ով աճել էին, 100%-ով բարձրացել էին առաջին անհրաժեշտության ապրանքների գները:

Այսպես, օրինակ՝ թուրքական որոշ թերթեր հրապարակել էին հետևյալ տվյալները:

1957 թ.	1958 թ.
1 տետր 3 լիր	9 լիր
1 գրիչը 160 դուրուշ	200 դուրուշ
Դռնաներկեր 12 դուրուշ	300 դուրուշ <sup>1</sup>

Այսպիսով 1958 թ. մեկ աշակերտի վրա ծախսվում էր 626 լիր<sup>2</sup>: Հետևապես, գյուղացին, որի տարեկան միջին եկամուտը 1000 լիրից չէր անցնում<sup>3</sup>, չէր կարող ձեռք բերել թեկուզ դպրոցական ամենաանհրաժեշտ պիտույքները:

Այսպիսի ծախսեր ի վիճակի չէր կատարելու թուրքական աշխատավորությունը, որի ամսական աշխատավարձը, ինչպես 1957 թ. ապրիլին գրել է «Ուլուս» թերթը, տատանվում էր 180—200 լիրի միջև: Դրա համար էլ բոլորովին պատահական չէ, որ Թուրքիայի տարրական դպրոցներում նկատելի է սովորողների մեծ մաղում: Քաղաքներում դպրոցն ընդունված երեխաների միայն 67% է ավարտում 5 դասարան, իսկ գյուղերում 34%-ը<sup>4</sup>: Սովորողների մաղումը ավելի մեծ է աղջիկների մեջ: Սովորող աղջիկների թիվը քաղաքներում 25%-ով, իսկ գյուղերում՝ 37%-ով պակաս է տղաներից<sup>5</sup>:

Թողնելով դպրոցը, 16 տարեկանից փոքր հազարավոր երեխաներ աշխատում են երկրի արհեստանոցներում և ֆաբրիկաներում, վաստակելով խղճով կոպեկներ: «Սոն պոստա» թերթը նշում է, որ «...թուրք երեխաների համար այլ ելք չկա, բացի մեռնելուց

<sup>1</sup> «Cümhuriyet», 11.IX.1958.

<sup>2</sup> «Ulus», 28.IX.1958.

<sup>3</sup> «Vatan», 29.XII.1958.

<sup>4</sup> «Ulus», 20.VI.1957.

<sup>5</sup> Նույն տեղում:

կամ էլ՝ մի կտոր հացի համար ուժից վեր ստրկական աշխատանքից<sup>1</sup>։ Նույն թերթը գրում է, թե չհաշված գաղութային երկրները, երեխաների աշխատանքի շահագործմամբ թուրքիան ռեկորդ է խփել։ Թուրքական իշխանությունները չեն կատարում անչափահասների աշխատանքի մասին միջազգային կոդեքսի պահպանումը<sup>2</sup>։

Հազարավոր թուրք երեխաներ, չկարողանալով աշխատանք ճարել, մնում են բախտի քմահաճույքին։ Նրանք զբաղվում են գողություններով, ողորմություն են խնդրում, քարշ են գալիս շուկաներում։ Միայն Ստամբուլում, «Ջումհուրիեթ» թերթի հաղորդմամբ, 1958 թվականի հունվարին գրանցված էին դպրոցական հասակի 15 հազար անապաստան երեխաներ<sup>3</sup>։ Եվ իզուր չէ, որ թուրքական նախկին մայրաքաղաքը «դժբախտ երեխաների քաղաք» համբավն է վայելում<sup>4</sup>։

Հատուկ հանձնաժողովի տվյալներով անապաստանների թիվը երկրում հավասար է 250—300 հազարի, որոնցից դաստիարակության են վերցված ընդամենը 4000 անապաստաններ<sup>5</sup>։ Դժբախտ այս երեխաների ճակատագիրը ամենևին չի անհանգստացնում Թուրքիայի կառավարող շրջաններին։ «Ուլուս» թերթը դառնություններ գրում էր. «Ճիշտ է գիտակցել, որ մեր հասարակությունը սովորել է տեսնել թշվառ, աղքատ և անապաստան երեխաներ, որոնց լքել են մայրերը, վաճառել են հայրերը, որոնք արհեստականորեն դարձել են շուկաներում ողորմություն աղերսող հաշմանդամ թափառաշրջիկներ,— այսպիսի հաղորդումները սովորական են մեր թերթերի էջերում»<sup>6</sup>։

Անհրաժեշտ քանակի մանկավարժական կադրերի բացակայությունը տարրական կրթության սիստեմի առաջ ծառայած խնդիրներից է։ Պաշտոնական տվյալներով ընդհանուր տարրական կրթություն մտցնելու համար անհրաժեշտ են 60 հազար մանկավարժներ<sup>7</sup>։ Ինչպես թուրքական մամուլն էր հաղորդում, ուսուցիչների պակասի պատճառով երկրի շատ դպրոցներում դասերը 1958 թ. չէին սկսվել, մի շարք դպրոցներ էլ փակվել էին։ Կոնյայի վիլայեթում, օրինակ, 50 դպրոցներ չէին կարողացել իրենց պարապմունքները

<sup>1</sup> „Akşam“, 8.IX.1959.

<sup>2</sup> Կապիտալիստական երկրների մեծամասնությունում պաշտոնապես արգելված է մինչև 14 տարեկան հասակի երեխաների աշխատանքը։

<sup>3</sup> „Cümhuriyet“, 10.I.1958.

<sup>4</sup> „Yeni ışık“, 12.VI.1954.

<sup>5</sup> „Ulus“, 23.IV.1957.

<sup>6</sup> Նույն տեղում։

<sup>7</sup> „Cümhuriyet“, 28.VIII.1959.

սկսել<sup>1</sup>։ Անկարայի վիլայեթում նույն պատճառով 1959 թ. 69 դուռական դպրոցներ փակվեցին<sup>2</sup>։

1957 թվականի հունվարին «Հյուրիեթ» թերթը հոդված հրատարակեց «Պահանջները շատ են, իսկ ուսուցիչները՝ քիչ» բնորոշ վերաբերմամբ։ Նրա հեղինակը հայտնում էր, որ եթե մոտիկ ապագայում ուսուցիչների պատրաստման բնագավառում վճռական միջոցներ չձեռնարկվեն, «ապա ուսուցիչների նկատմամբ երկրի պահանջները կբավարարվեն միայն 70 տարի հետո»։

Իրենք՝ ուսուցիչները, ապրում են նյութական ծանր պայմաններում։ Նրանց միջին աշխատավարձը կազմում է ամսական 275 լիր<sup>3</sup>, այն ժամանակ, երբ միջին ընտանիքի ապրուստի անհրաժեշտ մինիմումը 1958 թ. 709 լիր էր<sup>4</sup>։ Այդպիսի աշխատավարձով ուսուցիչները, իհարկե, չեն կարող քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծել իրենց ընտանիքների համար։ Այդ պատճառով էլ նրանցից շատերը ստիպված են դասերից դուրս այլ գործերով պարապել կամ էլ՝ ընդհանրապես փոխել իրենց մասնագիտությունը։ «Ջումհուրիեթ» թերթի հաղորդմամբ Կոնյայեում 1958 թ. դեկտեմբերին 21 ուսուցիչներ ցածր աշխատավարձի պատճառով թողնում են մանկավարժական աշխատանքը։

Ուսուցիչների աղքատ վիճակը անդրադառնում է պարապմունքների որակի վրա, ցածրանում են դեպի աշակերտներն ունեցած ակադեմիական պահանջները։ Դպրոցում տիրող այդ տենդենցը սուր քննադատության է ենթարկվել թուրքական մամուլի էջերում «Վաթան» թերթը, ընդգծելով տարրական դպրոցների աշակերտների պատրաստականության ցածր մակարդակը, առաջին հերթին դնում է դասավանդման մակարդակի, ապա՝ դեպի աշակերտներն ունենալիք պահանջկոտության բարձրացման հարցը<sup>5</sup>։ Ուսուցիչները իրենց դիտելիքների հարստացման ու բարձրացման համար ո՛չ ժամանակ տնեն, ո՛չ էլ միջոցներ։

Այսպիսով, աշխատավորների նյութական ծանր վիճակը, որը հետևանք է ամերիկյան իմպերիալիստներին ենթակա թուրքական կառավարող շրջանների հակաժողովրդական քաղաքականության, դպրոցական շենքերի և որակյալ ուսուցիչների սուր պահանջը խոչընդոտում են ընդհանուր նախնական կրթության իրականացումը։

<sup>1</sup> „Cümburiyet“, 22.X.1958.

<sup>2</sup> Նույն տեղում, 28. VII. 1959:

<sup>3</sup> „Hürriyet“, 14.1.1958.

<sup>4</sup> Նույն տեղում, 16. XI, 1958. (1 լիրան = 100 դուրուշի)։

<sup>5</sup> „Vatan“, 10.XI.1956.

Թուրքիայում գոյութիւն ունի հանրակրթական միջնակարգ դպրոցի միասնական տիպ: Միջնակարգ դպրոցում ուսուցման տևողութիւնը 6 տարի է (3 տարի միջնակարգ միջնակարգ դպրոցում՝ առաջին աստիճան, և 3 տարի լիցեյում՝ երկրորդ աստիճան): Վերջին վեցերորդ դասարանը տրոհւում է երկու բաժանմունքի՝ լեզվական և բնական-մաթեմատիկական: Աստիճաններից ամեն մեկը կարող է գոյութիւն ունենալ իբրև ինքնուրույն դպրոց:

Միջնակարգ դպրոցի ուսուցման ծրագիրը բովանդակում է հանրակրթական, ինչպես նաև հատուկ մասնագիտական կրթութեան առարկաներ: Դպրոցում աղջիկները սովորում են երեխային խնամել, տնամարտութիւն, կար ու ձև: Իսկ տղաները ծանոթանում են տեխնիկական և առևտրական առարկաներին<sup>1</sup>: Լիցեյում մեծ ուշադրութիւն է դարձւում օտար լեզուների ուսումնասիրմանը: Միջնակարգ դպրոցն ավարտածները կարող են զբաղեցնել ցածր կարգի պաշտոններ, իսկ լիցեյն ավարտածները կարող են ընդունվել բարձրագույն դպրոցներ: 1958—1959 ուստարում Թուրքիայում գործում էին ընդամենը 503 միջնակարգ դպրոցներ<sup>2</sup>: Այս թիվը միանգամայն անբավարար է: Միայն Ստամբուլ քաղաքում 1956—1957 ուսումնական տարում միջնակարգ դպրոցների համար նախատեսված էր կառուցել 28 դպրոցական նոր շէնք (10 դասարաններով). դրա համար պահանջւում էր 14 միլիոն լիր: Այնինչ, լուսավորութեան մինիստրութիւնը հատկացրեց ընդամենը 4,5 միլիոն լիր<sup>3</sup>: Ուրեմն պահանջւող 28-ի փոխարեն հնարավոր էր կառուցել միայն 9 դպրոցական շէնք: Դպրոցական շէնքերի պակասի հիմնական պատճառներից մեկն է, որ Թուրքիայում այժմ էլ միջնակարգ դպրոցի հասակ ունեցող 5 միլիոն երեխաներ չեն հաճախում դպրոց: Վիճակագրական տվյալներով 1955—1956 ուսումնական տարում սովորողների թիվը կազմում էր 138,461, իսկ 1956—1957 ուստարում 126,002 աշակերտ: Եթե տոկոսային հարաբերութեամբ վերցնենք, կտեսնենք, որ 1955 թ. 1950 թ. համեմատութեամբ 9,6%-ով պակաս դպրոցական հասակի երեխաներ են ընդգրկված դպրոցներում<sup>4</sup>: ՅՈՒՆԵՍԿՈ-ի վիճակագրական տվյալներով Թուրքիայում

<sup>1</sup> „Vatan“, 17.VIII.1958.

<sup>2</sup> „Vatan“, 6.XI.1959. Այս թիվ մեջ չեն մտնում ազգային փոքրամասնութիւնների (հույներ, հայեր, հրեաներ), ինչպես նաև օտարերկրյա զբոսաշրջները:

<sup>3</sup> „Cümhuriyet“, 29.VIII.1958.

<sup>4</sup> „Vatan“, 14.X.1858.

Իրջնակարգ դպրոցի հասակ ունեցող երեխաներից դպրոցում ընդ-  
դրկվածների քանակը 10%-ից պակաս է<sup>1</sup>։

Այս, առանց այն էլ փոքր թվից շատ մեծ է սովորողների մա-  
դումը՝ ինչպես տարրական, այնպես էլ միջնակարգ դպրոցում։  
1957 թ. դպրոցն ավարտել են 16,382 աշակերտ։ Դա կազմում է  
դպրոցն ընդունվածների ընդհանուր թվի 30%-ը<sup>2</sup>։ Այս հանգաման-  
քը, առաջին հերթին, առնչվում է բնակչության մեծամասնության  
ցածր կենսամակարդակի հետ։

Թուրքական մամուլի էջերում ավելի հաճախակի են երևում  
հողմածներ միջնակարգ դպրոցներում ուսուցիչների պակասի մա-  
սին։ «Ջումհուրիեթ» թերթը գրում էր, որ Կավազակ գյուղում (Սիվասի  
վիլայեթ) տեղական միջնակարգ դպրոցը մնացել էր առանց մի  
շարք առարկաներ դասավանդող ուսուցիչների, որի հետևանքով էլ  
3 դասարաններում պարապմունքներ չեն անցկացվել<sup>3</sup>։ Ուսուցիչների  
անբավարար քանակի մասին էր գրում նաև «Հյուրիեթ» թերթը, որը  
նկատում էր, թե մի շարք առարկաների գծով ուսուցիչներ չլիքելու  
պատճառով Ստամբուլում միայն մեկ օրում 200 ազատ ժամ էր  
մնացել<sup>4</sup>։

Միջնակարգ դպրոցների ուսուցիչների թիվը ներկայումս հաս-  
նում է 2995։ Դա նշանակում է, որ 100 աշակերտին ընկնում է 2,3  
ուսուցիչ<sup>5</sup>։

«Ջումհուրիեթ» թերթի տեղեկություններ, լուսավորության օր-  
գանները բողոքում են միջնակարգ դպրոցների և լիցեյների սովոր-  
ողների ցածր առաջադիմության մասին։ Որպես պատճառ՝ մատ-  
նանշվում է դասագրքերի և ուսուցիչների անբավարարությունը<sup>6</sup>,  
ուսուցման և դաստիարակման մեթոդների հետամնացությունը։ Սո-  
վորողը չի ստանում այնպիսի գիտելիքներ, որոնք կօգնեին նրան  
գործնական աշխատանքում՝ դպրոցն ավարտելուց հետո։

Միջանկյալ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո սովորողն  
իրավունք ունի ընդունվել լիցեյ։ Ուսուցումը լիցեյում վճարովի է  
և դրա համար էլ այն մատչելի է միայն ոմեկոր ընտանիքների երե-  
խաների համար։ Երկրում 1958—1959 թթ. կար 120 լիցեյ, որոն-

<sup>1</sup> „Коммунист“, 17.II.1962.

<sup>2</sup> „Ulus“, 16.I.1958.

<sup>3</sup> „Cumhuriyet“, 23.X.1958.

<sup>4</sup> „Hürriyet“, 18.XII.1957.

<sup>5</sup> „Vatan“, 14.X.1958.

<sup>6</sup> „Forum“, 1.III.1959, № 119, s. 20.

ցում սովորում էին 44643 աշակերտ<sup>1</sup>։ Լիցեյների ցանցի ընդլայնումը ունեցել է հետևյալ պատկերը։ 1923 թ. եղել է 29 լիցեյ՝ 1241 աշակերտով, 1950 թ. 88 լիցեյ, որոնք տվել են 22,169 շրջափակարտներ<sup>2</sup>։

Լիցեյները հիմնականում տեղաբաշխված են մեծ քաղաքներում։ Սրանց ուսումնական ծրագրերում մեծ տեղ է հատկացված օտար լեզուների ուսումնասիրությանը, ապա թուրքերեն լեզվին ու գրականությանը, քիմիային, ֆիզիկային, մաթեմատիկային, պատմությանն ու փիլիսոփայությանը։

\* \* \*

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո թուրքական դպրոցներում ուժեղացել է կրոնի ազդեցությունը։ Այդ տենդենցը հատկապես նկատելի է դարձել դեմոկրատական պարտիայի՝ իշխանության գլուխ անցնելուց հետո (1950)։ Դեռևս 1949 թ. Անկարայի համալսարանում բացվեց աստվածաբանական ֆակուլտետ։ Հաջորդ տարում խախտելով աշխարհիկ ուսուցման սկզբունքը, թուրքական կառավարությունը տարրական դպրոցներում մտցրեց կրոնի դասավանդում<sup>3</sup>։ Այժմ Թուրքիայում տարրական դպրոցների 99% -ը կորցրել է աշխարհիկ դպրոցի բնույթը<sup>4</sup>։

1956 թվականին կրոնի դասավանդում մտցվեց նաև միջնակարգ դպրոցներում ու լիցեյներում։ Կրոնի դասատուներ պատրաստելու նպատակով վերականգնվեցին իմամների դպրոցները։ Այժմ երկրում գործում են նման 16 դպրոցներ<sup>5</sup>։

Դպրոցներում կրոնական ուսուցման վերականգնումը թուրքական իշխանությունների հետադիմական քաղաքականության ուղղակի հետևանքն է։ Կրոնը հենց այն միջոցն է, որը երիտասարդությանը դաստիարակում է հնազանդության ոգով։ Պայքարելով առաջադիմական հայացքների տարածման դեմ, թուրքական կառավարող շրջանները դպրոցը դարձնում են տգիտության տարածման օջախ։

Խոսելով տառամական հաստատություններում կրոնը իբրև առարկա մտցնելու նպատակների մասին, «The Islamic Review»

<sup>1</sup> „Zafer“, 7.XI.1957, տե՛ս „Vatan“, 6.XI.1959.

<sup>2</sup> „Ulus“, I.X.1957, տե՛ս նաև Milli eğitim 1932—1952, İstatistik özeti, № 7, s. 4.

<sup>3</sup> Abul N. K. Sassani. Education in Turkey, Washington, 1952, p. 17.

<sup>4</sup> „Коммунист“, 17.II.1962.

<sup>5</sup> „The Islamic Review“. September, 1957, p. 15.

հանդեսը գրում էր, թե «...կրոնը հանդիսանում է թուրքական ռեսպուբլիկայում կոմունիստական գաղափարների թափանցման դեմ մղվող պայքարի լավագույն միջոցը»<sup>1</sup>:

Իշխանության գլուխ կանգնած դեմոկրատական պարտիայի ծրագրում հատուկ տեղ էր տրված «գաղտնի կոմունիզմի» դեմ մղվող պայքարին: «Ակշամ» թերթը հայտնում էր, որ Մենդերեսի կառավարությունը մշակել էր երեք մինիստրների՝ լուսավորության, ազգային պաշտպանության և ներքին գործերի մինիստրների համագործակցության ծրագիր՝ առասպելական «գաղտնի կոմունիզմի» դեմ պայքարելու համար<sup>2</sup>:

Այդ նպատակով լուսավորության մինիստրության գծով նախատեսվում էր տարրական և միջնակարգ դպրոցներում շաբաթական 3 գասաժամ մտցնել՝ «կոմունիզմի վնասը» բացատրելու համար: Ամեն շաբաթ մինիստրությունը պետք է դպրոցներն ուղարկեր հատուկ բրոշյուրներ, որոնք շեշտեին, որ մահմեդական կրոնն ու թուրքական ազգային կառուցվածքը անհամատեղելի են կոմունիստական աշխարհի գաղափարների հետ:

Մենդերեսի կառավարությունը հայտարարեց, թե աճող սերնդի դաստիարակումը պետք է քաղաքականությունից, գաղափարական ամեն տեսակ ազդեցությունից դուրս լինի: Իրականում՝ «կյանքից դուրս, քաղաքականությունից դուրս դպրոցը սուտ և կեղծիք է»<sup>3</sup>: Վարագուրվելով «ապաքաղաքականության» բուրժուական թեորիայով, թուրքական իշխանությունները կրթության սիստեմի մեջ իրականում մեծ տեղ են հատկացրել գաղափարական դաստիարակությանը:

Թուրքական ղեկավարները ոչ մի միջոցից չեն խորշում երիտասարդությունը նացիոնալիզմի, պանթյուրքիզմի և շովինիզմի ոգով դաստիարակելու համար: Բուրժուազիայի գաղափարական զինանոցում առանձնահատուկ տեղ է տրվում ռասայական տեսություններին՝ որպես ամբողջ բնակչության և, մասնավորապես, երիտասարդության գաղափարական թմրեցման միջոցի: Սովորողներին այն միտքն է ներարկվում, թե թուրքերը բարձր ռասայի ազգ են: Ժողովրդա-ռեսպուբլիկական պարտիայի ծրագրում կրթության և դաստիարակության բնագավառի մասին ասված է, որ «թուրքական

<sup>1</sup> „The Islamic Review“. September, 1957, p. 14.

<sup>2</sup> „Akşam“, 6.1.1958.

<sup>3</sup> Վ. Ի. Լեւին, Երկեր, հատ. 28, էջ 93:

ազգը բարձր է մյուս ազգերից, նա ունի ժառանգաբար անցնող մի շարք առանձնահատուկ արժանիքներ<sup>1</sup>:

Դաստիարակման նմանօրինակ գաղափարական բովանդակությունը ակնհայտ երևաց միջնակարգ դպրոցների և լիցեյների համար հրատարակված պատմության քառահատոր դասագրքում՝ «Թարիխում» (պատմություն): «Թարիխի» էջերում լայն արտացոլում են գտել բուրժուա-նացիոնալիստական, ռասիստական գաղափարներն ու ուսմունքները: Թուրքիայի պատմությունը, — ասված է «Թարիխում», — թուրք ազգին բացատրում է, որ նրա ռասան իրենից ներկայացնում է աշխարհում բոլոր ժողովուրդներից և ազգերից ամենաազնվագույնն ու բարձրագույնը, որի խելքով և ընդունակություններով ցրվեց հարյուրամյակների ընթացքում մարդկության գլխին կուտակված սև ամպը:

Թուրքիայի պատմությունը թուրք ազգին բացատրում է, որ նրա ռասան իր տաղանդով իրեն հավասարը չունի՝ ինչպես ռազմական գործում. պետության կառավարման և քաղաքականության մեջ, այնպես էլ գիտության, գրականության, արվեստի. երաժշտության, ճարտարապետության և արվեստի մյուս բնագավառներում:

Թուրքիայի պատմությունը թուրք ազգին բացատրում է, որ նրա ռասայի տիրապետությունը տարածվել է երկրագնդի բոլոր անկյուններում, ուր մարդը ոտք է դրել<sup>2</sup>:

Լիցեյների առաջին դասարանների համար հրատարակված Նիյազի Աքշիվի և էմին Օկտայի պատմության դասագրքում ասված է, թե թուրքերը «...որոնք անցել են քարե և երկաթե դարաշրջանները, Միջին Ասիայից այլ վայրեր տեղափոխվելիս՝ տեղական ժողովուրդներին սովորեցրել են հողագործություն, կենդանիներին ընտելացնելը և մետաղամշակություն»<sup>3</sup>:

Ճգնելով ապացուցել, թե թուրքերը ամենահին ժողովուրդն են, թուրքական բուրժուական պատմաբանները, անտիկ աշխարհի պատմությունը սկսում են Թուրքիայի պատմությամբ: Ուրիշ ժողովուրդների և երկրների պատմությունը քիչ տեղ է տրվում կամ ամենևին տեղ չի տրվում, ինչպես օրինակ Ուրարտուն:

Լիցեյների 2-րդ դասարանների համար նախատեսված միջին դարերի պատմության դասագրքում պատմական նյութն այնպես է

<sup>1</sup> «Народный учитель», 1934, № 1, стр. 111.

<sup>2</sup> „Tarih“, cilt. IV, s. 259.

<sup>3</sup> Hiyazi Akşif, Emin Oktay, Tarih lise 1 sınıf, İstanbul, 1957, s. 18.



բաշխված, որ դարձյալ ամենամանրամասն կերպով շարադրվում է միայն Թուրքիայի պատմությունը<sup>1</sup>:

Թուրքական ազգային-շովինիստները կաշվից դուրս են դալիս ապացուցելու, թե թուրքերը պատկանում են ոչ թե մոնղոլական, այլ արիական ռասային: Թուրքական ռեակցիոն գաղափարախոսները ըստ երևույթին շենք ըմբռնում, որ «բարձր ռասայի» առասպելը երբեք ոչ մի դեր չի խաղացել և չի էլ խաղա ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու կուլտուրական զարգացման մեջ: «Թարիխ» և մյուս ղասադրքերի էջերում պատմական իրադարձությունների ղնահատականը տրվում է իդեալիստական դիրքերից:

Հասարակական ղարգացման պատմությունը թուրքական բուրժուական պատմաբանները հանգեցնում են պետական առանձին ղեկավարների գործունեությանը: Ազգային-ազատագրական պայքարում թուրքական ժողովրդի հաղթանակը նրանք վերագրում են Քեմալի անձնական հատկություններին:

«Մուստաֆա Քեմալի ջանքերի ու ձգտումների հանրագումարը, որի ղեկավարությունը շատ ռազմաճակատներում կատարվում էր հարձակում և պահպանվում էր պաշտպանություն, կազմում է անկախությունը»<sup>2</sup>: Այլ կերպ ասած՝ եթե չլիներ Քեմալը, չէր լինի նաև ազգային-ազատագրական պայքարը:

Դասագրքերում ժխտվում է երկրում բացի թուրքերից այլ ազգերի առկայությունը:

Երիտասարդության գաղափարական մշակումը ռեակցիոններները վարում են նաև սպորտային, բոյսկառույան կազմակերպությունների միջոցով: Բոյսկառույան կազմակերպությունները («isciler» — հետապնդող) երիտասարդության խոշոր կազմակերպություններ են, որոնք ընդգրկում են նշանակալից թվով դպրոցներ: Այդ կազմակերպության մեթոդները ընդօրինակված են «Հիտլերյուգենդ» ֆաշիստական հայտնի կազմակերպությունից:

Այդ կազմակերպությունը մեծ տեղ է տալիս ռազմական գործին: Այժմ Թուրքիայի բոլոր միջնակարգ և բարձրագույն դպրոցներում պարտադիր ռազմական ուսուցում է մտցված: Թուրքական կառավարող շրջանները ոչ մի միջոցից չեն խորշում՝ երիտասարդությանը շովինիստական ոգով դաստիարակելու համար:

<sup>1</sup> Hiyazi Akşif, Tarih lise II sınıf, İstanbul, 1956.

<sup>2</sup> „Tarih“, cilt, IV, s. 56.

Շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Թուրքիայում տարրական ու միջնակարգ կրթության գործը խոր ճգնաժամ է ապրում: Բնակչության 70%-ը անգրագետ է, դպրոցական հասակի երեխաների 40 տոկոսը չի կարող հաճախել դպրոց: Դպրոցների և ուսուցիչների անբավարարության հետևանքով այժմ երկրում լայն տարածում են գտել կրոնական դպրոցները, որոնք ուսուցումը վարում են ըստ դուրանի:

Թուրքիայի կառավարող շրջանները, որոնք երկիրը ներգրավել են ռազմա-քաղաքական ագրեսիվ բլոկների մեջ և նրա ամբողջ ներքին ու արտաքին քաղաքականությունը ենթարկել ամերիկյան իմպերիալիստներին, անտեսել են ժողովրդական կրթության գործը:

Ռազմական նպատակներով ծախսվում է բյուջեի մոտ 60%-ը, այն ժամանակ, երբ լուսավորությանը տրվում է բյուջետային հատկացումների 1,8%-ը միայն:

Թուրքական մամուլը վերջին ժամանակներս լայնորեն քննարկում է ժողովրդական կրթության հարցերը: Թուրքիայի այժմյան կառավարությունը նախապատրաստել է լուսավորության ծրագրի նոր նախագիծ, որի առաջնահերթ խնդիրն է լինում երկրում անգրագիտության վերացումը:

Р. Е. ДАНЕЛЯН

## СОСТОЯНИЕ НАЧАЛЬНОГО И СРЕДНЕГО ОБРАЗОВАНИЯ В СОВРЕМЕННОЙ ТУРЦИИ

### Резюме

В статье рассматривается состояние начального и среднего образования в современной Турции. На основании конкретных материалов, взятых в основном из турецкой прессы, автор освещает такие вопросы, как сущность реформ в области просвещения, программы обучения, острая нехватка школьных зданий и педагогических кадров и др.

Автор доказывает, что плачевное состояние начального и среднего образования в Турции—результат антинародной политики турецких правящих кругов, втянувших страну в агрессивные военно-политические блоки.

Թ. Գ. Ս Ա Հ Ա Կ Ց Ա Ն

1920—1923 ԹԹ. ՍՈՎԵՏԱ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հետպատերազմյան տարիներին Թուրքիայում մեծ թվով գրականություն է լույս տեսել Թուրքիայի հանրապետական շրջանի պատմության վերաբերյալ, որտեղ թուրք հեղինակները այս կամ այն առիթով անդրադառնում են Սովետական Միության և Թուրքիայի փոխհարաբերությունների գրեթե բոլոր հարցերին՝ լուսաբանելով դրանք հակապատմական դիրքերից: Չկա սովետա-թուրքական հարաբերությունների պատմության տարբեր էտապներին վերաբերող էական որևէ հարց, որը չաղավաղվեր կամ բացահայտորեն չնենգափոխվեր թուրք հեղինակների՝ պատմաբանների, պետական ու ռազմական գործիչների, ժուռնալիստների հրատարակած բազմաթիվ աշխատություններում, քաղաքական հուշերում, պատմության դասագրքերում և այլն:

Սույն հոդվածի շրջանակներում հնարավոր չէ վեր հանել և մերկացնել այդ ֆալսիֆիկացիան ամբողջովին: Հոդվածի նպատակն է ցույց տալ սովետա-թուրքական հարաբերությունների հաստատման ժամանակաշրջանի պատմության մի քանի հարցերի սխալ, միտումնավոր լուսաբանումը և պատմական փաստերի հիման վրա հերքել թուրք հեղինակների անհիմն, հակազիտական տեսակետներն ու գնահատականները:

\* \* \*

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո ընդունված առաջին իսկ դեկրետներում ամենայն պարզությամբ շարադրված էին սովետական կառավարության արտաքին քաղաքականության վեհ սկզբունքները՝ մեծ ու փոքր ժողովուրդների իրավահավասարության ճանաչում միջազգային կյան-

քում, ազգերի ինքնորոշման իրավունքի հարգում, ուրիշ երկրների ներքին գործերին միջամտելու դատապարտում, տարբեր հասարակական կարգ ունեցող պետությունների միջև խաղաղ գոյակցության հաստատում և այլն:

Հայտնի է, թե սովետական արտաքին քաղաքականության հիշյալ սկզբունքները ինչպիսի հզոր արձագանք գտան ամբողջ աշխարհում: Սովետական կառավարության առաջին արտաքին քաղաքական ելույթները՝ 1917 թվականի նոյեմբերի 8-ին ընդունված հաշտության մասին դեկրետը, արևելքի աշխատավոր մուսուլմաններին ուղղված ժողկոմսովետի 1917 թվականի դեկտեմբերի 3-ի դիմումը մեծագույն ազդեցություն ունեցան արևելքի ձնշված ու կեղեքված ժողովուրդների գիտակցության վրա և հզոր խթան հանդիսացան նրանց ազատագրական պայքարի համար:

Հոկտեմբերյան հեղափոխության անմիջական ազդեցության ներքո արևելքի երկրներում ծավալված ազգային-ազատագրական շարժումների արտահայտություններից մեկն էլ թուրք ժողովրդի մղած հակաիմպերիալիստական պայքարն էր: Հայտնի է, թե այդ պայքարում հաղթանակն ապահովելու գործում ինչպիսի կարևոր դեր խաղաց նորաստեղծ Սովետական պետության բարոյական, նյութական ու ռազմական մեծ օգնությունը:

1920 թ. ապրիլի 23-ին Անկարայում գումարված Թուրքիայի Ազգային մեծ ժողովի առաջին արտաքին քաղաքական ակտը դա ժողովի անունից նրա նախագահ Մուստաֆա Քեմալ փաշայի ապրիլի 26-ին ուղարկած նամակն էր սովետական կառավարության ղեկավար Վ. Ի. Լենինին, որտեղ նորակազմ քեմալական կառավարությունը օգնություն է խնդրում Սովետական Ռուսաստանից:

Պատասխանելով Քեմալի նամակին, Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինը հայտնում էր, որ սովետական կառավարությունը պատրաստ է անմիջապես հաստատել դիվանագիտական ու հյուպատոսական հարաբերություններ և այլն<sup>1</sup>:

Սովետական Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ավելի կարեւոր նշանակություն ունեւր վերջինիս համար, որովհետև Անկարայի կառավարության միջազգային և ներքին դրությունը 1920 թվականի գարնանը և ամռանը շատ ծանր էր: 1920 թ. ապրիլին կայա-

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս «Документы внешней политики СССР», т. II. Госполитиздат, М., 1958, стр. 555.

ցած Սան-Ռեմոյի կոնֆերանսում դաշնակից տերութիւնները մշակեցին Թուրքիայի հետ կնքվելիք հաշտութեան պայմանագրի նախագիծը։ Ֆրանսիան համաձայնվում էր պաշտպանել Անգլիայի մերձավորարևելյան քաղաքականութիւնը։ Երկրի ներսում տեղի ունեցան մի շարք ապստամբութիւններ քեմալականների դեմ, հարձակման անցալ այսպես կոչված «խալիֆաթական բանակը»։ Միևնույն ժամանակ հունական զորքերը 1920 թ. հունիսին ձեռնարկելով մեծ առաջնադաշում Անատոլիայում ու Թրակիայում գրավեցին Ադրիանուպոլիսը, Բրուսան, Բալըքեսիրը, էրեզլին և մի քանի այլ քաղաքներ։ 1920 թ. օգոստոսի 10-ին սուլթանական կառավարութիւնը հարկադրված էր Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և մյուս տերութիւնների հետ ստորագրել Սևրի դաշնագիրը, որով Արևելյան Թրակիան Ադրիանուպոլիսի հետ, ինչպես նաև Իզմիրի շրջանը, անցնում էին Հունաստանին, Մոսուլը՝ Անգլիային, սիրիական սահմանին հարող տերիտորիան՝ Ֆրանսիային և այլն։ Կապիտուլյացիաների ուժով մնում էր անձեռնմխելի, նեղուցները տրվում էին միջազգային հանձնաժողովի կառավարմանը՝ համարվելով լրաց բոլոր երկրների առևտրական և ռազմական նավերի համար, ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ, Թուրքիային արգելվում էր կոնցեսիաներ տալ առանց դաշնակիցների հատուկ ֆինանսական հանձնաժողովի թույլտվութեան և այլն։

Ինչպե՞ս է լուսաբանվում սովետա-թուրքական հարաբերութիւնների սկզբնավորման ժամանակաշրջանի պատմութիւնը թուրք հեղինակների կողմից։

Պետք է ասել, որ ֆալսիֆիկացիան սկսվում է հենց այստեղից։ Նենգափոխելով պատմական իրականութիւնը, անտեսելով այն ժամանակ ստեղծված իրադրութիւնը և վերոհիշյալ դիվանագիտական փաստաթղթերը, թուրք պատմաբանները գործն այնպես են ներկայացնում, թե իբր միայն Սովետական Ռուսաստանն էր ձգտում բարեկամական կապեր հաստատել Թուրքիայի հետ, իսկ վերջինիս մեծագույն շահագրգռվածութեան մասին ոչ մի խոսք չեն ասում։ Այսպես, օրինակ, Քեմալ Քարիաթը Թուրքիայի քաղաքականութեանը նվիրված գրքում, որը լույս է տեսել Վաշինգտոնում 1959 թ., անդրադառնալով Քեմալի վերոհիշյալ նամակին, գրում է. «Սովետները տեսան, թե ինչպիսի օգուտ կարող են ստանալ Թուրքիայի հետ համագործակցելուց։ Հարավում բարեկամական Թուրքիայի առկայութիւնը կուժեղացնէր Սովետների հարավային թևը»<sup>1</sup>։ Իսկ

<sup>1</sup> Kemal H. Karpat, Turkey's Politics. Princeton University Press, Princeton, New Jersey, 1959, p. 349.

թե ին՝ շ նշանակություն ունեւր Թուրքիայի համար ազգային-ազատագրական պայքարի դժվարին այդ պահին ցարական Ռուսաստանի փոխարեն հյուսիսում բարեկամական Սովետական Ռուսաստանի առկայությունը, հեղինակը լռության է մատնում:

Պատմական իրականությունը ավելի կոպիտ ձևով է խեղաթյուրում Սովետական Ռուսաստանում քեմալական Թուրքիայի առաջին դեսպան գեներալ Ալի Ֆուադ Ջեքեսոյը իր «Մոսկովյան հուշերում»: Խոսելով 1920 թվականի օգոստոսի Մոսկովյան բանակցությունների՝ ժամանակ թուրքական սլասովիրական՝ Լենինի կողմից ընդունվելու մասին, նա գրում է, որ բոլշևիկյան ղեկավարները ցարական կառավարության քաղաքականությունից շտարբերվող իմպերիալիստական քաղաքականություն էին վարում<sup>2</sup>:

Շարունակելով կեղծել պատմական իրականությունը, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ 1921 թ. սկզբին «ռուսները խիստ կարիք ունեին Թուրքիայի օգնության՝ երկրի ներսում իրենց իշխանությունն ամրապնդելու համար»<sup>3</sup>:

Նման միտումնավոր, անհիմն պնդումները նպատակ ունեն ժխտել Թուրքիայի շահագրգռվածությունը Սովետական Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու գործում, նսեմացնել վերջինիս կողմից թուրք ժողովրդին ցույց տրված օգնության և աջակցության կարևոր նշանակությունը: Բավական է ամենահամառոտ կերպով վերհիշել պատմական կոնկրետ իրադրությունը, համոզվելու համար այն բանում, որ քեմալական Թուրքիան բոլորովին ի վիճակի չէր օգնել Ռուսաստանին և այն էլ՝ ռնրա ներքին դրությունն ամրապնդելու գործում:

<sup>1</sup> Թուրք հեղինակները միաբերան գանում են, որ Սովետական Ռուսաստանի կառավարության գրաված դիրքի պատճառով էր, որ կողմերը համաձայնության չեկան և բանակցությունները ձախողվեցին: Իրականում, սակայն, պայմանագրի ստորագրմանը խոչընդոտեցին քեմալականները: որոնք այդ ժամանակ պատրաստվում էին և շուտով՝ 1920 թ. աշնանը ձեռնամուխ եղան Անդրկովկասի և, գլխավորապես, Հայաստանի նկատմամբ ծրագրած իրենց զավթողական պլանների իրականացմանը: Տե՛ս Enver Behnan Şapolyo, Türkiye Cumhuriyeti tarihi, İstanbul, 1954, s. 67; Mükerrerem Kamil Su ve Kamil Su, Türkiye Cumhuriyeti tarihi. İstanbul, 1957, s. 78; Prof. Enver Ziya Karai, Türkiye Cumhuriyeti tarihi (1918—1953), İstanbul, 1958, s. 109; Tefvik Biyıklıoğlu, Atatürk Anadolu'da (1919—1921), Türk Tarih Kurumu basımevi, Ankara, 1959, ss. 20, 68.

<sup>2</sup> General Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları (21.XI.1920—2.VI.1922), İstanbul, 1955, s. 74.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 114—115:

1921 թ. սկզբներին Սովետական Ռուսաստանը հիմնականում ավարտել էր հակահեղափոխական ներքին ուժերի ու ինտերվենտների ջախջախումը և հաղթանակած դուրս եկել քաղաքացիական պատերազմից: Սովետական իշխանությունը հաստատվել էր ամբողջ Անդրկովկասում: Միջազգային ասպարեզում Ռուսաստանն արդեն ձեռք էր բերել նկատելի հաջողություններ. դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել իրեն հարևան երկրների (այդ թվում հարավային հարևանների՝ Իրանի և Ավզանստանի) հետ, բանակցությունների մեջ մտել արևմտյան մի շարք տերությունների հետ: Հաշվի նստելով իրականության հետ, կապիտալիստական աշխարհի ամենազորեզ պետությունը՝ Անգլիան ստիպված եղավ փոխել իր քաղաքականությունը Սովետական Ռուսաստանի նկատմամբ. 1921 թ. մարտի 16-ին լոնդոնում ստորագրվեց անգլո-սովետական առևտրական առաջին պայմանագիրը, և այլա:

Ինչ վերաբերում է Թուրքիային, վերջինս իրոք շատ դժվարին վիճակում էր գտնվում և դեռ պետք է կենաց ու մահվան կռիվ մղեր իր ինքնուրույն գոյության իրավունքը նվաճելու համար: Այս շրջանում Թուրքիան կատարյալ մեկուսացման մեջ էր, իսկ Անգլիայի կողմից լավ զինված հունական բանակը ընդհուպ մոտեցել էր Անկարային. կառավարական հիմնարկների մի մասը տեղափոխվել էր Կայսերի: Քեմալականների ներքին վիճակը բավականին խախտու էր, հատկապես Ազգային մեծ ժողովում, որտեղ հոգևորականությունը հարձակումներ էր սկսել Քեմալի դեմ՝ վերջինիս մեղադրելով «շարիաթի» խախտումների մեջ:

Ինչպես տեսնում ենք, փաստերը, պատմական իրականությունը վկայում են, որ այդ շրջանում ինքը Թուրքիան աջակցության կարիք ունեի իր ներքին ու միջազգային դրությունն ամրապնդելու և հակաիմպերիալիստական պայքարը շարունակելու համար:

Հարկ է նշել, որ հարցին նման միակողմանի գնահատական է տրվել տակավին 1930-ական թվականների սկզբին լույս տեսած Թուրքիայի առաջին պաշտոնական հրատարակության՝ «Թարիհի» էջերում, որտեղ միանգամայն անտեսվում է Թուրքիայի շահագրգռվածությունը սովետական օգնության մեջ. «Հենց Սովետական հանրապետության ընդհանուր քաղաքականությունը, նրա շահերն էին պահանջում նպաստել և նույնիսկ աջակցություն ցույց տալ ազատության և անկախության համար մղվող թուրքական շարժմանը»<sup>1</sup>:

<sup>1</sup> Tarih, cilt IV. Türkiye Cumhuriyeti. Istanbul, 1934, s. 61.

Բնակարկինք այս հարցը հանգամանորեն, քանի որ վերոհիշյալ փաստարկը, թե իբր միայն Սովետական Ռուսաստանն էր ձգտում մերձենալ Թուրքիայի հետ և «շահագրգռված էր» վերջինիս օգնել, հաճախ է մեջ բերվում 1921 թ. մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրի կապակցությամբ:

Ինչպես հայտնի է, Սովետական Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև կնքված առաջին քաղաքական պայմանագիրը՝ 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված պայմանագիրն է: Անհերքելի է այն վճռական նշանակությունը, որ հիշյալ պայմանագիրն ունեցավ թուրք ժողովրդի հաղթանակի գործում: Սովետական Ռուսաստանի հետ կնքված այդ պայմանագիրը քեմալական Թուրքիային դուրս բերեց արտաքին քաղաքական լրիվ մեկուսացումից: Այն իսկպես առաջին իրավահավասար պայմանագիրն էր, որ ևրբեիցև Թուրքիան կնքել էր որևէ մեծ տերության հետ: Մոսկվայի պայմանագրով Սովետական Ռուսաստանի կառավարությունը մեծահոգիորեն հրաժարվեց բոլոր այն հատուկ արտոնություններից ու կապիտուլյացիաներից, որոնցից օգտվում էր ցարական Ռուսաստանը (հոդված 7-րդ): Պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը Թուրքիային ազատում էր դրամական և այլ բոլոր այն պարտավորություններից, որոնք բխում էին Թուրքիայի և ցարական կառավարության միջև նախկինում կնքված միջազգային փաստաթղթերից<sup>1</sup>: Բացի այդ, ընդառաջելով Անկարայի կառավարության խնդրանքներին, սովետական կառավարությունը համաձայնվեց Թուրքիային անվերադարձ հատկացնել տաս միլիոն ոսկի ռուբլու շափով ֆինանսական օգնություն, ինչպես նաև զենք<sup>2</sup>:

Իր ժամանակին թուրք ղեկավար գործիչները, քեմալական մամուլը բարձր գնահատական են տվել 1921 թվականի պայմանագրին, ընդգծել են Թուրքիայի համար նրա ունեցած առաջնակարգ նշանակությունը: Մուստաֆա Քեմալը 1921 թ. հունիսի 27-ին արտասանած իր ճառում հետևյալ կերպ է գնահատել հիշյալ պայմանագիրը. «1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը զերծ է ինքնակալությանը և արիստոկրատիային հատուկ իմպերիալիստական

<sup>1</sup> Տե՛ս «Документы внешней политики СССР», т. III, стр. 599.

<sup>2</sup> 1921 թ. ընթացքում սովետական կառավարությունը Թուրքիային տրամադրեց 33.275 հրացան, 57.986.000 փամփուշտ, 327 զնգացիր, 54 հրետանային թնգանթ, 129.479 արկ, 1500 սուր, 20 հազար հակազաղ և մեծ քանակությամբ ռազմական այլ սպառազինություն, այդ թվում ծովային երկու կործանիչ: Տե՛ս «Документы внешней политики СССР», т. II, стр. 675.



բոլոր ձգտումներից... Ինչ վերաբերում է մեզ, մենք այդ պայմանագրին մեծ նշանակություն ենք տալիս...<sup>1</sup>։ Պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո Թուրքիայից ստացված հաղորդումներից մեկում ասվում էր, որ սովետա-թուրքական պայմանագիրը մեծ խանդավառություն է առաջ բերել ամբողջ երկրում։ «Ընդհանուրի ուշադրությունը կենտրոնացված է ռուս-թուրքական պայմանագրի վրա։ Պաշտոնական և մասնավոր հրատարակությունները միահամուտ կերպով ողջունում են այդ պայմանագիրը և հավատացնում, որ միայն դրանում է թուրք ժողովրդի փրկությունը»<sup>2</sup>։

Այժմ, մի քանի տասնամյակ անց, թուրք պատմաբանները, անտեսելով փաստերը, ժխտում են պայմանագրի կարևորությունը Թուրքիայի համար, ուրանում են բարոյական, նյութական և ռազմական այն մեծ օգնությունը, որ Թուրքիան ստացավ ազգային-ազատագրական պայքարի ամենածանր օրերին։

Սակայն ոչ բոլոր թուրք հեղինակներն են գնում փաստերի բացահայտ նենգափոխման ուղիով։ Կան պատմաբաններ, որոնք «յուրովի» են աղավաղում պատմական իրականությունը, այն է՝ խոստովանելով հանդերձ Սովետական Ռուսաստանի կողմից Թուրքիային ցույց տրված օգնությունը, ժխտում են այդ օգնության անշահախնդիր բնույթը, փորձում են այն կապել Սովետների «հեռու գնացող իմպերիալիստական նպատակների», Թուրքիայում «կոմունիզմի հաստատելու» երևակայական պլանների հետ և այլն։ Այսպես, վերջերս լույս տեսած «Թուրքիայի քաղաքական պատմությունը 1700-ից մինչև 1958 թվականը» վերնագրով գրքում, որը, ի դեպ, գրված է հատուկ նպատակով՝ Թուրքիայի զինվորական դպրոցներից մեկի ունկնդիրների համար, հեղինակը՝ Թահսին Յունալը գրում է, որ «երբ ռուսները Թուրքիայի ազգային շարժմանը օգնություն խոստացան և այդ առաջարկը հետագայում մի քանի անգամ կրկնեցին, Սուտաֆա Քեմալը երկար մտածեց, թե նրանք ինչ նպատակով են օգնություն առաջարկում»։ «Նպատակը մեկն էր, — եզրակացնում է հեղինակը, — կրկնել Հոնթիար Իսքելեսիի պայմանագիրը, այսինքն՝ թուրքերին վերցնել իրենց հովանավորության տակ և կոմունիզմը տարածել Անատոլիայում»<sup>3</sup>։

<sup>1</sup> Տե՛ս Ս. Մոնսեև, Յու. Րոզալև, К истории советско-турецких отношений. Госполитиздат, 1958, стр. 23.

<sup>2</sup> Տե՛ս «Правда», 29.III.1921.

<sup>3</sup> Tahsin Ünal, 1700 den 1958e kadar Türk siyasi tarih. Ankara, 1958, s. 260.

Նախ, ոչ թե Սովետական Ռուսաստանն է իր օգնությունը Թուրքիայի վրին փաթաթել, ինչպես փորձում է ներկայացնել հեղինակը, այլ ինքը՝ Անկարայի կառավարությունն է Մուստաֆա Քեմալի և մյուս թուրք ղեկավար գործիչների բերանով բազմիցս օգնություն խնդրել Սովետական Ռուսաստանից: Լենինին ուղարկած Քեմալի նամակի մասին արդեն ասվեց: Իսկ քանի անգամ է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը իր արտաքին գործերի մինիստրի միջոցով օգնություն խնդրել: Բերենք միայն մի օրինակ: Տակավին Մոսկվայի պայմանագրի ստորագրումից առաջ, 1921 թ. հունվարի 30-ի նոտայում Անկարայի կառավարությունը, ընդունելով, որ իր միջազգային դրությունը մնում է անփոփոխ, այսինքն առաջվա պես ծանր, խնդրում էր: Սովետական Ռուսաստանից ստրամադրել ընդհանուր հնարավոր նյութական միջոցները, որպեսզի Թուրքիան կարողանա ետ մզել իր դեմ ձեռնարկվող նոր հարձակումները...»<sup>1</sup>:

Սակայն ինչու, այնուամենայնիվ, Թուրքիան ընդունեց Սովետական Ռուսաստանի օգնությունը, չէ՞ որ, հեղինակի ասելով, Մուստաֆա Քեմալը այն կարծիքին էր, թե իբր «կոմունիստական Ռուսաստանը ցարական Ռուսաստանի նման իմպերիալիստ է»: Այստեղ արդեն հեղինակը ստիպված է խոստովանել, որ Թուրքիան այդ քայլին դիմեց ազատագրական պայքարը շահելու համար անհրաժեշտ դրամը և սպառազինությունը ապահովելու նպատակով<sup>2</sup>:

Քեմալի կարծիքներին այդքան մոտիկից «ծանոթ» թուրք հեղինակին պետք է, որ հայտնի լինեն նրա այն գնահատականը, որ վերջինս տվել էր 1922 թվականին՝ սովետական դիվանագիտական ներկայացուցիչներին. «Մենք խորապես երախտապարտ ենք Ձեր կառավարությանը և Լենինին՝ նրանց անշահախնդրությամբ համար: Դուք օգնում եք, չպահանջելով մեր կողմից հնազանդություն, չկապելով այդ օգնությունը որևէ կարգի քաղաքական պարտավորությունների հետ»<sup>3</sup> (ընդգծումը մերն է—Ռ. Ս.):

Սովետական Ռուսաստանի կողմից Թուրքիային ցույց տրված նյութական ու բարոյական անշահախնդիր օգնությունն այնքան ակնհայտ է, անժխտելի, որ այդ մասին չեն կարող շխոստովանել ՍՍՌ-ի նկատմամբ թշնամաբար տրամադրված օտարերկրյա հեղինակներն անգամ՝ իրենց հակասովետական ոգով գրված աշխատությունները:

<sup>1</sup> «Документы внешней политики СССР», т. III, стр. 470.

<sup>2</sup> Tahsin Ünal, նշվ. աշխ., էջ 261:

<sup>3</sup> Sı' «Международная жизнь», 1960, № 8, стр. 116.

տություններում: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, սկսած անգլիական հայտնի պատմաբան Թոմսթից, սակայն բավարարվենք միայն երկուսով: Ամերիկյան պրոֆեսոր է. Բիսբին, որը երկար տարիներ դասավանդել է Թուրքիայում և քաջ ծանոթ է այդ երկրի պատմությանը, գրում է. «Սկսած 1920 թվականից Սովետական Ռուսաստանը Թուրքիայի միակ բարեկամն էր, միակ երկիրը, որը դրամով և սպառազինությամբ օգնեց թուրքական ազգային-ազատագրական պատերազմին»<sup>1</sup>: Իսկ անգլիական հեղինակներից մեկը Թուրքիային նվիրված իր աշխատության մեջ խոսելով ազգային-ազատագրական շարժման դժվարին օրերի մասին, նշում է հետևյալը. «Ամբողջ այս ժամանակամիջոցում... Ռուսաստանը միակ ազգն էր, որն օգնեց ու քաջալերեց Թուրքիային»<sup>2</sup>:

Ընդհանրապես պետք է նշել, որ 1921 թ. պայմանագրի կնքման մեջ Թուրքիայի շահագրգռվածությունն անտեսելու և, ընդհակառակը, Սովետական Ռուսաստանի համար նրա ունեցած նշանակությունը գերազանահատելու ձգտումն այնքան մեծ է թուրք հեղինակների մոտ, որ նրանք կանգ չեն առնում պատմական փաստերը բացահայտորեն կեղծելու առաջ: Պրոֆեսոր էնվեր Զիյա Կարալը, օրինակ, պնդում է, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը շէր շտապում 1921 թ. պայմանագիրը կնքել, սպասելով իրադարձությունների զարգացմանը՝ Ազգային մեծ ժողովի ուժի վերաբերյալ պատկերացում ստանալու համար»:

«1921 թվականի Մոսկվայի պայմանագիրը,— գրում է այնուհետև Կարալը,— ստորագրվեց արևելքում հայերի, իսկ արևմուտքում՝ Ինոնյուի առաջին ճակատամարտում, հուլյների դեմ տարած հաղթանակների, ինչպես նաև Անտանտի պետությունների կողմից Թուրքիային կոնդոնի կոնֆերանս հրավիրելու հետևանքով»:

Այսպես ուրեմն, հեղինակի կարծիքով, վերոհիշյալ դեպքերի ազդեցության տակ էր, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը կնքեց 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը: Թվում է, թե թուրքական հանրապետության պատմության մասնագետ թուրք պրոֆեսորին պետք է որ ծանոթ լինեին այդ պատմության սկզբնավորման

<sup>1</sup> Bisbee Eleanor, The New Turks, Pionneers of the Republic, 1920—1950. Philadelphia, 1951, p. 188.

<sup>2</sup> Irfan Orga, Phoenix Ascendant. The Rise of Modern Turkey. London, 1958, p. 98.

<sup>3</sup> Prof. Enver Ziya Karal, Türkiye Cumhuriyeti tarihi (1918—1953). Istanbul, 1958, s. 109.

<sup>4</sup> Նույն տեղում:

շրջանի հանրաճանաչ փաստերը: Մնում է եղրակացնել միայն, որ նա գիտակցորեն սրբազրույթ է պատմական փաստերը, աղավաղում դրանք՝ ծառայեցնելով իր նպատակներին: Իսկ նպատակն ավելի քան պարզ է. ամեն կերպ դունալարդել Թուրքիայում ստեղծված դրությունը, նույնիսկ այն շրջանում նրան ներկայացնել մեծ ուժի տեր մի պետություն, որի հետ հաշվի էին նստում արևմուտքի հզոր տերությունները և դրանով իսկ ժխտել Մոսկվայի պայմանագրի նշանակությունը Թուրքիայի համար, ցույց տալ, որ Թուրքիան դրա կարիքը չունի:

Անդրադառնանք հեղինակի թվարկած «փաստերին» առանձին-սուռանձին: Մի՞թե դաշնակների տիրապետության օրոք իսպառ քայքայված Հայաստանի դեմ Թուրքիայի տարած հաղթանակը Անկարայի կառավարության ուժի ապացույց էր: Այդպիսի հաղթանակ դժվար չէր ձեռք բերել այն բանից հետո, երբ քեմալական կառավարությունը 1920 թ. ամռան սկզբներից իր զորքերի հիմնական մասը կենտրոնացրել էր ոչ թե արևմտյան ճակատում, ուր հույները խոշոր առաջխաղացում էին սկսել, այլ արևելքում՝ Հայաստանի սահմանի մոտ՝ նրա վրա հարձակվելու նպատակով: Հայտնի է, որ քեմալականները հենց սկզբից որոշակի պլաններ ունեին ամբողջ Արևելյան Հայաստանը նվաճելու վերաբերյալ և հարմար առիթի վրա սպասում՝ դրանք կյանքում իրականացնելու համար: Անկասկած է նաև, որ դաշնակցական Հայաստանը չէր կարող իրական սպառնալիք ներկայացնել Թուրքիայի համար: Քեմալականներին խիստ ձեռնտու էր և նրանք չհապաղեցին Օլթիի շրջանում ստեղծված միջադեպը որպես պատրվակ օդտագործել Հայաստանի դեմ ծրագրած հարձակումը սկսելու համար: 1920 թ. աշնանը ձեռնարկված թուրքական ագրեսիան նոր ծանր աղետներ բերեց հայ ժողովրդին և՛ հանգեցրեց նոր տերիտորիալ համընդհանրության: Եվ այդ արշավանքը պրոֆեսոր Կարալը ցեխիկորեն համարում է թուրք ժողովրդի ազատագրական պայքարի առաջին հաղթանակը, եզրակացնելով, որ Հայաստանի տերիտորիայի նվաճումը, խաղաղ բնակչության ոչնչացումը և թուրքական զավթիչների գազանությունները՝ («հայերի դեմ տարած հաղթանակները», ըստ հեղինակի արտահայտության) «երկրում առկա ազգային շարժման

1 Այդ մասին մանրամասն տե՛ս Ե. Ղ. Սարգսյան, Ռ. Գ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ: Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 41—55:

ծավալման և ազգային կովի հնարավորությունների մեծացման պոստճառ հանդիսացան»<sup>1</sup>։

Կամ, մյուս փաստարկը. արդյո՞ք Ինոնյուզի առաջին ճակատամարտով որոշվեց Թուրքիայի ազգային ազատագրական պայքարի հաղթական ելքը։ Թուրքական զորքերին դժվարություններ հաջողվեց միայն կասեցնել հոնական բանակի հարձակումը, սակայն նրանք առաջ չշարժվեցին։ Հուլիսը այդ պարտությունից հետո էլ մեծ ուժ էին ներկայացնում և նկատելի հաջողություններ ունեցան, ընդհուպ մոտենալով Անկարային։ Հայտնի է, որ Մոսկվայի պայմանագրի ստորագրումից միայն կես տարի հետո՝ 1921 թ. սեպտեմբերին Թուրքական բանակը Քեմալի ղեկավարությամբ հուլիսին պարտության մատնեց Սակարայի ճակատամարտում, իսկ դրանից հետո էլ պահանջվեց մեկ տարի՝ հուլիսի դեմ վճռական հաղթանակ տանելու համար Գոմլուսի ճակատամարտում։

Կամ Լոնդոնի կոնֆերանսը վկայակոչելը։ Գիտական անբարեխղճություն է թուրք պրոֆեսորի կողմից այդ կոնֆերանսի մասին հիշատակելը՝ ոչ մի խոսք չասելով նրա խայտառակ կրախի մասին։ Այո, քեմալականները մեծ հույսեր էին կապում այդ կոնֆերանսի հետ, կարծում էին, որ Անգլիան պատրաստ է որոշ զիջումներ անել։ Բայց չէ՞ որ բանակցությունները ոչ մի արդյունք չտվեցին։ Թուրքական պատմիչականության կողմից Սևրի դաշնագիրը վերանայելու մասին փետրվարի 24-ին ներկայացրած կոնկրետ առաջարկությունները՝ Եվրոպայում 1912 թվականի սահմանի վերականգնում, Իզմիրի շրջանից հունական զորքերի էվակուացիա, Հայաստանի հետ սահմանն անցկացնել ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի և այլն, այս բոլորը անգլիական պահանջողական «Թայմս» թերթին 1921 թ. փետրվարի 25-ի համարում անվանեց «անհեթեթ պահանջներ»։ Այդ կապակցությամբ ինքը՝ Մուստաֆա Քեմալը հետագայում ասել է հետևյալը. «Լոնդոնի կոնֆերանսի ժամանակ թուրքերը համոզվեցին, որ Անտանտի տերությունները ցանկանում էին Սևրի դաշնագրի անարգելք կիրառումը»<sup>2</sup>։

Հենց Լոնդոնի կոնֆերանսի անփառունակ վախճանը, ինչպես նաև հունական զորքերի նոր հարձակման սպառնալիքը Անկարայի կառավարությանը ստիպեց ավելի լուրջ մոտենալու Մոսկվայում ընթացող սովետա-թուրքական բանակցություններին, որից հետո

<sup>1</sup> Prof. Enver Ziya Karal, հղվ. աշխ., էջ 98։

<sup>2</sup> Мустафа Кемаль, Путь новой Турции, т. III, Соцэкгиз, М., 1932, стр. 200.

միայն կողմերը համաձայնության եկան և 1921 թվականի մարտի 16-ի պայմանագրի ստորագրումը անհետաձգելի պահանջ դարձավ:

1921 թվականի պայմանագրի կնքման շարժառիթներին Կարալի տրված «բացատրությունը» միակը չէ իր տեսակում: Նրանից անկախ Ալթինուր Քըլըջը (որը ԱՄՆ-ում հրատարակված «Թուրքիան և աշխարհը» վերնագիրը կրող իր գրքում բացահայտորեն աղավաղում է սովետա-թուրքական հարաբերությունների ողջ պատմությունը) համարյա նույնությամբ կրկնում է վերևում մերկացված կեղծիքը գրելով, որ «1921 թվականի պայմանագիրը ստորագրվեց այն բանից հետո, երբ հայերի, իսկ այնուհետև հույների դեմ՝ Արևմտյան ճակատում ձեռք բերված հաղթանակները համոզեցին սովետական ղեկավարներին, որ թուրքական աստղը վերընթաց շարժման մեջ է»<sup>1</sup>:

Թուրք պատմաբանների աշխատություններում աղավաղված է նաև Անդրկովկասի սովետական հանրապետությունների և Թուրքիայի միջև 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում կնքված պայմանագրի պատմությունը:

Եթե պրոֆ. Կարալը Մոսկվայի պայմանագրի ուշանալը կապում է Սովետական Ռուսաստանի վարած քաղաքականության հետ, ապա Մյուքերեմ Քյամիլ Ստեն և Քյամիլ Սոն «Թուրքական հանրապետության պատմության» իրենց դասագրքում Կարսի պայմանագրի ստորագրումը ձգձեղու մեջ նույնպես մեղադրում են Սովետական Ռուսաստանի կառավարությանը:

«Ռուսները, որպես միջնորդ հանդես գալուց առաջ,— գրում են նրանք,— ցանկանում էին ճանաչել թուրքական կառավարության ուժը և այդ իսկ պատճառով որոշ ժամանակ սպասեցին: Սակարյայի մոտ թուրքական բանակի տարած մեծ հաղթանակից հետո միայն նրանք հավատացին թուրքական նոր կառավարության հզորությանը և կովկասյան հանրապետությունների ու մեր միջև ստորագրվող պայմանագրի միջնորդ դարձան»<sup>2</sup>:

Նախ նշենք, որ թուրք հեղինակների այս տեսակետն էլ ունի իր «հիմքը»՝ «Թարիհը»:

<sup>1</sup> Altemur Kilic, Turkey and the World, Washington, Public Affairs Press, 1959, p. 39.

<sup>2</sup> Mükerrerem Kâmil Su ve Kâmil Su, Türkiye Cümburiyeti tarihi. İstanbul, 1957, s. 85.

«Մոսկվայի կառավարությունը,—գրված է «Թարիհում»,—որոշ ժամանակ ձգձգում էր Կարսի պայմանագրի ստորագրումը և Սակարյա գետի վրա թուրքերի տարած հաղթանակից հետո միայն ստորագրեց այդ պայմանագիրը»<sup>1</sup>։

Այս անհիմն, փաստագրերի պնդումները նպատակ ունեն դիտավորյալ կերպով սքողել պատմական փաստերը։ Իրականում ճիշտ հակառակն է տեղի ունեցել։ Թուրքերն իրենք էին ձգձգում Անդրկովկասի հանրապետությունների հետ պայմանագրի կնքումը։ Այդ մասին են անվիճելիորեն վկայում ինչպես բազմաթիվ արխիվային, այնպես էլ վերջերս հրատարակված նյութերն ու փաստաթղթերը։

1921 թ. մարտի 16-ի պայմանագրով նախատեսվում էր կարգավորել և նորմալացնել Թուրքիայի և անդրկովկասյան սովետական հանրապետությունների փոխհարաբերությունները՝ նրանց միջև պայմանագիր կնքելով։ Հակառակ այդ բանին, Անկարայի կառավարությունը տարբեր պատրվակներով ուշացնում ու հետաձգում էր բանակցությունները անդրկովկասյան հանրապետությունների հետ։ Դրա պատճառն այն էր, որ թուրքական կառավարող շրջանները, չնայած այն բանին, որ Մոսկվայի պայմանագրով Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը չեղյալ էր հայտարարվել, տակավին չէին հրաժարվել այն կյանքում կիրառելու իրենց մտադրությունից։ Դա պարզորոշ երևում է նաև Մոսկվայում Անկարայի կառավարության դեսպան Ալի Ֆուադին ուղարկած Չիչերինի 1921 թվականի ապրիլի 8-ի նոտայից, որտեղ ասված էր հետևյալը. «Ձեմ կարող թաքցնել Ձեզնից իմ խորին զարմանքը, որ ես ունեցա Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության ռազմական մինիստր Ֆեվզի փաշայի հայտարարությունների հետ ծանոթանալիս... Այդ հայտարարության մեջ ռազմական մինիստրն ասում է, որ Հայաստանի այն մասը, որը դեռևս գտնվում է թուրքական զորքերի օկուպացիայի տակ, էվակուացիայի կենթարկվի Ալեքսանդրապոլի պայմանագիրը գործողության մեջ մտցնելուց հետո միայն...»։ Հիշյալ նոտայում Սովետական մոնաստանի կառավարությունը վճականորեն հայտարարում էր, որ «Ալեքսանդրապոլի պայմանագրի իրագործումը պահանջելը հավասարազոր է Մոսկվայի պայմանագիրը չեղյալ հայտարարելուն»<sup>2</sup>։

<sup>1</sup> Тарих, сilt IV, Türkiye Cumhuriyeti. İstanbul, 1934, s. 103—104.

<sup>2</sup> «Документы внешней политики СССР», т. IV, стр. 53—54.

Սակայն այս նոտայից հետո էլ թուրքական կառավարությունը քողարկված ձևով շարունակում էր կառչել Ալևրասնուդրապուլի պայմանադրից:

Մոսկվայի կոնֆերանսի ժամանակ կողմերը պայմանավորվեցին, որ թուրքական պատվիրակությունը թուրքիա վերադառնալու ճանապարհին կանգ կառնի: Թրիլիսիում և անդրկովկասյան երեք հանրապետությունների հետ պայմանագիր կիլնի: Սակայն, երբ ապրիլի կեսերին թուրքական պատվիրակությունը եկավ Անդրկովկաս պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի մինիստր Յուսուֆ Քեմալը անսպասելիորեն հայտարարեց, որ ինքը կարող է պայմանագրեր կնքել միայն Վրաստանի և Ադրբեջանի հետ, իսկ Հայաստանի հետ բանակցություններ վարելու համար լիազորված չէ: Դա էր պատճառը, որ անդրկովկասյան երեք հանրապետությունների ու թուրքիայի միջև նախատեսվող կոնֆերանսը տեղի չունեցավ և պատվիրակությունը մեկնեց Անկտրա: Չնայած այն բանին, որ թուրքերն իրենք ձախողեցին անդրկովկասյան հանրապետությունների հետ պայմանագրի կնքումը, Անկարայի կառավարությունը փորձեց դրա պատասխանատվությունը բարդել Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի սովետական հանրապետությունների կառավարությունների վրա՝ մեղադրելով նրանց Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը՝ չիրագործելու մեջ: Չիչերինի 1921 թվականի հուլիսի 6-ի պատասխան նոտայում որոշակիորեն ասվում էր, որ վերոհիշյալ 15-րդ հոդվածը չիրագործելու միակ պատճառն այն էր, որ թուրքական պատվիրակությունն ինքը անհնարին դարձրեց պայմանագրի կնքումը անդրկովկասյան հանրապետությունների և թուրքիայի միջև<sup>1</sup>:

Միայն հունիսի 14-ին ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովմատը ստացավ թուրքական դեսպան Ալի Ֆուադի հաղորդումն այն մասին, որ Անկարայի կառավարությունը համաձայն է պայմանագիր կնքել անդրկովկասյան երեք հանրապետությունների հետ: Սակայն դրանից հետո էլ կոնֆերանս գումարելու համար պահանջվեց շուրջ երեք ամիս: Դրա պատճառը դարձյալ Անկարայի կառավարության գրաված դիրքն էր:

<sup>1</sup> 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի 15-րդ հոդվածով Սովետական Ռուսաստանի կառավարությունը պարտավորվում էր անհրաժեշտ քայլեր ձեռնարկել անդրկովկասյան հանրապետություններին վերաբերող պայմանագրի հոդվածները վերջիններիս կողմից ճանաչվելու համար: Տե՛ս «Документы внешней политики СССР», т. III, стр. 602.

<sup>2</sup> «Документы внешней политики СССР», т. IV, стр. 169.



Կոնֆերանսը Կարսում հրավիրելու իր նախնական առաջարկությանը հակառակ<sup>1</sup>, թուրքական կառավարությունը հանդես եկավ Անկարայում հավաքվելու առաջարկով, որը միանգամայն աննպաստ էր անդրկովկասյան սովետական հանրապետությունների պատվիրակությունների համար՝ իրենց կառավարությունների հետ հաղորդակցություն պահպանելու տեսակետից: Մերժելով այդ առաջարկը, Չիչերինը 1921 թ. օգոստոսի 8-ի նոտայում ընդգծում էր նաև, որ Անկարան գտնվում է պատերազմի թատերաբեմին շատ մոտ հեռավորություն վրա<sup>2</sup>: Թուրքական կողմը, այնուհետև, նորից փորձեց պնդել իր առաջարկը, բայց հաջողություն չունեցավ:

Ինչպես տեսնում ենք, փաստերն անվիճելիորեն հերքում են թուրք պատմաբանների այն կեղծիքը, թե իբր սովետական կողմն էր ձգձգում Կարսի պայմանագրի ստորագրումը: Ընդհակառակը, Ալեքսանդրապոլի պայմանագիրը Սովետական Հայաստանին պարտադրելու թուրքական կառավարության փորձերը ի նկատի ունենալով, ՌՍՖՍՌ կառավարությունն ինքը շահագրգռված էր արագացնելու Թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների միջև կնքվելիք պայմանագիրը:

Նույնիսկ Կարսի կոնֆերանսի ընթացքում թուրքերը կեղծավոր և խարդախ քաղաքականություն էին վարում, փորձում էին երկարաձգել բանակցությունները: Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Մուսվյանը 1921 թ. հոկտեմբերի 5-ին հաղորդում էր Կարսից, որ «թուրքերը դիտավորյալ կերպով ձգձգում են բանակցությունները, հույսեր կապելով ռուս-լեհական ճգնաժամի սրման հետ»<sup>3</sup>: Կարսի կոնֆերանսում ՌՍՖՍՌ ներկայացուցիչ Յա. Գանեցկին հոկտեմբերի 6-ին Չիչերինին ուղարկած իր հեռագրում նույնպես հայտնում էր այդ մասին:

«Թուրքիս մոտ ստեղծվել է որոշակի տպավորություն, որ թուրքերը գիտակցորեն ձգձգում են կոնֆերանսը: Քաղաքում լուրեր են շրջում, որ այսօր-վաղը պատերազմ կհայտարարվի Լեհաստանին և մեզ որոշակիորեն հայտնի է, որ թուրքական պատվիրակությունը շարաշահում է այդ հանգամանքը»<sup>4</sup>:

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս «Документы внешней политики СССР», т. IV, стр. 227, 249, 255, 287.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 255:

<sup>3</sup> ՀՍՍՌ Հոկտեմբերյան ակուլցիայի և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 40/113, ց. 3, գ. 75, թ. 56:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 50:

Թուրք հեղինակների աշխատություններում խեղաթյուրված է նաև Կարսի կոնֆերանսի բանակցությունների ընթացքը, որի անաշու շարադրանքը անխուսափելիորեն վեր կհաներ թուրքերի երկդիմի քաղաքականությունը, ինչպես անդրկովկասյան հանրապետությունների, այնպես էլ Սովետական Ռուսաստանի նկատմամբ: Թուրք պատմաբանները, օրինակ, հայտարարում են, որ կոնֆերանսում արտասովոր ոչինչ տեղի չունեցավ, որ բանակցությունները հարթ անցան: Այսպես, Ջերեսոյը, խոսելով Կարսի կոնֆերանսի մասին, դրում է, որ «բանակցությունները նորմալ անցան», «հայերը առաջ չքաշեցին սահմանի վերանայման ու ճշգրտման պահանջը»<sup>1</sup>: Այնինչ, արխիվային փաստաթղթերից և, առաջին հերթին, կոնֆերանսի նիստերի արձանագրություններից հայտնի է, որ բանակցությունները չափազանց սուր և լարված բնույթ էին կրում այն բացահայտ թշնամական դիրքի հետևանքով, որ գրավել էր թուրքական սլատվիրակությունը Սովետական Հայաստանի նկատմամբ: Ինչպես նշվեց, թուրքերը պահանջում էին սեպարատ պայմանագրեր կնքել անդրկովկասյան հանրապետությունների հետ, որը նրանց հնարավորություն կտար միայնակ մնալ Սովետական Հայաստանի ներկայացուցիչների հետ և վերջիններիս թելադրել իրենց պայմանները, այսինքն պարտագրել Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը: Արտասովոր էր թեկուզ այն, որ անդրկովկասյան պատվիրակությունը միասնական պայմանագիր ստորագրելու վճռականությամբ գալով կոնֆերանս, նորից հանդիպեց սեպարատ պայմանագրեր կնքելու թուրքերի, արդեն մերժված, առաջարկությանը: Կոնֆերանսի առաջին նիստում թուրքական պատվիրակությունը հայտարարեց, որ ինքը ցանկանում է պայմանագրեր ստորագրել անդրկովկասյան հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին: Սակայն, թուրքերի այդ նպատակը շիրականացավ անդրկովկասյան հանրապետությունների գրաված համերաշխ և վճռական դիրքի շնորհիվ: Անդրկովկասյան պատվիրակությունը «կատեգորիկ կերպով հայտարարեց թուրքերին, որ նա պահանջում է համատեղ բանակցություններ անդրկովկասյան բոլոր հանրապետությունների հետ և միասնական հաշտության պայմանագիր»<sup>2</sup>: Շարունակելով համառել, թուրքական պատվիրակությունը սեպտեմբերի 30-ի նիստում հանդես եկավ մի պրովոկացիոն

<sup>1</sup> General Ali Fuat Cebesoy, Moskova hatıraları, s. 259.

<sup>2</sup> Г. К. Орджоникидзе, Избранные статьи и речи. М., 1939, стр. 177.

հարցով՝ ինչպիսի՝ փոխհարաբերությունների մեջ են գտնվում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական հանրապետությունները: Թուրքիայի արտաքին գործերի մինիստրին ուղղված հոկտեմբերի 3-ի նոտայում Չիչերինը պաշտոնապես հայտարարեց, որ անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունները տեղյակ են պահել ՌՍՖՍՌ կառավարությանն այն մասին, որ նրանց միջև գոյություն ունի քաղաքական ու տնտեսական սերտ դաշինք և նրանց վերաբերող քաղաքական ու տնտեսական բոլոր հարցերը լուծվում են համատեղ<sup>1</sup>: Միայն դրանից հետո թուրքական պատվիրակությունը (որին գլխավորում էր մոլի շովինիստ-ջարդարար Քյազըմ Կաբաբեբիր փաշան) համաձայնվեց միասնական պայմանագիր ստորագրել երեք սովետական հանրապետությունների՝ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հետ:

Կոնֆերանսի ժամանակ տեժեղ պայքար ծավալվեց Ալեքսանդրապոլի դեպոյի հարցի շուրջը: Անդրկովկասյան պատվիրակությունը պահանջում էր հտ վերադարձնել քաղաքի օկուպացման ժամանակ կողոպտված ու արտահանված հսկայական գույքը, իսկ թուրքերը լիտիորեն փորձում էին «հաստատել» իրենց իրավունքը այդ գույքի նկատմամբ<sup>2</sup>:

Ինչ վերաբերում է սովետա-թուրքական սահմանի վերջնական ճշգրտման հարցին, այստեղ ևս թուրքական պատվիրակությունը հանդես բերեց իր անհաշտ, թշնամական վերաբերմունքը Սովետական Հայաստանի նկատմամբ: Ծիշտ է, Կարսի կոնֆերանսում տերիտորիալ հարցերն ըստ էության չքննարկվեցին, քանի որ նրանք իրենց արտահայտությունն էին գտել Մոսկվայի պայմանագրում, որի համաձայն, ՌՍՖՍՌ կառավարությունը, ստեղծված իրադրությունից ելնելով, Կարսը, Արդահանը և Արթվինը ղիջեց Թուրքիային: Սակայն անդրկովկասյան պատվիրակությունը հանդես եկավ սովետա-թուրքական սահմանը մի փոքր շտկելու առաջարկով այն հաշվով, որ պատմական Անի քաղաքը և նրա ավերակները անցնեն Սովետական Հայաստանին՝ որպես հայ ժողովրդի մշակույթի համար հսկայական արժեք ներկայացնող հուշարձաններ: Թուրքերը հրաժարվեցին ընդառաջ գնալ այդ խնդրանքին, թեև մինչ այդ նրանք տվել էին իրենց համաձայնությունը<sup>3</sup>:

<sup>1</sup> «Документы внешней политики СССР», т. IV, стр. 392.

<sup>2</sup> Տե՛ս ՀՄՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 40/113բ, ց. 3, գ. 75, թ. 59:

<sup>3</sup> Տե՛ս ЦГАОР Азербайджанской ССР, ф. 6с/28р, оп. 1, ед. хр. 81.

Թուրք հեղինակների աշխատություններում զգալի տեղ է հատկացված 1922—1923 թթ. Լոզաննի կոնֆերանսին:

Ինչպես հայտնի է, կոնֆերանսում քննարկվող առավել կարևոր հարցերից մեկը նեղուցների ուժիմի մշակման և ընդունման հարցն էր, որի բանական և արդարացի լուծման մեջ ամենից առաջ շահագրգռված էին՝ սևծովյան պետությունները: Սովետական կառավարության քաղաքականությունը սևծովյան նեղուցների հարցում շարադրվել էր Վ. Ի. Լենինի կողմից՝ անգլիական «Օրսերվեր» և «Մանչեստեր Գարդիան» թերթերի թղթակից Ֆարբմանին տված ինտերվյուի մեջ, որտեղ ասված էր, որ նեղուցների վերաբերյալ սովետական ծրագիրը իր մեջ պարունակում է.

«Առաջին, Թուրքիայի ազգային ձգտումների բավարարումը:

Երկրորդ, նեղուցների փակումը խաղաղ և պատերազմական ժամանակ ուղղակի բոլոր նավերի համար: Այս է բոլոր տերությունների, ոչ միայն նրանց, որոնց տերիտորիան անմիջականորեն սահմանակից է նեղուցներին, այլև բոլոր մնացածների անմիջական մերձավորադուին առևտրական շահը:

Երրորդ, նեղուցների վերաբերյալ մեր ծրագիրը առևտրական նավազնացության կատարյալ ազատությունն է...»<sup>1</sup>:

Լոզաննի կոնֆերանսում սովետական պատվիրակությունը Գ. Վ. Չիչերինի գլխավորությամբ ակտիվ մասնակցություն ունեցավ նեղուցների նոր ուժիմի մշակմանը՝ սևծովյան պետությունների շահերին համապատասխանող կոնվենցիա ընդունելու համար: Սակայն սովետական պատվիրակության ջանքերն այդ ուղղությամբ հենց սկզբից աջակցություն չգտան թուրքական պատվիրակության կողմից, որն ավելի քան Սովետական Միությունը շահագրգռված էր նեղուցներն ամրացնելու և հնարավոր հարձակումից պաշտպանելու մեջ:

Ընդհակառակը, Թուրքիայի համար կենսական նշանակություն ունեցող այս հարցում Անկարայի կառավարությունը լուրջ զիջումներ արեց իմպերիալիստներին՝ խախտելով 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի 5-րդ հոդվածը, որով նախատեսվում էր Սև ծովի և նեղուցների միջազգային ստատուսի վերջնական մշակումը հանձնարարել սևծովյան պետությունների ներկայացուցիչներից բաղկացած հատուկ կոնֆերանսին: Գեռ ավելին, թուրքական պատվիրակությունը անդրկուլիսյան գործարքի մեջ մտավ Անտանտի պետու-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 456—457: Հայպետհրատ, Երևան, 1952,

թյունների և, առաջին հերթին, Անգլիայի հետ, որի հետևանքով ընդունվեց նեղուցների ռեժիմի վերաբերյալ այնպիսի մի կոնվենցիա, որը հակասում էր ինչպես Սովետական Միության ու սևծովյան մյուս պետությունների, այնպես էլ հենց իրեն՝ Թուրքիայի շահերին:

Որ նեղուցների ռեժիմի վերաբերյալ կողաննի կոնֆերանսում ընդունված կոնվենցիան իրոք ձեռնտու չէր Թուրքիային և չէր ապահովում նրա անվտանգությունը, երևաց հետազայում, երբ Թուրքական կառավարությունն ինքն առաջինը հարց բարձրացրեց կողաննի կոնվենցիան վերանայելու մասին:

Անտեսելով փաստերը, Թուրք հեղինակները ժխտում են նեղուցների փակման մեջ Թուրքիայի շահագրգռվածությունը, կողաննի կոնֆերանսում սովետական պատվիրակության կողմից նրան ցույց տրված բարոյական մեծ օգնությունը: Այսպես, Ալթինոբ Քըլըջը գանում է, որ «Չիչերինը ձևացնում էր, թե իբր նա բարյացակամորեն պաշտպանում է Թուրքական նոր պետությունը»<sup>1</sup> և գալիս այն հետևության, որ «ոչ սևծովյան պետությունների ռազմամեծվերի համար նեղուցները փակելու պահանջը, որով հանդես էր գալիս Ռուսաստանը, միայն արտաքուստ էր թվում պրոթուրքական, բայց իրականում այն Սովետական Ռուսաստանի օգտին էր»<sup>2</sup>:

Պետք է ասել, որ հեղինակն իր այդ տեսակետը հայտնում է մի աշխատության մեջ, որտեղ հաճախ է հիշատակվում Քեմալ Աթաթյուրքի անունը: Ուստի ավելորդ չէ վերհիշել վերջինիս կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ. տակավին 1923 թվականին Քեմալը ընդգծել է, թե ինչպիսի մեծ օգուտ բերեց Թուրքերին Չիչերինի հիանալի ելույթը կողաննում, որ Սովետական Ռուսաստանի աջակցությունը բարոյապես օգնեց իրենց»<sup>3</sup>: Նման անաչառ խոստովանությունների կարելի է հանդիպել նաև առանձին Թուրք հեղինակների աշխատություններում: Այսպես, Ռըֆըր Սալիմ Բուրչաղը, խոսելով նեղուցների մասին, նշում է, որ «կողաննում Թուրքական տեսակետը եռանդուն կերպով պաշտպանվում էր Ռուսաստանի կողմից»<sup>3</sup>: Ամերիկյան հայտնի պատմաբան Հովարդը, որը շատ հեռու է Սովետական Միությանը համակրելուց, գտնում է, որ կողաննում սովետական պատվիրակությունը ավելի եռանդուն կերպով, քան իրենք Թուրքերը, պաշտպանում էր վերջիններիս իրա-

<sup>1</sup> Altınob Kılıç, նշվ. աշխ., էջ 44.

<sup>2</sup> «Международная жизнь», 1960, № 11, стр. 141.

<sup>3</sup> Rifki Salim Burçak, Türk—Rus—İngiliz münasebetleri (1791—1941), İstanbul, 1946, s. 67.

վումքները: Խոսելով նեղուցների վերաբերյալ սովետական առաջարկների մասին, նա գրում է. «Ռուսական սխեման աճելի պրոթորքական էր, քան Իսմեթ փաշայի ժրագիրը»<sup>1</sup>: Նույն կարծիքն են հայտնում ամերիկյան այլ հեղինակներ<sup>2</sup>:

Թուրք հեղինակների աշխատություններում հատկանշական է նաև պատմական դեպքերի շարադրանքի ժամանակ փաստերի միանգամայն կամայական ընտրությունը: Թուրքիայի դիրքը, նրա քաղաքականությունը սովերոտ կողմից դրսևորող ոչ մի փաստ չի հասնում ընթերցողին, այդ մասին փակակցորեն լուռություն է պահպանվում և, միևնույն ժամանակ, ցցուն ձևով ներկայացվում են Թուրքիայի «գրական» գործերը: Ալի Ֆուատ Ջեբեսույը իր մի այլ գրքում, 1957 թ. հրատարակված «Քաղաքական հուշերում» չի մոռանում նշել, որ իրենք, թուրքերը, Լույաննի կոնֆերանսից պահանջեցին սովետական պատվիրակությանը հրավիրել նեղուցների հարցի քննարկմանը<sup>3</sup>: Սակայն նա ոչինչ չի ասում թուրքական պատվիրակության ապերախտ և տխտադրուժ վարքագծի մասին, լուռությամբ է անցնում այն փաստի կողքով, որ թուրքական պատվիրակությունը սովետական պատվիրակությունից գաղտնի մասնակցում էր էքսպերտների հանձնաժողովում նեղուցների հարցի քննարկմանը՝ Անգլիայի և իմպերիալիստական մյուս պետությունների հետ<sup>4</sup>:

\* \* \*

Այսպես ուրեմն, հետպատերազմյան տարիներին լույս տեսած թուրք հեղինակների աշխատություններում զգալի տեղ է հատկացված սովետա-թուրքական հարաբերությունների սկզբնական շրջանի (1920—1923) պատմության հարցերին, որոնք, ինչպես փորձեցինք ցույց տալ, լուսաբանվում են շափազանց միտումնավոր, հակագիտական դիրքերից՝ աղավաղվում են դեպքերը, կեղծված տեսքով է ներկայացվում պատմական իրակաճությունը, գիտակցորեն թաքցվում են կարևոր շատ փաստեր: Հիմնական տենդենցը, որը գերիշխում է թուրք հեղինակների տեսակետներում ու

<sup>1</sup> Harry H. Howard, The Partition of Turkey. A Diplomatic History 1913—1923. Oklahoma, 1931, p. 286.

<sup>2</sup> Տե՛ս «The Diplomats 1919—1939», Ed. by Gordon A. Craig and Felix Gilbert, Norman, 1953, p. 203.

<sup>3</sup> General Ali Fuat Cebesov, Siyasi Hatıralar. Istanbul, 1957, s. 321.

<sup>4</sup> Տե՛ս «История дипломатии», т. III, Госполитиздат, М.—Л., 1945, стр. 220—221.

դնահատականներում դա այն է, որ իբր Սովետական Միությունը  
ավելի, քան Թուրքիան, շահագրգռված էր այդ հարաբերություննե-  
րի հաստատման ու ամրապնդման մեջ, իսկ վերջինիս համար այն  
յուներ վճռական նշանակություն: Այստեղից էլ Թուրք հեղինակնե-  
րի ջանքերը՝ ամեն կերպ նսեմացնելու և նույնիսկ անտեսելու Սո-  
վետական պետության կողմից այդ շրջանում Թուրքիային ցույց  
տրված նյութական, ռազմական ու բարոյական մեծ օգնությունն  
ու աջակցությունը, թերազնահատելու և ժխտելու այդ օգնության  
նշանակությունը Թուրք ժողովրդի հակաիմպերիալիստական պայ-  
քարի հաղթանակի գործում:

Р. Г. СААКЯН

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВЕТСКО-ТУРЕЦКИХ  
ОТНОШЕНИЙ 1920—1923 ГОДОВ В ТРУДАХ  
СОВРЕМЕННЫХ ТУРЕЦКИХ АВТОРОВ

Резюме

В изданных в послевоенные годы трудах турецких исто-  
риков по новейшей истории, учебниках по истории Турецкой  
республики и мемуарах видных турецких политических дея-  
телей и журналистов значительное место уделено вопросам  
взаимоотношений СССР и Турции и, в частности, советско-  
турецким отношениям в период их установления. Турецкие  
авторы игнорируют факты недалекого исторического прошло-  
го, в том числе и высказывания Кемаля Ататюрка о важном  
значении помощи Советской России для победы национально-  
освободительного движения турецкого народа, недооценивают  
и даже пытаются отрицать эту помощь, ее бескорыстный ха-  
рактер. Вместе с тем они крайне тенденциозно освещают исто-  
рию заключения Московского и Карсского договоров, необосо-  
нованно утверждают, будто правительство РСФСР сознательно  
затягивало заключение этих договоров. Турецкие авторы  
отрицают также значение моральной поддержки, оказанной  
советской делегацией Турции на Лозаннской конференции  
1922—1923 гг.

В статье на основе опубликованных документов, архив-  
ных материалов, а также откровенных признаний видных по-  
литических деятелей и турецкой прессы того времени разо-  
блачается подобная фальсификация.

ԻՐԱՆՈՒՄ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ (1918—1921 ԹԹ.)

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Մեծ Բրիտանիայի իմպերիալիստական դիրքերը Մերձավոր և Միջին արևելքի երկրներում շարժանք ուժեղացել էին: Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայից հետո Ռուսաստանի դուրս դալը պատերազմից, Գերմանիայի և Թուրքիայի պարտությունը հրապուրիչ և շատ ընդարձակ հեռանկարներ էին ստեղծում աշխարհի այդ մասում անգլիական գաղութային բուրժուազիայի էքսպանսիայի համար:

Անգլիական կառավարողներն իրենց առջև խնդիր էին դրել ստեղծել «Բրիտանական Մերձավորարևելյան կայսրություն»՝ Մեծ Բրիտանիայից կախման մեջ գտնվող պետությունների մի սխտեմ:

Իմպերիալիստական այս պլաններում կարևոր տեղ էր հատկացված Իրանին. նա պետք է դառնար «Ծովրոպայից մինչև Հնդկական կայսրության սահմանները» տարածվող՝ Մեծ Բրիտանիայի հետ «բարեկամական» կապեր ունեցող պետությունների շղթայի ուժեղ օղակը<sup>1</sup>:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը անգլիական գաղութարարները իրանական պետության տերիտորիան հուսալի պատենշ էին համարում Հնդկաստանն իրենց ձեռքում պահելու, նրա կողոպուտն ապահովելու համար: Իսկ երբ զավթեցին Իրաքը, ընգլայնեցին իրենց ռազմական, քաղաքական և տնտեսական էքսպանսիան ամբողջ Մերձավոր և Միջին արևելքում, երբ Իրանում դադարեց ցարական Ռուսաստանի և կայսերական Գերմանիայի մրցակցությունը, երբ Իրանը հարմարավետ պլացդարմ էր դարձել

<sup>1</sup> Earl of Ronaldshay, The life of Lord Curzon, vol. III, p. 209, London, 1928.



Իրիտասարդ սովետական իշխանության դեմ զինված նվաճողական ինտերվենցիա սանձազերծելու համար՝ նրա դերն ու նշանակությունն է՛լ ավելի էր աճել: Իրանը մի սեպ էր, խրված բրիտանական տիրապետությունների մեջ: Ա՛յն թե ինչու անգլիական իմպերիալիզմը այդքան եռանդուն ձեռնամուխ եղավ այդ սեպի վերացման, Իրանի վրա իր լիակատար տիրապետությունը հաստատելու գործին: «Իմպերիալիստները հաշտությունը կնքելուց անմիջապես հետո զբաղվեցին գաղութների բաժանքով. Անգլիան վերցրեց Պարսկաստանը...»,—գրել է Վ. Ի. Լենինը 1919 թվականի հուլիսին<sup>1</sup>:

Դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ, չնայած Իրանի կառավարության կողմից հռչակված չեզոքություն<sup>2</sup>, երկրի տերիտորիան վերածվել էր պատերազմող կողմերի քաղաքական սուր պայքարի և ռազմական գործողությունների ասպարեզի, բրիտանական զինված ուժերն իրենց հսկողությունն էին հաստատել երկրի հարավային, հարավ-արևելյան, հարավ-արևմուտյան և կենտրոնական նահանգների մի մասի վրա: Անգլիական պրոպագանդան երեսպաշտորեն պնդում էր, որ դա արվում է իբր թե հանուն Իրանի շահերի պաշտպանության: Ոտնահարելով երկրի սովերենությունը, անտեսելով իրանական կառավարության բողոքները, Իրանի տերիտորիայում անգլիական գաղութարարները կազմակերպեցին զինվորական նոր ստորաբաժանումներ՝ «Հարավային պարսկական հրաձիգների կորպուսը», որի հրամանատարական կազմը բաղկացած էր բացառապես բրիտանական սպաներից: 1918 թ. սկզբին այդ կորպուսում արդեն կար 5000 զինվոր և սպա:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի հաղթանակը Ռուսաստանում, Սովետական Ռուսաստանի հրաժարվելը Իրանի ներքին գործերին միջամտելուց, ռուսական զորքերի դուրս բերումը Իրանից, որն ավարտվեց 1918 թ. գարնանը, անգլիական գաղութարարները համարեցին որպես հարմար պահամոռջ Իրանում իրենց ռազմական հսկողությունը հաստատելու համար: Իմպերիալիստական քաղաքականության շատագուժներից Միդլտոնը ուղղակի գրում է. «Զպետք է կարծել, որ Մեծ Բրիտանիան կհրաժարվեր օտոմանյան և ցարական կայսրությունների կործանման հետևանքով առաջացած հրապուրիչ հեռանկարներից»<sup>2</sup>: Իսկ որո՞նք

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 636—637:

<sup>2</sup> Middleton K. W. B. Britain and Russia, An Historical Essay, p. 125, London—New York, 1948.

էին այդ «հրապուրիչ հեռանկարները», եթե ոչ ամբողջ Իրանը, Անդրերկովկասը, Թուրքմենստանը զավթելը, Կասպից ծովը բրիտանական լճի վերածելը, թուրքական տերիտորիաները նվաճելը և Հնդկական կայսրության սահմաններն ընդլայնելը<sup>1</sup>։

Եթե պատերազմի ժամանակ բրիտանական զինված ուժերի ներկայութունը Իրանում «արդարացվում էր» Գերմանիայի և Թուրքիայի կողմից Հնդկաստանի նկատմամբ եղած (և անգլիացիների կողմից ամեն տեսակետից չափազանցված) սպառնալիքով, ապա 1918 թ. վերջից Իրանում նրանց գտնվելը ոչ մի կերպ հնարավոր չէ արդարացնել։ Դա Իրանի ազգային անկախության և սուվերենության ամենակոպիտ ոտնահարում էր։ 1918 թ. փետրվարին Իրանի կառավարությունը Թեհրանում անգլիական միսիային հղած իր նոտայում պահանջեց շեղյալ համարել 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագիրը<sup>2</sup>, ցանկություն հայտնեց մասնակցել միջազգային Փորումներին, որոնք, նրա կարծիքով, պետք է վերացնեին պատերազմի հետևանքները, ապահովեին երկրի անկախ դարգացումը։ Մեծ Բրիտանիայի կառավարությունը խուսափեց կոնկրետ պատասխան տալ այդ պահանջներին, իսկ հետագա իր քայլերով ամեն կերպ խոչընդոտում էր միջազգային ասպարեզում Իրանի՝ որպես ինքնուրույն քաղաքականություն վարող սուվերեն պետության հանդես գալուստ։ 1918 թ. մարտի 9-ին Մեծ Բրիտանիայի դեսպանորդը Իրանում պաշտոնապես հաղորդեց իրանական կառավարությանը, որ համաձայն Լոնդոնի ցուցումներին, Իրանի արևմտյան նահանգները կօկուպացնեն անգլիական զորքերը, և որ ընդհանրապես մինչև պատերազմի ավարտը Իրանում անգլիական շահերը կպաշտպանեն բրիտանական զինված ուժերը<sup>3</sup>։ Իրանի կառավարությանն ուղարկված նոտայում անգլիական կառավարողները խոստանում էին թուրքերին պարտության մատնելուց հետո ազատել իրանական տերիտորիան և հատուցել անգլիական զորքերի պատճառած վնասների դիմաց։ Միաժամանակ, անգլիական կառավարությունը խոստանում էր «օգնել» Իրանին վերականգնելու քայլված տնտեսությունը։

Սամսամ էս-Սալթանեի իրանական կառավարությունը թեև հասարակական կարծիքի ճնշման տակ ստիպված էր բողոքել ան-

<sup>1</sup> A f s c h a r M., La Politique européenne en Perse, Berlin, 1921, p. 168.

<sup>2</sup> Այդ համաձայնագիրը սուվերենական կառավարությունը շեղյալ էր համարել դեռևս 1917 թ. դեկտեմբերին։

<sup>3</sup> «Бакинский рабочий», 1918, 15.V, № 87 (203).

գլխական գինված ուժերի գործողութիւնների դեմ, բայց ոչ մի գործ-  
նական քաջ շահունարկեց երկրի իրավունքները վերականգնելու,  
օտարերկրյա զորքերը դուրս բերելու գործում և ենթարկվեց իմ-  
պերիալիստների պահանջներին: Շուտով (1918 թ. օգոստոս) կազմ-  
վեց նոր կառավարութիւն՝ անգլիական գործակալ Վոսոուզ Էք-Դոլեի  
գլխավորութեամբ, որը անգլիացիների կամակատարն էր:

1918 թվականի գարնանը անգլիական գաղութարարները ձեռ-  
նամուխ եղան իրենց պլանների իրագործմանը: Հյուսիս-արևմտյան  
Իրանից ցարական զորքերի հեռանալուց անմիջապես հետո նրանց  
տեղը գրավեց գեներալ Դենստերվիլի ջոկատը: Նրա առաջ խնդիր  
էր դրված գրավել Ռեշտը և Էնդելին, այնուհետև անցնել Անդրկով-  
կաս՝ Բաքու և Թբիլիսի: Շարժվելով Բաղդադից, այն ընթացավ  
Քերմանշահ-Համահան—Ղաղվին-Մենջիլ գծով: Մենջիլից հյուսիս  
հանդիպելով Քուշուկ խանի պարտիզանական ջոկատների դիմա-  
դրութեանը նրան չհաջողվեց առաջ շարժվել: Շուտով Դենստեր-  
վիլին իր հսկողութիւնը հաստատեց օկուպացված շրջանների վրա:

Ոչ միայն Դենստերվիլը, այլև անգլիական բազմաթիվ պատ-  
մաբաններ, իրենց հիշողութիւնները հրատարակած անգլիական  
դինյութրականներ Դենստերվիլի ջոկատի գործունեութիւնը պատ-  
ճառաբանում են պատերազմական անհրաժեշտութեամբ, ամոռա-  
նալույժ, որ պատերազմից հետո այդ ջոկատին փոխարինեցին այլ  
ստորաբաժանումներ, որոնք մի քանի տարի շարունակեցին Իրանի  
տերիտորիայի օկուպացումը: Իրանում անգլիական գաղութարար-  
ների ամբողջ հետագա քաղաքականութիւնը հերքում է գաղութա-  
կալութեան պաշտպանների փաստարկները: Անգլիացիների խնդիրն  
այն չէր, որպեսզի Իրանը պաշտպանեին թուրքերից կամ գերմա-  
նացիներից, պահպանեին նրա պետական անկախութիւնը, այլ  
այն, որպեսզի, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով երկրում գեր-  
մանա-թուրքական ազդեցութեան վերացման համար, նախադրյալ-  
ներ ստեղծեին Իրանը ղալթելու, այնտեղ իրենց տիրապետութիւն-  
ը հաստատելու և նրա հարմար ստրատեգիական դիրքը հակա-  
սովետական ինտերվենցիայի խնդիրներին ծառայեցնելու համար:  
Նիքոլսոնը խոստովանում է, որ բրիտանական զորքերի Իրանում  
գտնվելը այլ նպատակ չունի, բացի աչքող երկրում կարմիր Ռու-  
սաստանի դեմ ճակատ ստեղծելուց<sup>1</sup>:

<sup>1</sup> Nicolson N., Curzon: The Last Phaze 1919—1925, London, 1937, p. 132.

1918 թ. վերջին Իրանի բոլոր հիմնական կոմունիկացիաները և ստրատեգիական նշանակություն ունեցող կետերը գտնվում էին անգլիական ուղղման ուժերի ձեռքում:

Էնգելին վերածված էր անգլիական ինտերվենտների ուղղման ժողովին բաղադրի և պլանավորում էր հանդիսանում Սովետական Ռուսաստանի դեմ թշնամական ուղղման գործողություններ շղթայագերծելու համար: Անգլիական թագավորական նավատորմի կապիտան Նորրիսի գլխավորած ուղղման ժողովին արշավախումբը, բաղկացած 1000 սպայից և ժողովին հետևակից<sup>1</sup>, զավթելով և ղինելով ռուսական առևտրական նավերը, ձեռնարկել էր Կասպից ծովում «անգլիական» ուղղման ժողովին նավատորմ ստեղծելու գործը: Շուտով «...Կասպից ծովի ջրերում պատմության մեջ առաջին անգամ երևացին թագավորական նավատորմի նավերը», — պարծենկոտ տոնով գրում է գաղութարար Մալեսոնը<sup>2</sup>: Դենստերվիլի խոստովանությամբ, անգլիական ինտերվենտների առաջին իսկ քայլերը Կասպից ծովի շրջանում ուղղված էին ոչ թե թուրքերի, այլ Սովետական Ռուսաստանի դեմ<sup>3</sup>: Անգլիական գաղութարաները հենվելով իրենց ղավթած Էնգելիի, Բաքվի, Պետրոպոլսկի և Կրասնովոդսկի վրա, 1919 թ. սկզբին հսկողություն հաստատեցին այդ ծովի մեծ մասի վրա, բոլոր միջոցներով օգնելով Ռուսաստանի հակառակույցի ուժերին:

Այդ գործում հիմնական բազան Իրանն էր: Սպառազինության և զինամթերքի տեղափոխումը կատարվում էր Իրանի տերիտորիայով և հանձնվում սպիտակգլարդիականներին:

Անգլիական ուղղման իշխանությունները կազմակերպել էին գործակալների ու սուրհանդակների մի ամբողջ սիստեմ, որն ընդգրկել էր Համադանից մինչև Կասպից ծով ընկած տարածությունը: Նրանց հավաքագրած ջոկատները կոչվում էին ազգային-ազատագրական շարժման դեմ: Դրանք ոչ այլ ինչ էին, քան «անգլիական սպաների ղեկավարությամբ» գործող բանդաներ, խոստովանում է Դենստերվիլը<sup>4</sup>:

Վերջինիս շոկատի Բաքու գնալուց հետո, նրան Իրանում փոխարինելու եկան բրիտանական նոր «գորամասեր» «որպերֆորս» (Հյուսիս-պարսկական ուժեր) ընդհանուր անունով: Սկզբում դրանք

<sup>1</sup> Journal of the Central Asian Society, vol. X, part III, p. 217.

<sup>2</sup> „Fortnightly Review“, march, 1933, London.

<sup>3</sup> Денстервиль, Английский империализм в Баку и Персии 1917—1918, Тифлис, 1925, стр. 206—207.

<sup>4</sup> Դենստերվիլ, նշվ. աշխ., էջ 111:

ենթարկվում էին Միջազգայնական ղորքերի հրամանատար դեներալ Ուիլյամ Մարշալին, այնուհետև ստեղծվեց Հյուսիս-իրանական սնգլիական ղորքերի հատուկ հրամանատարություն՝ գեներալ Չամպայնի գլխավորությամբ: Վերջինս այդ պաշտոնում մնաց մինչև 1920 թ. հոկտեմբեր, երբ նրան փոխարինեց գեներալ Այրոնսայդը:

1920 թվականի սկզբին Հյուսիս-արևմտյան Իրանում արդեն բրիտանական զինված ուժերի խոշոր ստորաբաժանումներ կային: Գաղութակալության առավել մոլի պաշտպանները պահանջում էին լուծեղացնել բրիտանական զորամասերը Իրանում, հաղթահարել բոլոր խոչընդոտները՝ աղգային-ազատագրական շարժումը, օպոզիցիոն տարրերի դիմադրությունը և հաստատել անգլիական տերու տնօրինություն այդ երկրում: Անգլիական «Թամս» թերթը մեկնաբանելով անգլիական պառլամենտում Չերչիլի հայտարարությունն այն մասին, որ Միջազգայնական ղորքերի թիվը 79500-ի է հասնում, իր դժգոհությունն էր հայտնում Իրանում անդրլիացիների հետապնդած նպատակների իրագործման համար այդ թվի չափազանց «փոքր» լինելու առթիվ:

Այն ժամանակ, երբ բրիտանական ղորքերը օկուպացիոն ռեժիմ էին հաստատում Հյուսիս-արևմտյան նահանգներում, հարավում և կենտրոնական շրջաններում գեներալ Պերսի Սայքսը ամրապնդում էր «Հարավային պարսկական հրաձիգների կորպուսի» դիրքերը, ընդլայնում նրա թվական կազմը, ճնշում կաշկայների և իրանական այլ ցեղերի դիմադրությունը: Կաշկայները Սոուլեթ էդ-Դուլեի գլխավորությամբ, սկսած 1918 թվականի մայիսից, վերսկսել էին իրենց զինված հարձակումները անգլիացիների վրա, սրբազան պատերազմ հայտարարելով նրանց դեմ: 1918 թ. հոկտեմբերին բրիտանական կառավարության որոշմամբ նոր ուժեր ուղարկվեցին կաշկայների դեմ: Վերջիններիս դիմադրությունը հաղթահարելուց հետո հարավային և կենտրոնական նահանգների վրա նույնպես հաստատվեց անգլիական զինված ուժերի հսկողությունը: 1919 թվականի սկզբին Սայքսի կորպուսն արդեն վերածվել էր «էֆեկտիվ ուժի»<sup>2</sup>: Ինչ հազար զինվոր ունեցող այդ կորպուսն անգլիացիները համարում էին 1919 թվականի անգլո-պարսկական համաձայնագրով վերակազմվող իրանական բանակի հիմքը:

<sup>1</sup> «The Times», 22.V, 10.VI.1920.

<sup>2</sup> Temperly N. W. V. A history of the peace Conference of Paris, vol. VI, London, 1924, p. 210.

Անպիտակական ինտերվենտներն իրեց ռազմական հսկողութիւնը հաստատեցին նաև Հյուսիս-արևելյան նահանգների վրա: Ստեղծվեց արևելա-իրանական կոմունիկացիոն գիծը: Մեշհեդից Հյուսիս գտնված ըրիտսնական զորամասերը, ինչպես նաև Մեշհեդից մինչև Աշխարադ ընկած ամբողջ շրջանը ենթարկվում էին 1918 թ. գարնանը խորասան եկած բանակալ Մալեսունի «հատուկ հրամանատարութեանը»: Իսկ Մեշհեդից հարավ սկսվում էր գեներալներ Դեյլի և Դիքսոնի զինվորական շրջանը<sup>1</sup>: Այդ ամբողջ տերիտորիան բաժանված էր ենթաշրջանների (իրենց կենտրոններով, շտաբներով ու պահակակետերով) Տուրքեթում, Կահնում, Բիրջանգում, Խորմակում, Ջուղակում և Դոզդարում<sup>2</sup>: Մեշհեդը գաղութարարների գլխավոր հենակետն էր, կենտրոնական բազան: Այստեղ կառուցված էր զինվորական թաղամաս իր պահեստներով և զորանոցներով: Անպիտակական ինտերվենտները մտադիր էին այնքան հիմնավոր ամրանալ այստեղ, որ կառուցել էին բուրձայական «տաճարներ» իրենց հնդկական զորամասերի համար<sup>3</sup>: Հյուսիս-արևելյան Իրանում անպիտակական զորքերի ընդհանուր թիվը հասնում էր 15000 մարդու, որից ութ հազարն անմիջականորեն մասնակցեց Թուրքմենստանում հակասովետական ինտերվենցիային<sup>4</sup>: Երկրի ամբողջ ներքին կյանքը ենթարկված էր օտարերկրյա ինտերվենտների շահերին:

«Անպիտակների ձեռքում էին գտնվում ոչ միայն ռազմական իշխանութիւնը, կաղակային և ժանդարմական զորամասերը, այլև ամբողջ քաղաքացիական իշխանութիւնը: Բոլոր աքիմներին (նահանգապետեր), գավառային պետերին, ոստիկանական բարձրատիճան պաշտոնյաներին անմիջականորեն նշանակում էին անպիտակները, կամ, ծայրահեղ դեպքում, նրանց թուլութիւնով»:

\* \* \*

1918 թվականի դեկտեմբերի 30-ին Մեծ Բրիտանիայի ռազմական կարիներտի Արևելյան կոմիտեն քննարկեց Իրանի ռազմական օկուպացիայի հարցը: Նիստում նախագահում էր արտաքին

<sup>1</sup> Dickson W. E. R. Brig. General, East Persia, a Backwater of the great war, London, 1924.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 138:

<sup>3</sup> Журнал „The nation“. 18.XII.1920, vol. XXVIII, № 12, p. 407, London.

<sup>4</sup> Газета „Жизнь национальностей“, 15.VII.1919, „The Times“, 23.VI.1920.

<sup>5</sup> «Жизнь национальностей», 1.X.1920.

գործերի մինիստր լորդ Քերզոնը: Կոմիտեում առաջարկվեց Իրանից դուրս բերել բրիտանական զորքերը: Քերզոնը կտրականորեն հանդես եկավ նման տեսակետի դեմ, այն համարելով «բարոյազանց, աննշան և կորստաբեր»<sup>1</sup>: Նա պնդեց բրիտանական զորամասերը թողնել Իրանում մինչև այն ժամանակ, քանի դեռ ռազմական օկուպացիային չի փոխարինել «կայուն և ավելի էժան համաձայնագիրը»<sup>2</sup>: Քերզոնը հայտարարեց, որ Անգլիան իր վրա կվերցնի «Պարսկաստանի վճռական, ռայց լիբերալ խնամակալի դերը»<sup>3</sup>: Քերզոնի գաղութարարական դիրքորոշումը լրիվ պաշտպանություն գտավ անգլիական իմպերիալիզմի աչքի ընկնող ներկայացուցիչներ Չեմբեռլենի, Չերչիլի, Մոնտեգյուրի, Բալֆուրի և այլոց կողմից: Արևելյան կոմիտեն հավանություն տվեց Իրանում Քերզոնի իմպերիալիստական քաղաքականությանը և նրան լիազորեց բանակցություններ սկսել իրանական կառավարության հետ Մեծ Բրիտանիայի համար շահավետ համաձայնագիր կնքելու շուրջը:

Այդ այն ժամանակ էր, երբ նախապատրաստական աշխատանքներ էին տարվում Փարիզի խաղաղության կոնֆերանսի բացման համար: Քերզոնը առաջարկեց Փարիզի կոնֆերանսին դիմած իրանական պատվիրակությանը «անկեղծ խորհուրդ տալ՝ օգնություն փնտրել Անգլիայում»: Մեծ Բրիտանիայի կառավարող շրջանները չէին ցանկանում Իրանին թույլ տալ մասնակցել խաղաղության կոնֆերանսին, ձգտելով պահպանել իրենց հեգեմոն դիրքը այդ երկրում: Պարզ է, որ կոնֆերանսին Իրանի մասնակցության դեպքում, Անգլիան կկորցնեք այնտեղ իր դիրքերը պահպանելու այն հնարավորությունները, որոնք նա ուներ Իրանում իր ցանկությունները հարցերը միայնակ տնօրինելու ժամանակ:

Այնուամենայնիվ, հակառակ անգլիացիների ցանկության, իրանական պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին Մոշավեր էլ-Մամալեբը՝ արտաքին գործերի մինիստր, Միրզա Հոսեյն Խան Ալան և ուրիշներ, Փարիզ ժամանեց 1919 թ. փետրվարին, հավակնելով մասնակցել խաղաղության բանակցություններին և հատուցում ստանալ պատերազմի տարիներին Իրանի կրած վնասների դիմաց: Պատվիրակությունը փորձում էր հիմնավորել «քաղաքական ինքնուրույնություն» ունենալու Իրանի իրավունքը, կապիտուլյացիոն ռեժիմի վերացման և կոնֆերանսին իր մասնակցության անհրա-

1 Ռոնալդ Քեյ, նշվ. աշխ., էջ 213:

2 Նիքոլսոն, նշվ. աշխ., էջ 132:

3 Նույն տեղում, էջ 133:

ժեշտությունը: 1919 թվականի մարտին Փարիզի խաղաղության կոնֆերանսին ներկայացվեց հատուկ հուշագիր, որտեղ կոնֆերանսի մասնակից պետությունների տւշադրությունը հրավիրվում էր այն բանի վրա, որ կապիտուլյացիոն ռեժիմը ոտնահարում է երկրի սուվերենությունը, որ այն պետք է վերացվի: Իրանի պատվիրակները մեծ հույսեր էին կապում Փարիզի խաղաղության կոնֆերանսի հետ, չըմբռնելով, որ այն իմպերիալիստական պետությունների հավաք է և մտահոգված է ոչ թե ճնշված ժողովուրդներին անկախություն տալու հարցով, այլ աշխարհը հաղթողների ցանկությանը վերաբաժանելով: Այդ վերաբաժանմանը փորձեցին մասնակցել նաև... Իրանի ռեակցիոն կառավարողները: Վերոհիշյալ հուշագրում իրանական կառավարությունը համոզեա եկավ սովետական պետության նկատմամբ իմպերիալիստական, զավթողական հավակնություններով:

Իրանում ցարական Ռուսաստանի արտոնություններից Սովետական կառավարության հրաժարվելը իրանական կառավարող շրջանների կողմից ընդունվեց ոչ թե իբրև մեծահոգի քայլ, այլ որպես աշխարհում առաջին սոցիալիստական պետության թուլության նշան: Այլ կերպ չի կարելի բացատրել այդ շրջանների ձգտումը մասնակից դառնալ քաղաքացիական կռիվներով ու հակասովետական ինտերվենցիայի դեմ պայքարով զբաղված սովետական պետությունը մասնատելու իմպերիալիստական պլանների իրականացմանը: Վերոհիշյալ հուշագրում պահանջվում էր իրանին հանձնել Անդրկովկասի կեսից ավելին, մասնավորապես, ամբողջ Ադրբեջանը՝ Բաքու քաղաքով, Հայաստանը՝ Երևանով, Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը և այնուհետև Դաղստանի մի մասը Դեբրեհդ քաղաքով, Կրասնովոդսկը, Աշխաբադը, Մերվը, Խիվան և այլ քաղաքներ ու տերիտորիաներ: Այս բոլոր շրջանների տերիտորիան կազմում էր ավելի քան 570 հազար քառ. կմ<sup>2</sup>:

Իրանական ռեակցիոնիստների այդ ազդեցիվ պլանները չի կարելի դիտել այդ տերիտորիաների համար իմպերիալիստական խոշոր տերությունների միջև ծավալված պայքարից դուրս: Նշված տերիտորիաների զգալի մասը այդ ժամանակ կամ օկուպացված էր, կամ վերահսկվում էր անգլիացիների կողմից, և մրցակցող տերությունները, առաջին հերթին՝ ԱՄՆ-ը և Ֆրանսիան, չէին կարող անտարբեր վերաբերվել իրենց պարտնյորի «հաջողություններին»:

1 Ա Ֆ շ ա ռ, նշվ. աշխ., էջ 56—57:

2 «История дипломатии», т. III, стр. 33, М., 1945.



ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կառավարող իմպերիալիստական շրջանների միջև լինող հարաբերությունը, որ Սովետական Ռուսաստանը թույլ է, անկարող մինչև վերջ պաշտպանելու իր տերիտորիալ անձնուձևի իրավունքները և Անդրիայի շահից ավելի ուժեղանալու վախից, դիմում էին հակամիջոցների: Այնպես որ իրանական պատվիրակության վարքագիծը շատ բանով պայմանավորված էր ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կառավարողների՝ ոչ բացահայտ, բայց շատ որոշակի օժանդակությամբ: Սակայն, ինչպես նիքոլսոնն է գրում, «...իրանական պատվիրակության պահանջն... այնքան ֆանտաստիկ էր, որ այսպես թե այնպես օտարում էր Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների համակրանքը»<sup>1</sup>:

Իրանական պատվիրակությանը շսեցին Փարիզի կոնֆերանսում: Այդ առթիվ անգլիական «Դեյլի նյուս» թերթը գրել է. «Անգլիան ամբողջապես անդամալույծ արեց պարսկական միսիայի գործունեությունը Փարիզում»<sup>2</sup>: Անգլիական այլ թերթերում երևան եկան Իրանին «համակրող», նրան «ցավակցող» հոդվածներ, որոնցում նրանց հեղինակները Իրանի կառավարությանը խորհուրդ էին տալիս բոլոր իր պահանջներով ու հարցերով դիմել ուղղակի միայն Մեծ Բրիտանիայի կառավարությանը:

Երբ իրանական պատվիրակությունը դիմում էր Փարիզի խաղաղության կոնֆերանսին մասնակցելու համար, Թեհրանում, սկսած 1918 թվականի աշնանից, բանակցություններ էին տեղի ունենում անգլո-պարսկական համաձայնագիր կնքելու շուրջը: Անգլիական դեսպան Պերսի Քոքսը բրիտանական իմպերիալիզմի կամքն էր թելադրում Վոսուդ էդ-Դոլեի մարիոնետային կառավարությանը: Վոսուդ էդ-Դոլեն, որը հայտնի է որպես ռեակցիոներ և օտարերկրացիների կամակատար, ամեն կերպ նպաստում էր Իրանը բրիտանական տիրապետությանը ենթարկելու հակաազգային քաղաքականությանը: Նրա գլխավորած իրանական կառավարությունը, արտահայտելով կալվածատեր-հողատերերի, խոշոր կոմպրադորների և հոգևորականության հակաժողովրդական բռնի շահերը, ամբողջ պետական ապարատը ենթարկել էր օտարերկրացիներին, տեղորիստական մեթոդներով իր ճանապարհից վերացնելով բոլոր հայրենասերներին, օպոզիցիոն բոլոր տարրերին:

1919 թվականի հոկտեմբերի համաձայնագիրն արդեն պատրաստ էր, բայց անգլիական կառավարությունը շէր ցանկանում հրապար-

1 Նիքոլսոն, նշվ. աշխ., էջ 135.

2 «Известия», 21.XI.1919, № 210.

րակել նրա և ոչ մի հատված, քանի դեռ Մերձավոր արևելքի հար-  
ցերը քննարկվում էին Փարիզի կոնֆերանսում<sup>1</sup>, Նույնիսկ Փարի-  
զում գտնված իրանական պատվիրակները չգիտեին Քեհրանի ան-  
գլո-իրանական բանակցությունների մասին<sup>2</sup>: Անգլիական գաղութ-  
արարներն ամեն կերպ ձգտում էին Իրանի փաստացի զավթումը  
«օրինականացնել» առանց իմպերիալիստական այլ պետություն-  
ների միջամտության: Նրանք, օգտագործելով իրենց տիրապետող  
ոլորքերը Իրանում և ռեակցիոն խմբերի օժանդակությունը, կաշառ-  
քի և ռեպրեսիաների միջոցով իրանական կառավարությանը թե-  
լադրեցին համաձայնագրի ստրկացուցիչ պայմանները<sup>3</sup>: Անգլիա-  
կան կառավարության անունից այն ստորագրեց Պերսի Քոքսը, իսկ  
Իրանի կառավարության անունից՝ Վոսուդ էդ-Ռուհն:

1919 թ. օգոստոսի 9-ի անգլո-պարսկական համաձայնագրի  
անվանումը՝ «Պարսկաստանի առաջադիմությունը և բարօրությունը  
կպաստելու համար բրիտանական օգնության մասին», նրա պրե-  
սամբուլան և առաջին հոդվածը՝ «Պարսկաստանի բացարձակ ան-  
կախությունը և ամբողջականությունը հարգելու մասին» միայն  
խորամանկ, երեսպաշտական քող էին Իրանում անգլիական պրո-  
տեկտորատ հաստատելու համար:

Բրիտանական իմպերիալիստների դեմագոգիան շատ ցայտուն  
է արտահայտված Անգլիայի արտաքին գործերի մինիստրի տեղա-  
կալ Սեսիլ Հարմսվորտի ճառում, որը նա արտասանել էր 1919 թ.  
օգոստոսի 17-ին համաձայնության ստորագրման առթիվ: «Նորին  
գերազանցության քաղաքականությունը կայանում է նրանում,—  
հայտարարել է նա,— որպեսզի օգնի Պարսկաստանին վերականգնը-  
վելու ամուր հիմքերի վրա: Կասկածի և ոչ մի փոքր հիմք չկա, որ  
կառավարությունը (Անգլիայի—Ձ. Կ.) առաջարկել է կամ պարս-  
կական կառավարությունը համաձայնվել է պրոտեկտորատի նման  
ինչ-որ բան ստեղծել: Պարսկական կառավարությունը դիմեց Մեծ  
Բրիտանիային, որպես իր ամենաուժեղ և բարեկամաբար տրամա-  
դրված հարևանին: Եվ կառավարությունը (անգլիական—Ձ. Կ.)

<sup>1</sup> F a t e m i N. S., Dip'omatic History of Persia, 1917—1923, Anglo-  
Russian Power politic in Iran, New-York, 1952, p. 27.

<sup>2</sup> The Times, 5.VI.1920.

<sup>3</sup> Great Britain Parliament Cmd. Command Papers, Persia № 1 (1919),  
Agreement Between Britanic Majesty's Government and the Persian Go-  
vernment, signed at Teheran; London, 1919.

կնահանջեր իր տրադիցիոն քաղաքականութիւնից... , եթէ հրաժար-  
վիր արձագանքել այդ դիմումին<sup>1</sup> :

Անգլիական դիվանագիտութիւնը միայն խոսքով էր հարդում  
փոքր և հետամնաց ժողովուրդների անկախութիւնը և տերիտորիալ  
առձեռնմխելիութիւնը: Իրականում այդ տարիներին անգլիացի-  
նևրի ողջ գործունեութիւնն Իրանում երկրի պետական սովետներու-  
թյան բացահայտ, կոպիտ խախտման, նրա ներքին գործերին  
միջամտելու և միջազգային իրավունքի բոլոր նորմաները ոտնա-  
հարկու արտահայտութիւն էր: Անգլիացիներն Իրանում իրենց պա-  
հում էին այնպես, ինչպես գաղութներում. ամբողջ երկիրը ողողված  
էր բրիտանական բանակի զորամասերով, առևտուրը, ֆինանսները  
և երկրի ներքին կյանքի մյուս լծակները գտնվում էին նրանց ձեռ-  
քում:

Վոսուղ էդ-Դուլեի կառավարութիւնն ամբողջապես կատարում  
էր անգլիական գաղութարարների կամքը: Անգլո-պարսկական հա-  
մաձայնագրի կնքման գործում նրա համախոհներն էին հայտնի  
ոնակցիտներ. կալվածատեր Նոսրետ էդ-Դուլեն (արքայազն Փիրուզ),  
Ա. քրտար Միրզան, Սարեմ էդ-Դուլեն, Հեշմեթ էդ-Դուլեն և ուրիշներ,  
որոնց «Թաշեղոդ» թերթը բնութագրել է որպես իրենց երկրի պատիվն  
ու անկախութիւնը օտարերկրյա տերերի շահերին համապատաս-  
խա՞ն առուծախի առարկա դարձնելու մասնագիտութիւնը զբաղվող  
մարդկանց<sup>2</sup>: Սրանք անգլիացիներից ստացել էին 130.000 ֆունտ  
ստեռլինգ կաշառք: Ջեյմս Բալֆուրն իր գրքում հաստատում է այդ  
բանը: Նա գրում է, որ «ի լրացումն ռազմական ինտերվենցիայի,  
բրիտանական կառավարութիւնը դիմում էր նպաստների և կաշառք-  
ների լայն կիրառման, որոնք այս կամ այն առիթով տրվում էին  
տարբեր մարդկանց»:

Անգլո-պարսկական համաձայնագրի ամբողջ ոգին խոսում է  
այն մասին, թե իբր Իրանը անկարող է ինքնուրույն կառավարել  
իր գործերը և կարիք ունի «բարեբարների» խնամակալութիւն և դե-  
կավարութիւն: Համաձայնագրի երկրորդ հոդվածով բրիտանական  
կառավարութիւնը պարտավորվում էր Իրան ուղարկել իր խոր-  
հրդականներին, որոնք պետք է սպասարկեին իրանական պետա-  
կան օրգաններին: Հետաքրքրական է, որ այդ «խորհրդականները»  
նշանակվում էին իրանական կառավարութիւն հաշվին, բայց, իրա-

<sup>1</sup> House of Commons, august 1919, vd. 119, p. 1916, մեջբերում ենք  
Ֆաթեմի գրքից, էջ 68:

<sup>2</sup> Ֆաթեմի, նշվ. աշխ., էջ 78:

կանում, ծառայելու էին Իրանում բրիտանական իմպերիալիզմի դիրքերն ամրապնդելու շահերին: Նրանց գործունեությունը ցույց տվեց, որ անգլիացիների գլխավոր նպատակն էր երկրի տնտեսությունը, քաղաքականությունը, ֆինանսները, բանակը ենթարկել իրենց պլաններին: Պատահական չէ, որ անգլիական կառավարությունը համաձայնագրի ստորագրումից հետո այդպես շտապում էր իրագործել նրա կետերը՝ շսպասելով, որպեսզի այն հաստատվեր մեշլիսի կողմից: «Խորհրդականներ» նշանակելու հարցում Անգլիայի հատուկ շահագրգռվածությունն աչքի էր զարնում նաև այն բանում, որ անգլիական կառավարությունը փոխառության տրամադրումը պայմանավորում էր «խորհրդականների» կողմից իրենց պարտականությունների կատարման ստանձնումով:

Երրորդ հոդվածի համաձայն բրիտանական կառավարությունն Իրանի հաշվին տրամադրում էր սպաներ, զենք և սպառազինություն իրանական միատարր բանակ կազմավորելու համար: Այդ նպատակով ստեղծվում էր անդլո-իրանական զինվորական հանձնաժողով: Այսպիսով, անգլիացիները ձգտում էին Իրանում ստեղծել իրենց սպաներին ենթակա ռազմական միավորումներ, որոնք պետք է փաստորեն կատարեին գաղութարարների կամքը: Նշված հոդվածում ստեղծվող բանակի գլխավոր ֆունկցիաներից մեկը համարվում էր «կարգ ու կանոնի» ապահովումը երկրում, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ազգային-ազատագրական շարժման ճնշում: Այս միջոցառումների կենսագործման համար բրիտանական կառավարությունը տրամադրում էր փոխառություն: Այդ կապակցությամբ ստորագրվեց հատուկ պայմանագիր (կոնտրակտ): Անգլիան տարեկան 7%-ով, երեք նվազով և 20 տարի ժամկետով Իրանին տրամադրում էր 2000000 ֆունտ ստեռլինգ: Հատուկ տեղեկանքում նշվում էր, որ 1911 թ. մայիսի 3-ի անգլիական փոխառությունը (1250000 ֆունտ ստեռլինգ) Իրանը կարող էր մարել նոր փոխառությամբ, միևնույն՝ վաշխառուական պայմաններով:

Համաձայնագրի 5-րդ հոդվածում բրիտանական կառավարությունը խոստանում էր նպաստել իրանական կառավարության ջանքերին երկրի հաղորդակցության ճանապարհների զարգացման գործում: Դեմագոգիկ կերպով ընդգծելով իրենց պատրաստակամությունը «օգնության» հարցում, անգլիական կառավարողները հետապնդում էին բացառապես Անգլիայի շահերին համապատասխանող ռազմա-տրանսպորտական և առևտրական նպատակներ: Ըստ համաձայնագրի, կառուցվելիք ճանապարհները գտնվելու էին անգլիական ընկերությունների հսկողության տակ: Մաքսային նոր

սիստեմը, որը պետք է մշակվեր համաձայնագրի վեցերորդ հոդվածին համապատասխան, անգլիական կապիտալիստներին և առևտրականներին անսահմանափակ հնարավորություններ էր ընձեռելու իրենց ապրանքները Իրան ներմուծելու համար:

Համաձայնագրի բովանդակությունից հետևում է, որ ապագայում Իրանը չէր կարող որևէ ինքնուրույն արտաքին քաղաքական գործարք կատարել և այն կարծեցյալ անկախությունը, որ մինչև այդ պահպանում էր Իրանը, գերոյի էր վերածվում անգլիական իմպերիալիզմի ռազմա-դիվանագիտական հաղթանակով: Իրանական «Անթարեկ Իրան» թերթը, անդրադառնալով Անգլո-պարսկական համաձայնագրին, դրել է, որ անգլիացիների նպատակն էր «...պարսկական ռազմական ուժը ենթարկել ոչ թե Բահրանի, այլ Լոնդոնի կառավարությանը: Լիովին պարզ է նաև, որ անգլիական մասնագետների առաջարկած երկաթուղային պլանը համապատասխանում է Անգլիայի տնտեսական և ստրատեգիական շահերին, և ոչ թե Պարսկաստանի բարօրությանը: Մաքսային դրույթների փոփոխությունն իրականացվեց Անգլիայի տնտեսության ազդեցության ամրապնդման և նրա առևտրի ընդլայնման նպատակով<sup>1</sup>: Մի այլ համարում քննադատելով համաձայնագիրը, թերթը նշում էր, որ «սպարսիկ ժողովուրդը տեսնում է աջակցության և գաղութային ախորժակների տարբերությունը»:

1919 թվականի օգոստոսի 9-ի Անգլո-պարսկական համաձայնագրի կնքման հետ մեկտեղ անգլիական դեսպան Պերսի Քոքսը երկու նոտա հղեց Իրանի կառավարությանը: Նրանից առաջինում ասված էր, որ համաձայնագրի հաստատման դեպքում, Անգլիան խոստանում էր աջակցել Իրանին երկու պետությունների միջև եղած պայմանագրերը վերանայելու, պատերազմի հետևանքով Իրանին հասցված վնասը հատուցելու և Իրանի սահմանները ճշտելու գործում: Երկրորդ նոտայում հաղորդվում էր, որ Անգլիան Իրանից հատուցում չի պահանջի այն զորքերը պահելու համար, որոնց Անգլիան ստիպված է ուղարկել Իրանի՝ իր շեզոքությունը պաշտպանելու համար վերջինիս անկարողության հետևանքով, և որ Իրանը պետք է հրաժարվի իրանական տերիտորիայում անգլիական զորքերի ներկայության պատճառած վնասների դիմաց հատուցում պահանջելուց: Այսպիսով, անգլիական գաղութարարները ոչ միայն փորձում էին օրինականացնել իրենց ռազմական ինտերվենցիան Իրանում, այլև այդ ուզում էին անել Իրանի ժողովրդի հաշվին:

<sup>1</sup> S4' «Вестник НКВД», № 9—10, 15.XII.1921, стр. 163.

Պատահական չէ, որ անգլիական իմպերիալիստական շրջանները, պահպանողական ոեակցիոն թերթերը հրճվանքով դիմավորեցին Անգլո-պարսկական համաձայնագրի կնքումը: Լորդ Քերզոնը շահագանց գոհ էր իրանից: Համաձայնագրի կնքումը նա անվանեց «մեծ հաղթանակ», ավելորդ չհամարելով պարծենալ, թե «այդ ամենն արել եմ ես մենակ»<sup>1</sup>:

Համաձայնագրի իսկական բնույթը քողարկելու և Մեծ Բրիտանիայի ու Իրանի միջև հաստատված «փոխըմբռնումը» ցուցադրելու նպատակով, Անգլիա հրավիրվեց իրանական շահ Ահմեդը: Նրան ուղեկցում էր արքայազն Փիրուզը: Անգլիական կառավարութունը ճոխ ընդունելութուններ կազմակերպեց, որոնց ժամանակ զեմագոգիկ ճառերով հանդես եկան լորդ Քերզոնը և Մեծ Բրիտանիայի պետական այլ բարձրաստիճան գործիչներ<sup>2</sup>: Լոնդոնում անգլիական կառավարության ներկայացուցիչները և Իրանի արտաքին գործերի մինիստրը քննարկեցին համաձայնագիրը կենսագործելու կոնկրետ խնդիրները:

Միայն առաջին սոցիալիստական պետության կառավարութունը կտրականապես հանդես եկավ 1919 թ. օգոստոսի 9-ի անգլո-պարսկական՝ Իրանի համար ստրկացուցիչ համաձայնագրի դեմ: «Պարսկաստանի բանվորներին և գյուղացիներին» ուղղված սովետական կառավարության 1919 թ. օգոստոսի 30-ի դիմումի մեջ ասված էր. «օգտվելով իր համար նպաստավոր պահից անգլիական կապիտալը որոշել է վերջնականապես և անդառնալիորեն զավթել ամբողջ Պարսկաստանը: Պարսկաստանը դուրս է գցված անկախ երկրների թվից, պարսիկ ժողովուրդը հանված է ազատ ժողովուրդների թվից, նրա սեփական բռնակալները և ճնշողները փող են ստանում Անգլիայից և վերջնականապես վերածվում նրա կողմից վարձատրվող ծառաների: Նրանք մնում են պարսիկ ժողովրդի վզին և շարունակելու են նրան կեղեքել, բայց նրանք իրենք միայն գործակալներն ու ծառաներն են ավելի խոշոր համաշխարհային գիշատչի՝ անգլիական կապիտալի, որը քամում է պարսիկ դժբախտ աշխատավորների վերջին հյուսիսները»:

Այնուհետև դիմումի մեջ ամենայն հաստատակամությամբ ընդգծվում էր. «Այս պահին, երբ հաղթանակը տոնող հաղթողը, անգլիական գիշատիչը, փորձում է պարսիկ ժողովրդի վիզը գցել վերջնական ստրկացման օղապարանը, Ռուսաստանյան ռեսպուբլի-

<sup>1</sup> Ռոնալդ շեյ, Նշվ. աշխ., էջ 217:

<sup>2</sup> «The Times», 19.IX.1919.

լիկաւի սովետական բանվորա-գյուղացիական կառավարութիւնը հանդիսավոր կերպով հայտարարում է, որ չի ճանաչում անգլո-պարսկական պայմանագիրը, որն իրագործում է այդ ստրկացումը<sup>1</sup>։

Ոչ թե ԱՄՆ-ը և Ֆրանսիան, ինչպես փորձում են հավատացնել մի շարք բուրժուական հեղինակներ, այլ սովետական պետութիւնը իսկական, ակտիվ պայքար ծավալեց Իրանում անգլիական գաղթողական պլանների դեմ, Անգլո-պարսկական համաձայնագիրը գնահատելով որպէս «թույլ երկրի նկատմամբ իմպերիալիստական բռնութեան օրինակ»<sup>2</sup>։

\* \* \*

Վոսուղ էդ-Ռուլեն ու նրա համախոհները բոլոր միջոցները գործադրում էին համաձայնագիրը մեղլիսի կողմից հաստատելու և անգլիական քաղաքականութեան հաշտութիւնն ապահովելու համար։ Նրանք ոչ միայն շխտընդոտեցին Իրանի տերիտորիան հակասովետական նպատակներով անգլիացիների կողմից օգտագործելուն, այլև առանձին դեպքերում ակտիվորեն պաշտպանում էին անգլիական գաղութարարների գործողութիւնները։ Վոսուղ էդ-Ռուլենի կառավարութիւնը և նրա դիվանագիտական ներկայացուցիչները Բաքվում, Սրեանում, Քրիլիսիում, Նախիջևանում և Միջին Ասիայի քաղաքներում ամեն կերպ օժանդակում էին անգլիական ինտերվենտներին Սովետական իշխանութեան և ռևոլյուցիոն շարժումների դեմ պայքարելու գործում։ Այս տեսակետից հատկապէս աչքի էր ընկնում Անդրկովկասում Իրանի ներկայացուցիչ, անգլիական գործակալ Սեիդ Ջիա էդ-Ռինը, որն անգլիական փողերով հրատարակում էր ռեակցիոն «Ռաադ» թերթը (1920 թ.)։

Սովետական կառավարութեան փորձերը բարեկամական հարաբերութիւններ հաստատել Իրանի հետ, ձախողվում էին Իրանում անգլիական իշխանութիւնների և իրանական ռեակցիոնների կողմից։ Տակավին 1918 թ. մայիսին սովետական կառավարութիւնը բողոք հայտնեց իրանական կառավարութեանը, այն բանի համար, որ վերջինս շարունակում էր դիվանագիտական ձեռնարկութիւնները բոլոր լիազորութիւններից զուրկ Քեհրանում ցարա-

<sup>1</sup> «Советско-иранские отношения в договорах, конвенциях и соглашениях», М., 1946, стр. 70—71.

<sup>2</sup> «Известия», 3.IX.1919.

կան դեպքանորդ էտտերի հետ: Արտաքին գործերի ժողկոմ Չիչերինի նոտայում ասված էր, որ էտտերի հետ ամեն մի հարաբերություն սովետական կառավարությունը կգիտի որպես սովետական ռեսպուբլիկայի թշնամիների պաշտպանություն Իրանի կառավարության կողմից<sup>1</sup>:

Իրանի տիրող դասակարգերի թշնամությունը սովետական պետության նկատմամբ իր արտահայտությունը գտավ 1918 թ. նոյեմբերի 2-ին Թեհրանում սովետական միսիայի վրա կատարված հարձակման մեջ: Իրանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու սովետական կառավարության երկրորդ փորձն ավարտվեց նրանով, որ սովետական դեսպան Կոլոմիցյեը և սովետական միսիայի աշխատողները 1919 թվականի հուլիսին գազանարար սպանվեցին անդլիական գաղութարարների և Վոսուդ էդ-Պուլի ուղղակի մասնակցությամբ: Հեաագայում անգլիական իմպերիալիստները փորձում էին ժխտել իրենց մասնակցությունը այդ զազրելի գործին<sup>2</sup>:

Ադրբեջանում և Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո Իրանում բուն դրին մուսավթականները և դաշնակները, որոնք ռուսական սպիտակդարդիականների հետ միասին շարունակեցին իրենց հակասովետական գործունեությունը: Մուսավթական հակառուլոցիոն սպաները մի ջոկատով կենտրոնացել էին Թավրիզում<sup>3</sup>: Հակասովետական թափփուկներին բոլոր միջոցներով օգնում էին սևդիացիները: Այդ նրանք կազմակերպեցին (1920 թ. հուլիս-սեպտեմբեր) հակասովետական խմբերի հավաքներ Սեֆիդորում և Արդեբիլում, խնդիր դնելով հարձակումներ գործել Սովետական Ադրբեջանի տերիտորիայի վրա, կողոպտել, ավերել խաղաղ բնակիչներին ու ադրբեջանական գյուղերը<sup>4</sup>: Անգլիացիները հատկապես հենվում էին Ղարադաղի խան Ամիր Արշադի՝ իրենց հավատարիմ գործակալի և մուսավթական բանդիտ Հուսեյն Ռամազանովի վրա, որի առջև խնդիր էին դրել գրավել լեռքորսներ<sup>5</sup>: Թավրիզում հավաքված դաշնակների խորհրդատուն անգլիական հյուպատոս Բրիսթոուն էր, որը Իրանում դաշնակցական կառավարության նախկին ներկայացուցիչ Արդութինսկու հետ կազմակերպում էր «խմբապետների» հակասովետական գործունեու-

<sup>1</sup> «Бакинский рабочий», 15.V (2), 1918, № 88 (203).

<sup>2</sup> „The Times“, 21.VI.1920.

<sup>3</sup> ЦГАКА, ф. 109, оп. 3, д. 221, л. 91.

<sup>4</sup> ЦГАКА, ф. 195, оп. 3, д. 1003, л. 30.

<sup>5</sup> ЦГАКА, ф. 109, оп. 3, д. 221, л. 217.



Յյունը, դործա՛լալներ էր ուղարկում Սովետական Հայաստան և Սովետական Ադրբեջան<sup>1</sup>։

Իրանական իշխանությունները ոչ մի միջոց ձեռք չէին առնում հակասովետական գործողություններին վերջ դնելու ուղղությամբ, նույնիսկ Սովետական Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կառավարությունների բողոծներից հետո։ Ադրբեջանական ՍՍՌ Արտաօին գործերի ժողովմատն իր բողոքի նոտայում նշում էր Իրանի տերիտորիայում կազմակերպված բազմաթիվ բանդաների ավազակային հարձակումները երկրի սահմանամերձ շրջանների վրա և պահանջում էր վերջ դնել թշնամական գործողություններին<sup>2</sup>։ Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովմատը բողոքեց իրանական տերիտորիայից Սովետական Հայաստանի դեմ կատարված դաշնակցական զինված խմբերի գործողությունների դեմ և պահանջեց զինաթափել նրանց<sup>3</sup>։ Այս փաստերը վկայում են այն մասին, որ իրանական ռեակցիոն իշխանություններն իրենց անգլիական հովանավորողների հետ միասին վարում էին հակասովետական քաղաքականություն՝ սկզբում բացահայտ ռազմական ինտերվենցիայի և ապա բանդիտական հարձակումների ձևով։

Իրանական տիրող դասակարգերն ի դեմս անգլիացիների տեսնում էին այն ուժը, որը, նրանց կարծիքով կարող էր «կարգ ու կանոն» պահպանել երկրում և խեղդել ազգային-ազատագրական շարժումները։ «Պարսկական հողատերերի և ազնվականության գերակշռող մասը կողմ էին համաձայնագրին (խոսքը 1919 թ. համաձայնագրի մասին է—Ջ. Կ.), քանի որ Մեծ Բրիտանիայի օգնությամբ նրանք կարող էին հեռանկար ունենալ... իրենց սեփականության անվտանգության համար...»,—գրում է Իրանական Ադրբեջանում գյուղացիական ելույթների ճնշման ակտիվ մասնակից, անգլիական սպա Ֆորբս Լեյթը<sup>4</sup>։ Նրանց քաղաքական պարտիան՝ «Թեշքիլի»-ն ամբողջապես նվիրվել էր անգլիական քաղաքականությանը, հանգես գալով Անգլիայի հետ է՛լ ավելի սերտ հարաբերություններ հաստատելու օգտին։ Անգլիացիները ոչ միայն համագործակցում էին «Թեշքիլի» պարտիայի հետ, այլև ստեղծե-

<sup>1</sup> ՀՍՍՌ Պետ արխիվ, ֆ. 40/113, գ. 26, թ. 47, 48, 49։

<sup>2</sup> «Бакинский рабочий», 8.X.1921, № 204 (336)։

<sup>3</sup> Годовой отчет НКВД к IX съезду Советов (1920—21), М., 1921։

<sup>4</sup> Forbes-Leith F. A. C. Checkmate Fighting Tradition in Central Persia, London, 1917, p. 23.

ցին իրենց ամբողջապես նվիրված քաղաքական և կրոնական կազմակերպություններ, որոնց նպատակն էր պրոպագանդել ամեն ինչ, ինչ անգլիական էր, նպաստել Անգլո-պարսկան համաձայնագրի իրագործմանը: Դրանցից հիշատակության արժանի են «Խոսեքըլ-յալե Իրան» (Իրանի անկախություն) պարտիան, որը անգլիացիների գործակալների ձեռքով կազմակերպվել էր 1919 թ. սկզբին: Այս կազմակերպությունն իր ադիտացիոն գործունեության մեջ առաջնորդվում էր այն դիրքորոշումով, որ Իրանի անկախության պահպանումը հնարավոր է միայն Անգլիայի հետ «համագործակցելու» միջոցով: «Ֆերգես-Ջաֆարի» կրոնական կազմակերպությունը, որ հիմնադրեց անգլիական գործակալ Սեյիդ Մուլեմը, վարկավորվում էր անգլիացիների կողմից: Նրա պարագլուխը Վոսուղ էդ-Դուլեի մերձավորագույն խորհրդատուն էր և հրապարակայնորեն հանդես էր գալիս Անգլո-պարսկական համաձայնագրի պաշտպանությամբ<sup>1</sup>:

Երկրում արգելված էր հակաանգլիական թերթերի և այլ հրատարակությունների լույս ընծայումը: Վոսուղ էդ-Դուլեի օրոք լույս էի տեսնում միայն «Իրան» և «Ռաադ» թերթերը, որոնցից առաջինը իրանական կառավարության պաշտոնաթերթն էր, իսկ երկրորդը անգլիական քաղաքականության հավատարիմ տրուբադուրը: Նրա կառավարությունը դաժանորեն պատժում էր նահանգների և շրջանների բոլոր այն կառավարիչներին, որոնք դժկամությամբ էին կատարում անգլիացիների կամքը, ձեռքակալում և հետապնդում էր իրանական ինտելիգենցիայի ներկայացուցիչներին: Այդ նպատակով ստեղծված էին «Սև ձեռքի կոմիտեն» (Դեստե սիյաս) և «Թահմինաթ» գաղտնի ոստիկանությունը, որոնք տեղորի միջոցով վերացնում էին անգլիական քաղաքականության աչքի ընկնող հակառակորդներին<sup>2</sup>: Պատահական չէ, որ Վոսուղ էդ-Դուլեի կառավարությունը անվանում էին «տեղորի և բռնակալության» ուժեր<sup>3</sup>: Ռազմական բռնություն, տեղոր, դեմոկրատական տարրերի հետապնդում, անօրինականություններ, կամայականություններ, ժողովրդական զանգվածների ստրկական իրավազրկություն, կառավարության ղեկավարների երեսպաշտություն, կեղծիք ու կաշառա-

<sup>1</sup> Журнал «Мировое хозяйство и мировая политика», № 2, 1926, стр. 70.

<sup>2</sup> Персия—Обзор вооруженных сил с приложением очерка экономического и политического положения по данным к 1.VIII.1923, М., 1923, стр. 131. ՀՄՄՈ Պես. արխիվ, ֆ. 40/113, գ. 79, թ. 74:

<sup>3</sup> Ֆաթեմի, նշվ. աշխ., էջ 75:

կերություն՝ ահա թե ինչով էր բնորոշ Իրանը անգլիական ինտեր-վենցիայի շրջանում:

Սակայն զուր էին անգլիական իմպերիալիստների ու նրանց իրանական կամակատարների շանքերը. գաղութարարների բացահայտ զավթողական պլանները դատապարտված էին ձախողման: Արդեն 1920 թվականի հունիսին Լոնդոնի «Բայմս»-ը ստիպված էր դրել. «Անգլիան բազմաթիվ սխալներ է արել Պարսկաստանում, բարձրամարտիկ վերաբերվելով պարսիկներին և լիովին արհամարհելով նրանց հասարակական կարծիքն ու տրամադրությունները: Իրա փոխարեն Անգլիան սերտ կոնտակտի մեջ մտավ ունկնդիր տարրերի հետ և, հենվելով միայն նրանց վրա, ընդհանուր անվստահություն առաջ բերեց: Պարսիկները տեսնում էին, որ Անգլիան միայն իր շահերի բավարարմանն է ձգտում և բոլորովին չի մտածում Իրանի մասին: Անգլո-պարսկական համաձայնագիրը ատելի էր բոլորի համար և հենց սկզբից դատապարտված ձախողման: Այժմ, այդ ամենի հետևանքով անգլիացիներն այնտեղ չափազանց անպոպուլյար են և կորցրել են ամեն մի հեղինակություն»<sup>1</sup>:

Հիրտլի, աղգային-աղատագրական շարժման շեշտակի ուժեղացման, սովետական իշխանության հաղթանակների, Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման հետևանքով անգլիական գաղութարարների վիճակը խիստ վատացավ: Արդեն 1920 թ. մայիսից սկսած հակաանգլիական ելույթները մասսայական դարձան: Հիմնական պահանջն էր իշխանությունից հեռացնել Վոսուղ էդ-Պուլիին, շեղյալ հայտարարել Անգլո-պարսկական համաձայնագիրը: «Իժգոհությունը Պարսկաստանում ինչպես շահի կառավարությունից, այնպես և Մեծ Բրիտանիայից վերջին ժամանակներս անընդհատ ուժեղանում է» — գրում էր «Պրավդա»-ն<sup>2</sup>: Անգլիական իմպերիալիստների առաջին խոշոր պարտությունը հղավ իրենց դրածո Վոսուղ էդ-Պուլիի կառավարության խայտառակ անկումը: Դրանից հետո արդեն անգլիացիների նպատակն էր Իրանում այնպիսի կառավարություն ստեղծել, որը շարունակեր նախկին քաղաքականությունը, բայց ավելի քողարկված ձևով: Հենց այդ ձգտումն էր արտահայտում «Բայմս»-ը գրելով, թե այժմ պետք է ավելի ազգայնական կաբինետ, բայց որը ցանկանա պաշտպանել անգլո-պարսկական համաձայնագիրը»<sup>3</sup>:

<sup>1</sup> „The Times“, 16.VI.1920.

<sup>2</sup> «Правда», 4.VI.1920, № 119.

<sup>3</sup> „The Times“. 28.VI.1920.

Սակայն որքան էլ անգլիական գաղութարարները ցանկանալին Իրանում ունենալ իրենց լրիվ հրու հնազանդ կառավարություն, գա արդեն անհնարին էր: Երկրում ստեղծված իրադրությունն այնպիսին էր, որ Մուշեր էդ-Պուլի նոր կառավարությունը, հակաանգլիական շարժման ճնշման տակ 1920 թ. հուլիսի 3-ին հայտարարեց, որ դադարեցնում է Անգլո-պարսկական համաձայնագրի հետ կապված գործողությունները, մինչև մեջլիսի գումարումը<sup>1</sup>: Նա անգլիական զինվորական միսիայի ղեկավար գեներալ Դիքսոնին առաջարկեց դադարեցնել իր գործունեությունը, մինչև որ մեջլիսը հավանություն չտա Անգլո-պարսկական համաձայնագրին<sup>2</sup>: 1920 թ. հուլիսի 25-ին Մուշեր էդ-Պուլի կառավարությունը հայտարարեց սովետական կառավարության հետ բանակցություններ վարելու համար Մոսկվայում իր լիազոր ներկայացուցչի նշանակման մասին:

Անգլիական կառավարության բոլոր ջանքերը մեջլիսի միջոցով հաստատելու համաձայնագիրը, խոչընդոտելու սովետա-իրանական դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը և բարելավմանը, ապարդյուն անցան: Այդ շրջանի ամենաանհասկանալին այն համառությունն էր, — գրում է Բալֆուրը, — որ նկատվում էր ռատիֆիկացիայի հարցում Ֆորեյն Օֆիսի աղմկոտ պահանջների մեջ<sup>3</sup>: «Նախաձեռնությունն այն ժամանակ արդեն բրիտանական կառավարության ձեռքում չէր, — գրում է Նիքոլսոնը: — ...Մեր պրեստիժը նվազում էր: Ռուսաստանը կողքին էր, անհաղթահարելի և ապշեցուցիչ բարեկամական: Նա Պարսկաստանին առաջարկեց իր օժանդակությունը, բոլոր կոնցեսիաների դադարեցում և կապիտուլյացիաների վերացում: Այդ առաջարկությունն ավելի հմայիչ էր, քան այն ամենը, ինչ կարող էր առաջադրել Լոնդոնը<sup>4</sup>: Բրիտանական գաղութարարներին պարզ դարձավ, որ Անգլո-պարսկական համաձայնագիրն արդեն «մեռած է գործնական նպատակների համար և միայն կասկածանքի և թշնամության հող է ծառայում անգլիացիների դեմ»<sup>5</sup>: Դրա համար նրանք որոշեցին հրաժարվել համաձայնագրից, փոխել տակտիկան, այլ միջոցներով պահպանել իրենց դիրքերը Իրանում, խափանել 1921 թ. Սովետա-իրանական պայմանագրի կնքումը: Այդ նպատակով կա-

<sup>1</sup> Նիքոլսոն, նշվ. աշխ., էջ 144:

<sup>2</sup> «The Times», 17.VII.1920.

<sup>3</sup> Balfour J. Recent Happenings in Persia, London, 1922, p. 132—133.

<sup>4</sup> Նիքոլսոն, նշվ. աշխ., էջ 146:

<sup>5</sup> Բալֆուր, նշվ. աշխ., էջ 233:

տարվեց 1921 թ. փետրվարի 21-ի հեղաշրջումը և իշխանության գլուխ անցած անգլիական թրծված գործակալ Սեյդ Ջիա էդ-Դինն իր դեմագոգիկ ծրագրային դեկլարացիայում հայտարարեց Անգլո-պարսկական համաձայնագրի չեղյալ համարելու մասին: Բայց հակառակ անգլիացիների բոլոր ջանքերին, 1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում կնքվեց Սովետա-իրանական պայմանագիրը՝ հիմնոված իրավահավասարության լենինյան սկզբունքների վրա: Դա առաջին պայմանագիրն էր, որ Իրանը կնքում էր մեծ տերության հետ, որպես իրավահավասար երկիր: Չխոսելով Իրանի համար այդ պայմանագրի կնքման հսկայական նշանակության մասին, ասենք միայն, որ այն որոշիչ դեր կատարեց Իրանում անգլիական իմպերիալիստների բացահայտ զավթողական քաղաքականության ձախողման գործում:

Մեծ Բրիտանիայի կառավարող շրջանները ստիպված էին խոստովանել, որ իրենց քաղաքականությունը խոշոր պարտություն է կրել: Խոսելով Իրանում անգլիական երեսնամյա քաղաքականության և այդ երկրում իր կատարած անձնական «աշխատանքի» մասին, լորդ Քերզոնը 1921 թ. հուլիսի 20-ին լորդերի պալատում արտասանած ճառում ողբում էր, որ «...այդ աշխատանքը և զոհաբերությունները նշանակալից չափով իզուր սնցան»: «Ես կուզեի,— ասաց նա,— ավելի վարդագույն հաշվետվություն տալ Պարսկաստանի մասին կամ ավելի օպտիմիստական գնահատական՝ իրադրությանը, քանի ես ի վիճակի եմ տալու Պարսկաստանի մասին իմ բոլոր ճառերից, որոնք ես երբևիցե արտասանել եմ, իսկ դրանց թիվը մեծ է, այս ճառն արտասանում եմ ամենայն տխրությամբ»<sup>1</sup>: «Անգլիան Իրանում անգլիական քաղաքականությանը նվիրած՝ «Անգլիան Իրանում» խմբագրական հոդվածում լորդ Քերզոնի ճառի իմաստը գնահատեց որպես «Իրանում ամբողջ կայսերական քաղաքականության պարտության ընդունում»<sup>2</sup>:

Այսպիսով, Իրանի ժողովուրդների ազգային-ազատագրական հակաիմպերիալիստական պայքարը հանուն ազգային անկախության, միջազգային ասպարեզում Սովետական Ռուսաստանի հեղինակության և նշանակության աճը, սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում, ռևոլյուցիոն շարժումների ուժեղացումը Մերձավոր և Միջին արևելքի մյուս երկրներում (Աֆղանըստան, Թուրքիա, Արաբական երկրներ, ինչպես նաև Հնդկաստան)

<sup>1</sup> Ռոսսիյսկայա, №24. աշխ., էջ 233:

<sup>2</sup> The Times, 27 July, 1921.

և, վերջապես, Սովետա-իրանական պայմանագրի կնքումը պարտության մտանցին Իրանում բացահայտ գաղութային տիրապետություն հաստատելու բրիտանական իմպերիալիստների պլանները: Անգլիական կառավարությունը ստիպված էր շեղյալ հայտարարել 1919 թ. Անգլո-պարսկական համաձայնագիրը, բրիտանական զորքերը դուրս բերել Իրանից: Հետագայում Անգլիան փոխեց իր իմպերիալիստական քաղաքականության մեթոդները, իրանական ռեակցիոն կառավարող շրջանների թույլտվությամբ պահպանեց տնտեսական և քաղաքական ուժեղ դիրքեր Իրանում, հսկայական վնաս հասցնելով իրանական ժողովրդի ազգային շահերին, նրա առաջադիմության գործին:

ДЖ. С. КИРАКОСЯН

ИЗ ИСТОРИИ АНГЛИЙСКОЙ ИМПЕРИАЛИСТИЧЕСКОЙ  
ПОЛИТИКИ В ИРАНЕ (1918—1921)

Резюме

Используя в основном источники и исследования на английском языке, автор показывает, что английская интервенция в Иране (1918—1921) явилась грубым нарушением национальной независимости иранского народа и его государственного суверенитета, попыткой превратить Иран в британскую колонию. Социалистическая революция в России и последовавший затем отказ молодой Советской республики от прежней политики царизма, от всякого вмешательства во внутренние дела Ирана и вывод русских войск были восприняты английскими колонизаторами как удобный момент для установления своего полного господства над Ираном. Британский империализм использовал Иран как военно-стратегический плацдарм для организации антисоветской вооруженной интервенции и враждебных действий против советских республик. Военно-полицейский режим, установленный английскими оккупантами и правительством Восуг-Эд-Доуле, был направлен на подавление антианглийского, национально-освободительного движения в стране. Опираясь на свои позиции в Иране и поддержку иранских реакционных кругов, английские

колонизаторы навязали Ирану кабальные условия Англо-персидского соглашения 1919 г. Подписанием этого соглашения Англия намеревалась придать юридическую форму своему бесконтрольному политическому, военному и экономическому господству над Ираном. Только молодое Советское государство протянуло руку дружбы и бескорыстной помощи народам Ирана. Ярким проявлением этой политики явился советско-иранский договор 1921 г., основанный на принципах уважения суверенитета и национальной независимости Ирана.

Национально-освободительная борьба народов Ирана, а также других народов стран Ближнего и Среднего Востока, рост авторитета Советской России, заключение советско-иранского равноправного договора привели к провалу империалистических планов Англии, рассчитанных на закабаление Ирана.

Е. ЛУДШУВЕИТ

КОНФЕРЕНЦИЯ ЛЕВЫХ ТУРЕЦКИХ СОЦИАЛИСТОВ  
В МОСКВЕ ЛЕТОМ 1918 ГОДА

Накануне Великой Октябрьской социалистической революции в России находилось более 100 тысяч турок—подданных Османской империи. Часть из них, во всяком случае не менее 50—60 тысяч человек, с давних пор проживала в России как домицилированные иностранцы, в большинстве своем по Черноморскому побережью, от устья Дуная до границы с Турцией в Закавказье. Наибольшая часть турок проживала в нынешних Азербайджанской ССР, Аджарской АССР, Абхазской АССР и Крымской области.

Турки, проживавшие на юге России, занимались табаководством, садоводством или огородничеством. Среди них были и содержатели кофеен, шашлычных и кустарного типа хлебопекарен, а также мелкие торговцы и небольшое количество представителей турецкой интеллигенции—учителей, писателей и врачей, проживавших главным образом в Казанской, Уфимской и Бакинской губерниях. Это были образованные люди, обычно далеко стоявшие от политики; но среди них были и прогрессивно настроенные лица, подвергавшиеся в свое время в Турции гонениям со стороны властей и эмигрировавшие в связи с этим в Россию, рассчитывая обрести здесь более спокойное существование. После вступления Турции в войну с Россией они были интернированы.

После начала войны с Турцией в конце 1914 г., в России стало появляться большое количество военнопленных турец-



ких солдат и офицеров. По данным русского Генерального штаба, к 1 сентября (ст. ст.) 1917 г. их насчитывалось 63 363 человека<sup>1</sup>.

Основную массу военнопленных составляли крестьяне, ремесленники, рабочие, в основном неграмотные, забитые, отсталые люди, нередко зараженные ядом мусульманского религиозного фанатизма и турецкого шовинизма. Большинство военнопленных содержалось в лагерях на Урале и Сибири, вместе с пленными германцами, австрийцами и венграми. Особенно много турецких военнопленных было в лагерях в районе Семипалатинска<sup>2</sup>.

В лагерях пленные турки, составлявшие обычно самую небольшую по численности национальную группу, держались в стороне от других военнопленных. Положение их было особенно тяжелым. Они не получали почти никакой помощи из Турции или от международных организаций Красного Креста. Не имели они также организаций взаимопомощи, какие, например, были среди германских и других военнопленных, и в общем они терпели жестокие лишения.

В несколько лучшем положении находились турецкие военнопленные, занятые либо на сельскохозяйственных работах, либо на заводах, фабриках и железных дорогах, тоже преимущественно в Сибири и на Урале<sup>3</sup>. Иногда турецкие военнопленные использовались на сравнительно легких работах в городском хозяйстве, в местностях с хорошими климатическими условиями. Так, в 1916 г. около 1 тысячи военноплен-

<sup>1</sup> См. «Россия в мировой войне 1914—1918 гг. в цифрах». М., 1925, стр. 41; по другим данным—50 тыс. солдат и 950 офицеров. (См. Elsa Brandstrom. Unter Kriegsgefangenen in Rußland und Sibirien 1914—1920. Berlin, 1922, S. 16).

<sup>2</sup> В Семипалатинске существовала фирма Мусабаева, которая занималась оптовой торговлей с Синцзяном и часто отправляла в Чугучак и Урумчи огромные караваны; с ними, как сообщил мне Э. Н. Наджип, некоторым турецким военнопленным, под видом погонщиков верблюдов, удавалось бежать из плена в Китай.

<sup>3</sup> Назначение военнопленных на работу производилось сперва через соответствующий отдел Главного управления Генерального штаба; с октября 1916 г., когда в России стал остро ощущаться недостаток в рабочей силе, при названном управлении была образована междоветовенная комиссия по распределению на работы военнопленных.

ных турок находились в Сухуме, где они использовались для таких легких работ, как очистка улиц и площадей<sup>1</sup>.

Бывали случаи, когда турецких военнопленных брали к себе «на работу» из сострадания зажиточные татары, киргизы или казахи, занимавшиеся сельским хозяйством. У таких хозяев, которые проявляли к ним симпатию, как к своего рода сородичам и единоверцам, пленные часто находились на положении гостей, оправляясь от тягот лагерной жизни, но такие случаи были сравнительно редкими.

Постепенно среди турецких пленных, благодаря общению с русскими революционными рабочими и крестьянами, а также татарами, башкирами, казахами, киргизами, узбеками и туркменами, стало усиливаться классовое самосознание. В дальнейшем, под влиянием всей обстановки в России, переживавшей канун революции, среди них пробуждались революционные настроения. Особенно усилились эти настроения после Февральской революции под влиянием большевиков, знакомивших турецких пленных с задачами революционной борьбы. Большевицкая литература пользовалась среди них большим спросом<sup>2</sup>. Многие из турецких пленных уже тогда приобщились к революционной борьбе и активно участвовали в ней. «Турецкие рабочие и крестьяне,— говорил Мустафа Субхи (Мевлевизаде) на Объединенном съезде турецких коммунистических организаций в Баку в сентябре 1920 г.,— обреченные играть, начиная с 15 июля, трагическую роль на театре военных действий, извлекают большую пользу из этого общения (имеется в виду общение с русским пролетариатом— Е. Л.) и вступают на путь классовой борьбы вместе с русскими товарищами-рабочими.

Принимая участие в забастовочном движении за повышение заработной платы и сокращение рабочего дня, они завоевывают доверие и симпатии своих товарищей»<sup>3</sup>.

<sup>1</sup> См. Рукописный отдел Абхазского научно-исследовательского института языка, литературы и истории им. Д. И. Гулиа АН Грузинской ССР. Материалы по истории Абхазии. 1916 г., ф. 1, д. 57, стр. 30.

<sup>2</sup> 28—29 Kanunu sanlı 1921 Karadeniz kıyılarında parçalanan Mustafa Suphi ve yoldaşlarının ikinci yıl dönümleri. Moskova, 1923, s. 53 (на арабском алфавите).

<sup>3</sup> Там же. Под революцией 15 июля имелась в виду июльская демонстрация 1917 г.

После Великой Октябрьской социалистической революции, по распоряжению Советского правительства, как известно, была снята стража и открыты ворота лагерей для пленных неприятельских государств, в том числе и турецких. Все пленные, находившиеся в Советской России, были объявлены как бы свободными согражданами; отменены были также ограничения для интернированных.

Революционно настроенные турки из числа пленных и интернированных, став свободными и видя успешное завершение мисголетней борьбы трудящихся России против своих эксплуататоров, все больше задумывались над возможностью борьбы с господствующими классами у себя на родине.

Как известно, среди бывших пленных солдат центральных держав, находившихся в Советской России, в то время возникло так называемое движение интернационалистов — сторонников идей Октябрьской революции и Советской власти. Интернационалисты ставили себе задачу оказания помощи РКП(б) и рабоче-крестьянскому правительству России, переживавшей тогда исключительно тяжелое время, в деле советского строительства и борьбы с контрреволюцией. Только после этого, приняв посильное участие в укреплении очага мировой революции, интернационалисты считали возможным вернуться к себе на родину, чтобы и там, по примеру России, осуществить социалистическую революцию. Бесспорно, что огромное большинство интернационалистов составляли искренние и преданные сторонники революции молодой советской республики. Однако были среди них и такие, которые примкнули к движению, как тогда говорили, из «шкурных» соображений. Продовольственное положение в Советской России было исключительно тяжелым, поэтому пленные, как и все население страны, испытывали острую нужду во всем самом необходимом, а принадлежность к интернационалистам давала возможность получать паек и пользоваться некоторыми другими привилегиями.

В январе 1918 г. пленные-интернационалисты создали в Самаре свой первый съезд<sup>1</sup>, на котором было принято решение

<sup>1</sup> См. Elsa Brandström, *Unter Kriegsgefangenen...*, s. 193.

обратиться к правительству РСФСР с просьбой допустить формирование вооруженных отрядов интернационалистов с целью оказания помощи Советской власти.

По сравнению с германцами, австрийцами и венграми, турецкие солдаты в подавляющей своей массе были крайне отсталыми<sup>1</sup>. Они труднее понимали смысл событий, происходивших в России. Но постепенно и в их среде стали появляться сторонники интернационалистов, среди которых в это время видную роль стал играть Мустафа Субхи Мевлевизаде<sup>2</sup>. Бывший преподаватель политической экономии Стамбульского университета и редактор журнала «Ифхам» («Разъяснение», «Вразумление»), активный участник одной из оппозиционных группировок<sup>3</sup>, он, как непримиримый противник партии «Единение и прогресс», в то время господствовавшей в Турции, в 1913 г. в административном порядке был сослан в Синоп, откуда ему в конце мая (ст. ст.) 1914 г. удалось бежать в Россию. После начала войны с Турцией Мустафа Субхи был интернирован и находился сперва в Батуме, затем — в Калуге и Уральске.

В чем конкретно на первых порах заключалась революционная деятельность Мустафы Субхи, выяснить не удалось. Однако надо думать, что уже в ту пору у него складывалось правильное понимание событий, происходивших в России, и пробуждается стремление к революционной классовой борьбе. Постепенно Мустафа Субхи, в прошлом буржуазный демократ, под влиянием русской революции становился подлинным пролетарским борцом.

Будучи человеком энергичным, незаурядным оратором и организатором, Мустафа Субхи, перебравшись в Москву, сплотил вокруг себя небольшую группу турецких интернационалистов. Опираясь на эту группу, он связался с бывшими турецкими пленными и интернированными в Крыму, Поволжье

<sup>1</sup> Около 90% турецких пленнх были неграмотными.

<sup>2</sup> Родился в 1881 г. в Гиресуне (Турция).

<sup>3</sup> „Millî teşvütliyetiperver cemiyeti“ („Национальное конституционное общество«). Ряд сведений о Мустафе Субхи Мевлевизаде сообщил мне один из бывших его слушателей в Стамбульском университете — А. Х. Сафрастьян, сотрудник Сектора востоковедения АН АрмССР.

и Туркестане, вербуя среди них лиц, стоявших на платформе социалистической революции. Деятельность Мустафы Субхи была успешной—вскоре он стал насчитывать значительное число сторонников, которых постепенно вовлекал в революционное движение<sup>1</sup>. Как известно, в составе Советского правительства в то время существовал Народный комиссариат по делам национальностей РСФСР, при котором наряду с другими национальными комиссариатами в январе 1918 г. был образован Комиссариат по делам мусульман внутренней России<sup>2</sup>, организовавший на местах свои филиалы и издававший ряд газет на татарском языке<sup>3</sup>. Газеты эти читались бывшими турецкими пленными, что имело немаловажное значение для воспитания их в революционном духе.

С этого времени Мустафа Субхи и его товарищи начали поддерживать тесную связь с Комиссариатом по делам мусульман внутренней России. Здесь он близко сошелся с известными татарскими революционерами Мулла-Нур Вахитовым и Алимджаном Ибрагимовым. Сам Мустафа Субхи в это время называл себя государственным социалистом, сторонником точки зрения Лассалья, заявляя, что Турция требует лишь реформ в рамках буржуазного парламентаризма.

Вскоре при Комиссариате по делам мусульман внутренней России образовалась первая организация турецких революционеров — Турецкий социалистический комитет во главе с Мустафой Субхи. В это время Мустафа Субхи сотрудничал также в татарской газете «Чолпан»<sup>4</sup>.

Ведя революционную пропаганду среди бывших турецких пленных и интернированных, Мустафа Субхи и его сторонники вместе с тем помогали молодой Советской власти разобла-

<sup>1</sup> См. Willy Kord-Ruwisch. Berlin. Die Arbeiterpresse in der Türkei. „Zeitungswissenschaft“. Jg. 1, № 3, Berlin, 1926, s. 54.

<sup>2</sup> Комиссариат по делам мусульман внутренней России при НКН РСФСР в то время для отличия его от местных органов называли Центральным комиссариатом по делам мусульман внутренней России.

<sup>3</sup> См. М. Рамеев, Альбом татарской периодической печати 1905—1925 г. Казань, 1926 (арабским шрифтом на казанско-татарском языке).

<sup>4</sup> См. М. Рамеев, Альбом татарской периодической печати..., стр. 100; газета «Чолпан», издававшаяся сперва в Петрограде, а затем в Москве, была органом левых татарских и башкирских социалистов.

чать происки татарских и башкирских буржуазных националистов, являвшихся по существу агентурой турецких милитаристов во внутренних областях Советской России.

С апреля 1918 г. Мустафа Субхи и его группа при Комисариате по делам мусульман внутренней России стали издавать на турецком языке газету «Ени дюнья» («Новый мир»)¹. Газета выходила нерегулярно, примерно один раз в месяц. Формат и тираж был небольшой, стоимость отдельного номера составляла, как и всех других газет, 30 копеек.

В вопросе об общем направлении газеты «Ени дюнья» среди турецких революционеров имели место разногласия. Мустафа Субхи считал, что в центре внимания должно стоять разоблачение турецкого правительства, что газета должна иметь больше информационный характер. Остальные же находили, что упор должен быть сделан на пропаганду социалистических идей. Под влиянием последних Мустафа Субхи вынужден был изменить свою позицию².

Первый номер газеты «Ени дюнья» вышел после начала интервенции турецких милитаристов на Кавказе, которая верхушкой партии «Единение и прогресс», господствовавшей в Турции, аргументировалась, как известно, необходимостью «освобождения» мусульманских народов от большевиков.

Разоблачая вымыслы, что турецкая армия, перейдя Кавказские горы и открыв себе путь через Каспийское море к Туркестану, якобы преследует тем самым цель защиты мусульманского мира, «Ени дюнья» доказывала, что авантюры турецких милитаристов на Кавказе несут трудящимся Турции лишь новые лишения и бедствия.

В противовес пантуркистам и панисламистам «Ени дюнья», пропагандируя идею международной солидарности трудящихся безотносительно к их национальной или религиозной принадлежности, заявляла, что не только мусульманские народы, но и «угнетенные рабочие и бедняки — крестьяне всего мира» являются подлинными друзьями турецкого народа.

¹ Подзаголовок газеты гласит: *Moskovada merkez moselman sotsialistler Komitezinin türkçe naşır efkari.*

² См. З. И. Токрева, *Образование Коммунистической партии Турции и ее роль в борьбе турецкого народа за независимость*. Кандидатская диссертация. М., 1955, стр. 117. (Рукопись).

Разоблачение истинных замыслов пантуркистов и панисламистов в связи с турецкой интервенцией на Кавказе являлось и в дальнейшем одной из главных задач, которые ставила себе газета. Как впоследствии указывал на конференции левых турецких социалистов в Москве в июле 1918 г. Мустафа Субхи, «Ени дюнья» не переставала писать, что «захватническая политика, опорой которой является германское оружие, толкает страну и несчастный народ ее к опасной пропасти и что освобождение зависит от вступления европейского пролетариата, подобно пролетариату России, на путь социальной революции»<sup>1</sup>. Вместе с тем, газета писала о тяжелом положении турецкого народа, об угнетении его правительством пашей, ведущих страну к гибели. «Совсем издалека, из Москвы, показывая к какой опасности приближается Турция, описывая весь ужас ее положения, ее крайнюю нищету, газета стремилась заставить понять тот факт, что у Турции нет иного средства спасения, кроме присоединения к социалистическому революционному движению»<sup>2</sup>.

Большое место «Ени дюнья» уделяла пропаганде научного социализма, разъяснению значения Великой Октябрьской социалистической революции и разоблачению захватнической политики империалистов в отношении Советской России. Наконец в газете постоянно публиковались отклики на сообщения дня. Правда, этот разговор не отличался богатством содержания из-за недостаточности источников информации, но, тем не менее, он помогал своим читателям разобраться в существовавшей тогда сложной международной обстановке.

Газета «Ени дюнья» распространялась среди бывших турецких пленников, находившихся в России. Только эпизодически и притом небольшое количество экземпляров могло проникать в Турцию, поскольку с ней в то время постоянной и надежной связи не было. Все же и это имело важное значение. Как указывал Мустафа Субхи, «ясный, громкий, понятный и доступный турецкой молодежи и угнетенным турецким крестьянам и солдатам голос газеты «Ени дюнья» разбудит самые неподвижные темные окраины Малой Азии»<sup>3</sup>.

<sup>1</sup> 28—29. Kānunu sanı, стр. 54.

<sup>2</sup> Там же, стр. 41—42.

<sup>3</sup> З. И. Токарева, стр. 43.

Распространение газеты «Ени дюнья», ставшей массовым агитатором и пропагандистом особенно среди турок, находившихся на территории Советской России, имело важное значение для подготовки и воспитания турецких интернационалистов — преданных делу революции активистов турецкого рабочего движения. Как указывал в этой связи Мустафа Субхи, «этот период дал нам самых лучших и самых преданных нашей цели товарищей»<sup>1</sup>. Тем самым «Ени дюнья» сыграла крупную роль как организационный центр, объединивший на базе научного социализма революционно настроенных турецких трудящихся из числа бывших пленных и интернированных, находившихся в Советской России. Разумеется, Мустафа Субхи и его единомышленники не ограничивались в своей деятельности только изданием газеты «Ени дюнья». Повседневно они вели большую устную пропагандистскую и агитационную работу среди турецких граждан.

Тем временем движение среди интернационалистов — пленных из Германии и Австро-Венгрии — вступило в новый этап развития. В конце марта — начале апреля 1918 г. возникшие у них коммунистические ячейки объединились в иностранные секции при ЦК РКП(б).

Вскоре после этого, с 13 по 20 апреля 1918 г., в Москве состоялся первый съезд революционных организаций военнопленных, проходивший под руководством ЦК РКП(б). Съезд в Москве был многолюдным — на нем присутствовало более 400 делегатов, представлявших более 500 тыс. интернационалистов, в том числе находившихся в Омске, Томске, Иркутске, Красноярске, Хабаровске и других городах Сибири<sup>2</sup>. На съезде выступили представители военнопленных из Германии и Австро-Венгрии, заявившие, что задачей революционно настроенных пленных является либо немедленное возвращение на родину и ведение там революционной работы<sup>3</sup>, либо активная помощь Советской России в деле обороны ее от посягательств со стороны врагов революции.

<sup>1</sup> Там же, стр. 54.

<sup>2</sup> Одновременно состоялся аналогичный съезд в Иркутске.

<sup>3</sup> К этому времени, 3 (17) марта 1918 г., был подписан мирный договор между РСФСР и державами Четверного союза в Брест-Литовске, а вскоре, по постановлению Совета Народных Комиссаров РСФСР, опубликован-



После съезда, в мае 1918 г., иностранные секции при ЦК РКП(б) объединились в Федерацию иностранных секций при ЦК РКП(б); председателем федерации был (до своего отъезда в Венгрию) Бела Кун; на местах были образованы отделения федерации. Федерация немедленно после своего образования, в связи с белочешским мятежом, приступила к формированию отрядов красноармейцев-интернационалистов<sup>1</sup>. Почти одновременно, в конце мая<sup>2</sup> 1918 г., по приказу Революционного Военного Совета Республики № 276 при Комиссариате по делам мусульман была создана Центральная мусульманская военная коллегия, председателем которой стал Мулла-Нур Вахитов.

Турецкие революционеры не создали в то время своей, турецкой иностранной секции; по-видимому, для этого не было надлежащих условий,—очевидно движение среди турок-интернационалистов было значительно слабее, чем среди интернационалистов из Германии и Австро-Венгрии. Представители турецких пленных не участвовали также, судя по отчетам, опубликованным в свое время в «Известиях» и «Правде», в первом съезде революционных организаций военнопленных в Москве. Наконец, не были созданы отряды турецких красноармейцев-интернационалистов. Тем не менее, факт образования при ЦК РКП(б) иностранных секций, созыв первого съезда революционных военнопленных в Москве, образование Федерации иностранных секций при ЦК РКП(б) и формирование ею, а также Центральной мусульманской военной коллегией отрядов в помощь молодой Красной Армии,—все это имело важное значение для турецких революционеров, которым тем самым показывались пути организации турецких военнопленных и интернированных, воспитания их в духе революционной классовой борьбы и международной солидарности трудящихся.

Когда летом 1918 г. создалось исключительно тяжелое

---

ному 14 (27) апреля 1918 г. в «Известиях ВЦИК», № 84, учреждена была Центральная коллегия по делам пленных и беженцев — Центропленбеж. (См. также «Сборник узаконений», № 34, М., 4.V-1918, стр. 451).

<sup>1</sup> См. Г. Рейхберг и Р. Ольша, *Международный пролетариат в борьбе против интервенции в СССР 1918—1922 гг.*, М., 1941, стр. 16—17.

<sup>2</sup> Или в начале июня.

положение в Поволжье и на Урале, В. И. Ленин 28 июня 1918 г. обратился с воззванием ко всем трудящимся мусульманам, призывая их встать вместе с русскими рабочими и крестьянами на защиту Советской власти. В дальнейшем, 16 июля 1918 г., В. И. Ленин, как председатель Совета Народных Комиссаров, обратился еще с одним воззванием «Ко всем трудящимся мусульманам»<sup>1</sup>, в котором призывал их идти в ряды «мусульманской социалистической армии», после чего началось формирование частей из мусульман. Очевидно в это же время началось формирование частей из бывших турецких военнопленных. Во всяком случае, когда Уфе угрожали белогвардейцы, а в самой Уфимской губернии происходили кулацкие восстания, наряду с только что созданными регулярными частями Красной Армии, мусульманскими отрядами и боевыми дружинами рабочих и крестьян, 16 июля 1918 г., из бывших турецких военнопленных и интернированных сформировался специальный «Турецкий отряд» Красной Армии для борьбы с белочешскими мятежниками и другими контрреволюционными бандами.

Начальник этого отряда обратился с воззванием «К военнопленным и вольным туркам», находившимся на территории Уфимской губернии, в котором писал:

«Пора нам проснуться, пора перестать играть роль равнодушного обывателя в то время, когда во всем мире пылает революция, когда на нашей родине происходит переворот, а Константинополю угрожает империализм.

Вы, храбро сражавшиеся за свою родину десять лет подряд, сумеете доказать свою геройскую самоотверженность и сейчас, защищая власть пролетариев...

Мы, турки, всеми своими силами должны поддержать власть Советов в России. Мы должны до последней капли крови биться за торжество пролетариата. Если мы, турки, немедленно не встанем под ружье в защиту мировой социалистической революции, то история и будущее поколение проклянет нас. И золотыми буквами напишутся имена тех народов, которые создадут диктатуру пролетариата.

Товарищи турки! Нас веками угнетали царьки и их прислужники. Теперь настал момент, когда мы должны вырваться

<sup>1</sup> См. ЦГАОР СССР, М., ф. 418, д. 184, л. 1.

из цепких когтей империализма и присоединиться к союзу рабочих всех стран, создавая Третий Интернационал. Вот какими лозунгами и стремлениями руководствуемся мы, формируя в городе Уфе турецкий отряд.

Поэтому именем Великой Октябрьской социалистической революции призываю вас, товарищи турки, волею злой судьбы оторванные от родины, все, как один, встаньте под ружье, все записывайтесь в турецкий отряд Красной Армии»<sup>1</sup>.

О боевых делах этого отряда данных нет. Все же известно, что какой-то отряд из турецких добровольцев сражался в это время на Восточном фронте против белочехов<sup>2</sup>.

Поскольку в то время еще не было организации, которая объединяла и направляла бы деятельность коммунистических ячеек из турецких пленных и интернированных, большую актуальность приобретал вопрос о создании организации, объединяющей турецкие коммунистические ячейки.

С этой целью находившиеся в Москве турецкие революционеры решили созвать в конце июля 1918 г. конференцию революционно настроенных бывших турецких пленных. В период подготовки к созыву конференции Мустафа Субхи проявил большую активность. Впоследствии его противники среди турецких интернационалистов укоряли его в том, что, когда он в июне 1918 г. был в Казани на съезде мусульманских социалистических комитетов, связался с несколькими бывшими турецкими офицерами, якобы не имевшими понятия о социализме, которых пригласил на предстоящую конференцию, и они явились туда будто бы с незаконно полученными мандатами. В настоящее время не представляется возможным уточнить все это. Во всяком случае речь могла идти лишь о младших офицерах. Весьма вероятно, что они мало разбирались в том, что такое социализм. Впрочем, тогда из всей массы интернационалистов мало кто хорошо ориентировался в социа-

<sup>1</sup> Г. Гужвенко, Башкирия в борьбе за Октябрь. Краткий исторический очерк. Уфа, 1941, стр. 57; но в № 23 газеты «Вперед», по которому автор воспроизводит документ, текста его нет; очевидно, автором допущена неточность. Исправить ее не удалось, так как в Москве имеются только разрозненные номера этой газеты, в которых документ не обнаружен.

<sup>2</sup> См. ЦПА ИМЛ. М., ф. 17, оп. 2, д. 1, л. 310; цит. по: А. Н. Хейфец. Великий Октябрь и угнетенные народы Востока. М., 1959, стр. 89.

листическом учении, в марксизме, так как большинство втянутых в революционное движение не имело никакой теоретической подготовки и лишь инстинктивно тяготело к революции, чувствуя за ней историческую правоту. Так это могло быть и с теми офицерами, которых привлек Мустафа Субхи. По всей вероятности, это были выходцы из разиочинцев, так как в Турции не было сословных преград для получения офицерского чина. Вполне возможно, что, отражая интересы демократических слоев турецкого народа, они, честно и искренне сочувствуя русской революции, могли стать активными участниками турецкого революционного движения. Что касается их мандатов, то вряд ли и остальные делегаты прошли в должном порядке процедуру выдвижения на конференцию. Ведь по условиям, которые тогда существовали, это было если не невозможно, то вряд ли осуществимо.

Конференция открылась в Москве 23 июля 1918 г. в помещении Комиссариата по делам мусульман Внутренней России при НКН РСФСР<sup>1</sup>. Присутствовало свыше 20 делегатов<sup>2</sup> из Центральной России, Поволжья, Урала, Кавказа и Средней Азии, состоявших из крестьян, рабочих и интеллигентов. Кроме делегатов, часть которых имела право совещательного голоса, на конференции присутствовали гости—представители различных революционных организаций народов Востока. Председательствовал на конференции Мустафа Субхи, открывший ее большой вступительной речью. Охарактеризовав положение трудящихся в Турции, Мустафа Субхи подчеркнул, что на конференции присутствуют не только представители интеллигенции, как это имело раньше место в подобных случаях в турецких революционных организациях, но и солдаты, крестьяне, рабочие, представители самых угнетенных классов Турции. Задача турецких революционеров заключается в том, чтобы «разрушить власть капитала и освободить народ»<sup>3</sup>.

<sup>1</sup> В доме б. Солодовникова, в настоящее время—д. 1/9 по Кремлевской набережной.

<sup>2</sup> См. А. Ф. Хонелия, Начальный период образования Коммунистической партии Турции (1919—1921). М., 1954, стр. 60. Кандидатская диссертация, рукопись. По другим данным — около 30 делегатов (см. З. И. Токарева. Образование Коммунистической партии Турции..., стр. 120).

<sup>3</sup> 28—29 *Kapucu sanı* 1921..., s. 31.

Отказываясь от своей прежней концепции, Мустафа Субхи заявил, что «надежда победить буржуазию посредством парламентаризма — утопия, уже отвергнутая историей», в силу чего он призвал собравшихся «к революционной борьбе за идеалы социализма»<sup>1</sup>.

По вопросу о целях конференции Мустафа Субхи в своем выступлении сказал, что «конференция социалистов-турок, представителей рабочих и солдат турецкой национальности, разбросанных по всем городам Советской республики, должна явиться началом крепкой турецкой левосоциалистической организации в России. Молодая организация, достаточно окрепнув, поведет согласованную работу с Российской Коммунистической партией и немедленно вступит в сношение с пролетариатом Турции, организовав в его среде широкую агитацию, направленную к свержению буржуазии и капитализма, которые более чем где бы то ни было тиранически угнетают народ Турции»<sup>2</sup>. Таким образом, основной задачей турецкой левосоциалистической организации в Советской России должно было стать развертывание широкой агитационной работы в самой Турции, среди ее трудящихся, с целью совершения революции. Бесспорно, что Мустафа Субхи жил духом времени — он думал и говорил так, как думало подавляющее большинство участников социалистической революции в России. В этом сказывалась известная идеологическая незрелость, неизбежная тогда, на заре движения. Теперь это бы называлось левацкими тенденциями и механическим перенесением русского примера и опыта на действительность куда более отсталой Турции, стоявшей перед буржуазно-демократической, но не социалистической революцией.

После речи Мустафы Субхи с приветствиями выступили представители революционных организаций народов Востока, отметившие, что с образованием новой турецкой революционной организации международный пролетариат умножает ряды борцов за социализм. В своем ответе на приветствия Мустафа Субхи подчеркнул, что конференция будет иметь важное международное значение, так как в ней впервые «бедные классы

<sup>1</sup> «Известия», № 156 (420), М., 25.1918.

<sup>2</sup> «Правда», № 153, М., 24.7 1918.

Турции выразят свои настоящие чувства и свои настоящие требования»<sup>1</sup>. Затем конференция перешла к избранию мандатной комиссии и утверждению повестки дня.

На второй день работы конференции, 24 июля, были заслушаны доклады агитаторов об их деятельности среди бывших турецких военнопленных. Докладчики указывали, что «агитация за идеалы революционного социализма встречает везде на местах живой отклик и вызывает энтузиазм»<sup>2</sup>. По этим докладам были намечены меры, «могущие способствовать росту социалистического самосознания мусульманских бедных классов»<sup>3</sup>.

Далее конференция заслушала доклад Джевдета «О влиянии европейской войны на Турцию». Докладчик указал, что война привела к расстройству хозяйственной жизни Турции, росту продовольственного кризиса и общему ухудшению положения трудящихся классов. Вместе с тем война вызвала огромные страдания бедняков, сотни тысяч которых погибли на полях сражений, от болезней и всяческих лишений<sup>4</sup>.

В докладе о политическом положении Турции, с которым выступил Назми, указывалось на усиление гегемонии Германии на Ближнем Востоке, на то, что последняя играет решающую роль во внутренней и внешней политике турецкого правительства. «Спасение турецкого пролетариата, которому одинаково чужды интересы как германского, так и англо-французского капитала,— заявил докладчик,— лишь в организации своих сил и в восприятии и осуществлении идей Российской социалистической революцией»<sup>5</sup>. Как видим, в этом основном вопросе Назми придерживался той же точки зрения, что и Мустафа Субхи.

В следующем докладе — «Об отношении разных национальностей к Турции», сделанном Хусми<sup>6</sup>, был рассмотрен чрезвычайно важный и актуальный вопрос о политике по отношению к национальным меньшинствам в Турции. Доклад-

<sup>1</sup> «Известия», № 156 (420), М., 25.7.1918.

<sup>2</sup> Там же.

<sup>3</sup> Там же.

<sup>4</sup> См. там же.

<sup>5</sup> «Известия», № 156 (420), М., 25.7.1918.

<sup>6</sup> Очевидно—Хюсю.

ник заявил, что единственно верная позиция по национальному вопросу — платформа, провозглашенная третьим Всероссийским съездом Советов, согласно которой «для всякого народа предоставлено право на полное самоопределение»<sup>1</sup>.

Последним из докладов, заслушанных на конференции, был доклад Этхели<sup>2</sup> «Об отношении турецких социалистов к Всероссийской советской власти». Докладчик, отметив огромное значение Великой Октябрьской социалистической революции и существования Советской страны для роста международного социалистического движения, указал на необходимость оказывать реальную помощь Советской власти в ее борьбе с врагами, после чего было вынесено предложение о формировании революционного отряда «из турецких социалистов в помощь Российской социалистической армии»<sup>3</sup>.

Заслушав доклады, конференция приняла решение послать приветствие Всероссийскому Центральному Исполнительному Комитету, которое гласило: «Конференция делегатов социалистических организаций военнопленных и рабочих турок, открывшаяся 23 июля в помещении Центрального мусульманского комиссариата<sup>4</sup>, шлет свой восторженный привет неутомимым борцам первого пролетарского парламента и, в глубоком убеждении в конечную победу революции, ставит себе задачей организацию молодых сил мусульманского пролетариата для жестокой и непримиримой классовой борьбы до конца, с оружием в руках, для борьбы с международной буржуазией во имя жизни и торжества социалистического интернационала»<sup>5</sup>. Аналогичные приветствия были посланы Совету Народных Комиссаров РСФСР, Центральному Комитету Российской Коммунистической партии и Всероссийскому Центральному мусульманскому социалистическому комитету.

На заседании, состоявшемся 25 июля, в последний день работы конференции, обсуждался проект программы турецких социалистов.

<sup>1</sup> Там же.

<sup>2</sup> Очевидно—Этхема (Эдхема).

<sup>3</sup> Там же.

<sup>4</sup> Правильное название—Комиссариат по делам мусульман внутренней России при Народном Комиссариате Национальностей РСФСР.

<sup>5</sup> Там же.

С докладом по этому вопросу выступил Мустафа Субхи, который, изложив, как он указал, принципы научного социализма, отметил, что «задачей истинных социалистов является борьба не на словах, а на деле с капиталистическими условиями во имя существования в жизни общества более справедливых порядков»<sup>1</sup>. В этой связи, как указывал Мустафа Субхи, «все богатства, самые орудия производства, все, что составляет капитал, должны быть изъяты из частных рук и переданы в руки общества»<sup>2</sup>. При этом Мустафа Субхи особенно подчеркнул необходимость решительной борьбы за осуществление этой цели. В этой постановке вопроса, вытекавшей из примера России, опять-таки оказывалось недостаточное понимание Мустафой Субхи различия между российскими и турецкими условиями, где немедленная социализация не могла быть осуществлена. «Социализм для тех,— указывал Мустафа Субхи в заключение,— кто смотрит на него не как на отвлеченную теорию, а как на реальную государственную систему, сможет быть осуществлен только непосредственной борьбой за его принципы»<sup>3</sup>.

Конференция приняла решение отложить окончательную выработку программы «до следующего съезда», созыв которого намечался через три месяца с более широким представительством, поскольку на съезд предполагалось пригласить также «социалистов из самой Турции, равно как и из стран Европы»<sup>4</sup>.

Для руководства работой турецких социалистов решено было учредить особый орган — «Центральный комитет турецких социалистов-коммунистов»<sup>5</sup>, или «Центральный комитет турецкой коммунистической организации»<sup>6</sup>.

<sup>1</sup> «Известия», № 157 (421), М., 26.7.1918.

<sup>2</sup> Там же.

<sup>3</sup> Там же.

<sup>4</sup> См. «Известия», № 157 (421), М., 26.7.1918; под социалистами из Европы, по-видимому, имелись в виду прежде всего деятели братских революционных организаций стран Балканского полуострова, с которыми существовали давнишние связи.

<sup>5</sup> Там же.

<sup>6</sup> Впоследствии этот орган обычно назывался «Центральное бюро турецких коммунистических организаций», стр. 28—29. Капипусані... s. 54.



Такое название вполне соответствовало сущности и задачам вновь созданной организации. причем то, что она называлась «коммунистической», имело важное значение, поскольку это явно отличало ее от других турецких политических организаций, злоупотреблявших для приманки масс названием «социалистической» партии, «имея к социализму, по существу, очень отдаленное отношение»<sup>1</sup>.

После решения конференции о создании Центрального комитета, как руководящего органа турецкой коммунистической организации, были произведены соответствующие выборы. В состав ЦК вошел ряд делегатов во главе с Мустафой Субхи Мевлевизаде. Одновременно был создан другой орган специально для руководства агитационно-пропагандистской работой — «Комитет агитации и пропаганды».

Конференция имела важное значение для коммунистического движения Турции. Прежде всего она подвела итог деятельности, преимущественно агитационно-пропагандистской<sup>2</sup>, отдельных групп турецких интернационалистов, стоявших на платформе Советской власти и возникших более или менее стихийно после Октябрьской революции на территории России, и объединила их в одну организацию.

Однако вновь созданная организация не была еще окончательно сложившейся, подлинной партией нового типа, обладавшей всеми ее признаками. У нее не было основного условия—органической связи с турецкой действительностью, непосредственно с народными массами Турции, ибо, как известно, «коммунизм не является предметом экспорта или импорта. Это естественный результат внутреннего развития каждой страны»<sup>3</sup>.

Новая турецкая коммунистическая организация возникла не в Турции, а Советской России, на своеобразной, как бы эмигрантской почве, обстановке, порожденной Великой Октябрьской революцией. Эта организация в сущности являлась такой же иностранной секцией Российской коммунистической

<sup>1</sup> Там же, стр. 139—140.

<sup>2</sup> Поэтому Мустафа Субхи называл этот период деятельности левых турецких социалистов «агитационным периодом» (см. 28—29, Kanunusant 1921..., s. 52—64).

<sup>3</sup> См. «Правда», № 11 (14770), М., 11.1.1959.

партии, какими были в то время и остальные иностранные секции, объединенные упоминавшейся выше Федерацией иностранных секций при ЦК РКП(б). При этом она была связана непосредственно не с ЦК РКП(б), а с мусульманскими коммунистическими организациями, как тогда назывались коммунистические организации народов Советского Востока, которыми в то время руководил Народный Комиссариат национальностей РСФСР в лице Комиссариата по делам мусульман внутренней России.

Ставя вопрос таким образом, было бы, однако, неправильно умалять значение возникшей тогда первой турецкой коммунистической организации, сыгравшей определенную роль в развитии революционного движения в Турции. Существенным был также ее вклад в дело образования Коммунистической партии Турции — партии нового типа, возникшей летом 1920 г. в самой Турции.

ԻՐԱՆՈՒՄ ՎԱԿՅԱՅԻՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Մզկիթապատկան կամ վակֆային հողատիրությունը լայն տարածում է ունեցել Իրանում սկսած դեռևս միջին դարերից: Վակֆային հողատիրության ինստիտուտի մեջ մտնում էին մզկիթներին, սրբավայրերին պատկանող և այլ նվիրատվական հողային սեփականությունները: Վակֆի ինստիտուտը մուսուլմանական աշխարհում առաջացավ արտաքուտ որպես բարեգործական նպատակների համար կատարված ամեն տեսակ զոհաբերությունների ինստիտուտ, որը համընկնում էր աստվածահաճո հասկացողության հատ: Սակայն մուսուլմանական արևելքի պայմաններում, որտեղ իրավական վերնաշենքում անբաժանելի գերիշխանությունը պատկանում էր հոգևոր օրենսդրության՝ շարիաթին, որտեղ նոտարիատի բոլոր ֆունկցիաները կատարում էին հոգևորականները, կրոնական գունավորում ստացած ամեն տեսակ զոհաբերություն կամ նվիրատվություն բարեգործական նպատակով, անխուսափելիորեն չէր կարող չանցնել հոգևորականության ձեռքով և չկենտրոնանալ նրանց մոտ: Հենց այդ պատճառով էլ հոգևորականության ձեռքում կենտրոնացել էր հսկայական հարստություն, որը դիտարկության գոյանում էր մզկիթներին և սրբավայրերին նվիրաբերված հողերի եկամուտներից. մի հանգամանք, որը նրանց դարձնում էր եկամտաբեր այդ հողերի փաստացի տերն ու տնօրենը, և բավականին լուրջ նյութական հիմք էր հանդիսանում նրանց իշխանության և քաղաքական ազդեցության համար:

Հատկապես Սաֆավիների դինաստիայի իշխանության տարիներին վակֆային հողերը հսկայական չափերի հասան: Մզկիթներին և սրբավայրերին պատկանող հողերի տարածությունը փնջավաճում էր, քանի որ հավատացյալ շիաները հաճախ էին իրենց հո-

ղերը նվիրաբերում մզկիթներին: Կարևոր գործոն էր նաև այն, որ հաճախ նվիրատվություններ էին կատարվում այն հաշվով, որպեսզի դրանք ապահով լինեն ուրիշների, ավելի ուժեղ հողատերերի բռնագրավումից:

Շարդանը գրում է, որ երբեմն բռնի կամ ապօրինի եղանակով ձեռք բերված հողերը նույնպես վակֆ էին դարձվում, որպեսզի նրանք ապահով լինեն իսկական տերերի հետապնդումից: Մինչդեռ եկամուտները վայելում էին այդ հողերը բռնագրավողները<sup>1</sup>:

Շարիաթի օրենքների համաձայն վակֆային հողերը աղատված էին պետական հարկեր վճարելուց: Այս հանգամանքը նույնպես խոշոր գործոն հանդիսացավ վակֆային հողերի աճի տեսակետից:

Սակայն XVIII դարի սկզբներին, երբ աֆղանները ներխուժեցին Իրան և Սաֆավյան դինաստիան իշխանությունից հեռացվեց, վակֆային մի շարք հողեր բռնագրավվեցին պետության կողմից: Իր թագավորության վերջին տարիներին Նադիր շահը դեկրետ հրատարակեց վակֆային հողերի բռնագրավման մասին: Այդ դեկրետի համաձայն հսկայական տարածություն ունեցող վակֆային հողերը բռնագրավվեցին և մտցվեցին պետական խալիսե հողերի մեջ՝ հողային այն ռեգիստրացիայի ժամանակ, որը հայտնի է որպես «ոաղարաթե Նադերի»: Նադիր շահը մահացավ նախքան այդ պրոցեսի լրիվ ավարտը: Նրան հաջորդած Ալի Ղուլի Ագիլ շահը կասեցրեց դեկրետը և բռնագրավված հողերի որոշ մասը վերադարձրեց վակֆային սեփականությանը<sup>2</sup>: Բայց ինչպես հաղորդում է 1815 թ. հրատարակված «Իրանի պատմություն» սովորածավալ աշխատության հեղինակ Մալքոլմը, այդ հողերը լրիվ չվերադարձվեցին<sup>3</sup>: Անգլիացի մի ուրիշ հեղինակ՝ Ֆրեյզերը գրում է օրինակ, որ եթե Մաշհադի Իմամ Ռիզայի սրբավայրի եկամուտը Սաֆավիների իշխանության վերջին տարիներին կազմում էր տարեկան 15.000 եորասանի թուման, ապա 1821—1822 թթ. նա իջել էր 2000—2500 թումանի<sup>4</sup>:

<sup>1</sup> Voyage du Chevalier Chardin en Perse, et autres lieux de l'Orient, Paris, 1811, vol. V, p. 381.

<sup>2</sup> A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, p. 132.

<sup>3</sup> John Malcolm, The History of Persia, London, 1815, vol. II, p. 313.

<sup>4</sup> J. B. Fraser, Narrative of a Journey into Khorasan, London, 1825, p. 455.

XIX դարի առաջին կեսին վակֆային հողերը նորից աճեցին դիսավորապես խաների կատարած նվիրատվությունների հաշվին, որոնց հողերը բռնագրավման սպառնալիքի տակ էին: Վակֆային նվիրատվություններ կատարողները հաճախ իրենց և իրենց ժառանգների համար վերապահում էին եկամտի մի մասը ստանալու իրավունքը, որը նշանակում էր աշխարհիկ ֆեոդալների մասնակից դառնալը վակֆային հողերի շահագործմանը: Այսպիսով վակֆային հողատիրության երկու կատեգորիա էր առաջանում «վակֆե ամ» (وقف عام) և «վակֆե խաս» (وقف خاص): Առաջինը բարեգործական նպատակների համար նվիրված վակֆեերն էին, իսկ երկրորդը, այսպես կոչված, ընտանեկան կամ տոհմային վակֆեերը, որոնք տրվում էին կրոնական հիմնարկներին, բայց եկամուտը հատկացվում էր տիրոջը:

Բացի հողային նվիրատվություններից կատարվում էին նաև թանկարժեք իրերի և քարեղենի նվիրատվություն: Օրինակ Ֆաթհ Ալի շահը Ղոմի սրբավայր մզկիթում եղած գմբեթը պատեց ոսկե շապիկով, որը ձուլվել էր 200,000 թուման ոսկե դրամից և սրբավայրին նվիրեց տարեկան 500 թուման կանխիկ դրամ և 500 խարվար հացահատիկ:

Մինչև օտարերկրյա կապիտալի ներթափանցումը Իրանի տնտեսության մեջ, վակֆային հողատիրությունը գնալով աճում էր: Բայց երբ Իրանը սկսեց վերածվել կապիտալիստական երկրների հումքի աղբյուրի, որի հետևանքով և հողատերերի համար մեծ եկամուտներ ձեռք բերելու հնարավորություններ ստեղծվեցին, ապա հողի նկատմամբ տնտեսական շահագրգռվածության աճի պայմաններում նման նվիրատվությունները մեծ չափով կրճատվեցին և մինչև իսկ սկսվեց նրանց վաճառքը մասնավոր անձանց, որը իր հերթին խոշոր հողատիրության զարգացման աղբյուրներից մեկը հանդիսացավ: Այդպիսի վաճառք տեղի էր ունենում, շնայած շարիաթի դոգմաների համաձայն վակֆային հողերը առուծախի առարկա չինեի չէին կարող և պետք է մնային կրոնական հիմնարկների մշտական սեփականության ներքո:

Ինչ վերաբերում է վակֆային հողերից ստացված եկամուտների տնօրինմանը, ապա ինչպես նշեցինք դրանք մեծ մասամբ գնում էին խոշոր հոգևորականներին: Մալբուլմը խոսելով XIX դարի սկզբների մասին գրում է՝ ամուլթեհիզները կամ գլխավոր հոգևորականները սովորաբար ապրում են իրենց միջոցներով և ունեն իրենց հատկացված հողերը: Եթե այն նահանգում, որտեղ նրանք

ապրում են կան վակֆեր կամ «նվիրատուական հողեր», ապա դրանք ամբողջովին դրվում են նրանց տրամադրության տակ<sup>1</sup>։

Լինում էին դեպքեր, երբ վակֆային հողերը վարձով էին տրվում ուրիշ անձանց, սահմանափակ ժամանակով՝ որոշակի գումարի դիմաց։ Դա կատարվում էր պարսկական տիրապետության տակ գտնվող բոլոր ծայրամասերում։ Օրինակ Թորոզ գյուղը գրտնրվում էր Մաշհադից մոտ տաս կիլոմետր հեռավորության վրա։ Գյուղի բնակչությունը 500 ընտանիք էր։ Մշակվում էր երկու հազար խարվար անջրդի։ Այդ գյուղը Մաշհադի Իմամ Ռիզայի սըրբավարի վակֆերից էր և վարձով էր տրվում երեք հազար խարվար հացահատիկի, երեք հազար խարվար դարմանի և տասներկու հազար թուման կանխիկ դրամի դիմաց<sup>2</sup>։

Ինչպես նշեցինք վակֆային հողերը շարիաթի օրենքների համաձայն առուժախի առարկա չէին։ Մատենադարանում պահպանված վավերագրերում կան մի շարք փաստաթղթեր, որոնց մեջ հիշեցվում են, որ արգելված է եկեղեցական հողերի վաճառքը։ Օրինակ 1812 թ. մի վավերագրում ասված է, որ եթե Ազոլիսի վանքին պատկանող կալվածքները և այգիները որևէ մեկին վաճառված լինեն, ապա այդ գործարքները չեղյալ համարել<sup>3</sup>։

هرگاه کشیش و خلیفه ار امنه املاک و باغات موقوفه بر کلیسا و وانک اکلیس را باحدی فر و خته و با هبه نموده باشند لغو و باطل و معامله مذکور را مناط اعتبار شرعی ندارد و مشتر بان موقوفات جنبین را نمیرسد کتدر املاک... بطوره دخل و تصرف نمایند

Պահպանվել է նաև մի այլ վավերագիր, որը պարունակում է շարիաթական դատարանի վճիռը այն մասին, որ Ազոլիսի վանքի հոգևորականները իրավունք չունեն նվեր ստացած կալվածքները վաճառել և օտարել<sup>4</sup>։

وقتی نمودن اهل ذمه از املاک و اموال خودشان بر کنایس صحیح است بنا علیه هر گاه کشیش و خلیفه ار امنه املاک و باغات موقوفه بر کلیسای وانک کنیس را بکسی بمبایعه لارمه یا اینکه

<sup>1</sup> John Malcolm, The History of Persia, London, 1815, vol. II, p. 472.

جلد سوم کتاب مطبع انیس، تالیف جناب صنیع الدوله<sup>2</sup> محمد حسن خان وزیر انطباعات و دار الترقی جمه خاصه هیا یونی. ۱۳۰۷ هجری ص ۱۵.

<sup>3</sup> ՀՍՍՌ Մինիստրների սովետին կից Մատենադարան, Կաթ. Դիվան, պարսկերեն-արաբերեն վավերագրեր, թղթ. 1 ն. Վ. 628:

<sup>4</sup> Նույն տեղում, Վ. 629:

بیمایشه متسر و صفیر و خته باشند یا اینکه همه نموده باشند معاملات  
مزبوره نغور باطن و غیر مناط مشرعی میباشد تصرف متسری و  
متوب در املاک موقوفه مزبوره غیر جائز میباشد

Կան նաև մի շարք վավերագրեր, որոնք ապացուցում են վակ-  
ֆային հողերի պետական հարկերից ազատված լինելու փաստը:  
Այսպես. 1810 թ. մի վավերագրում կարդում ենք, որ Հուսեյն խան  
Սարդարը թագաժառանգ Աբրաս Միրզայի հրամանով հայտնում է  
Եփրեմ կաթողիկոսին, որ հրամայված է բոլոր պետական պաշտո-  
նյաներին հարկեր չգանձել էջմիածնի կալվածքներից և մյուս եկա-  
մուտներից<sup>1</sup>: 1810 թ. Աբրաս Միրզան էջմիածնի հոգևորականու-  
թյանը ուղղված մի հրովարտակով հայտնում է, որ հրամայել է  
բոլոր պետական պաշտոնյաներին էջմիածնի շարժական ու ան-  
շարժ գույքերը հարկերից ազատել, ամեն տարի պետական գան-  
ձարանից 400 թուման էջմիածնին նվիրել և այլն<sup>2</sup>:

Ազուլիսի վանքի վերատեսչին ուղղված 1813 թ. շահի հրովար-  
տակում ասված է, որ հին օրենքների համաձայն վանական կալ-  
վածքները հարկի ենթակա չեն: Ամբողջ եկամուտը մնում է վանքի  
տնօրինությանը<sup>3</sup>:

Մի այլ վավերագրում կարդում ենք, որ 1807 թ. Երևանի Քյա-  
րիմ խան Բեյլարբեկը հաստատում է իրանական շահերի հրովար-  
տակներից հանած էջմիածնի իրավունքներին ու արտոնություննե-  
րին վերաբերող 13 կետերից բաղկացած հրովարտակը, որի հենց  
առաջին կետում ասված է, որ նա ազատված է «մալուչահաթ», «վո-  
չուհահաթ», «ավարեզաթ» և այլ բռնի պարտավորություններից<sup>4</sup>:

#### مالوجهات ووجوهات وعوارضات تكاليف شاقه

Կամ 1809 թ. № 605 վավերագրով Հուսեյն խան Սարդարը  
հայտնում է Բարսեղ եպիսկոպոսին, որ Օշականը իրենց կողմից  
ճանաչված է որպես էջմիածնի լիակատար սեփականություն և  
կոնվինների ժամանակ այնտեղից գանձված հարկը պետք է համա-  
րել պատերազմական դրության հետևանք և վերջում խոստանում է  
հետագայում ոչ մի դինար չգանձել Օշականից և այլն<sup>5</sup>:

Պետական տասնորդից ազատված էին հոգևորականության

<sup>1</sup> ՀՍՍՌ Մինիստրների սովետին կից Մատենադարան, Կաթ. Դիվան, պարս-  
կերեն-արաբերեն վավերագրեր, Թղթ., Վ. 617:

<sup>2</sup> Նույն տեղում, Վ. 615:

<sup>3</sup> Նույն տեղում, Վ. 646:

<sup>4</sup> Նույն տեղում, Թղթ. 1 Դ, Վ. 568:

<sup>5</sup> Նույն տեղում, Թղթ. 1 Ե, Վ. 605:

Ներկայացուցիչները, բայց միայն անձամբ մշակած հողերից: Ազատված էին նաև գլխավոր մզկիթների վակֆային հողերը: Հոգևորականները ազատված էին նաև գլխահարկից:

Հետաքրքրական է նշել, որ հարկերից ազատված լինելու հրովարտակը երբեմն քանդակվում էր քարի վրա և դրվում գյուղի ինչ-որ երևելի տեղում: Երբ հարկահանները խախտում էին այդ կարգը, գյուղացիները քարը տանում էին որպես ապացույց՝ հարկերից ազատվելու համար: Օրինակ XIX դարի երկրորդ կեսին Սաբզևարի Փիրհաջաթ գերեզմանատանը դրված է եղել այդպիսի մի քար, որը նասր էր Դին շահի այդ շրջանում կատարած ճամփորդության ժամանակ Ղուլանի Լանդար գյուղի գյուղացիները Սաբզևար էին բերել ապացուցելու համար, որ իրենք հարկերից ազատված են եղել<sup>1</sup>:

XIX դարում վակֆային հողերում տիրող կամայականությունների մասին հետաքրքիր փաստ է հաղորդում անգլիական դեսպան Հարֆորդ Ջոնս Բրիջզը: Խեհրան-Թավրիզ ճանապարհի վրա գրանդվող Բասմիչ գյուղում, գյուղացիները տեղեկանալով, որ բարձրաստիճան պաշտոնյաներ են եկել, գալիս են գանգատ ներկայացնելու վեզիր Միրզա Բոզորգին: Վերջինս ասում է դեսպանին. «Ես շատ ցավում եմ այս միջադեպի համար: Ես հույսով էի խուսափել նրանցից: Ես ավելի շատ գլխացավանք ունեմ բասմիչիներից, քան մնացած ամբողջ Ադրբեջանից: Գյուղի շրջակայքի հողերի մեծ մասը վակֆային է և Թավրիզի փիշնամազը դրանց տնօրենն է: Նա մի իսկական մոլլա է, աշխարհի գործերից անտեղյակ, կասկածամիտ և ազահ: Նա կարծում է, որ երբեք գյուղացիներից չի ստանում այնքան, ինչքան պետք է ստանա, իսկ նրանք փոխադարձաբար մտածում են, որ նա ավելին է ստանում քան իր բաժինն է: Նա ասում է, որ թող սատանան նրանց տանի՝ իրեն խաբելու համար, իսկ նրանք ասում են, որ թող նրան տանի՝ կեղեքման համար»<sup>2</sup>: Այս վկայությունը ցույց է տալիս թե ինչպիսի շարաշահումներ էին կատարվում վակֆային հողերի տնօրինման գործում:

Խոսելով վակֆային հողերի մշակման մասին, պետք է նշել, որ ընդհանրապես հոգևորականությունը ինքը չէր զբաղվում հողե-

<sup>1</sup> جلد سیم کتاب مطلع الشمس، تالیف جناب صنیع الدوله محمدا حسن،  
خان وزیر انطباعات و دار الترجمة خاصه همدان، ۱۳۰۳ هجری، ص ۲۱۳

<sup>2</sup> Harford Jones Brydges, An account of the transactions of His Majesty's mission to the court of Persia in the years 1809—11, vol. I, London, 1834, p. 304.



րի մշակմամբ, այլ գերադասում էր այն վարձով տալ: Վարձով տալու պարագայում պայմանները նյութական տեսակետից առանձնապես չէին տարբերվում կալվածատիրական հողերից: Գյուղացիները հողը վարձակալում էին որոշակի պայմաններով, որը կոչվում էր «նողարեն» (عز اره): Մոզարեն կամ կիսրարային վարձակալության դեպքում հողը վարձով էր տրվում վարձակալ-մշակողին որոշակի ժամկետով, բերօրից որոշ մաս ստանալու պայմանով: Հողի վարձակալման այս եղանակի հիմքում ընկած էր միջնադարյան հնգանդամյա ֆորմուլան, ըստ որի բերքը բաժանվում էր հինգ մասի, յուրաքանչյուր մասը գյուղատնտեսության բաղկացուցիչ հինգ տարրերից (հողի, ջրի, սերմացուի, բանող տավարի և աշխատուժի) մեկի դիմաց:

Վակֆային հողերից ստացված եկամուտների մասին գաղափար կազմելու համար կարելի է բերել հետևյալ օրինակը: Քերզոնը դրում է, որ 1892 թ. միայն Իմամ Ռիզայի շիրիմի տարեկան եկամուտը կազմում էր 60.000 թուման դրամ և 10.000 խարվար հացահատիկ<sup>1</sup>:

Վակֆային հողերից ստացված եկամուտների յուրացման և ընդհանրապես ապօրինի ձևով հողային սեփականություններ ձևափոխելու և բազմաթիվ այլ շահաշահումների մասին հետաքրքիր փաստեր է հաղորդում Մեհդի Մալեքզադեն իր արժեքավոր «Իրանի սահմանադրական ուսուցիչայի պատմությունը» աշխատության մեջ: Նա դրում է, որ բարձրաստիճան հոգևորականները բռնապետության գործակալների օժանդակությամբ հսկայական տարածություն կազմող պետական կալվածքներ գրավեցին և աննկարագրելի եղանակներով մեծ հարստություններ դիզեցին<sup>2</sup>: Այնուհետև հեղինակը պատմում է մի դեպքի մասին, որը տիպիկական է բարձրաստիճան հոգևորականության վարքագծի տեսակետից: Մուջթեհիդ Աղա Նաջաֆին իր ժամանակի ամենահարուստ մարդկանցից էր: Նա մի քանի տարի շարունակ խուսափում էր պետական հարկեր վճարել: Միրզա Ասադօլախանը, որը ֆինանսների պետն էր, մեկ օր Նաջաֆուն իր մոտ է հրավիրում, որպեսզի պարտքերը մարելու մասին բանակցի: Նաջաֆին մի խումբ այլ հոգևորականների հետ գնում է նրա մոտ: Ասադօլախանը նրան պատվով ընդունում է, ձեռքը համբուրում և հյուրասիրում է թեյով ու քաղցրավենիքով:

<sup>1</sup> G. Curzon, Persia and the Persian Question, London, 1892, p. 489.

<sup>2</sup> مهدي ملكزاده تاريخ انقلاب مشروطيت ايران تیران ۱۳۲۸

Նաչաֆին հրաժարվում է և ամենայն անամոթությամբ ասում, թե ժողովուրդը ինչ-որ բաներ է խոսում Ասադուլա խանի հավատալիքի մասին: Դրանով նա ուզում է ասել, թե քանի որ Ասադուլա խանը մեղադրվում է անհավատության և անաստվածության մեջ, հետևաբար կրոնական օրենքները ինձ թույլ չեն տալիս ձեր տանը որևէ բան ուտել:

Բարձրաստիճան հոգևորականի այս խոսքը, որը կարող էր վեզիրի կյանքի գնով վերջանալ, կայծակի պես հարվածեց այդ խեղճ մարդու գլխին և նա ստիպված այս սարսափելի վտանգից փրկվելու համար գունատված և դողալով թուղթ և գրիչ պահանջեց և հետևյալ բովանդակությամբ մի քանի տող գրեց և տվեց Աղա-յին: «Վեհափառ... մինչև այս թվականը իր կալվածքների և ունեց-վածքի բոլոր հարկերը վճարել է ինձ և այդ կապակցությամբ այլևս Դիվանն Ալիի հետ ոչ մի հաշիվ չունի»<sup>1</sup>:

Հետաքրքրական է նաև հետևյալ փաստը:

Մալեքզադեն գրում է, որ երբ որևէ հարուստ մարդ մահանում էր, հաճախ նրա ամբողջ ունեցվածքը բռնագրավվում էր բարձր հոգևորականության կողմից: Օրինակ, երբ մահացավ Հաջի Իսմայիլ Նաչաֆաբադին, որը իր ժամանակի ամենահարուստ մարդկանցից էր, նրա ունեցվածքը Իմամ Ջումհի կողմից բռնագրավվեց «Իմամի բաժինը» անվան տակ և բաժանվեց հոգևորականությանը<sup>2</sup>:

Իրանական ռևոլյուցիայի նախօրյակին, Մուզաֆար էգ Դին շահի օրոք պետական հողերի վաճառք տեղի ունեցավ և մի շարք կառավարական պաշտոնյաներ և մեծ թվով հոգևորականներ շրջ-չին գումարներ վճարելով բազմաթիվ գյուղեր և կալվածքներ ձեռք բերեցին: Երբեմն հարյուր ոսկի կաշառք տալով ձեռք էին բերում այնպիսի կալվածքներ, որոնք հարյուր հազար թումանից ավելի արժողություն ունեին<sup>3</sup>:

Սակայն իրանական ռևոլյուցիայի նախօրյակին վակֆային կալվածքները ընդհանուր գծերով մնում էին նույն վիճակում ինչ XIX դարի սկզբին:

1906—1911 թթ. իրանական ռևոլյուցիայից հետո վակֆային հողերը մտան լուսավորության մինիստրության վակֆային վարչու-թյան հսկողության տակ: Վակֆային վարչությունը տնօրինում էր

مهدي ملكزاده تاريخ انقلاب مشروطيت ايران تهران ۱۳۲۸

ص ۹۸

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 99:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 147:

այդ կալվածքները և օգտագործելու համար վարձով էր տալիս հենց իրենց՝ հոգևորականներին:

Վակֆային հողերի խնդիրը նորից օրակարգի հարց դարձավ Ռիզա շահի միապետության հաստատումից հետո:

Ռիզա շահի միապետության հաստատումը իրանական հասարակական կյանքում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական այն տեղաշարժերի արդյունք էր, որոնք կյանքի էին կոչվել օտարերկրյա կապիտալի ներթափանցման հետևանքով. դա սերտորեն կապված էր նաև միջազգային բնույթ կրող դեպքերի հետ, այն պայքարի հետ, որ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում իմպերիալիստական պետությունները մղում էին Սովետական Ռուսաստանի դեմ:

Ջախջախելով երկրում ծավալվող ազգային-աղատագրական շարժումը, Իրանի իշխող դասակարգերը և Ռիզա շահի միապետությունը, անգլո-ամերիկյան իմպերիալիստների օգնությամբ ձեռնամուխ են լինում մի շարք միջոցառումների կիրառմանը, որոնց իրականացումը շնայած մասամբ անհրաժեշտ էին ընդհանուր ազգային-պետական շահերի տեսակետից, բայց պատմական նոր պայմաններում դառնում են իշխանությունը հետադադում էլ նրանց ձեռքում պահելու և երկրում իշխող ֆեոդալ-կալվածատիրական կարգերը անխախտ պահելու երաշխիքը: Այդ միջոցառումների իրականացումը համապատասխանում էր թե՛ ֆեոդալ-կալվածատերերի և թե՛ խոշոր առևտրական բուրժուազիայի շահերին:

Բավարարելով խոշոր կալվածատերերի պահանջները՝ օրինականացնելու նրանց իրավունքները հողի նկատմամբ, ամրացնելու նրանց գերիշխանությունը գյուղացիության վրա, իրանական կառավարությունը և մեջլիսը հրապարակեցին մի շարք ազրարային օրենքներ:

Սկսած 1925 թվականից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Իրանում ազրարային հարցի վերաբերյալ հրատարակվեցին ավելի քան 60 օրենսդրական ակտեր:

Ի՞նչ գործո՞ւններ էին վճռական դեր խաղում Իրանի ազրարային օրենսդրության զարգացման գործում:

Նախ՝ օտարերկրյա կապիտալի ներթափանցումը երկրի ներքին շուկան Իրանը վերածել էր իմպերիալիստական պետությունների վաճառահանման շուկայի: Իրանից ելնելով՝ պահանջվում էր շուկայի հետ կապված հողատիրության իրավունքի ամրացում, այն է՝ բունագրաված հողերի յուրացման օրինականացում, կալվածատիրական հողատիրության ընդարձակում ի հաշիվ պետա-

կան հողերի, կալվածատիրական հողերից գանձվող հարկերի կանոնավորում և այլն:

Երկրորդ՝ կենտրոնացված պետություն ստեղծելն ու տեղական ֆեոդալներին վարչական և դատական իշխանությունից ղրկելը. պահանջում էր կալվածատերերի և գյուղացիության և այդ դասակարգերի ու պետության փոխհարաբերությունների օրենսդրական ձևակերպում, կալվածատերերի շահերն ապահովելու հիմունքով:

Ագրարային հարցի վերաբերյալ Ռիզա շահի անցկացրած օրենսդրության ուսումնասիրումը ցույց է տալիս, որ նրա կառավարության միջոցառումների ամբողջ գումարը, թե՛ իր անմիջական նպատակների, և թե՛ օբյեկտիվ հետևանքների տեսակետից, ծառայում էր կալվածատիրական հողատիրությունն ամրացնելու և հավերժացնելու, առկա արտադրանական կոնսերվացիայի և գյուղացիության շահագործումը օրինականացնելու գործին:

Պետական իշխանության կենտրոնացման, գանձարանի կարգավորման, իրավունքի «եվրոպականացման» և վերջապես հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքի հաստատման պրոցեսում Ռիզա շահի միապետությունը չէր կարող չդիպչել նաև վակֆի ինստիտուտին: Ռիզա շահի օրենսդրության մեջ առաջին անգամ վակֆի մասին նշվում է հողային սեփականությունները ռեզիստրացիայի ենթարկելու կապակցությամբ: Այսպես՝ 1928 թվականի փետրվարի 11-ի հողային սեփականությունների ընդհանուր ռեզիստրացիայի և վաղեմիության օրենքի մեջ մասնավորապես ասվում էր այն մասին, որ վակֆային գույքի ռեզիստրացիայի համար հոգատարությունը մտնում է խնամատարների (մոթավալի متولى) պարտականությունների մեջ<sup>1</sup>:

Այս առաջին վերահսկողությունն էր, որ Ռիզա շահի միապետությունը սահմանում էր սրբավայրերին և մզկիթներին պատկանող հողերի նկատմամբ:

Օտարված պետական կալվածքների հարկերի մասին 1928 թվականի մարտի 11-ի օրենքում խոսվում է այն մասին, որ հարկեր պիտի գանձվեն նաև այն օտարված պետական կալվածքներից, որոնց փաստացի տերերը այդ կալվածքները որպես վակֆ «նվիրել» են մզկիթներին, սրբավայրերին և այլն:

Աշխարհիկ օրենսդրություն անցկացնելու պրոցեսում, հատկապես նոտարիատի ինստիտուտի հաստատումով, վակֆ հասկացողությունը ակամա սկսում է կորցնել իր կրոնական գունավորու-

مجموعه قوانین موضوعه و مسائلی مصوبه دوره ششم تقنینیه<sup>1</sup>  
قانون ثبت عمومی املاک و مرور زمان مصوب ۲۱ بهمن ۱۳۰۶ شمسی ص ۳۹  
202

մը: Այսպես օրինակ, եթե առաջ վակֆային նվիրատվութիւնը որևէ դպրոցի օգտին անխուսափելիորեն ընկնում էր հոգևորականութեան ձեռքը, ապա աշխարհիկ օրենսդրութիւնը անցկացնելուց հետո, աշխարհիկ դպրոցներ հիմնվելուց հետո, այդ կարգի նվիրատվութիւնները արդեն չէին կարող ընկնել հոգևորականութեան ձեռքը: Ռիդա շահի միապետութիւնը սկզբում տարբերայնորեն ընթացող այդ պրոցեսը խորացրեց նաև նրանով, որ օրենսդրական կարգով վակֆին տվեց աշխարհիկ բնույթ և այն վերածեց քաղաքացիական ինստիտուտի: Հոգևոր վակֆը արդեն կարող էր հանդես գալ, որպես վակֆի մասնավոր դեպք: Վակֆի ինստիտուտի նման աշխարհականացումը իր արտահայտութիւնը գտավ 1929 թվականին հրատարակված Քաղաքացիական օրենսգրքում:

Քաղաքացիական օրենսգրքի՝ վակֆային գույքին վերաբերող հատուկ բաժնում գոյութիւն ունեցող տասնյակ հոգևածներից միակ հոգևածը, որը հիշում է կրոնի կամ հոգևորականութեան մասին, և որի հիման վրա կարելի է դատել թե վակֆային գույքը կարող է որևէ ձևով վերաբերել կրոնական հաստատութեան, հանդիսանում է 66-րդ հոգևածը, որտեղ ասվում է. «Այն նվիրատվութիւնը, որի նպատակը հակառակ է շարիաթին, վավերական չէ»: Մնացած բոլոր հոգևածները վակֆը մեկնաբանում են որպես զուտ աշխարհիկ ինստիտուտ՝ անկախ կրոնից: Այսպես օրինակ՝ Քաղաքացիական օրենսգրքի 55-րդ հոգևածը ասում է. «Վակֆային իրավունքը կայանում է նրանում, որ գույքը հանձնվում և նրա եկամուտը հատկացվում է որոշակի նպատակի»: Ճանաչվում է երկու ձևի վակֆ: Առաջինը, այն հողերը, որոնք նվիրաբերվում են ընդհանուր բարեգործական նպատակներով և կոչվում են բարեգործական վակֆ (وقف عظيم), և երկրորդ՝ այն հողերը, որոնք նվիրաբերվում են որոշակի նպատակների համար և կոչվում են հատուկ վակֆ (وقف خاص): 62-րդ հոգևածում ասված է, որ եթե նվիրատվութիւնը կատարելիս որոշակի սահմանվի, թե ում է հասցեագրված այդ նվիրատվութիւնը, ապա գույքը դառնում է նրա սեփականութիւնը, իսկ եթե որոշակի չի սահմանված, թե նվիրատվութիւնը ում է վերաբերում, կամ ընդհանուր բարեգործութեան համար է թե ոչ, ապա գույքը դառնում է խնամակալի սեփականութիւնը, իսկ այդպիսին չլինելու դեպքում դրվում է դատավորի տրամադրութեան տակ:

Մենք արդեն նշեցինք, որ անցյալում որոշ կալվածատերեր պետութեան ոտնձգութիւնից և ծանր հարկերից ազատվելու համար իրենց հողային սեփականութիւնը վակֆ էին դարձնում: Այժմ

այդ երևույթը վերացնելու համար 72-րդ հոդվածում ասվում էր, որ ոչ ոք իրավունք չունի հողը ամբողջովին կամ մասամբ իր օգտին վակֆ դարձնել: Բայց մյուս կողմից էլ 73-րդ հոդվածում ասվում էր, որ վակֆային նվիրատվությունները զավակներին, ազգականներին, ծառաներին և այլն, օրինական է: 75-րդ հոդվածում նշվում էր, որ նվիրատվությունը ստացող անձը կարող է որևէ մեկին նշանակել որպես մութավալի՝ խնամատար, որն իր հերթին կնշանակի մի տեղակալ: Մութավալիի գործերը հսկելու համար կարելի է նշանակել նաև մի նազիր՝ հսկիչ (հոդված 72): Շարիաթի օրենքների համաձայն վակֆի կառավարիչը ստանում է եկամտի 10%-ը: Քաղաքացիական օրենսգրքը տրոշակիորեն չի նշում կառավարիչին հասանելիք բաժինը, միայն 84-րդ հոդվածում ասվում է, որ եթե եկամտից տրեք բաժին նշանակված չլինի կառավարիչին, ապա նա իրավունք ունի իր աշխատանքի հատուցման համար որևէ բաժին վերցնել:

88—90-րդ հոդվածներում նշված է, որ վակֆի վաճառքը թույլատրվում է եթե հողի օգտագործումը անկարելի է դառնում, կամ անօգտագործելի դառնալու վրա է, իսկ 349-րդ հոդվածով վակֆային գույքի վաճառքը անօրինական է հայտարարված, բացառությամբ այն դեպքերի, երբ նվիրատվություն ստացած կողմերի միջև տեղի ունենա այնպիսի տարածայնություններ, որոնց հետևանքով կարող է արյունահեղություն կամ նվիրված գույքի ավերման վտանգ ծագել: Վաճառքը թույլատրվում է նաև օրենսգրքի վակֆային նվիրատվությունների բաժնում սահմանված դեպքերի պարագայում: Օրենքով թույլատրվում է նաև վակֆի վարձով տալը:

Քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածների տևումնասիրումը ցույց է տալիս, որ Ռիզա շահը վերացրեց վակֆի ինստիտուտի կրոնական գոմեավորումը և սկսեց այն դիտել որպես կամ հասարակական, կամ անձնական նշանակություն ունեցող, ամեն տեսակ բարեգործական նպատակ հետապնդող, տարբեր ձևի գույքերի, եկամուտների նվիրատվության, ինքնատիպ, քաղաքացիական ինստիտուտ: Իսկ նվիրատվությունը մզկիթների օգտին՝ միայն որպես մասնակի դեպք այդ ինստիտուտի գործունեության պրակտիկայում:

Հատկապես վակֆին նվիրված առաջին օրենքը հրատարակվեց 1934 թվականի դեկտեմբերի 23-ին<sup>2</sup>: Այդ օրենքով կարգավոր-

<sup>1</sup> Բոլոր հոդվածները տե՛ս «Քաղաքացիական օրենսգրք», էջ 11—21:

قانون مدنی صفحہ ۲۱—۱۱

مجموعه قوانین موضوعه ومسائل مصوبه دوره نهم تقنینیه<sup>2</sup>

լում էր վակֆային կալվածքների կառավարումը: Օրենքի կարևորագույն կետերը ամփոփված էին առաջին և երկրորդ հոդվածներում: Առաջին հոդվածի համաձայն նշանակված խնամակալ շունեցող կամ անհայտ խնամակալ ունեցող վակֆերի կառավարումը դրվում էր լուսավորության և վակֆերի (وزارت معارف و اوقاف) մինիստրության վրա: Իսկ երկրորդ հոդվածում ասվում էր, որ լուսավորության և վակֆերի մինիստրությունը խիստ հսկողություն է հաստատում հասարակական նշանակում և հատուկ խնամակալ ունեցող վակֆերի նկատմամբ: Այս երկու հոդվածների հրատարակումը հիմնականում ուժեղացրին պետության դերը վակֆերի կառավարման և հսկողության գործում: Պետությունը խիստ հսկողություն էր հաստատում բոլոր վակֆերի նկատմամբ, բացի այն դեպքերից, երբ խնամատարությունն ընկնում էր պետության զբաղմունքի, այսինքն շահի վրա (հավելված № 2, հոդված 3-րդ): Օրենքի 7-րդ հոդվածում շեղում էր, որ մասնավոր կամ անձնական վակֆերի գործերին մինիստրությունը չպիտի միջամտի, բացի վաճառքի դեպքից, երբ պահանջվում էր կառավարության սանկցիան: 9-րդ հոդվածում ասվում էր, որ լուսավորության և վակֆերի մինիստրությունը որպես կալվածքները կառավարելու փոխհատուցում կստանա ամբողջ եկամտի 10%, իսկ եթե միայն հսկողություն հաստատի, կստանա 5%-ը: Եթե վակֆը տրվի հոգևոր հիմնադրանքների և դպրոցների, այդ դեպքում մինիստրությունը կառավարելու համար կստանա 3%, իսկ հսկողության համար՝ 2%:

Այսպիսով, շնայած վերահիշյալ միջոցառումներին, այդուհանդերձ ընդհուպ մինչև 1934 թվականը Ռիզա շահի միապետությունը բարձր հոգևորականության նյութական բազայի խախտման ուղղությամբ որևէ լուրջ քայլի չդիմեց: Մասնավորապես մզկիթների հողերի որևէ սեկուլարիզացիայի մասին խոսք անգամ չկար: Նա սահմանափակվեց հոգևորականության և մզկիթներին պատկանող հողերի նկատմամբ միայն հսկողության հաստատումով և այդ հույսերից ստացվող եկամուտների մի մասի յուրացումով:

1934 թվականից հետո, մինչև Ռիզա շահի դիկտատուրայի տապալումը, վակֆերի մասին հաստատված միակ հատուկ օրենքը 1941 թվականի մայիսի 4-ի օրենքն էր, որի համաձայն թույլատրվում էր վակֆային հողերի և կանաթների վաճառքը<sup>1</sup>:

1 مجموعه فوائین موضوعه «ایران» 5 مایس، 1941 Թ.: و مسائل مصوبه دوره یازدهم تقنینه صفحه ۲۲۵

Այդ օրենքի առաջին հոդվածի համաձայն ֆինանսների մի-  
նիստրությանը թույլատրվում էր աճուրդով վաճառել հասարակա-  
կան նշանակում ունեցող վակֆային հողերը, իրենց ջրով և կանաթ-  
ներով: Վաճառքի պայմանները նույնն էին, ինչ Թեհրանի շրջա-  
կայքի պետական կալվածքներինը: Բայց խոշորագույն մզկիթների  
վակֆերը բացառվում էին այս օրենքի ազդեցությունից:

Նրկրորդ հոդվածում ասվում էր, որ «...առաջին հոդվածը չի  
տարածվում այն կալվածքների վրա, որոնց խնամատարությունը  
պատկանում է թագավորող ներկա շահին, ինչպես և այն կալվածք-  
ների, որոնք նվիրել են որպես վակֆ Իմամ Ռիզայի, Գոհար Շահ,  
Ղամի, Հազրաթե-Արզու Ազիմ, Շահչերաղ, Նեյմաթուլլա վալի  
մզկիթներին կամ հիվանդանոցներին»:

Վակֆային հողերի վաճառքի օրենքը խոշորագույն վակֆեր  
ունեցող մզկիթների վրա շտարածելը և այդ կալվածքները հոգևո-  
րականության ձեռքում թողնելը ապացուցում է, որ Ռիզա շահի  
միապետությունը չէր շահագրգռված հոգևորականության տնտեսա-  
կան բազան խորտակելով, ճանաչում էր նրանց որպես կարևոր սո-  
ցիալական ուժ և ցանկանում էր նրանց համակրանքը շահել:

Շատ հետաքրքրական մոմենտ է նաև օրենքի այն մասը, որի  
համաձայն այն բոլոր կալվածքները, որոնց եկամուտները նվիր-  
ված էին որպես վակֆ մասնավոր անձանց, տրվում էին նրանց  
մասնավոր սեփականության իրավունքով: Միաժամանակ իրավունք  
էր վերապահվում այդ կալվածքները վերածել զնման և վաճառքի  
օբյեկտի: 7-րդ հոդվածում ասված էր. «մասնավոր վակֆերը հա-  
մարվում են անձնական կալվածքներ, և այն անձինք, որոնք հա-  
մաձայն վակֆային կտակի օգտագործման իրավունք ունեն, ազատ  
են իրենց իրավունքը օտարելու (դարձնելու այն զնման և վաճառքի  
օբյեկտ)»:

Այսպիսով օրենքը մասնավոր վակֆերը նվիրում էր կալվածա-  
տերերի դասակարգին, անձեռնմխելի էր թողնում խոշորագույն և  
ամենապուրագիտային վակֆերը՝ բարձր հոգեբուականների և շահի  
վակֆերը, և թույլատրում էր վակֆային հողերի վաճառքը:

Հետաքրքիր է նշել նաև հետևյալ փաստը, որ բարեգործական  
այն վակֆերը, որոնք նվիրված էին եղել հատուկ նպատակների  
համար, ինչպես օրինակ՝ «Թուրք հավանիս (روزخوارخانه) տոնին  
(կրոնական ծմապահության տոն), Ռիզա շահի օրենքներով դար-  
ձան «մութաազեր օլ մասրաֆ» (معتذر المصرف) անօգտագործելի,  
այսինքն նրանց եկամուտները այլևս չէր թույլատրվում հատկաց-  
նել այն նպատակներին, որոնք նախատեսվել էին նվիրատվության



ժամանակ, բանի որ «Ռուզե խավանիսը» արգելվեց Ռիզա շահի օրոք: Որոշ դեպքերում այդ հողերը անցան լուսավորության և վակ-  
ճերի մինիստրության, իսկ որոշ տեղերում էլ՝ մասնավոր սեփա-  
կանատերերին:

Պատահում էին նաև դեպքեր, երբ որոշ վակֆային հողեր յու-  
րացվում էին առանձին մարդկանց կողմից այն պատրվակով, որ  
եթև կառավարության կողմից հսկողության ենթարկվի, ապա եկա-  
մուտը նպատակին չի հասնի: Այդպիսի դեպքեր են եղել Ադրբե-  
ջանում և Իսֆահանում: Իսֆահանի Չահարբադ Մեդրեսեի որոշ  
վակֆերը յուրացվեցին առանձին մարդկանց կողմից:

Հետպատերազմյան շրջանում վակֆային հողերի ընդհանուր  
քանակի մեջ զգալի փոփոխություն առաջացավ՝ շահին պատկաճող  
հողերի կապակցությամբ:

Հայտնի է, որ երբ Ռիզա շահը գահ բարձրացավ հողային ոչ  
մի սեփականություն չունեցող, բայց երբ 1941 թ. գահից հեռացվեց  
համարվում էր Իրանի ամենախոշոր կալվածատերը: Իր թագավո-  
րության տարիներին Ռիզա շահը բռնագրավեց և յուրացրեց հսկա-  
յական տարածության հողեր Մազանդարանում, Խորասանում,  
Կենտրոնական Իրանում և այլուր: Նշենք թեև կուզ, որ միայն Խորա-  
սանում շահի տնեցած կալվածքները գնահատվում էին մոտ 250  
միլիոն ռիալ, Նա տիրում էր մոտ մեկ միլիոն հեկտար անտառի և  
որպես անտառի սեփականատեր «հավանաբար խոշորագույնն էր  
աշխարհում»<sup>1</sup>: Պաշտոնական տվյալների համաձայն Ռիզա շահի  
դահնկեցության ժամանակ նրան էին պատկանում 8025 կալվածք-  
ներ<sup>2</sup>:

Ռիզա շահի բռնագրաված հողերը նրա զահնկեցությունից հե-  
տո՝ 1941 թվականին անցան նրա որդուն՝ Մուհամեդ Ռիզային, որ  
այդ հողերը պահպանելու համար 1941 թ. սեպտեմբերի 21-ի հրա-  
Неверным является и утверждение иранских ученых о том, что Англия с помощью русских армий будто стремилась ослабить Иран для того, чтобы обеспечить безопасность Индии от иранской угрозы. Навряд ли Ост-Индская компания опасалась нападения иранской армии, которую сама вооружила и финансировала.

Столь же тенденциозными являются заявления иранских историков о том, что Англия спровоцировала Иран на войну для того, чтобы привязать русские армии к Закавказью и таким путем ствлечь их от Индии. Усилиями советских и индийских историков доказано, что никакой реальной угрозы Индии со стороны России не существовало, а шумихой о «русской угрозе» Англия стремилась отвлечь внимание мировой общественности от агрессивных акций английских колонизаторов в Азии.

Известно, что иранский вопрос рассматривался британскими дипломатами как подсобный по отношению к греческой и турецкой проблемам. Это обстоятельство не нашло сколько-нибудь объективного отражения в иранской историографии. Вследствие этого подстрекательская деятельность султанской Турции, добивавшейся русско-иранской войны для того, чтобы

отвести от себя угрозы России, осталась невыясненной или, скорее всего, сознательно умалчивается иранскими исследователями. Важность этой проблемы нельзя недооценить.

С другой стороны, произвольное толкование Петербургского протокола от 4 апреля 1826 г., целиком посвященного греческой проблеме, привело иранских историков к субъективной оценке британской внешней политики при Каннинге и Веллингтоне, гиперболизации влияния графини Ливен на эту политику, а также к ложной версии о существовании англо-русского плана раздела Ирана и Турции.

Анализ персоязычных источников и материалов Архива внешней политики России показал, что на деле существовал тайный сговор иранских реваншистов с их британскими покровителями в вопросе координации дипломатической деятельности в годы второй русско-иранской войны. Когда в первые месяцы этой войны реорганизованная английскими офицерами иранская армия оккупировала северный Азербайджан, официальный Лондон и Ост-Индская компания, обычно реагирующие на любое, сколько-нибудь заметное политическое событие на Востоке, на этот раз хранили молчание. Для этого было немало причин, так как в период временных успехов иранской армии дипломатическое наступление России против Порты было приостановлено, турецкая делегация саботировала переговоры в Аккермане, царизм затормозил свою активность на Балканах, в Средней Азии и, избегая второго фронта, отложил войну против Турции. С помощью Ирана Англия стремилась выиграть время, необходимое султану Махмуду II для реорганизации турецкой армии. Поэтому, соблюдая видимость невмешательства в русско-иранскую войну, Англия поощряла иранских реваншистов.

Так продолжалось до первых чисел сентября 1826 г., когда блестящая шамхорская победа войск генерала Мадатова, положившая начало контрнаступлению русского корпуса, ликвидировала заговор молчания, организованный Каннингом на время иранского наступления. После этой битвы английское правительство все более настойчиво стремилось навязать России свое посредничество с целью недопустить продвижения русских войск в глубь Ирана и восстановить границы Гюлистанского договора. Нельзя не обратить внимание и на оши-

бочность оценки русско-иранских и англо-русских отношений в 1829 г. После убийства А. С. Грибоедова Россия улучшила свои отношения с Ираном вовсе не потому, что, как утверждает проф. М. Махмуд, «Николай I понял, что англо-русская борьба на Востоке обычно заканчивалась к выгоде Англии», а потому, что Россия в то время воевала с Турцией и нуждалась в нейтралитете Ирана, чтобы избежать второго фронта на Среднем Востоке. Кроме того, Туркманчайский договор 1828 г. удовлетворил претензии царской России, обеспечил ее экономическое и политическое преобладание в Иране и значительно подорвал влияние Англии.

Нельзя согласиться и с иранской оценкой причин, приведших к развалу «Священного союза», который, по мнению иранских историков, был разрушен Англией для того, чтобы предоставить России возможность ослабить Иран путем продвижения русских армий до Аракса. Контрреволюционный «Священный союз» был взорван революционным движением в европейских странах, на Балканах, а также восстанием декабристов. Что же касается крутого поворота политики Каннинга, признавшего эти революции, то это было вынужденным признанием крушения международной контрреволюционной организации, каким был «Священный союз», и провалом собственных архиреакционных концепций британского министра иностранных дел.

Также тенденциозно освещаются в иранской историографии повод и причины, приведшие ко второй русско-иранской войне. Споры на границах действительно были поводом к этой войне. Однако они послужили поводом не для России, которая, по иранской версии, будто получила у Англии санкцию и отодвинула свои границы до Аракса. Эти пограничные споры были инспирированы Ираном для нападения на Россию. Еще в январе 1827 г. русский посол в Лондоне Х. А. Ливен в беседе с Д. Каннингом обвинил Англию в подстрекательстве Ирана к войне. «Если верить Персии,— указывал русский посол,— что Россия только и хотела посредством провокаций, которые ей приписывают, вызвать войну, которую она могла бы использовать в своих интересах, то при этом предположении русское правительство было бы в состоянии, по крайней мере, отразить первую атаку, тогда как, напротив, общеизвестно,

что оно не ожидало никакого внезапного нападения»<sup>1</sup>. Ливен заметил еще Каннингу, что Англо-иранский договор 1814 г. послужил причиной войны, ибо он «поощрял тегеранский двор вступить в войну, из которой надеялся выйти без всякого ущерба»<sup>2</sup>. «Персия воспользуется любым удобным случаем,— заявил посол,— чтобы напасть на Россию, ибо она уверена, что английские субсидии не замедлят попасть в персидскую казну и что в случае неминуемой опасности она может спрятаться за спиной Англии»<sup>3</sup>.

Ложная версия о том, что Россия спровоцировала Иран на эту войну, имела широкое хождение в Германии и других европейских странах. В этой связи большой интерес представляют замечания В. И. Ленина в «Тетрадах материалов о Персии» о второй русско-иранской войне, сделанные на книгу гамбургского проф. Т. Егера «Персия и персидский вопрос».

Лаконичная запись В. И. Ленина: «Война Персии с Россией (которая так же де втянула Персию в войну, как Англия буров в 1899 г.)»<sup>4</sup>, высмеивает проф. Егера за то, что тот пытался доказать, будто Россия втянула Иран в войну против России, т. е. против самой себя. Это критическое замечание В. И. Ленина, отвергающее антинаучные концепции гамбургского проф. Егера, является критерием для правильной оценки политики царизма и международной обстановки на Востоке в 1826 г. В то время Россия действительно готовилась к войне против Турции, однако при этом решительно избегала второго фронта на Востоке и потому крайне нуждалась в нейтралитете Ирана. Только для сохранения мира с Ираном в 1826 г. к шаху была направлена миссия Меншикова, которая была вероломно провалена происками английской и турецкой дипломатий, использовавших реваншистские тенденции каджарской клики, а также вторжением иранских войск в Закавказье.

Поддержанные Англией завоевательные планы шахского Ирана и султанской Турции в отношении Закавказья, на которое они никогда не имели прав и которое лишь временно было захвачено иранскими и турецкими войсками во время их

<sup>1</sup> АВПР, ф. МИД, Канц., д. 6964, л. 144.

<sup>2</sup> АВПР, ф. МИД, Канц., д. 6963, л. 7.

<sup>3</sup> АВПР, ф. МИД, Канц., д. 6963, л. 7 об.

<sup>4</sup> Ленинский сборник, т. XXIX, Партиздат ЦК ВКП(б), 1936, стр. 351.

завоевательных походов, создавали для народов Закавказья опасность ассимиляции, порабощения, консервации отсталых форм общественной жизни, хозяйственного упадка и потери культурной самобытности. В этой связи советские историки рассматривают две стороны процесса присоединения народов Закавказья к России: содержание этого исторического процесса в условиях первой трети XIX в. и объективно-исторические последствия присоединения Закавказья к России.

Эксплуататорская сущность общественного строя тогдашней России и завоевательная политика царизма на Кавказе не должны мешать правильному пониманию значения экономического, политического и культурного сближения народов в рамках единого централизованного Российского государства и объективно-прогрессивных последствий присоединения Закавказья к России.

Բ. Պ. ԲԱԼԱՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ  
ՌՈՒՄ-ԻՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Ա մ փ ք փ ք մ

Հողվածում վերլուծվում է նախապատերազմյան շարված վիճակը Իրանում և իշխան Ա. Ս. Մեջլիկովի միսիայի միջոցով Իրանի հետ խաղաղություն պահպանելու Ռուսաստանի անհաջող փորձը:

Հողվածում ցույց է տրվում նաև անգլիական դիվանագիտության և Իրանում իշխող զաջարական արքունիքի ցուցադրական գործունեությունը, որն ուղղված էր ցարական դեսպանի գործունեությունը ձախողելու և Ռուսաստանի դեմ ռևանշիստական պատերազմ հրահրելու նպատակին:

Բազկաններում և Մերձավոր արևելքում միջազգային բարդ հարաբերությունները ներկայացնելուց հետո, հեղինակը մանրամասն խոսում է Արևելքի երկրներում անգլիական դիվանագիտության կոորդինացման ու ներխուժման ձևերի մասին, ցույց է տալիս Ակկերմանում ռուս-թուրքական բանակցությունների և Անգլիայի ու Թուրքիայի սուլթանի՝ Իրանի շահի նկատմամբ դրդողական գործունեության ներքին կապը. (Իրանի՝ Անդրկովկաս ներխուժելու վերաբերյալ):

Հողվածում ցույց են տրվում նաև անգլո-ռուսական հակասությունները Մերձավոր և Միջին արևելքում ու նրանց կեղծումը ժամանակակից իրանական բուրժուական պատմագրության կողմից:

ՈՒՇ-ՖԵՈՒԿԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՁԱՆՈՒՄ (XVII—XVIII ԴԴ.)  
ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արևելքում երկրագործության մեջ վերարտադրության հիմնական սրամանը արհեստական ոռոգումն է, ուստի և անհրաժեշտություն է դառնում պետության սխտեմատիկ միջամտությունն այդ գործին: Վերամայական պայմանները և հողի յուրահատկությունը, առանձնապես այն անապատի հսկայական տարածություններում, որը ձգվում է Սահարայից, Արաբիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի և Թաթարիայի վրայով, ընդհուպ մինչև Ասիական սարահարթի ամենաբարձր մարզերը, արևելյան հողագործության հիմքը դարձրին արհեստական ոռոգումների սխտեմը՝ ջրանցքների և ջրային կառուցումների միջոցով: Ինչպես Եգիպտոսում և Հնդկաստանում, այնպես էլ Միջագետքում, Պարսկաստանում և այլ երկրներում հեղեղներն օգտագործվում են դաշտերը պարարտացնելու համար. ջրի բարձր մակարդակից օգտվում են ոռոգվող ջրանցքները ջրով լցնելու համար: Ջրի խնայողական և համատեղ օգտագործման տարրական անհրաժեշտությունը, որն Արևմուտքում հարկադրեց մասնավոր ձեռնարկողներին կամավոր ասոցիացիաներ կազմել, ինչպես Ֆլանդրիայում և Իտալիայում, Արևելքում, որտեղ քաղաքակրթությունը խիստ ցածր մակարդակի վրա էր և որտեղ տերիտորիայի շահերը շատ ընդարձակ են կամավոր ասոցիացիաներ կյանքի կոչելու համար, այս տարրական անհրաժեշտությունը համադրողաբար պահանջում էր իշխանությունը կենտրոնացնող կառավարության միջամտությունը<sup>1</sup>:

<sup>1</sup> Կ. Մ ր ք ս, Ֆ. է ն գ ե լ ս, Ընտիր երկեր, հատ. 1, էջ 405—406:



Իրենց մի շարք նամակներում, Հնդկաստանին վերաբերող հոդվածներում, «Կապիտալում» և այլուր<sup>1</sup>, Մարքսն ու Էնգելսը մատնանշում են, որ Արևելքում երկրագործական կուլտուրայի հիմքը արհեստական ոռոգումն է, և դրանից էլ բխում են արևելյան հասարակություններին և պետություններին բնորոշ մի շարք գծեր։ Պետք է ասել, որ այս հարցը բավականաչափ լուսաբանված է Արևելքի երկրներին վերաբերող հին և նոր գրականության մեջ, չրան անդրադարձել են նաև եվրոպական ճանապարհորդները (Շարդեն, Դյուման, Բեռնիե և այլք)։

Սակայն ուշադրության արժանի է Մարքսի մի այլ կարևոր դիտողությունը, որը, մեր կարծիքով, հարկ եղած լուսաբանման և արժեքավորման չի ենթարկվել (չնայած վերջին ժամանակներս սովետական պատմադրությունը սկսել է ուշադրություն նվիրել այդ խնդրին)։ Դա ուշ միջնադարում քոչվորային ցեղերի դերի և նստակյաց բնակչության հետ նրանց փոխհարաբերության հարցն է։

Մարքսը գրում է. «Արևելյան բոլոր ժողովուրդների մոտ այն ժամանակից, երբ այդ պրոցեսը տեղի է ունենում, կարելի է ընդհանուր փոխհարաբերություն նշել այդ ցեղերի մի մասի նստակայության և մյուս մասի շարունակվող քոչվորության միջև»<sup>2</sup>։

Արևելքի մի շարք երկրներում (Իրան, Աֆղանստան, Հնդկաստան, Արաբական երկրներ), ուր XVII—XVIII դդ. հիմնականում տիրապետող էին ֆեոդալական կարգերը, երկար ժամանակ պահպանվում էին տոհմա-ցեղային նահապետական հարաբերությունները՝ կապված այդ երկրներում ապրող բազմաթիվ քոչվոր ցեղերի անասնապահական տնտեսության հետ։ Ասիայում քոչվորային տափաստանի և երկրագործական օազիսի կողք-կողքի գոյությունը, ընդարձակ տափաստանների և ալպյան արոտավայրերի առկայությունը ֆեոդալական դարաշրջանում խոշոր դեր է խաղացել երկրագործների և անասնապահների միջև աշխատանքի հասարակական բաժանման գործում։ Նստակյաց և քոչվոր ժողովուրդների միջև խաղաղ ճանապարհով կատարվող փոխանակությունը, նպաստավոր պայմանների առկայության դեպքում, զարկ էր տալիս առևտրա-դրամական հարաբերությունների, հետևաբար և կապիտալիզմի տարրերի, զարգացմանը։ Սակայն, պետք է նկատի ունենալ, որ դրանց միջև փոխանակությունը կատարվում էր ոչ միայն խաղաղ ճանապարհով (առևտրի միջոցով), այլև շատ հաճախ,

<sup>1</sup> См. К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, 17, 21.

<sup>2</sup> Նույն տեղում, հատ. 21, էջ 488։

բռնի քոչվոր ցեղերի արշավանքների կողոպտիչ հարձակումների միջոցով: Սրա հետևանքով հաճախ ավերվում էր արհեստական ոռոգման ցանցը, երկար ժամանակով ամայանում և անկման էին հասնում ողջ երկրներ: Այդ մասին մատնանշվում է Մարքսի և էնգելսի աշխատություններում: «Սրանով (արհեստական ոռոգման նշանակությամբ—Տ. Հ.) է բացատրվում նաև այն փաստը, որ մի ավերիչ պատերազմ ընդունակ է եղել ամբողջ զարեք անմարդարնակ դարձնել երկիրը և զրկել նրան իր ողջ քաղաքակրթությունից»<sup>1</sup>:

Կիսաֆեոդալական-կիսանահապետական հարաբերությունները բնորոշ էին ոչ միայն քոչվորներին, այլև նրանց հարևան երկրագործ, նստակյաց հասարակություններին, քանի որ վերջիններս շարունակ ենթարկվում էին իրենց հարևանների ներգործությանը: Վերջինս արտահայտվում էր ոչ միայն քոչվորների կողմից ամբողջ մարզերի և երկրների գրավումով, և, դրանով իսկ, նստակյաց բնակչությանը ցեղային բեկերի, սուլթանների, խաների և էմիրների իշխանությանը ենթարկելով, այլև՝ ֆեոդալական հարաբերությունների նորմալ զարգացման կասեցումով: Միայն նստակեցություն և երկրագործական աշխատանքի անցնելուց հետո է, որ քոչվորները ենթարկվում են ֆեոդալական հասարակության տնտեսական օրենքների ազդեցությանը (ֆեոդալիզմի ժամանակ) և ներգրավվում կապիտալիզմի տնտեսական օրենքների ներգործության ոլորտը (կապիտալիզմի օրոք):

Ֆեոդալական իրավակարգում քոչվորության մեջ ևս հանդես է գալիս վերնախավ (որպես շահագործող դասակարգ): Կապված լինելով տնտեսության ավելի հետամնաց ձևերի հետ, ցեղային ազնվականությունը շահագործված էր նահապետական հարաբերությունների պահպանման մեջ, քանի որ վերջինս դյուրացնում էր ցեղակիցների շահագործումը և նրանց ռազմական օւժի օգտագործումը կողոպտիչ հարձակումների և նվաճումների համար (ցեղային աշխարհազորի ձևով): Հաճախ, ցեղային վերնախավի համար կողոպուտը շատ ավելի մեծ նշանակություն ուներ, քան ցեղակիցների շահագործումը:

Սա, իհարկե, չի նշանակում, թե ցեղի ներսում դասակարգային պայքար չկար շահագործվող մասսայի և վերնախավի միջև:

<sup>1</sup> Կ. Մարքս և Ֆ. էնգելս, Ընտիր երկեր, հատ. 1, էջ 406:

Բանն այն է, որ նահապետական-տոհմային հարաբերությունները հաճախ սքողում էին այդ:

Մյուս կողմից պետք է նշել, որ մի շարք հանգամանքներ, հատկապես արհեստական ոռոգման հետ կապված դժվարությունները և մշակելի հողերի արդեն զբաղված լինելը, արգելակում էին քոչվորային ցեղերի նստակեցության անցնելը: Դրան խանգարում էր նաև ցեղի շարքային անդամների աղքատությունը, անհրաժեշտ գործիքներ և անասուն շունենալը: Կարևոր մոմենտ էր նաև ֆեոդալական շահագործման ենթարկվող նստակյաց գյուղացու ավելի ծանր վիճակը քոչվորային կյանքի համեմատությամբ, որն իր հերթին, արգելակում էր քոչվորների նստակեցության անցնելը: Վերոհիշյալ հանգամանքները դժվարացնելով այդ պրոցեսը, ցեղի հիմնական մասին նորից թողնում էին շահագործող վերնախավի արապետության տակ, որի հետևանքով էլ երկար ժամանակով պահպանվում էին տնտեսության հետամնաց ձևերը:

Հայտնի է, թե հետագա զարգացման տեսակետից ինչպիսի հետևանքներ ունեցան քոչվոր մոնղոլների արշավանքներն Արևելքի մի շարք երկրների վրա (Իրան, Անդրկովկաս, Միջին Ասիա, Չինաստան և այլն):

«Հայաստանի համար առանձնապես կործանիչ էր սահմանակից երկրներում հաստատված քոչվոր ցեղերի հարևանությունը: Արոտավայրերի առատությունը դեպի իրեն էր գրավում քոչվոր նվաճողներին: Սկսած XIII դարից այդ երևույթը դարձավ մշտական և կործանման հասցրեց հայկական հասունացած ֆեոդալական հասարակության և պետականության ողջ սիստեմը, տեղի տալով ավելի պարզունակ կիսանահապետական-կիսաֆեոդալական հարաբերությունների հաստատման»<sup>1</sup>:

Այդ մասին իր վերջին աշխատության մեջ նշում է նաև ակադեմիկոս Հ. Մանանդյանը. «Հայաստանի և Անդրկովկասի տնտեսական անկմանն ու ամայացմանը մեծ չափով նպաստեց XIII—XIV դարերում նաև թափառակյաց քոչվորների նոր գաղթը Միջին Ասիայից: Այս քոչվորները, որոնք գլխավորապես թուրքեր էին և հիմնական մասն էին կազմում մոնղոլական զորքի, մեծ հարված տվին տեղական բնակչության հողագործական բարձր և ինտենսիվ

<sup>1</sup> С. Еремян, Опыт периодизации истории Армении эпохи феодализма, «Вопросы истории», № 7, 1951.

մշակույթին, զոհաբերելով այն իրենց արոտային տնտեսության պահանջներին»<sup>1</sup>:

Նման ավերիչ արշավանքներ շարունակվում էին նաև ուշ ժամանակներում: XVIII դարի սկզբներին Իրանում աֆղանական կարճատև տիրապետությունը մեծ չափով վնասեց ոռոգման սիստեմը (հատկապես Սպահանի շրջանում) և զգալիորեն կասեցրեց արտադրողական ուժերի զարգացումը: Դրան հաջորդեց Նադիր-շահի տիրապետությունը: Նա նստակյաց երկրագործության շահերը հաճախ զոհաբերում էր իր հենարանը հանդիսացող քոչվորական ցեղերի շահերին: 1738 թ. Նադիր-շահի ավերիչ արշավանքները (գլխավորապես Խորասանի, Ադրբեջանի և Աֆղանստանի քոչվոր ցեղերից բաղկացած զորքով), ապա և աֆղանական ցեղերի բազմաթիվ ներխուժումները Հնդկաստան նույնպիսի հետևանքներ ունեցան:

Տնտեսական ավերածությունից և անկումից բացի, այդ արշավանքներն ունենում էին նաև քաղաքական բացասական հետևանքներ: Այսպես, օրինակ. Հյուսիսային Հնդկաստան ներխուժած աֆղանական ցեղերը և նրանց առաջնորդ Ահմեդ-շահ Դյուրրանին աջակցում էին տեղական թուլացած ֆեոդալական իշխանություններին՝ ընդդեմ սիկհերի հզոր գյուղացիական ապստամբության, որն այն ժամանակ բռնել էր Փենջաբը: Ահմեդ Դյուրրանին, դաշնակցելով Հնդկաստանի հետամնաց մահմեդական ֆեոդալների հետ, 1761 թ. Պանիպատի կռվում ջախջախեց այն ժամանակվա Հնդկաստանի կենսունակ Մարհատների պետությունը: Մարհատների ջախջախումը զգալիորեն դյուրացրեց անգլիական գաղութարանների կողմից Հնդկաստանի նվաճման գործը<sup>2</sup>:

Ի վերջո պետք է հաշվի առնել նաև մի այլ հանգամանք: Քոչվորային վերնախավը, նրա ազնվականությունը միշտ էլ հանդես է եկել որպես ֆեոդալական-սեպարատիստական տենդենցների կրող: Այդ տեսակետից բնորոշ է Իրանի օրինակը: Երբ քոչվոր ազնվականությունը գրավում էր իշխանությունը և այն ծառայեցնում իր շահերին, նա այդ երկրի ավելի զարգացած ֆեոդալական կյանքում մտցնում էր հետամնաց, նահապետական հարաբերություններ: Նույնիսկ այն դեպքում, երբ այդ ազնվականությունը գահի

<sup>1</sup> Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Կ. Գ., էջ 289:

<sup>2</sup> И. М. Рейснер, К вопросу об отставании стран зарубежного Востока к началу нового времени, «Вопросы истории», № 6, 1951.

վրա էր նստեցնում իր ցեղի շահերին (օրինակ, աֆշարների զաջարների օրոք), ամենայն նախաձեռնություններով դիմադրում էր ցեղերի ներքին կյանքին կենտրոնական իշխանության միջամտությանը, որոնք փաստորեն պահպանում էին իրենց անկախությունը, առաջվա պես մնալով որպես քոչվոր ազնվականության ռազմական ուժի և քաղաքական հզորության աղբյուր: Իրանում քոչվորային ազնվականությունը երկար ժամանակ պահպանեց իր տնտեսական և քաղաքական ազդեցությունը և մնաց որպես ռեակցիոն ուժ (հետագայում իմպերիալիստական պետությունների ձեռքին գործիք) և երկրի հետամնացությունը խորացնող բացասական գործոն:

Արևելքի երկրների զարգացումը կասեցնող հիմնական գործոններից մեկն էլ համայնքն էր, նրա երկարատև գոյությունը ընդհուպ մինչև XIX դարը: Համայնքի ծավալուն և խոր բնութագիրը Մարքսը և էնգելսը, տվել են շնչկաստանի օրինակով<sup>1</sup>: Ըստ Մարքսի և էնգելսի, իր տնտեսական և քաղաքական սահմանափակ, լճացած կյանքով համայնքը ասիական բռնապետությունների հենարանն է եղել: Որպես տնտեսական օրգանիզմ, նա իր մեջ միավորել է պարզունակ երկրագործությունն ու տնային արհեստը՝ իր հետամնաց տեխնիկայով և հնամուտությամբ: Նա ռենտա-հարկը զանձեղու համար հարկային միավոր, իսկ առուների ու ջրանքների փորման համար անհրաժեշտ կոլեկտիվ ուժ է հանդիսացել: Անշուշտ, այս դիտողությունները չեն վերաբերում նախադարյան կոմունիստական համայնքին, տվյալ դեպքում խոսքը ֆեոդալական կարգերում տակավին իր գոյությունը պահպանած համայնքին է վերաբերում:

Պետք է նկատի ունենալ, որ համայնքն այլևս հողի կոլեկտիվ սեփականատերը չէր, ինչպես նախկինում, համայնքի օգտագործման տակ գտնվող հողը այժմ կազմում էր առանձին ֆեոդալի կամ ֆեոդալական պետության սեփականությունը: Մարքսը նշում է երեք առանձնահատուկ գծեր, որոնք այդ տիպի համայնքներին առանձին կայունություն էին հաղորդում: Նա գրում է. «Ամենից ավելի համառ կերպով և երկարատև իր գոյությունը պահպանում է ասիական ձևը: Դա թաքնված է նրա նախադարյալի մեջ, նրանում, որ առանձին անհատն ինքնուրույն չէ համայնքի նկատմամբ, որ արտադրության ծավալը հաշվի է առնված միայն սեփական գո-

<sup>1</sup> Կ. Մարքս, Ֆ. էնգելս, Ընտիր երկեր, հատ. 1, էջ 403—417, Կապիտալ, հատ. 1, 3:

յությունը պահպանելու համար, որ երկրագործությունը և արհեստըն իրար հետ միացած են...»<sup>1</sup>:

Չպետք է մոռանալ նաև այն, ինչպես նշում է Մարքսը, որ համայնքը վարակված էր ստրկության մնացորդներով և կաստայական խտրականությամբ, հաճախ հանդիսանալով կիսաստրկկիսաճորտ գյուղացիության, այն խավերի կոլեկտիվ շահագործողը, որոնք կոչվում էին «անմերձենալիներ» (неприкасаемые): Համայնքն այն պահպանողական և ինքնամփոփ օրգանիզմն էր, որին քիչ էր հետաքրքրում երկրի քաղաքական անց ու դարձը, ամբողջ կայսրությունների կործանումը, մինչև որ վերջին նվաճողը նրան արժանացնում էր իր ուշադրությանը<sup>2</sup>:

Վերջին շրջանում, այսինքն ուշ-ֆեոդալական կարգերում, համայնքում արդեն առանձնացել էր վերնախավ, որը կատարելով դատական և ոստիկանական ֆունկցիաներ, իր հերթին, ֆեոդալական կողոպտիչ ապարատի ստորին օղակն էր դարձել:

Վերոհիշյալ գծերը գերազանցապես վերաբերում են հնդկական համայնքին: Իրանում և Թուրքիայում համայնքը (շամաաթ) վաղուց արդեն ընդունել էր ֆեոդալական իրավակարգին հատուկ գծեր, մնալով որպես ռենտա-հարկի գանձման հարմարագույն ձևը (համապարտ երաշխիքի հիման վրա): Ինչ վերաբերում է Չինաստանին, ապա այստեղ համայնքն ընդհանրապես, որպես այդպիսին, գոյություն չի ունեցել:

Արևելքի երկրների տնտեսական զարգացումը կասեցնող գործոններից մեկն էլ գյուղատնտեսության և արհեստների բնագավառում տեխնիկայի հետամնացությունն էր: Ինչպես XVII—XVIII դարերում, այնպես էլ հետագայում, դեռևս երկար ժամանակ, Միջին Ասիայում, Աֆղանստանում և Իրանում գյուղատնտեսական աշխատանքներում տիրապետողը բրիչն ու քեթմենն էին, Հնդկաստանում՝ փայտե արորը, որոնք ավելի շուտ շանկրտում էին հողը, քան փխրեցնում: Տափան (տակը քարեր շարած ծանր տախտակ), բրիչ, զանազան մեծության հասարակ բահեր, ահա այն ամենը, ինչ հարյուրամյակներ շարունակ կազմում էր գյուղատնտեսական արտադրության տեխնիկան: Նույնը կարելի է ասել արհեստավորական ամենահասարակ գործիճների և դազգահների մասին: Վերջիններիս նկարագրությունը տրված է Կ. Մարքսի «Կապիտալում»

<sup>1</sup> К. Маркс, *Формы, предшествующие капит. производству*, 1940, стр. 18.

<sup>2</sup> Կ. Մարքս, *Տ. էն գելս*, Ընտիր երկեր, հատ. 1, էջ 410—411:

և այլ աշխատություններում: Մինչ Արևելքում տակավին պահպանվում էին այս պարզունակ գործիքները, եվրոպական երկրներում արդեն տիրապետում էր մանուֆակտուրան, և պայմաններ էին ստեղծվել մեքենայական արտադրության անցնելու համար: Անշուշտ, ինչպես կխոսվի ստորև, Արևելքի առանձին երկրներում ևս (Չինաստան, Հնդկաստան, Ճապոնիա) նկատելի էր տեխնիկայի որոշ զարգացում. առանձին արտադրությունների գծով մանուֆակտուրաների առկայությունը, սակայն, մի շարք պատճառներով դրանք հետագա զարգացում չստացան:

Նոր դարի շեմքին Արևելքի երկրների հետամնացությունը դրսևորվեց նաև քաղաքների թույլ զարգացման մեջ, որը կապված է արևելյան քաղաքների բնույթի հետ: Երկար ժամանակ քաղաքը լոկ վարչական կենտրոն էր ֆեոդալների համար: Այստեղ ևս, ինչպես գյուղում անգամ ուշ միջնադարում տիրապետող էին ֆեոդալները, մի հաճախմանք, որը նրանց տալիս էր քաղաքային բնակչության, հատկապես առևտրականների ունեցվածքի նկատմամբ կամայական վարվեցողության հնարավորություն: Սա Արևելքի քաղաքների մեծ մասում ընդհանուր երևույթ էր, որն արգելակում էր կապիտալիզմի և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը: Այդ նկատի ունենալով է, որ էնգելսը գրել է. «Թուրքական, ինչպես և ամեն մի արևելյան տիրապետություն, անհամատեղելի է կապիտալիստական կարգի հետ, ձեռք բերված հավելյալ արժեքը ոչնչով չի ապահովված սատրապների և փաշաների գիշատիչ ձեռքերից. բացակայում է բուրժուական կուտակման առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի և նրա սեփականության ապահովությունը»<sup>1</sup>: Արևելքի քաղաքներում ֆեոդալների տիրապետությունը նաև այլ հետևանքներ ուներ: Այդպիսի քաղաքը, ուր անգամ ուշ միջնադարում աննկատելի է բուրժուական դասակարգի տնտեսական և քաղաքական ամրապնդումը, չէր կարող կենտրոնական իշխանության՝ ֆեոդալական մասնատվածության դեմ պայքարի հենարան դառնալ: Այստեղ հանդես չեկան և չէին էլ կարող հանդես գալ բացարձակ միապետություններ, որոնց ժամանակ ազնվական կալվածատերերի շահերը զուգակցվում են նոր սաղմնավորվող քաղաքային բուրժուազիայի շահերին, որի շնորհիվ կապիտալիստական արտադրության որոշ նախադրյալներ են ստեղծվում: Մաֆավիների պետությունը Իրանում, Մեծ Մողոլի կայսրությունը Հնդկաստանում, օսմանյան տիրապետությունը Թուրքիայում և

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. 2, стр. 22.

Մանչուրական կայսրությունը Չինաստանում մեծամասնությամբ էին որպես ֆեոդալական բռնապետություններ:

Նոր դարի նախօրյակին Արևելքում շատեղծվեցին նաև կենտրոնացած բաղամազ ֆեոդալ-աբսոլյուտիստական պետություններ, որոնք այն ժամանակ գոյություն ունեին Եվրոպայում: Այդ ժամանակ Օսմանյան բաղամազ կայսրությունը, ինչպես և սաֆավիների և Մեծ Մողոլի կայսրությունները իսկական իմաստով կենտրոնացած պետություններ չէին, այլ «ժողովուրդների և ցեղերի կոնգլոմերատ», այնտեղ առաջատար ժողովուրդը դեռևս չէր զատվել (ինչպես ուղի ժողովուրդը՝ բաղամազ ուսական պետության մեջ):

Այսպիսով, մենք տեսնում ենք Արևելքի երկրների սոցիալատնտեսական զարգացումը կասեցնող մի շարք հանգամանքներ, որոնք հանգում էին հետևյալին. 1. Նահապետական-ֆեոդալական հարաբերությունների առկայություն, քոչվոր ցեղերի մեջ համայնքի երկարատև գոյություն (ուր երկրագործությունը և արհեստը դեռևս անշատված չեն իրարից), Արևելքում քաղաքի գերազանցապես ֆեոդալական բնույթը (ուր բուրժուական տարրերը վճռական դեր չեն խաղում տնտեսական և, առավելապես, քաղաքական կյանքում): Քաղաքական կյանքում Արևելքի հետամնացությունն արտահայտվում էր ֆեոդալական բռնապետության առկայությամբ և, ի վերջո, այն հանգամանքով, որ Ասիայի ժողովուրդներից և ոչ մեկը նոր դարի շեմին դեռևս չէր ձևավորվել որպես ազգ (այն դեպքում, երբ Արևմտյան և Արևելյան Եվրոպայում արդեն առկա էին ձևավորված ազգեր):

\* \* \*

Նոր դարի շեմին Արևելքի երկրների զգալի հետամնացությունը, առաջին հերթին, հետևանք էր կայունորեն պահպանվող ֆեոդալական կարգերի, որտեղ գոյություն ունեին խիստ շահագործում: Ելնելով դրանից, անհրաժեշտ է ուշադրության առնել նաև մի շարք յուրահատուկ հանգամանքներ:

Ինչպես նշվեց, Արևելքում երկրագործությունը հիմնված է արհեստական ոռոգման վրա: Կլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ որոշ վայրերում, օրինակ, Հնդկաստանում, Ինդոնեզիայում, Չինաստանի որոշ մասերում, երկրագործությունից տարեկան ստացվում է երկու, առանձին տեղերում, անգամ, երեք բերք: Սակայն այդ բարձր բերքի մեծագույն մասը անցնում էր



Ֆեոդալների ձեռքը, և անմիջական արտադրողին շնչին բաժին էր մնում: Ֆեոդալական շահագործումն այստեղ անհամեմատ բարձր շահիերի էր հասնում, որը ոչ միայն ուժեղացնում էր այդ դասակարգի հզորությունը, այլև լրջորեն խուճընդոտում էր դյուզում ապրանքային տնտեսության զարգացմանը և գյուղի ու քառաքի միջև աշխատանքի հասարակական բաժանմանը:

Սաֆավիների օրոք, գյուղացիության շահագործման ամենատարածված ձևը բնավարձակալությունը կամ կիսրարությունն էր, ըստ որի բերքը գյուղացու և հողատիրոջ միջև բաժանվում էր ըստ հինգ գործոնների՝ հողի, ջրի, սերմացուի, բանող անասունի և աշխատանքի: Քանի որ կիսրար գյուղացին օգտվում էր կալվածատիրոջ հողից և ջրից, իսկ տրոջ դեպքերում՝ նաև սերմացուից, ապա նրա բաժինը կաղմում էր բերքի  $\frac{2}{5}$  մասը, իսկ եթե փոխ էր վերցվում նաև բանող անասունը, ապա հաճախ նրան մնում էր բերքի միայն  $\frac{1}{5}$ -ը: Վիճակը նույնն էր նաև Հնդկաստանում ու Չինաստանում, ուր գյուղացու բաժինը 20—30% -ից չէր անցնում:

Արևելքում շահագործման տիրապետող ձևը մթերային ունտան էր, իսկ կոռը երկրորդական տեղ էր գրավում, որովհետև ֆեոդալները սովորաբար սեփական տնտեսություն չէին վարում: Այս հանգամանքը չէր կարող նշանակություն չունենալ ֆեոդալի իրավական ուժի, այսպես կոչված, արտատնտեսական հարկադրանքի ուժեղացման և գյուղացուն փաստորեն հողին ամրացնելու տեսակետից, չնայած, ինչպես վերը նշվեց, հիմնական գործոնը դարձյալ մնում էր հողի նկատմամբ ֆեոդալի մասնավոր սեփականությունը: Չնայած Արևելքում ճորտատիրական իրավունքը տիրապետող չդարձավ, սակայն գյուղացու դրությունն ամենևին էլ թեթև չէր: Նա ըստ էության ճորտացված էր և կապված իր հարկային օբյեկտին:

Խոսելով ֆեոդալական հարաբերությունների մասին, անհրաժեշտ է հիշատակել նաև այն ինստիտուտները, որոնք շարունակում էին իրենց գոյությունը ուղ միջնադարում ևս, XVII, XVIII և անգամ, XIX դարերում: Դրանք իրար հաջորդող «սոյուրդալը», «թիտվն» ու «մուլքն» էին Իրանում, «ջագիրը»՝ Հնդկաստանում, «թիմարը»՝ Թուրքիայում և այլն: Վերոհիշյալ ինստիտուտները լինելով ֆեոդալական կարգերի ծնունդ, արտադրության ավելի ցածր եղանակի վրա էին հիմնված, քան կապիտալիստականը, և երկար ժամանակ խաճների և ֆեոդալների տնտեսական բազան էին, հավելյալ արդյունք քամելու աղբյուր: Դրանք միաժամանակ կեն-

տրտնախուլս ուժերի հենարան էին և Արևելքի երկրների զարգացումը կասեցնող գործոն:

Վերահիշյալ ինստիտուտներից բացի, հիշատակության արժանի է նաև հողատիրության մի այլ ձև. դրանք այն հողերն էին, (այուրդ՝ կամ «օջախլըղ»), որոնք կենտրոնական կառավարության կողմից, մշտական օգտագործման համար տրված էին քոչվոր և կիսաքոչվոր ցեղերին և փաստորեն գտնվում էին ցեղապետների ժառանգական տնօրինության ներքո: Այդպիսի հողերը կազմում էին ամբողջ մարզեր, որոնց մեջ մտնում էին ինչպես քոչվորային արտադրարներ, այնպես էլ վարելահողեր՝ նստակյաց գյուղացիությանը (սրանց Ֆեոդալական շահագործողը ցեղի վերնախավն էր):

Ամբողջ ցեղին հատկացված այս հողերից պետք է տարբերել շահի կողմից անձամբ ցեղապետներին, որպես «թիուլ», «սոյուր-ղալ» կամ «մուլք» տրված հողերը:

Արևելքի երկրների հետամնացության արտահայտություններից էր նաև հարկային սիստեմը, հարկերի բազմազանությունն ու ծանրությունն ընդհանրապես և դրանց գանձման վայրագ ձևերը՝ մասնավորապես, որոնք պակաս դեր չխաղացին արտադրության հին ձևերի և տեխնիկայի հետամնացության պահպանման տեսակետից:

Անհրաժեշտ է առանձնապես ընդգծել հարկային սիստեմի այն կործանիչ ձևը (հարկերի գանձման կապալային սիստեմը), որը դուռ էր բացում մեծ տւ փոքր պաշտոնյաների, կապալառուների ու վաշխառուների ապօրինությունների և անսահման կամայականությունների առաջ և արտադրությունը հասցնում կործանման եզրին: Այս սիստեմը գոյություն է ունեցել Արևելքի գրեթե բոլոր երկրներում, այդ թվում և Հնդկաստանում՝ Մեծ Մողոլի կայսրության մեջ: Ֆր. Բեռնիեն իր նշանավոր աշխատության մեջ խոսում է գյուղացիության համար կատարյալ չարիք դարձած այդ սիստեմի մասին: Մեկը մյուսին արագորեն հաջորդող կապալառուները շատ անդամ դեռևս իրենց հարկային օբյեկտի վայրը չհասած հետ էին կանչվում, որպեսզի իրենց տեղը զիջեին ավելի բարձր գին վճարող կապալառուին, առևտրականին կամ վաշխառուին, որի միակ նպատակն էր կարճ ժամկետում գյուղացիությունից որքան կարելի է շատ բան կորզել և հեռանալ<sup>1</sup>:

<sup>1</sup> Բեռնիեն հիշատակում է մինչև իսկ անեկդոտիկ, սակայն իրական մի դեպք, որին ակնատես է եղել: Դեպի իր հարկային օբյեկտը մեկնող կապա-  
272

Ի վերջո, երկու խոսք կրոնի դերի մասին: Ֆեոդալական տիրապետության հզոր գործոններից մեկն էլ կրոնն էր, որն իր հեղինակությամբ և ուժով հավերժացնում էր գոյություն ունեցող կարգերի անխախտությունը, իշխող դասակարգերի արտոնություններն ու աշխատավոր մասսաների ստորացված վիճակը: Այդ նպատակին հավասարաչափ ծառայում էին իսլամը՝ Մերձավոր և Միջին արևելքում, ինդուիզմը՝ Հնդկաստանում, կոնֆուցիականությունը, բուդդայականությունն ու լամայիզմը՝ Հեռավոր արևելքի երկրներում:

Այն ժամանակ, երբ Արևմտյան Եվրոպայի երկրներում կաթոլիկական կրոնը և պապականությունն արդեն լուրջ հարվածներ էին ստացել, և բարձրացող բուրժուազիան՝ հանձինս լուսնայինության, կալվինիզմի և պրոտեստանտիզմի, ստեղծել էր իր կրոնն ու գաղափարախոսությունը, երբ նպաստավոր պայմաններ էին ստեղծվում գիտության և աշխարհիկ գրականության զարգացման համար, Արևելքի երկրներում անխախտ պահպանվել էին ֆեոդալական կրոնները և հոգևոր դասի տնտեսական և քաղաքական հզորությունը:

\* \* \*

Ինչպես տեսանք, ֆեոդալական կարգերի վերահիշյալ առանձնահատկությունները լրջորեն արգելակում էին Արևելքի երկրների տնտեսական ու սոցիալական առաջընթացը, սակայն, հասկանալի է, որ դրանք չէին կարող միանգամայն կասեցնել այն:

Մի շարք երկրներում, հատկապես Չինաստանում, Ճապոնիայում, Հնդկաստանում և, մասամբ, Օսմանյան կայսրության մեջ, ուշ միջնադարում և նոր դարի շեմին կատարվում էին տնտեսական զգալի տեղաշարժեր: Այդ երկրներում սկսել էին զարգանալ պարզ ապրանքային տնտեսությունն ու առևտուրը (այդ թվում և գյուղատնտեսական մթերքների), առանձնացել էին ամբողջ շրջաններ, որոնք մշակում էին հատուկ կուլտուրաներ, ինչպիսիք են՝ ծխախոտը, բամբակը, ինդիգոն, շաքարեղեգը, թեյը և հացահատիկը: Միաժամանակ աճում էր և աշխատանքի բաժանումը գյուղի և քաղաքի միջև, խախտվում էր համայնքի տնտեսական լճացումը: Հատկապես Չինաստանում և Ճապոնիայում գնալով ավելի էր մե-

լառուին տեսնում են փղի վրա՝ երեսն արած դեպի պոչը: Ներկաների զարմացական հարցին նա պատասխանում է. «Միե՛նուն է, վաղ թե ուշ այս նույն ճանապարհով պիտի վերադառնամ»: Փ. Բերնյե, *История последних политических переворотов в государстве Великого Моголя*, Москва, 1936.

ծանու մի շարք քաղաքների նշանակութունը որպես առևտրական և արհեստավորական կենտրոնների, բավական լայն տարածում գտավ շուկայի համար արդյունաբերող տնայնագործութունը, զգալիորեն աճեց մասնավոր մանուֆակտուրաների թիվը: Վերոհիշյալ պրոցեսներն առավել կամ նվազ չափով ընդգրկել էին Արևելեքի գրեթե բոլոր երկրները: Դրանք այդ երկրներում ներքին շուկայի զարգացման, բուրժուական հարաբերութունների ստեղծման սկիզբն էին:

Այսպիսով, Արևելքի մի շարք երկրներում արդեն նկատելի էին տեղաշարժեր, որոնք իրենց հետագա զարգացումով պետք է հանգեին տիրապետող ֆեոդալական հասարակարգում կապիտալիստական կացութաձևի կազմավորմանը: Զարգացման այդ տենդենցն ակնհայտորեն դրսևորվեց ժամանակի դասակարգային պայքարում գյուղացիական շարժումների, քաղաքներում ծագող ապստամբութունների, գյուղացիների և արհեստավորների հակաֆեոդալական դեմոկրատական իղձերն արտահայտող բազմաթիվ կրոնական-աղանդավորական շարժումների մեջ, ի վերջո, այդ երկրներում առաջավոր, սակայն ճնշված ժողովուրդների (հատկապես Անդրկովկասի ժողովուրդների) ազգային-ազատագրական շարժումների մեջ:

Այդ շարժումները կարմիր թելով անցնում են Արևելքի երկրների մեծ մասի XVII—XVIII դարերի պատմության միջով:

Սակայն Արևելքի երկրների տնտեսական և քաղաքական այդ զարգացումն ուներ երկու տենդենց, որոնց վրա պետք է կանգ առնել:

Չպետք է մոռանալ, որ ապրանքային և դրամական հարաբերութունների այդ զարգացումն ուներ նաև մի այլ կողմ, որն արգելակում էր անցումը արտադրության ավելի բարձր եղանակի:

Դեռևս նատուրալ բնույթը պահպանած ֆեոդալական տնտեսության մեջ առևտրա-դրամական հարաբերութունների զարգացումը կապված էր վաշխառության աճի հետ: Առևտրականն ու վաշխառուն իրենց էին ենթարկում անմիջական արտադրողին՝ գյուղացուն և արհեստավորին, օգտագործելով շահագործման ֆեոդալական մեթոդները, է՛լ ավելի ինտենսիվ դարձնելով այդ շահագործումը: Առևտրի ու փոխանակության զարգացման, փողի դերի և, հատկապես, ազնվական-ֆեոդալների մոտ դրամի կարիքի աճին զուգընթաց (ազնվական-ֆեոդալներ, որոնք ներմտծվող պերճանքի առարկաների գլխավոր սպառողներն էին), սաստկանում էր ֆեոդալական շահագործումը, անմիջական արտադրողն ավելի էր

ստրկանում առևտրա-վաշխառուական կապիտալի ճանկերում: Սրա հետևանքով արագ աղքատանում էին գյուղացիությունն ու արհեստավորները, արտագրությունն անկում էր ապրում: Դա ավելի էր խորացնում հակասությունները իշխող ֆեոդալական դասակարգի առանձին խմբերի միջև, առաջ բերում նրանց մի մասի քայքայում, և ընդհանուր առմամբ, սրում էր ֆեոդալական սիստեմի ճգնաժամը: Մարքսն ու էնգելսն առանձին ուշագրություն են նվիրել Արևելքում վաշխառության հարցին:

«Արտագրության ասիական՝ ձևերի պայմաններում,—դրում է Մարքսը,—վաշխառությունը կարող է գոյություն ունենալ շատ երկար, այլ բան չառաջացնելով, բայց եթե տնտեսական անկում և քաղաքական կորուպցիա<sup>1</sup>: Անա պահպանողական է, և գոյություն ունեցող արտագրանական կր ժամանակը միայն հասցնում է ավելի խղճուկ վիճակի»<sup>2</sup>:

Առևտրա-վաշխառուական կապիտալը միայն որոշ նպաստավոր պայմաններում է, որ խթանում և արագացնում է կապիտալիստական հարաբերությունների զարգացումն ու նոր արտագրանակի ծնունդը: Իսկ Արևելքի երկրներում, ինչպես տեսանք, այդ նպաստավոր պայմանները շատ ավելի քիչ էին, քան Արևմուտյան Եվրոպայում:

Արևելքի երկրների հետամնացությունը, ի վերջո, դրսևորվեց նաև ուշ միջնադարում և նոր դարի շեմին փոփոխվող առևտրական ճանապարհների և դրանց ունեցած նշանակության հարցում: Աշխարհագրական մեծ հայտնագործություններից սկսած առաջնակարգ նշանակություն ստացան Ժովային ճանապարհները, որոնք սկսեցին վճռական դեր խաղալ միջազգային առևտրի մեջ: Ցամաքային ճանապարհները, Արևելքը Արևմուտքի հետ կապող վաղեմի խճուղիներն ու տարանցիկ ճանապարհները, որոնց տիրելու համար շարունակ պայքար է դնացել արևելյան պետությունների միջև, արդեն կորցնում էին իրենց վաղեմի նշանակությունը: Այդ ճանապարհները և դրանց վրայով կատարվող առևտուրը իշխող դասակարգերի համար մեծ եկամուտներ էին ապահովում, ամբուպընդում էին նրանց տնտեսական և քաղաքական հզորությունը: Այդ եկամուտների նվազումը չէր կարող չանդրադառնալ Արևելքի երկրների տնտեսական դրության վրա: Իրենց «վնասները» հատուցելու համար շահագործող դասակարգերը է՛լ ավելի մեծացրին

1 Կ. Մարքս, Կապիտալ, հտտ. 1, էջ 611:

2 Նույն տեղում, էջ. 623:

մասսաների վրա բարդվող հարկային բեռը: Առևտրական ճանապարհների փոփոխության հետևանքով հաճախակի դարձան իշխանների և ֆեոդալների ներքին կռիվները կողոպուտի համար, որը մասամբ փոխարինում էր առևտրից ստացվող եկամուտին: Այս հաճախմանքն ավելի էր սաստկացնում ֆեոդալական կամայականությունն ու ճգնաժամը:

Արևելքի որոշ պետություններ (Սաֆավյանները՝ Իրանում, Մեծ Մողոլը՝ Հնդկաստանում) փորձեցին ծովային ճանապարհներն օգտագործել իրենց կարիքների համար, սակայն չկարողացան մրցել եվրոպական ուժեղացող կապիտալի և նավագնացության բարձր տեխնիկայի հետ:

Հայտնի են փաստեր, որ Հնդկաստանում Մեծ Մողոլի կայսրությունը պայքար էր մղում օտարերկրյա առևտրական ընկերությունների (պորտուգալական, հոլանդական) հետ կապված ծովափնյա իշխանությունների դեմ, որոնց ձեռքում էր գտնվում այդ ժամանակ առևտուրը: Նույնպիսի անհաջողություն կրեց նաև Շահ Արբասը, փորձելով նավատորմ ստեղծել և անգլիացիներին ու հոլանդացիներին դուրս մղել Պարսից ծոցից:

Այս բոլորից հետո անժխտելի է այն իրողությունը, որ նոր դարի շեմին Արևելքի երկրների զարգացմանը մեծագույն հարված հասցրին գաղութացումն ու գաղութային քաղաքականությունը:

Գեռևս աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակներից սկսած, Արևելքի երկրների զգալի մասը դարձավ եվրոպական գաղութների գաղութային քաղաքականության և կողոպուտի գլխավոր առարկան: Արևելքի երկրների ինքնուրույն զարգացման ընթացքը բռնի կերպով և երկար ժամանակով ընդհատվեց:

Անգլիական (1640) և ֆրանսիական (1789) բուրժուական ռևոլյուցիաների միջև ընկած 150 տարվա ժամանակամիջոցը եվրոպական ազգերի վերջնական ձևավորման շրջանն էր, երբ բարձրացող բուրժուազիան դուրս էր գալիս գաղութային նվաճումների և կողոպուտների լայն ասպարեզ, մի ժամանակաշրջան, երբ գաղութային էքսպանսիայի հետևանքով Արևելքի երկրների զարգացումը երկար ժամանակով կասեցվեց: Արևմուտքի կապիտալիստական երկրները (Հոլանդիա, Անգլիա, Ֆրանսիա) ստրկական կախման մեջ դրին Արևելքի երկրները, որոնք այժմ նրանց համար վերածվելու էին հումքի բազայի և ապրանքների վաճառահանման շուկայի: Մարքսը և էնգելսը այդ մասին գրում են. «Այնպես, ինչպես որ նա (բուրժուազիան—Տ. Հ.) գյուղը կախման մեջ դրեց

րադաքից, այնպես էլ բարբարոս և կիսաբարբարոս երկրները կախման մեջ դրեց քաղաքակիրթ երկրներից, գյուղացիական ժողովուրդները՝ բուրժուական ժողովուրդներից, Արևելքն՝ Արևմուտքից»<sup>1</sup>:

Պատմականորեն ստեղծված հետամնացության հետևանքով Արևելքի երկրները դարձան վերոհիշյալ պրոցեսի օբյեկտը: Արևելքի երկրների նոր պատմության սկիզբը նշանավորվեց այն բանով, որ նրանք դարձան գաղութային նվաճումների զոհը և բուրժուական աղդերի նախասկզբնական կուտակման աղբյուր:

«Ոսկու և արծաթի հանքերի հայտնադործումը, տեղաբնիկներին արմատախիլ անելը, ստրկացումն ու կենդանի թաղումը հանքատերերում, Արևելյան Հնդկաստանի նվաճման և կողոպուտի առաջին քայլերը, Աֆրիկայի՝ սևամորթների շրջափակված որսադաշտի վերածվելը—այդպիսին էր արտադրության կապիտալիստական եղանակի արշալույսը: Այս հովվերգական պրոցեսները կազմում են նախասկզբնական կուտակման գլխավոր մոմենտները: Դրան հետևում էր եվրոպական ազգերի առևտրական պատերազմը, որին ասպարեզ է ծառայում երկրագունդը»<sup>2</sup>:

Արևելքի ժողովուրդների հաշվին եվրոպական բուրժուազիայի մոտ կատարված նախասկզբնական կուտակման պրոցեսը միանգամայն տարբերվում էր Արևմուտքում կատարված պրոցեսից:

Այստեղ, Արևելքում այդ կուտակման մեթոդները հետևյալն էին.

1) Բացահայտ կողոպուտ, եղած հարստությունների թալան և փոխադրում դեպի մայր երկիր: Ամենանվազ հաշվումներով անգլիացիներն իրենց տիրապետության առաջին հարյուրամյակում Հնդկաստանից դուրս բերին 12 միլիարդ ոսկի ոտբլու հարստություն: 2) անհամարժեք (ոչ էքվիվալենտ) առևտուր, որն ըստ էության չէր տարբերվում կողոպուտից: 3) Հարկային կողոպուտ, որը հաճախ բռնությամբ կատարվելով քայքայման ու ամայացման էր հասցնում ամբողջ երկրներ: 4) Համայնական և այլ հողերի բռնագրավում և գյուղացիության ունեզրկում, որը, սակայն, արդյունաբերության բացակայության պատճառով քաղաքներում աշխատանք գտնել չէր կարող. օրինակ, Հնդկաստանում անգլիա-

1 Կ. Մ ր ք ս և Ֆ. է ն գ ե լ ս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը:

2 Կ. Մ ր ք ս. Կապիտալ, հատ. 1, էջ 722—723:

ցիների անցկացրած ազրարային ռեֆորմը, կրելով կիսաբուր-  
ժուական բնույթ, հիմնականում պահպանում էր ֆեոդալական  
կարգը և դանդաղեցնում այդ երկրի կապիտալիստական զարգա-  
ցումը: 5) Տեղական արհեստների քայքայում և արհեստավորների  
ոչնչացում՝ դեպի այդ երկրները եվրոպական գործարանային ապ-  
րանքների հոսքի հետևանքով: Եվրոպական գաղութարարները շատ  
դեպքերում կատարելության էին հասցնում Արևելքի ժողովուրդնե-  
րի շահագործման և ունեզրկման մեթոդները:

Նախասկզբնական կուտակման պրոցեսն Արևելքում չվերաց-  
րեց ստրկության և ճորտության մնացորդները, այլ, ընդհակա-  
ռակը, նպաստեց ստրկական աշխատանքի լայն կիրառմանը  
(հատկապես պլանտացիաներում):

Նախասկզբնական կուտակման շրջանի ամենախայտառակ  
երևույթներից մեկը «քաղաքակիրթ» պետությունների կողմից հո-  
վանավորվող ստրկավաճառությունն էր, մի զբաղմունք, որն ինչ-  
պես Մարքսն է ասում, առանց մի կոպեկ ծախսելու հնարավորու-  
թյուն էր տալիս հավելյալ կապիտալ կուտակել:

«Չկա ավելի բնորոշ հանգամանք,—գրում է Մարքսը,— քան  
Հոլանդացիների կողմից կիրառվող մարդագողության սիստեմը  
Ցեյլեբեսում, համալրելու համար ստրուկների կազրերը ճավա  
կղզու վրա... Գողացված երիտասարդությունը պահվում էր Ցեյլե-  
բեսի գաղտնի բանտերում, մինչև որ հասներ այնպիսի հասունու-  
թյան, որ հնարավոր լիներ ստրուկներով բարձած նավերը ճանա-  
պարհ դնելու: Մի պաշտոնական հաշվետվության մեջ ասված է.  
«Օրինակ, միայն Մակասար քաղաքը չիքն է գաղտնի բանտերով,  
մեկը մյուսից սարսափելի, որոնք լեփ-լեցուն են ագահության և  
բռնության դժբախտ զոհերով, բոլորն էլ շղթայակապ և բռնի կեր-  
պով դուրս կորզված իրենց ընտանիքներից»<sup>1</sup>:

Ստրկավաճառության մեջ Հոլանդիայի արժանավոր հաշորգը  
Անգլիան էր, որը նույնիսկ XVIII դարում (հաժաճայն Ուտրեխտի  
պայմանագրի) կիրառում էր ասիենտոյի իր «իրավունքը» և կա-  
պիտալ կուտակում Արևելքի երկրներից: Նրանցից հետ չէին մնում  
իրենց եղբայրակից ԱՄՆ-ի պլանտատորները, որոնք այդ նույն  
«իրավունքը» կիրառում էին ընդհուպ մինչև XIX դարի երկրորդ  
կեսը, մինչև քաղաքացիական կռիվը:

Արտադրողական ուժերի սնկման և հետադիմության ցայտուն  
օրինակ է Ինդոնեզիայում Հոլանդիայի վարած քաղաքականու-

<sup>1</sup> Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, էջ 723—724:



Յյունը: Հուանդացիների հնարած, այսպես կոչված, «կոլտուրաների սիստեմը» հիշեցնում էր միջնագարի ֆեոդալական կախման մոռյլ ոեծիմը: Ըստ այդ «սիստեմի»՝ գյուղացին պարտավոր էր տարվա օրերի որոշ մասը հատկացնել հուանդական գաղութարարներին առասպելական շահույթ բերող կոլտուրաների (թեյ, կակաո, կոֆե, շաքարեղեգ և այլն) մշակությանը, որի համար հողերի մեծ մասը պետք է հատկացվեին այդ նպատակին: Կառավարութունը յուրացնում էր ստացված բերքը, ոչինչ չվճարելով ո՛չ հողի և ո՛չ էլ գյուղացու աշխատանքի համար: Այս բարբարոսական սիստեմը շարունակվում էր կիրառվել անգամ XIX դարում: Այդ բանն առաջ բերեց առաջավոր մարդկության խոր զայրույթը: Հուանդացի էդ. Դեկկերը՝ Մուլտատուլի անվան տակ գրեց «Մաքս Հավելար» վեպը, որտեղ մերկացվում էին «կոլտուրաների սիստեմի» էությունը և գաղութային ոեծիմի ողջ սարսափները: Այս դիրքը նույնպիսի դեր խաղաց, ինչ Բիչեր Սթոուի՝ «ամերիկյան ստրկատերերի դեմ ուղղված Քեռի Քոմասի տնակը»: Այդ նույն ժամանակ հնդիկ դրամատուրգ Դինաբանդու Միարան իր «Նիլ դարպան» պիեսում նկարագրեց հնդիկ բանվորների սոսկալի վիճակը ինդիգոյի պլանտացիաներում: Սակայն, Միտրայի պիեսը բրիտանական կառավարության կողմից արգելվեց և դրա անգլիացի թարգմանիչը Կալկաթայի Գերագույն դատարանի վճռով տուգանքի և բանտարկության ենթարկվեց<sup>1</sup>:

Հիշատակության արժանի է նաև անգլիացիների վարած քաղաքականությունը հնդկական արհեստի և հնդիկ արհեստավորների նկատմամբ: Երբ Արևելա-հնդկական ընկերությունն իր առևտուրն սկսեց Հնդկաստանում, Անգլիան հնդիկների հետ փոխանակելու համար հարմար ապրանքներ չունեց: Նա ստիպված էր ոսկի և արծաթ ծախսել, որը նրան ձեռնտու չէր: Մինչդեռ Հնդկաստանն արտադրում էր հրաշալի գործվածքներ, որոնք հայտնի էին ամբողջ աշխարհին: Մեզնից դեռևս 3000 տարի առաջ եգիպտացիներն իրենց մումիաները փաթաթում էին հնդկական խուրբ կերպասների մեջ: XVIIII դարում Հնդկաստանում հաստատելով իր տերիտորիալ տիրապետությունը և օգտագործելով իր իշխանությունը, Արևելա-հնդկական ընկերությունն սկսեց հնդիկ ջուհակներին և մանածագործներին թելադրել նրանց ապրանքների գները: Նա վայրագ հաշվեհարդար էր տեսնում այն հնդիկ արհեստավորների հետ, որոնք հրաժարվում էին իրենց ապրանքը վաճառել ան-

<sup>1</sup> S6'0 Кумар Гошал, Народы в колониях, էջ 143—152:

գլխացիների թելադրած գներով: Ավելին, հենվելով իր ռազմական ուժի վրա, ընկերությունն առանց որևէ հատուցման հաճախ բռնագրավում էր նրանց արտադրանքը: Հետագայում, հաստատելով իր մոնոպոլիան և ողողելով Հնդկաստանը Լանկաշիրի և Մանչեստրի գործվածքներով, Անգլիան լիակատար անկման հասցրեց հնդկական արհեստը: «Հնդկաստանի դաշտերը սպիտակին են տալիս հնդիկ ջուհակների ոսկորներից»,—ասվում էր մի պաշտոնական հաղորդագրության մեջ: Միանգամայն ճիշտ է նկատում Գոշալը, թե առքան էլ այդ պարագոքսալ թվա, աշխարհիս ամենաարդյունաբերական երկրի հետ կապը ետ շարտեց հնդկական էկոնոմիկան, փոխանակ նպաստելու նրա զարգացմանը<sup>1</sup>:

Այսպիսով, Արևելքի երկրների հաշվին արևմտաեվրոպական և ամերիկյան գաղութարարների նախասկզբնական կուտակման պրոցեսը ոչ միայն շնչաստեց այդ երկրներում ավելի բարձր արտադրական-հարաբերությունների զարգացմանը, այլ, ընդհակառակը, երկար ժամանակ հետ պահեց նրանց, դրանով իսկ ուժեղացնելով տնտեսական, քաղաքական և կուլտուրական հետադիմությունը:

Այն ժամանակ, երբ Եվրոպայում և Ամերիկայում հաղթանակում էր կապիտալիզմը և ուժեղ թափով առաջ էին գնում գաղութացումն ու գաղութային քաղաքականությունը, Արևելքի երկրներն զգացին իրենց հետամնացությունն ու թուլությունը: Այդ հետամնացության և թուլության պատճառները, ինչպես տեսանք, թաքնված էին նրանց պատմական անցյալի մեջ, հատկապես ուշ միջնադարում այդ երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում դրսևորվող մի շարք հանգամանքներում, որոնք կասեցրին անցյալում հարուստ կուլտուրա ունեցող այդ երկրների զարգացումը, դրանով իսկ դյուրացնելով եվրոպական և ամերիկյան գաղութարարների գործը:

Սակայն, հենց այդ ժամանակից սկսած, Արևելքի երկրների հետ մնալու գլխավոր պատճառը դարձավ ոչ այնքան այդ երկրների անցյալից ժառանգած հետամնացությունը, որքան կապիտալիստական պետությունների վարած գաղութային քաղաքականությունը, որը կասեցրեց և խեղաթյուրեց այդ ժողովուրդների տնտեսական և կուլտուրական զարգացումը:

Նրանով վերահիշյալից, անհրաժեշտ է կտրականապես մերժել բուրժուական կեղծ գիտության ռասայական այն «տեսությունը»,

<sup>1</sup> К у м а р Г о ш а л, Народы в колониях, стр. 171—172.

որը նոր դարի շեմին Արևելքի երկրների հետամնացության պատճառները փորձում է բացատրել այդ երկրների աշխարհագրական, էթնիկական և ռասայական հատկանիշներով, ըստ որի Արևելքի ժողովուրդները ի բնե հետամնաց են, պասսիվ, առաջընթացի անընդունակ և կարոտ են Արևմուտքի միջամտությանը, նրա խնամակալությանը: Այդ տեսությունը, այդպիսով նպատակ ունի հավերժացնել Արևելքի հետամնացությունն ու իմպերիալիստական տիրապետությունը:

Սոցիալիզմի կառուցման ասպարեզում Սովետական Արևելքի փայլուն հաջողությունները, մի շարք երկրներում ժողովրդական դեմոկրատիայի հաղթանակը, գաղութային սիստեմի փլուզումը, գաղութային ժողովուրդների ձեռք բերած հաջողություններն իմպերիալիզմի դեմ մղած պայքարում և սոցիալ-տնտեսական այն խոր վերափոխումները, որոնք տեղի են ունենում Ասիայի և Աֆրիկայի երկրներում, հիմնովին ջախջախում են Արևելքի ժողովուրդների ի բնե հետամնացության, նրանց առաջընթացի անընդունակության մասին բուրժուական «տեսությունները»:

Г. А. АКОПЯН

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ РАЗВИТИЯ СТРАН  
ВОСТОКА В ЭПОХУ ПОЗДНЕГО ФЕОДАЛИЗМА  
(XVII—XVIII вв.)

Резюме

Основываясь на учении Маркса и Энгельса об общественно-экономических формациях и их высказываниях по истории стран Востока, автор останавливается на некоторых особенностях развития этих стран в эпоху позднего феодализма (сравнительно долгое существование общины, патриархально-родовые отношения среди кочевых племен, взаимоотношения с оседлым населением и отрицательная роль их верхушки в экономической и политической жизни страны, наличие отсталых форм землевладения, землепользования и эксплуатация крестьян, слабое развитие буржуазных отношений в городе, отсутствие централизованного национального государства и пр.).

Вместе с тем автор утверждает, что решающим фактором, тормозящим развитие стран Востока на рубеже нового времени, явилась колониальная политика и колониальное закабаление этих стран империалистическими государствами. Это свое положение автор иллюстрирует на примере Индии, Ирана, Афганистана и др.

XVII ԳԱՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑՆԵՐ  
ՔՅԱԹԻՐ ՉԵԼԵՐԻՆ ԵՎ ԷՎԼԻՅԱ ՉԵԼԵՐԻՆ

XVII դարի թուրքական պատմագրության և աշխարհագրության ականավոր ներկայացուցիչներ Քյաթիր Չելերին և Էվլիյա Չելերին իրենց երկերում շափազանց հարուստ նյութ են տալիս Մերձավոր արևելքի (Փոքր Ասիա, Միջագետք, Սիրիա, Պաղեստին, Արարիա, Եգիպտոս), Հարավային, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բազմաթիվ երկրների վերաբերյալ:

Այս հոդվածում փորձ է արվում որոշ տեղեկություններ հաղորդել այդ պատմագիրների կյանքի և գործունեության վերաբերյալ և տալ նրանց թողած ժառանգության համառոտ բնութագիրը:

Քյաթիր Չելերին<sup>1</sup> ծնվել է Ստամբուլում 1017 թ. (1609) զինվորականի ընտանիքում: Նրա իսկական անունը էլհաջ Մուստաֆա իբն-Արդուլլահ է, սակայն թուրքական գրականության մեջ նա հայտնի է Քյաթիր Չելերի, իսկ եվրոպական գրականության մեջ՝ Հաջի Խալիֆա (կամ Կալֆա) անուններով: Քյաթիր Չելերին երկար ժամանակ զբաղեցրել է զինվորական և գրասենյակային տշ բարձր պաշտոններ, որի համար էլ ստացել է Հաջի Խալիֆա կամ Կալֆա մականունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Հայ պատմագրության մեջ միայն Լեոն է, որ հիշատակում է Քյաթիր Չելերիի մասին. նա իր «Հայոց պատմության» մեջ գրում է. «Հռչակված թուրք հեղինակներից կհիշատակենք այստեղ մեկին, որ շատ բեղմնավոր գրիչ է ունեցել, դա Մուստաֆա իբն-Արդուլլահն է, ավելի հայտնի Հաջի Կուլի կամ Քյաթիր Չելերի կեղծանուններով. նրա բազմաթիվ աշխատությունների մեջ գնահատելի է «Ջիհան նյումա» (Աշխարհի հայելի) անունով ընդարձակ աշխատությունը (Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1948, էջ 101):

<sup>2</sup> Խալիֆա կամ Կալֆա էին կոչվում պետական գրասենյակներում թարգմանադարի պաշտոն վարողները:

Չինվորական պաշտոնի բերումով Քյաթիր Չելերին մասնակցել է Բաղդադի 1035 թվականի (1626) արշավանքին, իսկ 1036 թ. Աբազա փաշայի ապստամբության ժամանակ՝ էրզրումի պաշարմանը: Թուրք-իրանական պատերազմի տարիներին (1043—1045, 1633—1635) նա Աուլթան Մուրադ 4-րդի գլխավորած զորքի հետ լինում է Համադանում ու Բաղդադում, իսկ 1044 թ. (1635) մասնակցում Երևանի բերդի պաշարմանը: Սիրիայում եղած ժամանակ նա ուխտի է գնում Մեքքա (Հաջջ) և ստանում Հաջջ տիտղոսը: Չնայած պաշտոնական ծառայություններով զբաղված լինելուն, Քյաթիր Չելերին միշտ ձգտել է սովորել և հարստացնել իր գիտելիքները: Արաբական կուլտուրայի կարևոր կենտրոններից մեկում, Հալեպում եղած ժամանակ, նա մոտիկից ծանոթացել է ժամանակի գիտնականների հետ, ուսումնասիրել գիտական բազմաթիվ աղբյուրներ:

Որոշ ժամանակ անց, Քյաթիր Չելերին թողել է իր զինվորական ծառայությունը և ամբողջովին նվիրվել գիտական աշխատանքի: Տասնյակ տարիներ շարունակ նա մեծ ջանասիրությամբ ուսումնասիրել է զանազան գիտություններ, իսլամական շարիաթի տեմունքը, տրամաբանություն, քերականություն, մաթեմատիկա, աստղագիտություն, աշխարհագրություն, բժշկական գիտություններ և այլն: Կարճ ժամանակում Քյաթիր Չելերին հմտանում է նաև ֆինանսական հարցերում և 1063 թվականին (1652) Թուրքիայի կառավարությանն է ներկայացնում պետական բյուջեի բարելավման վերաբերյալ հանգամանալից մի զեկուցում: Վերջինս, հետագայում թարգմանվեց գերմաներեն: 1863 թվականին թուրք գրող Ահմեդ Վեֆիքը այն տպագրեց նաև թուրքերեն լեզվով:

Քյաթիր Չելերին մինչև կյանքի վերջը իր բոլոր ուժերն ու գիտելիքները նվիրաբերեց հայրենի երկրի և ժողովրդի կուլտուրայի հարստացման գործին: Նա մահացել է անժամանակ, իր գիտական աշխատությունները չավարտած, հավանաբար 1067 կամ 1068 թվականին (1657—1658), մոտ 50 տարեկան հասակում: Ենթադրվում է, որ նա զոհ է գնացել դժբախտ պատահարի կամ հանկարծամահ է եղել:

Քյաթիր Չելերիի բազմաթիվ գիտական աշխատություններից առավել կարևորը հետևյալներն են.

Պատմագրական աշխատություններ — «Թաղվիմ-ուլ-Թեարիխ»<sup>1</sup>, ինքնատիպ և արժեքավոր ուսումնասիրություն է: «Օսման-

<sup>1</sup> تویم الواریخ: «Պատմությունների տարեցույց»:

յան կայսրության պատմություն» բազմահատոր աշխատության հեղինակը՝ Համմերն այս երկի մասին ասել է. «Եթե օսմանյան պատմության մասին Քյաթիր Չելեբիի աշխատությունը չլիներ, այս պատմությունը շատ դեպքերում խավարի մեջ պետի մնար»<sup>1</sup>: «Ֆեզլեֆե»-ն<sup>2</sup> օսմանյան պետության երկհատոր պատմությունն է, որն ընդգրկում է XVI դարի վերջից XVII դարի առաջին կեսն ընկած ժամանակաշրջանը: Հեղինակն ականատես է եղել երկրորդ հատորում նկարագրված դեպքերին: «Ֆեզլեբեն» անգնահատելի սկզբնաղբյուր է Թուրքիան ուսումնասիրողների համար, քանի որ հեղինակը դեպքերը շարադրում է ճշգրիտ ու հանգամանորեն:

«Քյաթիր Չելեբին, պատմագիր Սելանիկիից հետո, ամենից ավելի ամբողջական և մանրամասն տեղեկություններ է հաղորդում այդ ժամանակաշրջանի մասին: Քյաթիր Չելեբիի հեղինակությունն անվիճելի է Թուրքիայի բոլոր պատմագիրների համար և նրա—այս աշխատությունը Թուրքիայի XVI դարի վերջի և XVII դարի առաջին կեսի պատմագրության ամենահարուստ աղբյուրներից մեկն է»<sup>3</sup>:

«Քեշֆ-ուլ-Ջունուն»<sup>4</sup> եվրոպական գրականության մեջ գնահատվում է իրեն ընդարձակ, արժեքավոր մատենագիտական երկասիրություն, որտեղ ամփոփ տեղեկություններ են տրված գիտության մոտ 300 ճյուղերի մասին: Քյաթիր Չելեբիի այս աշխատությունը հատկապես նշանակալից է Արևելքով և արևելագիտության մեջ զբաղվողների համար:

«Միգան-ուլ-հակկ» և «Դյուաթուր-ուլ-ամել»<sup>5</sup> աշխատություններում Չելեբին անդրադարձել է իր ժամանակի հասարակական երևույթներին ու դեպքերին, պայքարել կրոնական մտլեոանդության դեմ:

Աշխարհագրական աշխատություններ. «Թունֆաթ-ալ-ֆիբար ֆի Լսֆար-ուլ-բիհար»<sup>6</sup>:

<sup>1</sup> Hammer J. Histoire de l'Empire Ottoman, I—XVIII, Paris, 1835—1843 (Քրանսերեն թարգմանություն):

<sup>2</sup> فذ لكه «Համառոտ պատմություն»:

<sup>3</sup> А. Тверитинова, Восстания Кара Языджи, Дели Хасана в Турции, М., 1946, стр. 17—18.

<sup>4</sup> «Կարծիքների հայտ- كشف الظنومه عيد اسامي الكتب و آفتون» նույնի, գրքերի և գիտությունների անունների մասին»:

<sup>5</sup> ميزان الحق، دستور العمل «Իրավունքի չափը», «Դործի ուղեցույցը»:

<sup>6</sup> «Ասնար-ուլ-բիհար» «Նվեր ծովային արշավանքների մեծավորներին»:

Այս ուսումնասիրության մեջ Քյաթիր Չելերին խոսում է օսմանյան թուրքերի ծովային նավատորմի, դրա արշավների և հաղթանակների, թուրքիայի ավերը ողողող ծովերում կատարված դեպքերի, ծովային մարտերի հայտնի հերոսներ խայրեդդին Բարբարոսի, Փիրի Ռեիսի և այլոց մասին: Երկն ունի պատմական բնույթ, աշխարհագրական գունավորումով: Հետաքրքրական, կենդանի բովանդակության և հայրենասիրական բնույթի շնորհիվ այն արագ ժողովրդականություն շահեց թե՛ Ստամբուլում և թե՛ Եվրոպայում: 1141 թվականին (1729) գիրքը տպագրվեց Իբրահիմ Մյուսթեֆեբեկյայի տպարանում<sup>1</sup>, հիանալի տեխնիկայով, քարտեզներով և նկարներով: Այն թարգմանվել է նաև անգլերեն:

«Ջիհան Այումա»<sup>2</sup>, Քյաթիր Չելերիի այս արժեքավոր աշխատությունը XVII դարում թուրքերեն գրված առաջին աշխարհագրությունն է<sup>3</sup>: Գիրքը բաղկացած է 700 մեծադիր էջից, որից 150-ը հատկացված է աշխարհագրական ընդհանուր հարցերի լուսաբանմանը: Հեղինակը նշում է, որ իբրև աղբյուր նկատի է տնեցել իսլամական աշխարհագրության բազմաթիվ գրքեր և լատիներեն ու եվրոպական լեզուներով մի քանի աշխատություններ, աշխարհագրական ատլասներ (օր. Atlas Minoe): «Ջիհան Այումա»-ում հեղինակը խոսում է աշխարհագրության բովանդակության և կարևորության, երկրի գնդաձևության մասին, շեշտելով, որ «Երկրի գնդաձևությունը չի հակասում իսլամական Շարիաթին»: Գրքում լայն տեղեկություններ են տրված նաև մասնատիկական աշխարհագրության, երկրի շարժումների, աստիճանացանցի, բեվեռների, մասշտաբի, ծովը ու ցամաքի բաժանման և այլնի մասին: Քյաթիր Չելերին նշում է, որ մինչև XVII դարը, աշխարհագրությունների և ատլասների հեղինակները, որոնք բացառապես եվրոպացիներ են եղել, իրենց ուսումնասիրություններում հիմնական ուշադրությունը դարձրել են Եվրոպայի աշխարհագրության վրա, իսկ Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի մասին խոսել են խիստ համառոտակի: «Այս գրքում («Ջիհան Այումա»-ում—Ա. Ս:) մենք այլ ուղղության հետևեցինք, նախապես սկսելով Ասիայի

<sup>1</sup> Թուրքիայում առաջին թուրքական տպարանը հիմնել է ազգությամբ հունգար Իբրահիմ Մյուսթեֆեբեկյան, 1140 թվականին (1727), այսինքն տպագրության գյուտից մոտ երեք դար հետո:

<sup>2</sup> جهان نما «Աշխարհի հայելին», աշխարհագրություն:

<sup>3</sup> Քյաթիր Չելերիի «Ջիհան Այուման» հայերեն է թարգմանել Երեմիա Չելերի-Քեամուրջյանը, որը, սակայն, ցավոք սրտի, մինչև օրս չի տպագրվել:



արևելքից, հետո անցանք Աֆրիկային, Եվրոպային և Ամերիկային»<sup>1</sup>։

«Ջիհան նյումայի» երկրորդ խմբագրության գործում Քյաթիր Չելեբիին օգնել է նախկինում ֆրանսիացի վարդապետ, հետագայում իսլամոթյուն ընդունած Շեյխ Մեհմեդ Իխլասին։

«Ջիհան նյուման» տպագրվել է 1145 (1732) թվականին Իբրահիմ Մյութեֆեբիկայի տպարանում։

Սովետական և եվրոպական արևելագետները և թուրքաբանները, բազմակողմանիորեն ուսումնասիրելով Չելեբիի աշխատությունները, մասնավորապես, նրա «Ջիհան նյուման», իրենց կարծիքն են արտահայտել դրանց վերաբերյալ։

Հիշենք դրանցից մի քանիսը։

Քյաթիր Չելեբիի և էվլիյա Չելեբիի մասին սովետական ակադեմիկոս արևելագետ-ակադեմիկոս Ի. Կրաչկովսկու արժեքավոր ուսումնասիրությունները և հայտնի արևելագետների ու թուրքագետների եզրակացություններն ամփոփված են նրա ընտիր երկերի 4-րդ հատորի «XV—XIX դարերի թուրքական աշխարհագրական դրականությունը» վերնագրով գլխում<sup>2</sup>։ Ի. Կրաչկովսկին Քյաթիր Չելեբիի աշխատություններին տալիս է հետևյալ գնահատականը. «Եվրոպական գրականության մեջ դրանք (Ք. Չելեբիի երկերը—Ս. Ս.) գնահատված են արժանի շափով և մենք համարձակորեն կարող ենք ասել, որ Հաջի Խալիֆան [Քյաթիր Չելեբին] իր արժանիքներով հայտնի է իբրև Մերձավոր արևելքի XVII դարի ամենամեծ աշխարհագրագետ»<sup>3</sup>։

Ակադեմիկոս Վ. Բարթոլդն իր «Մուսուլմանության կուլտուրան» հայտնի աշխատության մեջ Քյաթիր Չելեբիի աշխատությունները գնահատում է այն տեսակետից, որ նա առաջինն է փորձել եվրոպական գիտությունների տվյալները համեմատել իսլամական գիտության տվյալների հետ (մինչև Քյաթիր Չելեբին եվրոպական գրականության մեջ այդպիսի փորձ չէր եղել)<sup>4</sup>։

Քյաթիր Չելեբիի և էվլիյա Չելեբիի աշխատությունների ուսումնասիրությամբ զբաղվել են նաև եվրոպացի արևելագետներ Մորգոթմանը, Բարինգերը, Թեշները, Հարթմանը, Համմերը և ուրիշներ։

<sup>1</sup> کاتب چلبی، جہان نما، ص ۱۲۲

<sup>2</sup> Академик И. Ю. Крачковский, Избранные сочинения, т. IV, Турецкая географическая литература XV—XIX вв.

<sup>3</sup> Крачковский, стр. 624.

<sup>4</sup> В. В. Бартольд, Культура мусульманства, 1918, стр. 104.

Քյաթիր Չելեբիին և նրա աշխատություններին անդրադարձել են նաև ժամանակակից թուրք պատմաբանները: Պատմաբան Ի. Դանիշմենդը Քյաթիր Չելեբիին բնորոշում է որպես թուրքական դրականության առաջ արևմտյան կուլտուրայի դուռը բացողի:

«Թարիհ»-ը Քյաթիր Չելեբիին համարում է իր ժամանակի բոլոր դիտություններին ծանոթ անձնավորություն: «Այդ դարաշրջանում Արևելքի համար Արևմուտքի գրականությունից օգտվելու անհրաժեշտություն էր առաջացել»<sup>1</sup>:

Ժամանակակից հայտնի թուրք պատմաբան Ի. Ուզունչարզլին իր «Օսմանլի Թարիհի»-ում բավական ընդարձակ տեղեկություններ է տալիս Քյաթիր Չելեբիի կենսագրության և գիտական գործունեության մասին, միաժամանակ նշելով, որ նա ունեցել է չպահպանված աշխատություններ («Ստամբուլի պատմությունը», «Թարիհի ֆրենգի» անունով պատմությունը և այլն)<sup>2</sup>:

Քյաթիր Չելեբիի գիտական աշխատությունների մասին ավելի մանրամասն տեղեկություններ կան Բուրսալի Թահիր Բեյի «Օսմանցի հեղինակները» (Osmanlı Müellifleri) աշխատության մեջ:

Մի քանի թուրք պատմագիրներ նշում են, որ Քյաթիր Չելեբիին, չնայած թուրքական կուլտուրայի զարգացման ուղղությամբ կատարած խիստ բեղմնավոր աշխատանքին, իր «հասարակ ծագման» պատճառով «բարձր աստիճանի» չի արժանացել: Տարակույս չկա, որ Քյաթիր Չելեբիի հասարակ ծագումը և բարձր աստիճանների չհասնելը երբեք էլ արգելք չեն եղել, որ նա իր ամբողջ ժամանակը և ուժերը նվիրի գիտական աշխատանքին:

1957 թվականին, Քյաթիր Չելեբիի մահվան 300 ամյակի կապակցությամբ «Թուրքական պատմության էնկերության (Türk Tarihi Kurumu) և պետական համալսարանի նախաձեռնությամբ, նրա հիշատակին հոբելյանական հանդես կազմակերպվեց: Քյաթիր Չելեբիի մասին մամուլում լույս տեսան հոդվածներ, կարդացվեցին գիտական զեկուցումներ: «Ջումհուրիյեթ» թերթի 1957 թ. հուլիսի 25-ի համարում Մ. Թայիր Գյոկբիլգինը առաջարկեց պատրաստել և հրատարակել Քյաթիր Չելեբիի նրկերի լիակատար ժողովածուն («Kâtib Çelebi külliyyatı»)<sup>3</sup>:

<sup>1</sup> Tarîh, c. III, Yeni ve yakın zamanlar, s. 120.

<sup>2</sup> J. H. Uzunçarşılı, Osmanlı Tarihi, c. III, bölüm II, Ankara, 1954, s. 539.

<sup>3</sup> „Cümhuriyet“, 26 Temmuz, 1957.

\* \* \*

XVII դարի թուրք ճանապարհորդ էվլիյա Չելեբիին հաճախ անվանում են նաև թուրքական Իրն-Քաթուֆա, կամ «Աշխարհաշըրշիկ»<sup>1</sup>:

էվլիյա Չելեբիի կենսագրության մասին պահպանվել են շատ սահմանափակ տեղեկություններ: Նա իր «Ուղեգրության» մեջ տալիս է որոշ կենսագրական տեղեկություններ: Մնվել է 1020 թվականին (1611) Կոստանդնուպոլսում, նրա անունը էվլիյա էր, հետագայում ղուրանը անգիր անելու (Հաֆըզ) և իր պապերի սուլթանական արքունիքի հետ ունեցած կապի պատճառով ստացավ Չելեբի պատվավոր անունը, կոչվելով Հաֆըզ էվլիյա Չելեբի: Նրա հայրը՝ Դերվիշ Մեհմեդ Զելլին, Կանունի սուլթան Սուլեյմանի մոտ ծառայում էր իբրև նեղիմ (գրուցակից) և ոսկերչապետ (կուլումշի բաշը): էվլիյայի նախահայրերը եկել են Միշին Ասիայից և ապրել Քեոթահիարում ու Բաղդադում և միայն Կոստանդնուպոլսի գրավումից հետո փոխադրվել այդտեղ<sup>2</sup>: Մայրը ծագումով Կովկասյան արաղա՞ց եղից էր և ազգակցական կապ ուներ այդ ժամանակի մեծ վեզիր և պետական գործիչ Մելեք Ահմեդ փաշայի հետ:

էվլիյա Չելեբին նախնական կրթությունը ստացել է իր ապրած քաղաքում, հետո շարունակել է սովորել Շեյխ-ու-Իսլամ Համիդ էֆենդիի մեդրեսեում: 1045 թվականին (1636) Այա-Սոֆիայում կատարել է հաֆըզի պաշտոն և սուլթան Մուրադ 4-րդը այդ կապակցությամբ նրան իբրև մյուհասիբ (գրուցակից) է վերցրել իր արքունիքը: էվ. Չելեբին մեծ հակում և ընդունակություն է ունեցել դեպի երգն ու երաժշտությունը, որին շատ է նպաստել նրա գեղեցիկ և հրապուրիչ ձայնը: Թե արքունիքում և թե դրսում նա սերտ կապ է պահպանել ժամանակի հայտնի երաժիշտների հետ, զարգացրել իր երաժշտական ձիրքը: Նա զբաղվել է նաև գեղագրությամբ ու նկարչությամբ: Նա առանձնապես սիրել է նաև ճարտարապետությունն ու երկրաչափությունը, որն ակնհայտորեն երևում

<sup>1</sup> سیاح عالم

<sup>2</sup> Cafer Erkilic, Evliya Çelebi, hayatı, san'atı, eserleri. Türk klasiikleri, № 34, Ankara, 1954.

<sup>3</sup> Այս մասին անհրաժեշտ է մի ուղղում մտցնել: էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» առաջին հրատարակիչ, թուրք գրականագետ և պատմագիր Նեշիր Ասրմը էվլիյա Չելեբիին ծագումով արաղա է համարում: Ուսումնասիրությունները շեն հաստատում այդ, քանի որ էվլիյան միայն մոր կողմից կապ ունի արաղա ցեղի հետ: Տես Զահեր էրկելիչի նշված աշխատության 6-րդ էջը:

է նրա «Ուղեգրութիւն»-ից: Այստեղ նա առանձին ուշագրութիւն է դարձրել և կենդանի դուրսերով նկարագրել է ճարտարապետական տարրեր կառուցներն ու պատմական հուշարձանները: Էվ. Չելեբին անտարբեր չի մնացել նաև արվեստի և գրականութիւն նկատմամբ. նա ծանոթ է եղել թուրք և պարսիկ բանաստեղծների երկերին (Ֆուզուլի, Բաքի Ռուփի, Նեշաթի և այլն):

Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, Էվլիյա Չելեբին առանձնապես մեծ սեր և հակում է դրսևորել դեպի աշխարհագրութիւնն ու երկրագիտութիւնը: Դեռևս վաղ հասակից ձգտել է ճանապարհորդել, ծանոթանալ տարբեր երկրների ժողովուրդների լեզվին, կուլտուրային, կենցաղին ու սովորութիւններին:

Դեռևս 1041 թվականին (1631), 21 տարեկան հասակում, Չելեբին սկսում է շրջագայել Կոստանդնուպոլսում և նրա շրջակայքում: Մոտ ինը տարի տևող այդ շրջագայութիւնների և ուսումնասիրութիւնների արդյունքը եղավ նրա «Ուղեգրութիւն» առաջին հատորը, որը խիստ արժեքավոր նյութեր ու փաստեր է բովանդակում Կոստանդնուպոլսի մասին: Էվլիյա Չելեբին հետագայում, փոքր ընդմիջումներով, շուրջ 41 տարի շարունակում է իր ուղևորութիւնները: Էվլիյա Չելեբին 16 երթուղիներով իր ուղևորութիւնները կատարել է մերթ իբրև հոգևորական՝ իմամ կամ մյուսզզին, մերթ իբրև բարձրաստիճան անձանց ուղեկցող զրուցակից, անձնական քարտուղար, իսկ երբեմն էլ իբրև տուրքեր հավաքողի քարտուղար, խորհրդական, բնական իմամ կամ մյուսզզին, հիվանդապահ, սուրհանդակ, ռազմիկ և այլն:

Նա եղել է Փոքր Ասիայում, Հայաստանում, Քուրդիստանում, Կովկասում, Սիրիայում, Պաղեստինում, Միջագետքում, Արաբիայում, Եգիպտոսում, Հաբեշտանում, Բալկանյան երկրներում, Հարավային Ռուսաստանում, Ղրիմում, Կիչաքի դաշտում, Գերմանիայում, Դանիայում, Հոլանդիայում և Լեհաստանում:

Էվ. Չելեբին մի քանի անգամ ճանապարհորդել է Անատոլիա և Հայաստան, անցնելով դրանց բոլոր կարևոր քաղաքներից ու գյուղերից: Վերջին ուղևորութիւնը նա կատարել է 1089 թվականին (1678): Ծնթաղրվում է, որ նա մեռել է այդ ուղևորութիւնից հետո, 1090 թվականին (1679), մոտ 70 տարեկան հասակում:

Անհրաժեշտ է նշել, որ Էվլիյա Չելեբին իր ստացած կրթութիւն, շրջապատի պայմանների բերումով եղել է ջերմ հավատացյալ մուսուլման և կրոնական ավանդութիւնների և առասպելների խիստ սիրահար: Նրա բոլոր հատորներում հիշատակված են բազմաթիվ սուրբեր, սրբավայրեր, նրանց հրաշագործութիւնների վե-

բարերյալ երբեմն անհեթեթության հասնող սնտիապաշտական նկարագրություններ:

Էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» առաջին հրատարակիչ Նեջիբ Ասրմբ գրքի առաջաբանում նշում է. «Արտակարգ առասպելներին և ավանդություններին հավատացող, նախնիներից մնացած առասպելներ և պատմվածքներ պատմելու սիրահար Էվլիյա Չելեբին, շնայած իր երկասիրություններում շափազանցություններ է արել, սակայն մոտիկից շփվելով իր ճանապարհորդած երկրների ժողովուրդների հետ, ուսումնասիրել է նրանց բարոյագիտությունն ու սովորությունները և այդ բոլորն արտահայտել իր երկերում: Առավելապես կարևոր են Ստամբուլի մասին նրա տված տեղեկությունները<sup>1</sup>: Էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» մեջ կարևոր տեղ են բռնում նաև պատմական դեպքերը, որոնց մեծ մասին ինքը ժամանակակից է: Նա ականատես և նույնիսկ մասնակից է եղել այդ դեպքերից շատերին. օրինակ, Ջելալիների հարձակումները մինչև Սկյուդար (Ստամբուլ), Բիթլիսի հայտնի քուրդ Աբդալ խանի ապստամբական շարժումները և այլն, որոնք նկարագրված են կենդանի գույներով և մանրամասնությամբ: Էվլիյա Չելեբիի առաջին հատորում առանձնապես կարևոր են՝ 1) Կոստանդնուպոլսի բազմաթիվ շինությունների, հուշարձանների նկարագրությունը, 2) Սուլթան Սուլեյման Կանունիի վարչական, զինվորական օրենսդրությունները և միջոցառումները՝ անհրաժեշտ թվական տվյալներով, 3) սուլթան Մուրադ 4-րդի ֆերմանով կատարված աշխարհահամարը և Ատամբուլում կազմակերպված հսկա և հետաքրքիր շքերթը (ալայ), որին մասնակցել են քաղաքի զինվորական, վարչական, հոգևորական, առևտրական, արհեստավորական և բոլոր այլ էսնաֆները, սկսած պետության բարձր դասերից վերջացրած ժողովրդական հասարակ խավերով: «Ուղեգրության» առաջին հատորում այդ մեծ շքերթի նկարագրությունը բռնում է 150 էջ (արաբական տառերով)<sup>2</sup>:

Սովետական արևելագետներից Էվլիյա Չելեբիի ուսումնասիրությունները զբաղվել են գլխավորապես Ի. Կրաչկովսկին և Վ. Բար-

<sup>1</sup> اوليا چلبی سیاحتنامہسی، مقدمه مدن

<sup>2</sup> Կոստանդնուպոլսի XVII դարի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար այդ շքերթի նկարագրությունը խիստ արժեքավոր սկզբնաղբյուր է: Նկատի պետք է ունենալ նաև այն հանգամանքը, որ քաղաքում կարևոր թիվ էին կազմում հայ արհեստավորները, առևտրականները և այլ աշխատանքներով զբաղվողները:

թուղը: Ի. Կրաչկովսկին այսպես է բնութագրում նրան. «Էվլիյա Չելեբիի տասը հատորով աշխատությունը հուլերի բնույթով իր դարաշրջանին հատուկ կարևոր փաստաթղթերից է, առաջնակարգ աղբյուր այդ ժամանակի պատմության համար. միաժամանակ միևնույն աստիճանի կարևոր նկարագրություն, որը միակն է Արև-վելյան գրականության մեջ, ամեն տեսակի կուլտուր-պատմական ուսումնասիրությունների անսպառ աղբյուր»<sup>1</sup>: Իսկ ակադեմիկոս Վ. Բարթուղը նրա մասին հետևյալ կարծիքն է հայտնում. «Էվլիյա Չելեբիի «Ուղեգրությունը» թուրքերեն լեզվով ինքնատիպ աշխարհագրական աշխատություն է, որը հարուստ է բազմաթիվ նյութերով (աշխարհագրական, ազգագրական և լեզվագիտական) և իրենից շատ ետ է թողնում արաբական՝ դասական աշխարհագրագետների աշխատությունները, թեև մյուս կողմից, պարզ ասած, բովանդակում է բազմաթիվ մտացածին տարրեր»<sup>2</sup>:

Էվլիյա Չելեբիի աշխատությունները հանգամանորեն ուսումնասիրել են նաև եվրոպացի մի շարք թուրքագետ-արևելագետներ (Մոբդեմանը, Քեյները, Հարթմանը և ուրիշներ):

Ի. Կրաչկովսկին նշում է Հարթմանի կողմից շեշտված մի կարևոր պատմա-հնագիտական փաստ: Էվլիյա Չելեբին XVII դարում հատուկ ուշադրություն է դարձրել Վերին Միջագետքի և Փոքր Ասիայի խալդեական հնությունները, մի հարց, որն սկսեց մեծ դեր խաղալ XX դարի եվրոպական գիտության մեջ և մասնավորապես մեր երկրում: Նրան ոչ պակաս զարմացրել են ժայռային ճարտարապետության այն հուշարձանները, որոնք նոր ժամանակների ուղեվորների համար անլուծելի հանելուկներ են թվացել: Նրա ուշադրությունը գրավել են նաև յուրահատուկ ծագում տվեցող թունելները, կամուրջները և կամարները, որոնք հազվագյուտ չեն այս երկրներում:

Իբրև օրինակ կարող ենք հիշատակել Վանի ժայռի (բերդի) և Բիթլիսից մինչև Վանի լիճը հասնող քարաշեն կամարների<sup>3</sup> նկարագրությունը:

<sup>1</sup> Крачковский, стр. 607.

<sup>2</sup> В. В. Бартольд, История изучения Востока в Европе и России. СПб, 1911, Л., 1925.

<sup>3</sup> Էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» մեջ (հատ. 4, էջ 161—188) Վանի բերդի նկարագրությունը բռնում է 27 էջ. այդ բերդը և նրա քարաժայռի բնական և արհեստական քարայրները, բերդի պատմական և ուղեգրական նշանակությունը մեծապես հետաքրքրել են նրան: Նա շրջագայել, մեծ հետաքրքրությամբ դիտել և նկարագրել է բերդի բոլոր մասերը: «Վանի ժայռի գովքը» վերնագրով հատվածում

Ի. Կրաչկովսկին նշելով նրա կրոնասիրական հակումները, ասում է. «Իր միջավայրի և դարաշրջանի համար միանգամայն բնական է, որ էվլիյա Չելեբին հատուկ ուշադրությամբ կանգ է առել իր այցելած երկրների կրոնների, պաշտամունքների և սովորությունների վրա: Գյուղերը նկարագրելիս նա միշտ նշումներ է արել թե նրանց բնակիչները արդյոք մուսուլմաններ են, քրիստոնյաներ թե՞ հայեր: Քաղաքները նկարագրելիս նա հանգամանորեն կանգ է առնում ուխտատեղիների վրա, այդ առթիվ պատմում սըրբերի հրաշքների և սրբավայրերի ուժի մասին... երբեմն ոչ պակաս ուշադրություն դարձնելով նաև քրիստոնեական կրոնական սովորություններին: Չելեբիի արժանիքը պետք է համարել այն փաստը, որ նրան հետաքրքրում են մեծ մասամբ ոչ թե վերին դասերի պաշտոնական կրոնը, որին նա շատ լավ ծանոթ է, այլ ժողովրդական լայն մասսաների կրոնական պատկերացումները»<sup>1</sup>:

Իբրև օրինակ հիշենք էջմիածնի (Ուլ-Քելիսե) կրոնական արարողությունները, մասնավորապես մեռնողների և փրկվողների ժողովրդական լայն մասսաների մասնակցությունը Մշո սուրբ Կարապետի վանքի ուխտադասությունը, զոհարարությունները, աղոթքները և բժշկությունները, Վանի Վարազա վանքի և Աղթամարի նկարագրությունները և այլն, և այլն:

Հեղինակը բերդը նմանեցնում է քրեական և ծոված ուղտի, որի դեպի արևելք երկարած գլուխը թնդանոթի ազդեցությունից ազատ ժայռեր են... Բերդի ժայռերը տարբեր կողմերից շատ տարօրինակ են երևում, շատ տեղերում դրանք աժդահայի են նման: Ուղեգիրն ասում է, որ ժայռի քարայրներում կան բազմաթիվ արհեստանոցներ, քարայրներից շատերը լի են ամեն տեսակի ռազմամթերքներով և սննդամթերքներով... Քարայրներից մեկում, Աստոն հրամանով նավթի յուղ կա, որը ժայռից հոսում է մեծ ավազանի մեջ: Երբ ավազանը լցվում է նավթով Վանի գեֆթերդարի միջոցով կառավարությունը ծախում է վաճառականներին: Ներքին բերդի մասին խոսելիս, էջ. Չելեբին ասում է. «Ներքին բերդի դեպի քաղաք նայող հարավ-արևելյան մասում, Քեսիթ-թոփա կոչված քարայրի վրա, բարձր մի ժայռի կրճերին, ժայռը քառանկյունի ձևով հղկել-փայլեցրել և այդ քարի վրա մի քանի տող կարևոր գրքեր են գրել, որոնք տարբեր նշաններից և պատկերներից կազմված լինելու պատճառով նվաստս շկարողացավ կարդալ: Բիթլիսից Վան ուղևորվելիս էջ. Չելեբին հիշում է Խճարև փաշա խանից մինչև Վանի լիճը և Խանից մինչև Բիթլիս, երեք ժամվա ճանապարհի վրա կառուցված կամարները ռոպեսզի ձմռանը բոլոր ճանապարհորդները, վաճառականները և ուխտադասները այս կամարի տակով ուղևորվեն, որպեսզի ձմռանը նրանց համար տաք լինի, իսկ ամռան՝ զով...» Ամբողջ 8 ամսվա ընթացքում այս դաշտը ծածկված է լինում մինարեի բարձրության ձյունով...»: էջ. Չելեբին ասում է, որ «ներկայումս այդ կամարի շատ մասերը քանդված են, սակայն այդ կառուցումի հետքերն ու որոշ մասերը պահպանվել են»:

<sup>1</sup> Крачковски ѣ, стр. 630—631 (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

Մի շարք հեղինակներ էվլիյա Չելբրիի և հայտնի ճանապարհորդ Իրն-Բաթուֆայի միջև գաղափարների և տեսակետների որոշ մերձավորություն են գտնում: Այդ ամենից ավելի արտահայտվում է այն բանով, որ «Նրա շահագրգռության կենտրոնում գտնվում է մարդը»<sup>1</sup>:

Այժմ մի քանի խոսք էվլիյա Չելբրիի «Ուղեգրության» տպագրության և թարգմանության մասին:

Եթե Քյաթիր Չելբրիի երկերը նրա մահվանից հետո շուտով տպագրվեցին և ճանաչվեցին եվրոպական և արևելյան գիտական շրջաններում, ապա էվլիյա Չելբրիի «Ուղեգրությունը» իր հայրենիքում 200 տարի շարունակ անուշադրությամբ մատնվեց և մինչև XIX դարի վերջը պահվեց ձեռագիր վիճակում: Սակայն թուրքերից առաջ եվրոպացի արևելագետները էվ. Չելբրիի աշխատության ձեռագիր հատորները թարգմանեցին և տպագրեցին: Այսպես, ավստրիացի արևելագետ Համմերը, 1834—1850 թվականներին Ասիական Արքունական ընկերության ձեռագրի հիման վրա անգլերեն թարգմանեց և հրատարակեց էվ. Չելբրիի «Ուղեգրության» I և II հատորները: Դրանից մոտ մեկ դար հետո, հունգարերեն լեզվով թարգմանվեց VI հատորը, որը մեծ մասամբ վերաբերում էր Հոնգարիային: Մյուս հատորներից եվրոպական լեզուներով թարգմանվեցին միայն որոշ հատվածներ: Մինչև անցյալ դարի վերջը Ատամբուլում և Եգիպտոսում, «Ուղեգրության» 10 հատորներից թուրքերեն միայն առանձին հատվածներ են հրատարակվել:

Միայն 1896—1900 թվականներին թուրք պատմագիր-գրականագետ Նեշիր Ասըմի և Ահմեդ Ջևդեթի նախաձեռնությամբ, Ստամբուլում պահված ձեռագրի հիման վրա տպագրվեցին էվ. Չելբրիի «Ուղեգրության» I—VI հատորները: Դրանից մոտ 30 տարի անց, 1929 թվականին «Օսմանյան պատմության էնչյումենի» նախաձեռնությամբ VII և VIII հատորները, իսկ 1938 թվականին՝ IX և X հատորները՝ նոր թուրքական տառերով:

Այս «խայտարղետ» հրատարակություններն ունեն մեծ թերություններ: I—VI հատորների հրատարակիչները միջոցներ և հնարավորություններ չեն ունեցել ձեռք բերել և օգտվել էվլիյա Չելբրիի աշխատության տարրեր վայրերում պահված ձեռագիր օրինակներից, իսկ համիդյան ռեժիմի գրաքննությունը խիստ աղճատել է «Ուղեգրության» առաջին վեց հատորները:

<sup>1</sup> Крачковский, стр. 630—631.



Վերջերս Ռեշադ էքրեմ Կոչուն կրճատված ձևով հրատարակեց էվլիյա Չելեբիի «Ուղեգրությունը»:

Անբավարար վիճակում են նաև Չելեբիի մասին թուրքերեն լեզվով եղած ուսումնասիրությունները, ինչպես իրավամբ նշում են Ա. Տվերխտինովան և Ա. Դ. Ժելտյակովը, «էվլիյա Չելեբիի կարևոր աշխատությունը դեռևս լրիվ և բազմակողմանիորեն չի ուսումնասիրված, քանի որ չկա «Ուղեգրության» գիտական և լրիվ հրատարակված տեքստը, գիտա-հետազոտական մենագրություններ, որոնք ընդգրկեն աշխատության մեջ արժարժված բազմաթիվ հարցերը, չկան լրիվ հրատարակություններ եվրոպական լեզուներով»<sup>1</sup>:

Թուրքիայում վատ է կազմակերպված էվլիյա Չելեբիի ուսումնասիրության ու ժողովրդականացման գործը:

Նկատի ունենալով, որ էվ. Չելեբիի «Ուղեգրության» հատորներում շատ հարուստ տեղեկություններ և նյութեր կան նաև ՍՍՌՄ տարրեր երկրամասերի և ժողովուրդների մասին, ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտը (նախկին արևելագիտության ինստիտուտ) սկսել է էվլիյա Չելեբիից թարգմանել և հրատարակել Սովետական Միության ժողովուրդներին վերաբերող նյութերը: Վերջերս, անհրաժեշտ ծանոթագրություններով, առաջաբանով և հավելվածով հրատարակվեցին Մուղավիային և Ուլրախիային վերաբերող նյութերը:

Թարգմանության խմբագիրները նշում են այս կարևոր նախաձեռնության մասին. «էվ. Չելեբիի «Ուղեգրությունը», որն ընդգրկում է պատմության և ազգագրության վերաբերյալ բովանդակալից հարցեր, կարելի է համարել ամենից ավելի արժեքավոր օտար աղբյուրը ՍՍՌՄ-ի ժողովուրդների անցյալը ուսումնասիրելու համար. էվլիյա Չելեբիի հաղորդած անթիվ և բազմազան փաստական նյութերը այդ աշխատությունը («Ուղեգրությունը»—Ա. Ա.) դարձնում են կարևոր աղբյուր, նրա տեսած և նկարագրած երկրների ուսումնասիրության համար»<sup>2</sup>:

Անհրաժեշտ ենք համարում նաև մի քանի խոսք ասել է. Չելեբիի դասակարգային պատկանելիության, գաղափարախոսության հայացքների և հասարակական որոշ երևույթների հանդեպ նրա վերաբերմունքի մասին:

<sup>1</sup> Эвлия Челеби, Книга путешествия. Выпуск I. Москва, 1961, Предисловия—А. С. Тверитинова и А. А. Жельтяков, стр. 6.

<sup>2</sup> Эвлия Челеби, Իշխ. աշխ., էջ 9, 11.

Էվլիյա Չելեբին, ինչպես նշեցինք նրա կենսագրության մեջ. պակտկանելով Թուրքիայի ռազմա-ֆեոդալական վերնախավին, ապրել և գործել է այդ միջավայրում: Նա հավատացյալ է և մուհ-  
ռանդ մուսուլման, «նվիրական իսլամի» նկատմամբ, «անհավատ-  
ների» (քյաֆիրների) թշնամի: Օսմանյան ռազմա-ֆեոդալական  
կարգերը, օսմանյան բանակի դեպի Արևելք և Արևմուտք կատարած  
արշավանքները, հրով ու սրով, արյունով և կոտորածներով նվա-  
ճումները, ֆեոդալական վերնախավի և բանակի հարստության  
գլխավոր աղբյուրը հանդիսացող ավարառութունները նա համա-  
րում է «օրինակա՜ն»... ինչպես պարզվում է իր իսկ գրի առած և  
հաղորդած նյութերից, նա հաճախ մասնակցել է օսմանյան բա-  
նակի «հաղթական» արշավանքներին, կողոպուտներին և թալան-  
ներին, որոնց մասին խոսում է շատ պատկերավոր և «անկեղծու-  
թյամբ»:

Այդպիսին է եղել մեծ ճանապարհորդի հասարակական և քա-  
րոյական դեմքը:

\* \* \*

Հողվածի սկզբում մենք նշեցինք, որ միջնադարի երկու թուրք  
հեղինակներ Քյաթիր Չելեբիի և Էվլիյա Չելեբիի երկասիրութուն-  
ները կարևոր աղբյուրներ են նաև Հայաստանի, հայերի և Անդրկով-  
կասյան մյուս ժողովուրդների միջնադարյան պատմութունը ու-  
սումնասիրելու համար, քանի որ դրանք շատ հարուստ և արժեքա-  
վոր տեղեկութուններ են տալիս այդ ժողովուրդների սոցիալ-տըն-  
տեսական կյանքի, պատմության, աշխարհագրության, ազգագրու-  
թյան, կուլտուր-կենցաղային պայմանների վերաբերյալ:

Նկատի առնելով հողվածի սահմանափակ ծավալը, մենք կբա-  
վականանք այդ մասին ամփոփ տեղեկութուններ հաղորդելով<sup>1</sup>:

Երկու թուրք հեղինակների երկերի մասին տված անհրաժեշտ  
բացատրութունները և զնահատականը հավասարապես վերաբե-  
րում են նաև Հայաստանի և Անդրկովկասի մյուս ժողովուրդներին:

Քյաթիր Չելեբին իր հայտնի «Ջիհան նյումա»-ում, ի թիվս այլ  
երկրների, տալիս է նաև Հայաստանի, նրա խոսքերով ասած Մեծ

<sup>1</sup> Երկու թուրք հեղինակների մասին մեր ուսումնասիրութունները ամփոփել  
ենք առանձին աշխատութուններում՝ Քյաթիր Չելեբիի Հայաստանի և Անդրկով-  
կասի միջնադարի աշխարհագրությանը վերաբերող նյութերը «Թուրքական աղբյուր-  
ները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» մեր աշ-  
խատության 2-րդ հատորում. Էվլիյա Չելեբիի 1—V հատորներից մենք քաղել ու  
թարգմանել ենք Հայաստանի և Անդրկովկասի մասին եղած բոլոր նյութերը, կաղ-  
մելով առանձին գիրք, որը պատրաստ է տպագրության:

Հայաստանի և Փոքր Հայաստանի, (ինչպես նաև Անդրկովկասի) աշխարհագրությունը՝ պատմական և տեղագրական բազմաթիվ հարուստ ժանոթագրություններով:

«Ջիհան նյումա»-ում Հայաստանի և Անդրկովկասի աշխարհագրությունը տրված է հետևյալ պլանով.

1. Արանի, Մուզանի և Շիրվանի երկրները.

2. Վրաստանի երկրները.

3. Կարսի էյալեթը.

4. Հայաստանի երկրները.

ա) Վանի էյալեթը.

բ) Հեքարին.

գ) էրզրումի էյալեթը.

5. Տրապիզոնի էյալեթը.

6. Դիարբեքիրի էյալեթը.

7. Մարաշի և Ադանայի էյալեթները.

8. Սվազի էյալեթը:

Այս պլանավորման ժամանակ հեղինակը հավանաբար հիմք է ընդունել XVI—XVII դարերում Թուրքիայի վարչական բաժանումը<sup>2</sup>:

Հասկանալի է, որ Քյաթիբ Չելեբիի և առհասարակ Արևելքի միջնադարյան աշխարհագրությունը լպետք է պատկերացնել ներկա աշխարհագրական գիտության հիմունքներով, քանի որ դա պատմա-աշխարհագրական և այլ տեղեկություններ պարունակող, նկարագրական բնույթի «աշխարհագրություն» է: Մեր կարծիքով, հեղինակը իրավացիորեն այն անվանել է «Ջիհան նյումա», այսինքր՝ «Աշխարհի հայելի»:

Ավելի հստակ պատկերացում տալու համար կարելի է իբրև օրինակ բերել Երևան քաղաքի և հարակից մասերի աշխարհագրության մասին եղած տեղեկությունները:

«Երևան (روان)՝ 87 աստիճան երկարության և 39 աստիճան լայնության միջև, Չուկուր-Սաադ (چقور سعد) կոչված երկրի քաղաքն ու կենտրոնն է: Ջանգի գետը, գտնվում է պարսպի կողքին, որը հոսում է արևմուտքից: Հարթավայրում Ջանդիին գետահայաց հողաշեն մի բերդ կա, ունի երկու դուռ, հյուսիսում՝ Դեռվազի Թավրիզը, հարավում՝ Բաբը Շիրվանը:

<sup>1</sup> بويوك ارمنيہ، كوچوك ارمنيہ

<sup>2</sup> Տե՛ս «Արևելագիտական ժողովածու»-ի 1-ին գրքում (Երևան, 1960) մեր հոդվածը՝ «Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դ.», էջ 285—301:

Շրջակայքում շատ են այգիներն ու պարտեզները, հացահատիկի և պտուղների վայր է. (քաղաքում) կա մի մզկիթ և գետահայաց մի պալատ....

Համառոտակի հիշելով թուրքերի և պարսիկների միջև Երևանի համար մղված պայքարը, հեղինակը շարունակում է. «Ներկայումս [Երևանը] կրգլրաշների ձեռքում բերքառատ մի վիլայեթ է: Աղբը լեռը (Արարատ) Երևանի հարավ-արևմուտքում մեկ օրագնաց (մերհեկ) հեռավորության վրա հսկա մի լեռ է, որը տեսանելի է մի քանի օրագնաց հեռվից: [Լեռը] կեսից դեպի վեր ծածկված է մշտական ձյունով. այդ կլորածև լեռն տների մի քանի մենդիլ շրջապատ: Նրանից դեպի արևելք և հյուսիս Արաքս գետը հոսում է դեպի արևելք և հյուսիս: Ալաշկերտի դաշտն ընկած է գետի և լեռան միջև: Մեկ կողմումն էլ Չալդրանի դաշտն է, այդ պատճառով էլ (լեռան) հյուսիսային կողմը կոչվում է Չըլդրի էլայեթը...»<sup>1</sup>:

Մոտավորապես այս բովանդակությամբ և պատմական կարևոր դեպքերի հիշատակումով է տրված Հայաստանի և Անդրկովկասի տարբեր մասերի աշխարհագրությունը: Քյաթիր Չելեբին «Աշխարհի հայելի» նյութերը քաղել է մինչև XVII դարը գոյություն ունեցող արաբական, պարսկական, թուրքական, որոշ շափով նաև արևմտյան աղբյուրներից: Մեր կարծիքով, Քյաթիր Չելեբի աշխատությունը հատկապես գնահատելի է այն տեսակետից, որ դրանում ի մի են բերված բազմաթիվ աղբյուրներում ցրված տեղեկությունները:

Քյաթիր Չելեբին և էվլիյա Չելեբին իրենց աշխատությունների համապատասխան հատվածներում առանձին ուշադրություն են դարձրել նաև իրենց նկարագրած քաղաքների և երկրամասերի հաղորդակցության ճանապարհների, դրանց ուղղությունների, հեռավորության նշանակության հարցերին: Այդ քարավանային ճանապարհները, որոնցից մի քանիսն ունեցել են տարանցիկ-առևտրական, հաճախ նաև ռազմական մեծ նշանակություն, Մերձավոր արևելքի երկրների միջև առևտրական և այլ հարաբերությունների տեսակետից մինչև օրս էլ պահպանում են իրենց կարևորությունը:

Այդպիսին են եղել Սև ծովի եզերքից (Տրապիզոն նավահանգիստ) էրզրում ու մինչև Թավրիզ ձգվող մեծ ճանապարհը, Կենտրոնական Անատոլիայից Սիրիա-Միջագետք, Սվադից Մալաթիա, Կիլիկիայից դեպի Միջերկրական ծով տանող ճանապարհները և այլն:

<sup>1</sup> كاتب چلبی، جهان نما، فصل ۲۹

Այս կապակցութեամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր ուսումնասիրած երկու թուրք հեղինակները, հիտկապես Հայաստանին և Անդրկովկասին վերաբերող շատ հարցերում, լրացնում են միմյանց: Քյաթիբ Չելեբին բազմաթիվ աղբյուրներից (զլխավորապես իսլամական) հավաքած և որոշ պլանով դասավորված պատմա-աշխարհագրական նյութերով և տեղեկություններով, էվլիյա Չելեբին՝ իր ուղևորութունների ընթացքում և մեծ մասամբ իր անձնական դիտումների և ուսումնասիրությունների շնորհիվ հավաքած բազմազան նյութերով, նկարագրություններով և փաստերով, հարուստ և հետաքրքիր այնպիսի աշխատություններ են թողել, որոնք ինչպես նշում են սովետական և ավրոպացի արևելագետ-թուրքաբանները, անսպառ աղբյուր են Մերձավոր արևելքի, գուցե ավելի մեծ շափով, Արևմտյան և Արևելյան Հայաստանի և ամբողջ Կովկասի ժողովուրդների կյանքի բազմակողմանի ուսումնասիրության համար: Անհրաժեշտ է շեշտել, որ մեծ ճանապարհորդ էվլիյա Չելեբին Հայաստանի, Անդրկովկասի տերիտորիաներում ճանապարհորդելիս իր տեսածները և ուսումնասիրությունները նոթագրել է ուղևորության ձևով: Հիշենք նրա Հայաստանում կատարած ուղևորությունների կարևոր երթուղիները: 1050 թ. (1640) նա Անատոլիայով ուղևորվում է էրզրում, այնտեղից անցնում Թավրիզ, հետո Երևան, Բաքու, Շամախի, որտեղից երկրորդ անգամ դեպի Վրաստան: Այստեղից նա Ախալցխեհով նորից գնում է էրզրում և վերադառնում Ստամբուլ (2-րդ հատոր):

1058 թ. (1648) էվ. Չելեբին արևմտյան և կենտրոնական Անատոլիայի վրայով գնում է Պաղեստին (Սուրբ երկիր), հետո Դամասկոսից ուղևորվում է Սվաղ, Հալեպ, Ուրֆա, Մարաշ, Կեսարիա (3-րդ հատոր):

1065 թ. (1654) նա Սկյուտարից ուղևորվում է վերցնում դեպի Վան, այսինքն կտրում անցնում բովանդակ Անատոլիան, հատկապես կանգ առնելով Վան քաղաքի, նրա բերդի, Վանի լճի շրջակայքում, ապա Վանից մեկնում է Պարսկաստան:

1066 թ. (1655) էվ. Չելեբին ճամփորդում է Քուրդիստանում, որտեղից նորից անցնում է Վան, այստեղից Բիթլիս և Արճէշի ու Ադիլջևազի (Արծկե) ուղևորությամբ՝ էրզրում:

Այսպիսով, էվ. Չելեբին 16 տարվա ընթացքում տարբեր երթուղիներով ճանապարհորդում է Հայաստանում, Անդրկովկասում, Իրանական Ադրբեջանում և Կիլիկիայում: Այդ հսկայական տարածության վրա նա կանգ է առնում բոլոր կարևոր քաղաքներում— Երևան, Թիֆլիս, Գյանջա, Բաքու, Թավրիզ, էրզրում, Երզնկա,

*Սվաղ, Կեսարիա, Ամասիա, Թոկատ, Մարաշ, Ադանա և այլն: Նա չի բավականանում միայն մեծ քաղաքներով, այլ կանգ է առնում նաև իր երթուղու բազմաթիվ փոքր քաղաքներում, գավառական կենտրոններում, հաճախ գյուղերում:*

*Հայ և հարևան ժողովուրդների միջնադարի պատմական-աշխարհագրական, ազգագրական, լեզվագիտական, կուլտուր-կենցաղային և սոցիալ-տնտեսական ուսումնասիրության համար էվլիայա Չելեբիի տված բազմազան և արժեքավոր նյութեր դեռևս անհրաժեշտ շահով ուսումնասիրված չեն:*

А. Х. САФРАСТЯН

ПРЕДСТАВИТЕЛИ ТУРЕЦКОЙ МЫСЛИ XVII ВЕКА  
КЯТИБ ЧЕЛЕБИ И ЭВЛИЯ ЧЕЛЕБИ

Резюме

В статье излагается жизнь и научно-литературная деятельность двух представителей турецкой мысли XVII в.—Кятиб Челеби и Эвлия Челеби.

Кятиб Челеби (Гаджи-Халиф)—турецкий историограф и географ, который в своих многочисленных трудах осветил важные события истории Османской империи XVI—XVII вв.

Эвлия Челеби — турецкий путешественник, историограф и географ, известен как «путешественник мира». В течение четырех десятилетий он путешествовал по многим странам мира, побывал в Малой Азии, на Кавказе, в Армении, Месопотамии, Сирии, Палестине, Египте, на Балканах, в Восточной и Южной Европе. В своем десятитомном труде Эвлия Челеби приводит много интересных и ценных сведений о социально-экономической, культурно-бытовой, лингвистической, археологической жизни народов этих стран.

В трудах Кятиб Челеби и Эвлия Челеби содержится также богатый материал и много сведений, касающихся географии Армении XVII в. и истории армянского народа.

XI ԵՎ XII ԴԱՐԵՐԻ ԵԳԻՊՏԱԶԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերի ծանոթութիւնը Եգիպտոսի հետ շատ հին պատմութիւն տւի: Անգամ ուրարտական շրջանի պատմական վայրերի պեղումները կապի առկայութիւն են ցույց տվել այդ երկրների միջև: Մովսես Խորենացին հաղորդում է, որ ինքն այլ աշակերտների հետ իր ուսումն առել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Խորենացուն վերագրված «Աշխարհացոյցի» վարիանտներից մեկում հիշատակութիւն կա Կամսարականների նախարարական տան Աֆրիկա անցնելու և այնտեղ երեք քաղաք գնելու մասին:

Եգիպտոսի պատմութեան մեջ արձանագրված է հայ-եգիպտական հարաբերութիւնների շատ ավելի բեղմնավոր մի շրջան, երբ Ֆարիմյան խալիֆները երկրում կարգ հաստատելու և նորմալ կյանք ապահովելու համար օգտագործել են հայկական զորք և պետական պաշտոններում նշանակել են հայերի:

Օմարը, արաբական արշավանքների հայտնի կազմակերպիչը, աշխարհակալական նվաճումների ձեռնամուխ լինելու շրջանում մուսուլմաններին խստիվ պատվիրել էր անշարժ գույքի տեղ չդառնալ նորանվաճ հողերում: Նա վախենում էր, որ պարզ կյանքի սովոր բեղուինը ձիւղ և ուղտից ցած իջնելով ու նստակյաց դառնալով հարուստ երկրներում, կկորցնեն իր մարտունակութիւնը: Իրականում այդպես էլ եղավ: Հարուստ Սիրիան, Միջագետքը, Եգիպտոսը և այլ երկրներ նվաճելուց հետո արաբները ձիւղ և ուղտից շուտ ցած իջան և նստակյաց դառնալով կորցրին իրենց մարտունակութիւնը: Դառնալով հարուստ Միջագետքի, Սիրիայի և Եգիպտոսի քաղաքական տերերը, արաբները շատ շուտով հարկ զգացին դիմելու վարձկան զորքի օգնութեանը: Տարբեր ցեղերից ու ժողո-

վուրդներից հավաքագրված այդ զորքերը և նրանց էմիրները հաճախ խժոժություններ էին գործում հենց երկրի կենտրոնում և իրենց անհնազանդությունը խանգարում ու խախտում էին երկրի տնտեսական-քաղաքական կյանքը:

Այդպիսի վիճակ էր ստեղծվել Ֆաթիմյան էլ Մուսթանսիր խալիֆի (1036—1094) գահակալության տարիներին: Թուրքերից, նուբիացիներից և նեգրերից հավաքագրված վարձկան զորքերի էմիրները իրենց հակապետական գործողություններով խանգարելով երկրի նորմալ կյանքը, սով և ավերածություն էին առաջ բերել Եգիպտոսում:

Իսլամի հմտուտ պատմաբան Ավգուստ Մյուլլերը իր «Իսլամի պատմություն» քառահատոր գրքում այդ ժամանակաշրջանի մասին գրում է.

«Եսալիֆի գլխում խելացի միտք ծագեց, և նա 466 (1073—4) թվականին Աքքայից օգնության կանչեց հայ Բադր էլ Ջամալին՝ թուրքերի և նեգրերի դեմ: Բադրը՝ այդ բերդը Ֆաթիմյանների համար պահպանում էր մի քանի փնդով, որոնք կազմված էին բացառապես նրա հայրենակից հայերից: Թեև Բադրն արդեն 60 տարեկան էր, բայց այդ եռսնդուն մարդն ամենևին չհրապուրվեց որևէ դատարկ բանով: Այդ փոշին թվականին նա իրեն ենթակա սպաներին հանձնարարեց մեկ-մեկ մտերմանալ Կահիրեի ամենաանհնազանդ էմիրների հետ և աշխատել մեկ անգամից կոտորել այդ բոլոր խռովարարներին: Վերջ տալով նրանց, Բադր էլ Ջամալին ընդունեց Միրզուլի (ավելի ճիշտ՝ էլ Ջուլուլի), այսինքն՝ սպարապետի տիտղոսը և սկսեց երկիրը կառավարել համարյա ինքնուրույն կերպով... Նրան հաջողվեց, վախճանվելով Մուսթանսիրից (487—1094) շատ առաջ<sup>1</sup>, խաղաղեցված և նորից ծաղկել սկսող Եգիպտոսը հանձնել իր որդուն՝ Շահնշահին, որի իշխանությունը երկրի վրա դարձավ է՛լ ավելի անսահմանափակ, քան իր հանգուցյալ հոր իշխանությունը: Եվ զուր չէր, որ Շահնշահը Մուսթանսիրի միանգամայն աննշան որդու՝ Մուսթալիի օրոք՝ 487—495 (1094—1101) ընդունեց էլ-Մելիք էլ Աֆդալ՝ «Ամենակատարյալ թագավոր» տիտղոսը: Նա հենց այդպիսին էլ էր երկիրը կառավարելիս»<sup>2</sup>:

Նույն այդ Բադր էլ Ջամալիի մասին պատմաբան Ֆիլիպ Հիթթին, իր «History of the Arabs» աշխատության մեջ գրում է.

<sup>1</sup> Այժմ պարզված է, որ Բադրը և էլ-Մուսթանսիրը վախճանվել են միևնույն թվականին (1094 թ.):

<sup>2</sup> Ա. Մյուլլեր, Իսլամի պատմություն, հատ. 3, էջ 345:



«1073 թվականին տատանվող խալիֆը (խոսքը վերաբերում է խայտարեղես զորքի ձեռքին շատ նեղություններ քաշող էլ-Մուսթանսիրին—Ն. Բ.), հետ կանչեց հայ Բադր էլ Ջամալին... որը Աքքայի զինվորական նահանգապետն էր, և նշանակեց որպես վեզիր և գլխավոր հրամանատար: Նոր էմիր էլ-Ջուլուշը (այսինքն գլխավոր հրամանատարը—Ն. Բ.) սկսեց կառավարել այնպիսի եռանդով, որ քառսից դուրս բերեց ու կարգավորեց ապարատը և կյանքի նոր շունչ տվեց Ֆաթիմյան ռեժիմին: Բայց վերածնունդը կարճատև էր»<sup>1</sup>:

Եղիպտոսի հայ վեզիրների և մասնավորապես Բադր էլ-Ջամալիի գործունեության մասին ռուս նշանավոր եգիպտագետ ակադեմիկոս Բ. Ա. Տուրանը գրում է. «...սակայն Եգիպտոսն էլ էր գրավում հայերին, որոնք, ինչպես հայտնի է, XI դարի վերջերին այդտեղ հայկական հայտնի գաղութ էին կազմել, վայելելով էլ-Մուսթանսիր խալիֆի հայազգի վեզիր Բադր ալ-Ջամալիի հովանավորությունը: Ալ Հաֆըզ Աբու Մամուն Աբդ-Ալ Մաշիդի ժամանակ նրանք ունեին նույնիսկ իրենց պատրիարքը, որն ազդեցություն ուներ արքունիքում: Այդ գաղութը խիստ տուժեց քրդական արշավանքների ժամանակ և այդ գաղութի կրած աղետներին ականատես է եղել հայտնի հայ Աբու Սալիհը, որը մեզ արաբերեն լեզվով թողել է XII դարի վերջի Եգիպտոսի ինչպես ղպտիական, այնպես էլ հայկական և ուղղափառ եկեղեցիների ու վանքերի արժեքավոր նկարագրությունը»<sup>2</sup>:

Ո՞վ էր այդ Բադրը և ինչպե՞ս էր նա ծառայության մտել Եգիպտոսի Ֆաթիմյանների մոտ:

Հայ ժողովուրդն իր բնօրրանում շատ օտար նվաճողներ է տեսել իր բազմադարյան գոյության ընթացքում, բայց նրանցից և ոչ մեկի տիրապետությունն այնպես կործանարար չի եղել նրա համար, ինչպես սելջուկյան թուրքերինը, որոնք հայ բնօրրանում իսպառ վերացրին հայկական հին նախարարությունը: Սելջուկների արշավանքների ժամանակ սկսվեց հայ ժողովրդի առաջին մեծ արտագաղթը դեպի մոտիկ ու հեռավոր երկրներ: XI դարի երկրորդ կեսում Հյուսիսային Հայաստանի հայությունը գնաց Վրաստան, ապա Սև ծովի ափերով անցավ Ղրիմ, Բեսարաբիա, Տրանսիլվանիա և Լեհաստան, որի դուքս Թեոդորը 1061 թվականին հրավեր և ապաստանի խոստում էր ուղարկել հայությունը: Հարավային Հա-

<sup>1</sup> P. Hitti, History of the Arabs, London, 1951, p. 622.

<sup>2</sup> «Հայ-հարեշահան առնություններ», էջ 4:

յաստանի հայութիւնն անցավ Սիրիա, Կապազովկիա, Կիլիկիա, Եգիպտոս: Ընդհանուր տարագրութեան այդ ժամանակաշրջանում տնից-տնից հեռացած, նստակցաց կյանքից կտրված հայ զանգվածները կամա-ակամա բոլորում էին նույնպես տարագիր հայ գորպայեաների շուրջը՝ շոշափելի գինձորական ուժ ստեղծելով նրանց ձեռքի տակ: Սրանով միայն պետք է բացատրել այն, առաջին հայացքից զարմանալի երևույթը, երբ բուն հայրենիքում չկարողանալով զգալի դիմադրութիւն ցույց տալ սելջուկներին, հայ նախարարները կարողանում են տարագրութեան դառն օրերին այնքան սովոր զտրախմբերի տեր դառնալ, որ իրենց հայկական փոքրիկ իշխանութիւններն են հաստատում Սիրիայի ու Արևմտյան Միջագետքի առանձին քաղաքներում (Սղեսիա, Անտիոք), անգամ կազմակերպում՝ Կապադովկիայից մինչև Սասուն տարածվող թեև կարճատև (1071—1090), բայց ընդարձակ թագավորութիւն՝ Մարաշ մայրաքաղաքով:

Հայաստանից դուրս քաղաքների ու երկրամասերի տեր դարձած հայ զտրապետները, հաճախ ելնելով ընդհանուր իրադրութեան պահանջից, մահմեդականութիւն էին ընդունում: Այդպես վարվեց, օրինակ, Փիլառտոսը, որն այդ նպատակով զնաց Բաղդադ, ապա՝ Խորասան: Սակայն կրոնափոխութիւնը չօգնեց նրան: Կենտրոնական իշխանութեան շնթարկվող թուրքական առանձին ցեղեր ու ցեղախմբեր ոտնատակ տվին նրա երկիրը և խորտակեցին նրա ստեղծած թագավորութիւնը: Սակայն Փիլառտոսի նման չվարվեց մի տարի կրոնափոխ հայ զորավար՝ Բադրը, որի շուրջը հավաքված էր կրոնափոխ շեղած շուրջ յոթ հազար հայ զորք: Բադրը բարվոք է համարում ծառայութեան մտնել Եգիպտոսի հարուստ Յաթիմյանների մոտ: 1064 թ. նա նշանակվում է Դամասկոսի կայազորի պետ: Այնուհետև Բադրին մենք տեսնում ենք Աքքայի ծովաբերդի և Եգիպտական ծովակալութեան պետի պաշտոնում, որտեղից նա 1073 թվականին արշավեց կամ հրավիրվեց Կահիրե:

Արաբ հին պատմագիրները «հրավերի», «օգնութեան կանչելու» բնույթ տալով հանդերձ Բադրի արշավանքին, միաժամանակ հաղորդում են, որ օրինակսն խալիֆը Բադրին կանչեց այն ժամանակ, երբ ասաստիկ սղութեան և յաճախադէպ խոտվութիւններու հետևանքով սով պատահեցավ Եգիպտոսի մեջ, երբոր կացութիւնը խանգարուեցաւ քաղաքներու մեջ, քործերը փոփոխութեան ենթարկուեցան, զօրագունքեր խոտվութիւն հանեցին, վեզիրները, որոնց հրամանն տւ արգելումը չէին գործադրուիր, պաշտոնի անունով միայն կը գոհանային, երբ բարօրութիւնն անյուսալի դարձաւ

և առաքինությունը անբաղձալի եղաւ, երբոր, կսեմ, լավաթիներ (ափրիկեցի ցեղ մը) տիրացան բարեբեր զիւղերուն և սևամորթներու ձևորն անցավ Վերին Եգիպտոսը, երբոր վերջապես ցամաքային ու ծովային նամակաները ժանր պահպանութիւններով միայն անցանելի դարձան... այն ատեն Մուսթանսիր խալիֆը նամակով կանչեց զայն (Բադր էլ Զամալին) որպեսզի իր պետութիւնը կարգի դնելու պաշտօնը ստանձնէ: Այս վերջինը (Բադրը) պայման դրաւ որ իր ընտրած զինուորները հետը բերէ և Եգիպտոսի զօրքերէն մեկը չծղէ: Մուսթանսիր ընդունեց այս պայմանը<sup>1</sup>:

Մաքրիզիի այս խիստ ուշագրավ հաղորդումը կրկնում է նաև Բին Խալիբանը, արաբական աշխարհի Պլուտարքոսը: Նրա «Վեֆայաթ Ասեան» (Անհետացած երևելիներ) նշանավոր գրքում նույնպես կարդում ենք:

«Երբոր Մուսթանսիրի իշխանութիւնը տկարացավ և իր տէրութիւնը անկարգութեան մատնուեցաւ... լսեց յիշեալ Բադր էլ Զամալիի մասին և զայն կանչել տուաւ»<sup>2</sup>:

Սակայն այս նույն Բին Խալիբանը Հաֆիզ խալիֆի կենսագրութեան մեջ հայտնելով, որ Հաֆիզ Խալիֆը, էլ Մուսթանսիրի թոռը, ծնվել է Ասկալոնի մեջ 1074 թվականին, անմիջապես ավելցացնում է. «Ասկալոնի մեջ ծնած ըլլալուն պատճառը այն է, որ երբ իր Պապուն՝ Մուսթանսիրի օրով նեղութիւն և արտակարգ սղութիւն պատահեցավ Եգիպտոսի մեջ, հայրը Ասկալոն գացած էր»<sup>3</sup>: Եթե ասեմք, որ Ասկալոնը գտնվում էր Միջերկրականի արևելյան ափին, Բադրի հայկական զորքի դասավորութեան շրջանում, ապա պարզ կդառնա, որ վարձկան զորքերի անկարգությունների և աֆրիկյան առանձին ցեղերի ապստամբությունների այդ շրջանում (1072—1074) խալիֆը բարվոք էր համարել իր մեծ ընտանիքով ապավինելու Բադրի հայկական զորքի պաշտպանությունը վայելող հանգիստ Ասկալոն:

Նման դրութեան պայմաններում, երբ երկրի մայրաքաղաքը գտնվում էր մարդասպան Բալդաբուշի ձեռքը և խալիֆն աստանդական կյանք էր վարում, իսկ բովանդակ Եգիպտոսը, հարուստ ու հացառատ Եգիպտոսը սովի էր մասնվել, Բադրը ժամանակը պատեհ է համարում իր հայկական զորքով Կահիրեի վրա արշավելու

<sup>1</sup> Մաքրիզի, Գ. Մսրլյանի «Ականաւոր հայեր Եգիպտոսին մեջ» խաղաքաղ թարգմանությունը, էջ 23—24, Գահիրէ, 1947:

<sup>2</sup> Բին Խալիբան «Վեֆայաթ Ասեան», Գահիրե, 1935, էջ 118:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 165:

համար: Նա անմիջապես, հակառակ բոլոր նախազգուշացումնե-  
րին, թե եղանակը ձմեռային է ու վատ, նավ է նստում և քառասուն  
օր հաջող նավարկելուց հետո իր հարյուր առաքաստանավերով  
1074 թվականին հասնում է Կահիրե: Իր հավատարիմ սպաների  
միջոցով նա մեկ օրվա ընթացքում սպանում է վարձկան խայտա-  
բղետ զորքերի բոլոր էմիրներին: և ապա անխնա ոչնչացնում է  
նրանց զորքը: Մայրաքաղաքը, որն արդեն մինչ այդ ավերակ էր  
դարձել, խաղաղեցնելուց հետո նա անցնում է գավառները, որտեղ  
դաժան միջոցներով, մասսայական սպանություններով բնաջինջ է  
աճում բոլոր կենտրոնախույս տարրերին: Կահիրե վերադարձած  
խալիֆը իր զորավարի վճռական գործողություններից գոհ, ամ-  
բողջ իշխանությունը հանձնում է Բադրին, նրան կարգելով վեզիր,  
գերագույն հրամանատար և գերագույն դատավոր:

Կոտորելով անհնազանդներին և բռնագրավելով նրանց ունեց-  
վածքը, Բադրը այդ նույն ժամանակ ամբողջ գյուղացիությանը  
երեք տարով ազատում է ամեն տեսակի հարկերից և մեծ օգնու-  
թյուն ցույց տալիս երկիրը, մանավանդ ավերված Կահիրեն, վե-  
րաշինողներին: Կահիրեի վերաշինման գործում նա մեծ եռանդ է  
ցուցաբերում՝ Եգիպտոսից բերել տալով հայ վարպետներ և պա-  
րիսպների ամբողջ շինարարությունը հանձնելով հայ ճարտարա-  
պետ Հովհան Կրոնավորին: Երկրի շինարարական աշխատանքում  
Բադրը մեծ առանձնաշնորհումներ է տալիս հայերին, որոնք հա-  
յուկության ընդհանուր արտագաղթի այդ շրջանում, Բադրից դեռ առաջ  
հասել էին նաև Եգիպտոս: Նրա վեղիրության օրոք ևս շարունակ-  
վում է առանձին հայ ընտանիքների գաղթը դեպի Եգիպտոս: Սա-  
կայն Բադրը ցանկանում էր կազմակերպված բնույթ տալ այդ  
երևույթին: Նա ուզում էր, որ Արարատյան դաշտից արդեն Տավ-  
րոսյան լեռները տեղափոխված հայոց կաթողիկոսությունը հաս-  
տատվեր Եգիպտոսում, որպեսզի հայությունը Եգիպտոսի դռները  
լայնորեն բացված տեսներ իր առաջ: Այդ ժամանակ Կապադով-  
կիա ապաստանած Բագրատունիները և Արծրունիները, փոխա-  
դարձ համաձայնությամբ, հարմար էին գտել կաթողիկոսությունը  
հանձնելու երրորդ մեծ նախարարական տանը՝ Պահլավունիներին:  
1069 թվականին Գրիգոր (Վահրամ) Պահլավունին, որ հարց պատ-  
մության մեջ մտել է Վկայասեր անունով, գրավում է կաթողիկո-  
սական աթոռը, որը գեռ հաստատուն նստավայր շուններ: Գրիգոր  
Վկայասերը, աշխարհիկ ու քաղաքագետ մարդ էր և իր հոր Գրի-  
գոր Մագիստրոսի օգնականն էր եղել ռազմական ու քաղաքական

գործերում: Ամենայն Հայոց կաթողիկոս դառնալով նա սկսում է մտածել տեղահան արված ժողովրդի մասին: Գեորգ Լոռեցուն տրսպետ կաթողիկոս իրեն տեղապահ նշանակելով, նա գնում է նոր գաղթավայրերում այցելելու իր հոտին: Կաթողիկոսը Տավրոսյան լեռներին անցնում է Անի, Պետրոս եպիսկոպոսին (Իսլանդացի) ուղարկում է Ղրիմ, Լեհաստան, Տրանսիլվանիա, իսկ ինքն անցնում է Պոլիս, Հռոմ և ապա Եգիպտոս, որտեղ արդեն 30 հազար հայություն կար: Կահիրեում Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն արժանանում է փառահեղ ընդունելության: Էլ Մուսթանսիր խալիֆը սնձամբ գնում է նավամատույց և ջերմ ընդունելություն կազմակերպում ի պատիվ Գրիգոր Վկայասերի: Խալիֆը մի քանի տարի իր մոտ հյուր է պահում կաթողիկոսին և «յոզնակի խոսակցություն» աշխատում է համոզել, որ նա առհասարակ մնա Կահիրե, իր աթոռը փոխադրի ու հաստատի իր երկրում: Գրիգոր Վկայասերը մերժում է խալիֆի խնդրերը՝ պատճառաբանելով, որ չի կարող իր հոտն անտեր թողնել և մնալ հեռավոր Կահիրեում, որտեղ ինքը հոտ չունի: «Մե էր և այլ պատճառս բանի յաղագս տչ լինելոյ անդ յազգէն Հայոց՝ ունայն ղհովուելն իւր»<sup>1</sup>: Խալիֆը հար և նման լեհական Թեոդոր դքսին, խոստանում է իր երկրի դռները լայնորևն բաց անել հայության առաջ և երկիրը լցնել հայերով, միայն թե ամենայն հայոց կաթողիկոսը մնար իր երկրում (ճիսկ նա բառնայր զպատճառանս և երդմամբ հաստատեր լնուլ զաշխարհն Հայաստանեայց ազգոք, զոր և արար իսկ, և բազմացոյց անդ բազմութիւն յոյժ»<sup>2</sup>:

Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը, հայության համար այդ դառն օրերին, երբ հայ ժողովրդի սովոր դանգվածներ բնօրրանից տեղահան նոր հայրենիք էին որոնում, նպատակահարմար չի գտնում բուրորովին մերժել ֆաթիմյան խալիֆին, և իր քրոջ որդուն, որ շրջագայում էր կաթողիկոսի հետ, եպիսկոպոս է ձեռնադրում ու եգիպտահայության կաթողիկոս կարգում 1084 թվականին: Գրիգոր Վկայասերի հիմնած եգիպտահայության կաթողիկոսությունը, հետագայում պատրիարքություն անունով գոյություն ունեցավ 88 տարի:

Ժամանակակից հայ պատմագիր Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը մի առ ժամանակ իր հայրապետության աթոռը հաստատել է Կահիրեում և «կանգ-

<sup>1</sup> Ա լ ի շ ա ն, Հայապատում, էջ 351:

<sup>2</sup> նույն տեղում:

նեալ անդէն նորոգեաց զամենայն կարգ սուրբ եկեղեցւոյ: Բայց ավելի լավ է բերենք ամբողջ հատվածը.

«Եւ էր թուականութեան Հայոց ՇԻԳ (1074), և ապա զկնի այսորիկ զնաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպոլիս և անդուտ ի Հոռոմ, և եկեալ յԵփեսոս՝ շրշեցաւ ընդ անապատսն ամենայն առաջին սրբոց հարցն և կատարեաց զամենայն փափագումն սրբոսին իւրոյ. եւ հաստատեաց անդէն իւր զաթոռ հայրապետութեան, և կանգնեալ անդէն նորոգեաց զամենայն կարգ սուրբ եկեղեցւոյ. և բազում փառք և մեծութիւն ընկալաւ Տէր Գրիգորիս ի թագաւորէն Եգիպտոսի առավել քան ի թագաւորէն Հոռոմոց: Եւ բազում զօրք ժողովեցան յԵփեսոս իբրև երեսուն հազար և Տեր Գրիգորիս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կաթողիկոս զՏէր Գրիգոր՝ զքուրորդին իւր՝ և ինքն ելեալ զայր յաշխարհն Հայոց, վասնզի դեռևս կենդանի էր կայր մայրն նորա»: («Ժամանակագրութիւն», էջ 211):

Եգիպտոսից Կիլիկիայի սահմանամերձ Տավրոսյան լեռները վերադառնալով Գրիգոր Վկայասերը գնում է Հոռոմկա ամրոցը և այնտեղ հաստատում իր կաթողիկոսարանը, ապա հավաքում է իր տոհմի աշխարհիկ անդամներին,—որոնք Անտիոքում պարտություն կրելուց հետո նորից քաշվել ու կենտրոնացել էին Սասունում, իր քրոջ մյուս որդուն, որի աշխարհիկ աֆունը մեզ անհայտ է մնացել, «վերաձայնում է» Վահրամ և շուրջ քսան հազար զորքով ու հետևորդներով ուղարկում է Եգիպտոս: Վահրամ Պահլավունին Եգիպտոս է հասել, հավանաբար, 1090-ական թվականներին և անմիջապես կարգվել է Գուսի նահանգապետ Հարավային Եգիպտոսում:

1094 թվականին Բագրին վեզիրի պոստում հաջորդում է նրա որդին՝ Շահնշահը, որն է՛լ ավելի միահեծան է դարձնում իր տիրապետութունը: Շուտով նա խալիֆայական գահ է բարձրացնում հնգամյա թագաժառանգին և երկրի ամբողջ իշխանութունը վերցնում է իր ձեռքը:

Ահա թե հոր և որդու մասին ինչ է գրում արաբ պատմագիր Մաքրիզին:

«Բագր էլ Զամալին մեռաւ հիճ. 487 (1094) թվականին... թագատրներու իշխանութիւնը ունեցաւ ան Եգիպտոսի մեջ, այնպէս, որ անոր առջև Մուսթանսիր (խալիֆան) հեղինակութիւն չոճներ: Ան ինքնիշխան վարեց գործերը և ամենալավ կերպով կանոնաւորեց: Խիստ պատկառազրու, մեծապես յարգուած և ահարկու՝ ան Եգիպտոսէն այնքան մարդ սպանեց, որոնց համրանքը Արարիչը միայն կըրնայ կատարիլ... Այսուհանդերձ, շէնցուց և բարեկար-

զեց Լրկիրը, որ արուած և քանդուած էր տեղացի շարագործնե-  
լուն աւերումին երեսէն: Մեռած օրը մոտաւորապէս 80 տարե-  
կան էր:

Ունեցած է երախտիքներ: Այսպէս, երեք տարի հողը շնորհ  
ըրաւ. Լրկրագործներուն, որով հողագործները վիճակի բարւոքում  
ունեցան անոր օրով և հարստացան: Նոյնպէս իր մեծ արդարասի-  
րութեան հետեանքով Մըսր վերադարձան վաճառականներ, որոնք  
հեռացած էին սովի օրերուն: Մեծապես առատածեռն էր: Ան Եգիպ-  
տոս մնաց 21 տարի: Սուրի վեզիրներէն խնք առաջինն է, որ ար-  
գելքի տակ առաւ խալիֆաները Եգիպտոսի մեջ: Գահիրեի մեջ ցարդ  
Այդպիսի գծերով են օժտված Իրանի տիրող դասակարգերի ներկայացուցիչները՝ Դավամ-օլ-Վազարեն, Մազլաղանին, գեներալ Ալլահվերդին, Միխայանը, ինքը Հաջի աղան և տրիշներ: Սակայն այդ թալանչիներից ամենամեծը՝ Ռեզա շահն էր. նույնիսկ Միխայանը, բնութագրելով Ռեզա շահին, հեզնանքով ընդգծում է. «այդ մեծ առաջնորդը յուրացրեց երկրի ամբողջ ունեցվածքը, գողացավ արքայական թանկարժեք իրերը և իր հետ տարավ հնություններ... Չգտնվեց մեկը, որ հարցներ՝ է՛յ, ողորմելի, այդ ո՛ւր ես տանում ժողովրդի փողը»<sup>1</sup>: Պատմական իրադրության նոր պայ-

<sup>1</sup> ص. هدايت، جامع، آقا، ۱۹۵۶ ص ۶۰—۵۹

մաններում Հաջի աղան դարձել էր «դեմոկրատիայի ամենամուլի հետևորդներից մեկը»: Պատահական չէ, որ Հաջին Մոնադի-օլ-Հաղղի հետ ունեցած զրույցի ժամանակ, ընդգծում է՝ «Հիմա դեմոկրատիան մոդա է»: «Եթե ինքը Ռեզա շահն էլ այստեղ լիներ, դեմոկրատիայի շատ խորամանկ կողմնակիցներից մեկը կլիներ»<sup>1</sup> — ասում է Հաջի աղան:

Հեղաշաթը զարմանալի վարպետությամբ Հաջու կերպարի մեջ միահյուսում է տիպիկականն ու անհատականը. նա դոզ ու ավազակ է. խիղճը քամուն տված մարդու պես կողոպտում ու թալանում է բոլորին, հատկապես աշխատավոր ժողովրդին: Նա անասելի ժլատ է՝ սալորի կամ մի կտոր շաքարի համար կռիվներ է սարքում, կանանց, երեխաներին ծեծում ու պահում է կիսաքաղց վիճակում. Հաջին և շահամոլ է՝ իր անձնական շահի համար պատրաստ է նույնիսկ ուրիշի դիակի վրայով անցնել. նա տգետ է ու սահմանափակ՝ նրա համար արվեստը, դրականությունը, գիտությունը, կրթությունը՝ այդ բոլորը լոկ ֆիկցիա է: Ամենակարևորը կյանքում թվերն ու փաստերն են, և հենց այդ ոգով էլ նա դաստիարակում է իր փոքր որդուն՝ Քեյումարսին, «Աշխարհում, — ասում է նա, — գոյություն ունի մարդկանց երկու դասակարգ՝ կողոպտող ու կողոպտվող: Եթե դու չես ուզում կողոպտվել, աշխատիր կողոպտել ուրիշներին: Մեծ գրագիտություն հարկավոր չէ... Աշխատիր աներես լինել... Բաժինդ վերցրու, հայհոյանքից, արհամարհանքից ու հավատարացությունից մի վախենա... Եթե քեզ մի դռնից վռնդեն, ժպտերես մտիր մյուսից: Հասկացա՞ր՝ աներես, սրիկա և անգրագետ...»<sup>2</sup>:

Բերված հատվածը ցայտուն կերպով բնորոշում է Հաջու ցինիկ ու եսամոլական հոգեբանությունը, բայց դա միաժամանակ բնութագրում է և այն հասարակական միջավայրը, որտեղ սաղմնավորվել ու կերտվել է այդ հոգեբանությունը:

Այս բոլորով հանդերձ, վիպակում կա և մի դրական կերպար, որի բերանով Հեղաշաթը պախարակում ու ծաղրում է Հաջի աղային ու նրա շրջապատը. գա Մոնադի-օլ-Հաղղի լուսավոր կերպարն է, որը հանդես է գալիս որպես արդարության ու ճշմարտության մոնետիկ (Մոնադի-օլ-Հաղղ բառացի նշանակում է ճշմարտության մունետիկ): Նրա մոտ բացակայում է սոցիալական փորձոն ծրագիր, բայց այնտեղ, որտեղ նա հարվածում ու ժխտում

1. ص. هدايت، حاجي آقا، ۱۹۵۶، ص ۶۰

2. նույն տեղում, էջ 27.

է, այնտեղ նա ուժեղ է ու անպարտելի: Սակայն հենց որ խոսքը վերաբերում է գործոն իդեալին, նա թույլ է ու անուժ: Մոնադի-օլ-Հազզի բերանով Հեղայաթը դիմակազերծ է անում Հաջուն, իսկ դրա հետ միասին համարձակ կերպով պատում է և դժխեմ իրականութեան քողը. «Ձեզ համար,— ասում է նա Հաջուն,— միայն գողերը, որչեր պահողները, կողոպտիչներն ու ավազակներն են խելացի...»<sup>1</sup>:

Ահա այն ամենը, ինչ Հազզը՝ շարտում է Հաջու երեսին, սակայն առանց մի որևէ դրական ծրագիր հակադրելու նրա ռեակցիոն տեսակետներին:

Անվիճելի փաստ է, որ Հեղայաթը, ընդհանուր առմամբ, ռեալիզմի խորութեան, ստեղծագործութեան թափի տեսակետից զիջում է XIX դարի եվրոպական կլասիկ ռեալիզմի կորիֆեյներին, սակայն խոսքն այստեղ վերաբերում է իրականութեան վերարտադրման ռեալիստական մեթոդին: «Հաջի-աղան», այդ իմաստով, Հեղայաթի գործերից լավագույնն է, որ կարող է պատվավոր տեղ գրավել ռեալիստական դրականութեան մեջ. ամբողջ վիպակը XX դարի 30—40 թթ. Իրանի ֆեոդալա-բուրժուական իրականությունը տիպականացնում է կոնկրետ կերպարների մեջ և սկզբից մինչև վերջ կրում է մերկացուցիչ բնույթ: «Հաջի-աղան», Գորկու խոսքերով ասած, արտացոլում է «դարաշրջանի հուզումները»<sup>2</sup>:

\* \* \*

Ժամանակակից Իրանի դեռ ոչ մի գրող այնպես մանրազնին կերպով չի ուսումնասիրել պարսից կնոջ ծանր ու իրավազուրկ վիճակը, այնպես տուր կերպով չի գրել կնոջ ազատագրման հարցը, ինչպես այդ արել է Հեղայաթը. ընդ որում, այստեղ ևս նա հարազատ է մնում ռեալիզմի սկզբունքներին: Հեղայաթի կանացի կերպարները տիպականացնում են Իրանի շարատանջ կնոջ ողբերգական վիճակը: Կինը, գոյություն ունեցող կրոնական նախապաշարմունքների, հետամնաց ու բարբարոս սովորությունների շնորհիվ, Իրանում զուրկ է ամենատարրական իրավունքներից, ազատությունը նրա համար դարձել է մի անհաս իդեալ: Կինը ինքնակամ կերպով չի կարող տնօրինել իր բախտը կյանքում. հաճախ մանուկ հասակից նրան ամուսնացնում են ծեր տղամարդու հետ և դատապարտում դժբախտության<sup>3</sup>: Կինը տղամարդու համար հան-

<sup>1</sup> Նույն տեղում ۸۳ ص

<sup>2</sup> М. Г о р ь к и й, Собр. соч. в тридцати томах, том 30, стр. 145.

<sup>3</sup> Տես «Միրզա Յուղուլայի սրտի վիշտը»:



դիսանում է հաճույքի առարկա, նրա վիճակը ամբողջապես կախ-  
ված է տղամարդու քմահաճույքներից: Իրանցի կնոջ համար շկա  
մի ավելի ստորացուցիչ սովորությունն, քան «սիդեխ»<sup>1</sup> սովորությու-  
նը, որը նրան պաշտոնապես դարձնում է պոռնիկ: Այս տեսակե-  
տից հատկապես ուշագրավ է Ալյավե խանումի կերպարը (համա-  
նունն վիպակից—1933):

Իրանի դաժան իրականությունը և բազմակնությունը օրինա-  
կանացրած շարիաթի օրենքը քայքայիչ ազդեցություն է թողնում  
կնոջ վրա, նրան, նույնիսկ, դարձնում տճրագործ: Ազիզ աղան  
(«Թողության հայց»,—«Բալարե ամորզեշ»—1932) դրված է այն-  
պիսի պայմանների մեջ, որ նա դառնում է ոճրագործ, սպանում է  
իր ախոյանի՝ ամուսնու սիդեխի, երկու երեխաներին, ապա թունա-  
վորում է և նրանց մորը: Նրա ուղեկիցը՝ Գուլին խանումը, հոր ժա-  
ռանգությունը միանձնաբար տիրանալու համար, Քերեկլայի ճա-  
նապարհին սպանում է քրոջը:

Հեղայաթը, ստեղծելով կնոջ ստրկացած դրության վառ, ռեա-  
լիստական պատկերներ, իր քննադատության սուր սլաքներն ուղ-  
ղում է այն այլանդակ իրականության դեմ, որտեղ սովի, մահվան  
ուրվականը, շոքած դուռն շեմքին, սպառնում է կնոջ ու նրա երե-  
խաների գոյությունը. կինը հարկադրված է հանդուրժել ամուսնու  
բիրտ վերաբերմունքը, տանել ամեն տիպի վիրավորանք, ծեծ և  
ստորություն, բայց մեծակ չդեգերել կյանքի մահաբեր հորձանու-  
տի մեջ: Զարին Քուլահը («Իր մարդուն կորցրած կինը»—«Զանի քե  
մարդաշրոս գոմ քարդ»—1933) առույգ և ուրախ էր, սիրում էր աշ-  
խատանքը, կյանքին նայում էր վարդագույն ակնոցներով: Ամուս-  
նությունից հետո նա «մոռանում է» անցյալը. դժնդակ իրականու-  
թյունը, ընտանեկան կյանքը նրա համար դառնում է վշտի ու տա-  
ռապանքի աղբյուր: Նրա նվիրական ու մաքուր զգացմունքները  
ոտնահարվում են ամենակոպիտ ձևով, բայց մեհնության ու սովի  
սարսափը ստիպում է նրան «հաշտվել» իր ստորացուցիչ վիճակի  
հետ և «լռելայն» տանել ամուսնու լուտանքներն ու մտրակի հար-  
վածները:

Բուրժուական հասարակության գայլային օրենքները կնոջ մեջ  
զարգացնում են և այնպիսի հատկություններ, որոնք նրան դարձ-  
նում են ստախոս, կեղծավոր, նույնիսկ գիշատիչ: Իր «Գիշանգըղ-  
ներ» («Մորդեխորհա»—1930) նովելում Հեղայաթը պատկերում է,  
թե ինչպես Մանիթե խանումն ու Նարգեսը, դեռ ամուսնուն շթա-

<sup>1</sup> Ժամանակավոր կին:

զած (որ իրականում չէր մեռել, միայն կաթված էր ստացել), թա-  
լանում են նրա ունեցվածքը: Իրենց նվիրվածությունն ամուսնուն՝  
Մեղեղուն, ցույց տալու համար նրանք սկսում են «դառնորեն» լաց  
լինել, բայց ըստ էության, նրանց ուրախությանը չափ չկար:

Ահա թե ինչ պայմանների մեջ է դրված կինը մարդու արժա-  
նապատվությունը ստորացնող շարիաթի և ֆեոդալ-բուրժուական  
իրականության կողմից: Բայց ո՞րն է ելքը. Հեղաշրջված հար-  
ցին ոչ մի կոնկրետ պատասխան չի տալիս:

\* \* \*

Հեղաշրջված տեսադաշտից չի վրիպել և հոգևորականությունը.  
նրա երկերում մենք գտնում ենք առանձին հատվածներ, երբեմն և  
սեղմ, հակիրճ մտքեր, որոնք բացահայտում են հոգևորականու-  
թյան ներկայացուցիչների ազահոությունն ու շահամոլությունը,  
ստորաքարշությունն ու կեղծավորությունը, տգիտությունը և բա-  
րոյական անկումը: Մուլլան Մաշադի Ռամազանից հազար թու-  
ման է վերցնում, որպեսզի սրբագործի նրա ոճրագործության ճա-  
նապարհով ձեռք բերած փողերը («Թոգության հայց»): «Իր կիր-  
քը սպանող մարդը» («Մարդի քե նաֆսաշրա քոշթ»—1932) նո-  
վելում նա ստեղծում է Շեյխ Աբու Ֆադլի կերպարը, որը հանդի-  
սանում է արատավոր հոգևորականության տիպայնացումը: Նրա  
առաքինությունը կեղծ է. նա էությունը տմարդ, բարոյապես  
փշացած և հոգեպես բոբիկ է: Մուլլերի Տարտյուֆի պես, միամիտ  
մարդկանց խաբելու համար, նա իրեն «սուրբ» է ձևացնում, նույնիսկ  
ճգնավորի պես սնվում է միայն սոխ ու հացով, բայց թաքուն ու-  
տում է տապակած կաթավներ, ամենաստոր ձեռվ յուրացնում է  
ուրիշների փողերը, ապրում է ճոխության ու փարթամության մեջ:

«Դաշ Աբուլ» նովելում մենք գտնում ենք միայն մի տող, որ  
բովանդակում է հոգևորականության հասցեին ուղղված սպանիչ  
երգիծանք. «ես մեռել ուտող չեմ, զնա մեռել ուտողներին (հոգևո-  
րականներին—Ա. Բ.) ասա»<sup>1</sup> ասում է Դաշ Աբուլը Հաշի Սամադի  
մահվան մասին իրեն լուր հաղորդողին:

Այն ամենը, ինչ մաքուր է, արդարացի ու բարոյապես բարձր,  
հանդիսանում է պորտաբույծ հոգևորականության ատելության  
առարկա. սոսկ այդ պատճառով Դաշ Աբուլը դառնում է հոգևորա-  
կանների ստոր ինտրիգների զոհը:

Իր, «էսֆահան՝ աշխարհի կեսը», ճամփորդական նոթերում Հե-

<sup>1</sup> ص. هدايت، سه قطره خون، ۱۹۵۴ ص ۴۸

դայաթը զայրույթով ընդգծում է, որ հոգևորականությունը երիտասարդության վրա թողնում է կործանարար ազդեցություն. նա քարոզում է խավարամոլություն և ամեն կերպ աշխատում է ժողովրդի գիտակցության մեջ արմատավորել դատապարտվածության տրամադրություններ<sup>1</sup>:

Հոգևորականությունը միշտ էլ եղել է տիրող դասակարգի հլու սպասավորը, կույր հավատարմությամբ ծառայել է նրան և ամենայն հաճոյականությամբ կատարել հարստահարողների թելադրանքները: «Հաջի-աղա» վիպակում Հեղայաթը ցույց է տալիս Իսլամի հավատի հենց այդպիսի ներկայացուցչի կերպարը, որի էությունը նրա, այսպես կոչված, սուրբ կոչման հետ ոչ մի առնչություն չունի. նա նույն ազահ, շահատենչ ու վաճառված փարիսեցին է, որպիսին հանդիսանում են հաջինները, միայն այն տարբերությամբ, որ ժողովրդին հեշտությամբ խաբելու համար նա կրում է կրոնի խորհրդանիշը՝ շավման:

Այսպես է պատկերում Հեղայաթը ուղղափառ Իսլամի առաջալնների բարոյական կերպարները, որոնք կոչված են մխիթարություն ու հոգու փրկություն քարոզելու:

Հեղայաթի քննադատական ունակումի դրական կողմը պետք է համարել այն, որ նա իրանական գրականության մեջ մտցրեց «զգաստ ճշմարտություն» ժողովրդի կացության մասին. նրա վիպակներն ու նովելները բացահայտում են մի ամբողջ ժողովրդի ողբերգական դրությունը:

Ժողովրդի ծոցից դուրս եկած նրա հերոսները ենթարկվում են բարբարոս շահաքործման, դեգերում են կեղտի, ծայրահեղ շքավորության, տգիտության և կույր նախապաշարմունքների ճիրաններում. իրենց գոյությունը փրկելու համար նրանք երբեմն հարկադրված են լինում դիմել ամենաստոր միջոցների, բայց դրանում ամենից առաջ մեղավոր են կյանքի նյութական պայմանները: Նույն այդ նյութական պայմանները Դաշ Աքուլին դուրս են շպրտում կյանքի հունից և դարձնում թափառաշրջիկ: Յադուլան, երեսուն տարեկան հասակում, իր երկու սիղեններին թողնում, ամուսնանում է 8—9 տարեկան երեխա-աղջկա հետ և իր այդ ստոր քայլը ցինիկաբար արդարացնում է նրանով, որ այդ տիպի անհավասար ամուսնությունը սովորական երևույթ է, որ քիչ չեն դեպքեր, երբ յոթանասուն տարեկան զառամյալ ծերունիները ամուսնանում են իննը տարեկան աղջիկների հետ («Միրզա Յադուլայի

<sup>1</sup> С. Хедаят, «Избранное», стр. 219.

սրտի վիշտը»—«Դարդե Դելե Միրզա Յաղուլա»—1931): Սակայն դատապարտման ենթակա են ֆեոդալա-բուրժուական աշխարհի գայլային օրենքներն ու բարոյական նորմաները:

Քննադատելով Իրանում գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների գեոհիկ տւ այլանդակ դրսևորումները, Հեղա-յաթը դրանց հակադրում է գեղեցիկի իդեալը, սակայն աթն նրա երկերում պարզորոշ կերպով արտահայտված չէ. դեռ ավելին, նա պարտաված է մշուշով ու կրում է խիստ վերացական բնույթ:

Դա բացատրվում է նրանով, որ Հեղայաթը ընտրել էր հասարակական հարաբերությունների վերակառուցման մանրբուրժուական, ուտոպիական ուղի, որը սահմանափակում էր նրա ստեղծա-փորձության ռեալիստական մեթոդը:

Հեգայաթն իր երկերից և ոչ մեկում, թերևս բացառությամբ «Կենդանի ջուր» («Աբե դենդե»—1944) հեքիաթի, չի ստեղծում լիարյուն դրական կերպարներ, որոնք հանդիսանային ոչ միայն նրա հասարակական իդեալների արտահայտիչները, այլև, հանուն ժողովրդի երջանկության ու բարօրության, ակտիվ պայքար մղեին փտած հասարակական հարաբերությունների դեմ:

Իր «Կենդանի ջուր» հեքիաթը Հեղայաթը գրել է ժողովրդական ստեղծագործությանը հատուկ այլաբանական ոճով: 1944 թ., երբ սովետական քաջարի բանակները ջախջախիչ հարվածներ էին հասցնում ֆաշիստական հորդաններին, Հեղայաթի սրտում բացվում է հուսո շող, և նա սկսում է հավատալ ժողովրդի հաղթական ու-ժին. նրա աշխարհայացքի մեջ կատարվում է բեկում, որով և պայմանավորվում է «Կենդանի ջուր» հեքիաթի լավատեսական բնույթը:

Օգտագործելով հակադրության եղանակը, Հեգայաթն այստեղ կերտում է երեք եղբայրների կերպարները. ամենափոքրը՝ Ահմադաբը, որն ընկնում է Համիշեբահարի (Հավերժական գարնան) երկիրը, իր մեջ խտացնում է աշխատավոր ժողովրդի լավագույն հատկությունները՝ առաքինությունը, մարդասիրությունն ու սերը դեպի աշխատանքը: Այս երկիրը հենց այն «եղեմն» է, որի մասին երազում էր Հեղայաթը:

Մյուս եղբայրը՝ Քաշալ Հուսեյնին դառնում է Մահթաբանի (Լուսնի լուսո երկրի) թագավորը, իսկ ամենամեծ եղբայրը՝ Սապատավոր Հասանին՝ Ջարաֆշանի (Ոսկու երկրի) տերն ու տիրա-կալը: Վերջին երկուսը, ի հակադրություն Ահմադաբին, իրենց մեջ մարմնավորում են չարիքը, բարբարոսությունը, մարդատյացու-թյունն ու պորտաբուծությունը. սրանք «ճարպակալեցին» և կորց-

րին իրականության զգացմունքը: Քաջալ Հուանյնին իրեն հայտարարեց «սաստծո ստվեր», ավելի ճիշտը, «Աստված» երկրի վրա. նա ահաբեկեց բոլորին. «Բանաստեղծներին, գիտնականներին ու խեղկատակներին սովորեցրեց քծնել իր առաջ...»<sup>1</sup>:

Այսպիսի վառ գույներով է պատկերում Հեղայթը Ռեզա շահին ու նրա դարաշրջանի ոգին, որոնց նա հակադրում է հումանիտար կառավարիչ Ահմադաբին և Հավերժական գարնան երկրի լուսավոր օրենքները:

Հեղայթը նովելի մեջ մտցնում է բողոքի, խռովարարության տարրեր: Մոնադի-օլ-Հադդիի՝ Հաշու երեսին շարտած ցասկոտ մեղադրանքները, ըստ էության, ուղղված են ֆեոդալա-բուրժուական հասարակության հիմքերի դեմ: Իրանի ժահրոտ իրակաճության քայքայիչ ազդեցությունը տաղանդավոր երաժիշտ Վասիլիի վրա, մտցնում է ըմբոստության տարրեր «Փայլ» նովելի մեջ. «Վաղը» և «Նեոի էջը» (ղազիյեյե խառե դաջալ—1943) պատմվածքների էջերը լի են ցասումնալից բողոքով օտարերկրյա իմպերիալիստների կամայականությունների, երկրում տիրող բռնակալ ռեժիմի և հայրենիքի դավաճանների դեմ: Պատահական չէ, որ «Կույր բու» վիպակի կենտրոնական հերոսի բերանով հեղինակը, քննադատելով Իրանի գորշ իրականությունը, ցանկություն է հայտնում, որ «երկրաշարժը, կամ փոթորիկը, կամ երկնային կայծակը պայթեցնի մարդկային տականքները...»<sup>2</sup>: Սակայն Հեղայթի հերոսների բողոքը իրականության դեմ արտահայտված է միակողմանիորեն՝ իրականության բացասումը դեռ չի նշանակում գործուն պայքար նրա դեմ. այս տեսակետից նրա ռեալիզմը չի կարող դիտվել որպես հետևողական և լիարյուն ռեալիզմ. Հեղայթի երկերի հերոսների խռովարարական բողոքն ավելի շուտ անհատական, մանրբուրժուական պասսիվ բողոքն է, որ նրանց հաճախ նետում է հուսահատության ու միստիկայի փակուղին:

Հեղայթը իր ստեղծագործության ճանապարհին ունեցել է ստեղծագործական սայթաքումներ, որոնք ծնունդ են տվել նրա մռայլ անկումային տրամադրություններին: Նա, հատկապես իր ստեղծագործության առաջին շրջանում, երբեմն «հրաժարվում էր» օբյեկտիվ իրականությունից, շեղվում էր կյանքի ռեալիստական վերարտադրման ուղիղ ճանապարհից: Հեղայթն իր ուշադրու-

<sup>1</sup> Չափերտների մեջ վերցրած արտահայտությունը բերված է բնագրից:

<sup>2</sup> ص. هدايت، بوف كور ۱۹۴۲ ص ۶۷

թյունը կենտրոնացնում էր հերոսների սուբյեկտիվ տվյալաճանճների պատկերման վրա: Դեռ ավելին, նա իր այդ երկերում հանդես է դալիս հակառեալիստական տենդենցներով:

Իր ամենախիմարեսիոնիստական «Կուլյր բու» (Բուկուս քուլյր—1937) վիպակի, ինչպես և մյուս նույնատիպ նովելների («Կենդանի թաղած»—«Ջենդե բե դուր»—1930, «Երեք կաթիլ արյուն»—«Սե դաթրե խուն»—1932, «Վերամիսյան գիշերներ», «Շարհայի Վերամիս»—1933, «Մանեքներ վարագույրի հետևում»—«Արուսաք փոշի փարդե»—1933 և այլն) հերոսները մաշվում են անպտուղ խորհրդածություններից, զուրկ են իրականության զգաստ ըմբռնումից, գանգատվում են հանգամանքների դաժան ճնշումից, ենթարկվում են «անհրաժեշտության» վերացական օրենքներին և շնչահեղձ են լինում կյանքի հախուռն պատահարների խորխորատների մեջ: Հերոսները շարունակ զբաղված են իրենց հոգեկան աշխարհի վերլուծությամբ, նրանց տանջահար հոգու գալարումների պատճառները անհասկանալի են. նրանք իրենց տանջող հարցերի պատասխանը կյանքում ոչ մի տեղ չեն գտնում:

«Կուլյր բու» վիպակի հերոսին ճնշում է մղձավանջը, նա փախչում է մարդկային հասարակությունից, վարում է մենակյացի կյանք: «Աղքատությամբ ու չքավորությամբ լի այս աշխարհում»<sup>1</sup> նա ոչ մի հուսո նշույլ չի տեսնում: Շրշապատը նրա համար դարձել է «կյանքի ու մտքերի գերեզման»<sup>2</sup>: «Աշխարհը... մի խումբ անամոթ, անզգամ ու ստոր շահամոլների աշխարհ է...»<sup>3</sup>: Միրհատը («Մանեքներ վարագույրի հետևում») կտրված է իրական կյանքից, ոչ ոքի, այդ թվում և իր նշանածին, տեսնել անգամ չի ուզում. նա հոգեկան անդորր է ապրում իր երևակայությամբ ստեղծած գեղեցկության երազական աշխարհում: Մանեքենն այդ աշխարհի սիմվոլն է:

Դեկադենտական տարրերի առկայությունը Հեդայաթի երկերում չի բացասվում, սակայն, նրա հումանիզմն ու հայրենասիրությունը. ընդհակառակը, նրա ամեն մի տողի արանքում, յուրաքանչյուր բառի մեջ զգացվում է ջերմ սիրող սիրտ: Նրա վիշտը, լացը, նրա հոգեկան գառնությունները արգասիք են այն դաժան

<sup>1</sup> بوف کور، س ۱۰

<sup>2</sup> ۹۹ —

<sup>3</sup> ۷۱ —

իրականության, որի մեջ հեղձամահ է լինում Իրանի աշխատավոր  
ժողովուրդը:

Հեղափոխության հեռու էր կանգնած հեղափոխական դիրքերից, չէր  
հասկանում հասարակական դարգացման օրենքները և բանվոր  
դասակարգի առաջավոր դերի նշանակությունը պատմության մեջ.  
Նրա ժառանգության արժեքը Իրանի նեխած իրականության քննա-  
դատության մեջ է:

А. А. БУДАГЯН

#### РЕАЛИЗМ С. ХЕДАЯТА

##### Резюме

Садек Хедаят — первый крупный реалист современной иранской литературы, который вступил на это поприще в эпоху господства Реза-шахской реакции. Он создал целый ряд реалистических новелл и повестей, открывших новую страницу в истории иранского реализма («Даш Аколь», «Алявий ханум», «Исповедь», «Хаджи-ага» и др.). Художественные образы Хедаята имеют большое познавательное значение.

Хедаят не ограничивается отражением только объективного хода событий и происшествий; он вносит в новеллу элементы протеста и бунтарства, но они лишены боевого задора и носят пассивный характер.

Наряду с реалистическими новеллами Хедаят, особенно в первый период своего творчества, создал несколько произведений, написанных под сильным впечатлением импрессионизма («Слепая Сова», «Заживо погребенный», «Три капли крови» и др.); однако и в основе этих произведений лежит печальная иранская действительность, породившая «безвольных», вечно мечущихся и недовольных самими собой героев.

Хедаят отвергал существующую иранскую действительность, но он стоял на мелкобуржуазных позициях, не понимал закономерностей общественного развития и был далек от передовых революционных идей современности.

ՆՈՐ ՀՆՐՈՍԻ ԿԵՐՊԱՐԸ ԲՈՋՈՐԳ ԱԼԱՎԻԻ ՆՈՎԵԼՆԵՐՈՒՄ

Իրանական անվանի գրող Բոգորգ Ալավին անցել է գրական-գեղարվեստական զարգացման երկար ուղի, վերապրելով ստեղծագործական որոնումների մի բարդ ժամանակաշրջան: Եվրոպայի մի շարք գրողներ, այդ թվում և Ս. Ցվեյգը, մեծ տպավորություն են գործել երիտասարդ հեղինակի վրա: Նա մեծ հիացմունքով է խոսում Ս. Ցվեյգի մասին. անվանելով նրան «Գրական հանճար»<sup>1</sup> թարգմանում է նրա «Սպիտակ ծաղիկներ» պատմվածքը, որը 1933 թ. լույս է տեսնում («Աշխարհ») հանդեսում<sup>2</sup>: Բ. Ալավին միևնույն ժամանակ եղել է և ռուս մեծ գրող Դոստոևսկու ազդեցության տակ: Նրա պատմվածքների երկրորդ ժողովածուն՝ «Հուշագրեր բանտից» (1942 թ.) մեզ հիշեցնում է Դոստոևսկու «Записки из мертвого дома» մեմուար աշխատությունը<sup>3</sup>:

Բ. Ալավին կրել է նաև իր ազնիվ ընկեր, հռչակավոր գրող Սադեղ Հեդայաթի ստեղծագործության ազդեցությունը: Հայտնի է, որ 30-ական թվականներին Ս. Հեդայաթը գտնվում էր բուրժուական իդեալիզմի փրկիսոփայության ազդեցության տակ և նրա պատմվածքների զգալի մասը կրում էր հոռետեսության ու միստիցիզմի խորը կնիքը:

1935 թվականին Բեռլինում լույս տեսած Բ. Ալավիի առաջին ժողովածուի («Չամադան») պատմվածքները զուրկ են սոցիալական կյանքը արտահայտող կարևոր խնդիրներից: Այդ պատմվածք-

<sup>1</sup> Տե՛ս «Փայամե նոու ժուռնալ, 1948 թ., № 6—7, էջ 188:

<sup>2</sup> «دنيا» Ա. տարի 1933 թ., № 1: Թարգմանությունը ստորագրված է կեղծանվամբ՝ «Ճերեյուն նախողա»:

<sup>3</sup> Բացի այդ Բ. Ալավին, 1959 թ. փետր. 9-ի մեզ ուղղված իր նամակում խոստովանում է, որ արտասահմանյան գրողներից ամենաշատ իր վրա ազդեցություն է թողել Դոստոևսկին:



ների թեմաների հանգույցը հեղինակը մեծ մասամբ կառուցում է սիրո, կրթի, խանդի և մինչև ոճրագործությունների հասնող կոնֆլիկտների հիման վրա, որոնք այսպես թե այնպես, լուծվում են պատահական խիստ ողբերգական վախճանով: Այս ժողովածուի պատմվածքների հերոսները սովորաբար տառապում են հոգեկան հիվանդությամբ: Նրանք դիմում են արտասովոր արարքների, ստեղծելով իրենց համար ահավոր ապրումների մի աշխարհ: Այս հանգամանքն բացասաբար ազդելով պատմվածքների դեղարվեստա-գաղափարակաՆ կողմի վրա, տալիս է թեմատիկային միօրինակություն և սահմանափակում է հերոսների փորձողության լայն հնարավորությունները: Բայց և այնպես, պաթետիկ նկարագրությունների մեջ նկատվում են հեղինակի երբեմնի ռեալ որոնումները: 30-ական թվականներին դեռևս խորապես չգիտակցելով սոցիալական կյանքի հեռանկարները Բ. Ալավին այնուամենայնիվ զգում էր, որ Իրանի հասարակական կյանքի ընդերքում անդադար աճում են նոր անհաղթահարելի ուժեր: Ալավին որոշակիորեն լսում էր երկրի առաջադեմ ինտելիգենցիայի հասարակ մարդկանց զայրացկոտ բողոքի ձայնը, որոնք անկարող էին հաշտվել իրենց շրջապատում տիրող անիրավությունների հետ: Նրանք ագահաբար որոնում են ճշմարտությունը նախազգալով նրա հաղթանակը: Այդ հերոսները անընդունակ լինելով պայքարելու հասարակական կյանքի խոչընդոտների դեմ, այս կամ այն կերպ հակադրվում են դառն իրականության հետ և խիստ հիասթափված ընկնում՝ նոր կյանք որոնելու ոլորտը:

«Ձոհ՛՛»՝ պատմվածքի հերոս Խոսրոհ՝ արտակարգ զգայուն մի երիտասարդ, չհաշտվելով կյանքում տիրող անարդարությունների հետ, փնտրում է այն, ի՞նչը կարող է երջանիկ դարձնել նրան: Սակայն իր անվերջանալի խոհերի մեջ նա դեռ անկարող է գտնել երջանկության ուղին: Խոսրոհ մահամերձ հիվանդ է: Նա չի հավատում նաև իրեն նվիրված աղջկան—Ֆորուդի բուռն սիրո զգացմունքներին: Խորապես զգալով դառը իրականությունը, ապրելու ծարավը չհագեցած, Խոսրոհ իր տրտունջն է հայտնում ընկերոջը:

هیچ میفهمی که من چه میکشم هیچ میدانی که من چگونه میسوزم  
 من در بعبوحه جوانی باید بمیرم، برای چه فقط برای آنکه از دیگران  
 بهترم، فقط برای آنکه بیشتر چیزی میفهمم از آنچه دیگران لذت  
 میبرند من زجر میکشم»<sup>2</sup>

<sup>1</sup> بزرك علوی، قربانی، «چمدان» تهران ۱۹۴۲

<sup>2</sup> Բ. Ալավին, «Ձամադան», էջ 32:

«Բու հասկանում ես, թե ի՞նչ վիշտ եմ կրում ես: Գիտես, ինչպե՞ս եմ այրվում: Ինչո՞ւ պետք է ես երիտասարդ—ծաղիկ հասակում մեռնեմ: Միայն նրա համար, որ առավելություն ունեմ ուրիշների համեմատ: Միայն նրա համար, որ ես ավելին եմ հասկանում: Այն ինչ ուրիշներին հաճույք է պատճառում ինձ տանջում է...»:

Բ. Ալավիի ճշմարտությունը որոնող հերոսներից է նաև «Հազարիկի հարսը»<sup>1</sup> պատմվածքի երաժիշտը: Մանուկ հասակից նրան հրապուրել է սքանչելի մի մեղեդի: Երգը նրա մեջ արթնացրել է երաժշտության անմար կրակ: Նա դարձել է երաժիշտ: Սակայն ո՞ւր է այն երգը: Երաժիշտն ուզում է ստեղծագործել: Նա տենչում է մանկության նման անաղարտ, բյուրեղյա երաժշտություն հորինել: Բայց ավաղ, կյանքի պայմանները, նրան շրջապատող հղիացած մարդիկ պատնեշել են ստեղծագործելու նրա հնարավորությունները: Կարիքը ստիպում է երաժշտին զվարճացնելու մարդկանց կաֆեններում ու ռեստորաններում: Տասնհինգ տարի շարունակ նա թափառում է քաղաքից քաղաք, սակայն ամեն տեղ նույն կարիքը, նույն մարդիկ կարծես հետապնդում են նրան ծաղրի ենթարկելով նրա զբաղմունքը:

Երաժշտի դատավճիռների մեջ զգացվում է սոցիալական բողոքը:

مردم از کجا میدانند که چه توه ای با او بازی میکنی کی میدانند که چه عواملی، اورا اینطور کرده است<sup>2</sup>

«Մարդիկ ի՞նչ գիտեն, թե ինչպիսի ուժ է նրան շարժում: Ի՞նչպիսի գործոններ են նրան այդ վիճակին հասցրել»: Ժողովածուի մեջ ուշադրություն է գրավում սիմվոլիկ վերնագիր կրող «Արճիճն զինվորիկը»<sup>3</sup> պատմվածքի հերոսուհի Քոքարը:

Երիտասարդ այդ կնոջը, բանակ դնալու պատճառով թողել է ամուսինը: Քոքարն իր գոյությունը պաշտպանելու համար աղախնություն է անում հարուստ մի ընտանիքում և ապրում է այն օրվա հույսով, որ սիրելի ամուսինը վերադառնալով բանակից նորից կմիանա իրեն: Նա սրբություն է պահում իր մոտ արճիճն զինվորիկի մի արձան, որը հիշեցնում է նրան իր ամուսնուն և նրա մտալուստ վերադարձը: Սակայն բուրժուական բարոյալքվածությունը

1 Բ. Ալավի «Չամադան» էջ 37, عروس هزار داماد

2 նույն տեղում, էջ 41:

3 նույն տեղում, էջ 71, سرباز سربی

սր Քոջարին շեղում է կյանքի ուղիղ ճանապարհից: Նա սկսում է վարել անբարոյական կյանք.

يکزن تنها در يك تير بيس چه ميکنه، منکه کار بلد نبودم. برای اینکه جوون بودم هر جا که میخوامم کلفتی بکنم خانم راضی نمیشد اگر خونه خانم نداشت که از دست افاراحتی نداشتم، بالاخره یکی از این شو فرها منو آورد بتهران دیکه من از آنوقت توی این خط افتادم

«...Անտեր ու միախնակ կինը մի քաղաքում ի՞նչ կարող է անել: Ես էլ ուրիշ գործ անել չգիտեի: Ուր, որ ուզում էի աղախին աշխատել, երիտասարդ լինելու պատճառով տան տիկինը չէր համաձայնվում: Ո՞ր տանն էլ, որ տիկին չկար, աղան ինձ հանգիստ չէր տալիս: Մինչև որ մի շոֆեր... ինձ բերեց Թեհրան և ա՛յս օրվանից ես ընկա այս ճանապարհին...»:

Բ. Ալավիի հետագա տարիների ստեղծագործության մեջ երեւում են դալիս մի շարք այլ հերոսներ, որոնք մեծ առաջադիմական քայլ են կատարում խզելու իրենց հարաբերությունը հին կարգերի հետ: Նոր աշխարհայացքի հիման վրա, լիցքավորված պայքարի սևազուպ ուժով նրանք ձգտում են ստեղծել նոր կյանք՝ զերծ բոլոր տեսակի շահագործումից ու միջնադարյան փթած սովորություններից: Նրանք այլևս չեն հեծում հուսահատության ու հոգեկան ապրումներից բխող հառաչանքների ծանրության տակ, ինչպես խոսրոն, երաժիշտը, Ֆորուղը և այլն:

«Հուշագրեր բանտից»<sup>1</sup> խորագիրը կրող պատմվածքների ժողովածուի մեջ Բ. Ալավին նկարագրում է կյանքի ավելի այլաճակ ու դաժան կողմերը: Իր բովանդակությամբ «Հուշագրեր բանտից» երկը հագեցված է բողոքի ցասկոտ կրակով ուղղված բոլոր տեսակի բռնության դեմ, և մյուս կողմից հասարակ ժողովրդի նկատմամբ սիրո զգացմունքներով: Գեղարվեստական այս երկը հանդիսացավ տիրող կարգերի անիրավությունները մերկացնող մեղադրագիրը: «Անհրաժեշտ է, տրպեսզի ապագա սերունդը տեղյակ լինի իր անցյալի մասին,—գրում է Բ. Ալավին,—իր գրքի առաջաբանում,—գիտենա թե ի՞նչ է իրենից ներկայացրել այդ ասև ժամանակաշրջանը»<sup>2</sup>:

Իր այս երկի մեջ Բ. Ալավին աշխատում է ստեղծել իրակա-

<sup>1</sup> بزرك علوی. ورق باره های زندان، تم ۱۹۴۲

<sup>2</sup> Այսպես է անվանում Բ. Ալավին ռեզաշահյան 20-ամյա իշխանության շրջանը:

նության լայն մի պանորամա: Նա պատկերում է իրանական բան-  
տի առանձնահատկություններն իր վարք ու բարքով: Հեղինակը  
ձգտում է ստեղծել ոչ թե առանձին անհատական կերպարներ, այլ  
բանտում տառապող մասսաների ըմբոստ ոգին, նրանց անդու-  
պայքարը թե՛ բանտից ներս և թե՛ բանտից դուրս եղած բռնապե-  
տական արհամիտքների դեմ:

Ժողովածուի մեջ իր կոմպոզիցիայով ու հոգեբանական նուրբ  
ճաշակով աչքի է ընկնում «Գիսաստղ» պատմվածքը:

Ռեզաշահյան ոստիկանությունը ձերբակալում է դեմոկրատա-  
կան հակումներով տարված Իրաշին նրա ամուսնության երեկոյին:  
Աղջկա հայրը պատահամբ այդ լուրը ստանում է, այն ժամանակ,  
երբ արդեն բոլոր հյուրերը հավաքված սպասում էին Իրաշին:  
Չցանկանալով սգի վերածել իր աղջկա կյանքի ամենաերջանիկ  
օրը, հայրը հայտարարում է հյուրերին, որ Իրաշը շատ անհրա-  
ժեշտ գործի պատճառով ուշանալու է, և որ ուրախությունը կշա-  
րուփակվի:

Իրաշի նման ազատամիտ երիտասարդներով լի են իրանական  
բանտերը: Նրանց խոշտանգումների են ենթարկում, որովհետև  
նրանք համարձակորեն հայտարարում են «...միջազգային իմպե-  
րիալիզմը ճնշում, տշնչացնում է աշխատավոր ժողովրդին»<sup>1</sup>:

Իրաշի կամքի տոկոսությունը դրսևորում է նրա գաղափարա-  
կան կուռ համոզմունքները: «Ծն կդիմանամ,— հայտարարում է  
նա,— դուք ինձ չեք կոտրի: Ինչո՞ւ եք ուզում ոչնչացնել ինձ, միայն  
նրա համար, որ ես ասում եմ այն, ինչում համոզված եմ—Իրանի  
ժողովրդին դուք դեպի անկում եք տանում»<sup>2</sup>:

Հրաշունչ պաթոսով է կերտել հեղինակն իր 53 հոգու հերոսա-  
կան կերպարները համանուն գեղարվեստա-հրապարակախոսական  
երկում<sup>3</sup>:

Բանտում իշխող մուսլիմ ընդհանրապես ֆոնի վրա, Ալավին վար-  
պետ վրձինով նկարագրում է 53 - հոգու պայծառ կերպարները:  
Իրանի տառապյալ ժողովրդի շահերի պաշտպանությունը ոգեշնչ-  
ում է նրանց ավելի աննկուն մնալ բանտի դժոխային խոշտան-  
գումների դեմ: Փաղտնի ոստիկանությունը ամեն միշտ գործա-  
դրում է մեղադրելու նրանց հայրենիքի դավաճանության մեջ և  
որպես կոմունիստների դատապարտելու ցմահ բանտարկության:

<sup>1</sup> «Շուշաբեր բանտից», էջ 29:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>3</sup> بزركعلوی، «نپناه و سافر» تعان ۱۹۴۲

նայած որ դատարանի շինվելի անդամներից և ոչ մեկը գաղա-  
փար անգամ չունեն կոմունիզմի մասին: «Փաղտնի ոստիկանու-  
թյունը,— գրում է Ալավին,— կոմունիստների շարքին էր դասում  
նույնիսկ Կարմիրն է Ֆրեյդին...»:

Հեղինակը ոգևորությամբ է խոսում Իրանի դեմոկրատների  
վեհանձն ղեկավար հռչակավոր հասարակական գործիչ դոկտոր  
Թ. էրսանիի մասին:

Այդ հերոսը մինչև վերջին շունչը ոգևորում է ընկերներին,  
խրախուսում նրանց, որ շուտահաստվեն ամենածանր դժվարու-  
թյունների առաջ, քանի որ հաղթանակողը ճշմարտությունն է:  
Ալավին սրբությամբ է պահում դոկտոր Թ. էրսանիի հիշատակը, նրա  
պատգամներն ու ազնիվ ցանկությունները: Ալավին գրում է.

«Դոկտոր, հանգիստ եղիր: Մենք անգործ չենք նստել: Մենք  
աշխատում ենք կատարել քո պատգամները և վաղ թե ուշ կգա  
այն օրը, երբ մենք կիրականացնենք մեր ձգտումները, որոնք միև-  
նույն ժամանակ քոնն էին»<sup>1</sup>:

Բ. Ալավին պատմվածքներում իրենց ուրույն տեղն են գրա-  
վում կանանց հերոսական կերպարները: Սոցիալական հակասու-  
թյունների բախման պրոցեսում ճիշտ է նրանք երբեմն մնում են  
միայնակ ու անօգնական: Հակադիր ուժերի անհավասարությունը  
ճնշում է նրանց, դուրս է նետում հասարակական կյանքից: Ան-  
մականեր<sup>2</sup> պատմվածքում հանձին Շիրինի առաջին անգամ իրա-  
նական գրականության մեջ տեսնում ենք ժողովրդի շահերի հա-  
մար մարտնչող, փողն ու հարստությունը արհամարհող իրանա-  
կան կնոջ կերպարը: Վեհանձն ու բարձր սկզբունքի տեր այդ երի-  
տասարգ աղջիկը ատելությամբ է լցված իր արկածախնդիր ու  
ծայր աստիճան շահամոլ հարազատ հոր դեմ: Նրա համար զգվելի  
է խարդախ ճանապարհներով դիզած հոր հարստությունը: Շիրինը  
անդրդվելի է հոր աղերսանքների առաջ՝ տոմս վերադառնալ: Ժո-  
ղովրդին ծառայելու սրբազան գործը նա ավելի բարձր է գնահա-  
տում քան այն ճոխ ու հանգստավետ ապրուստի պայմանները, որը  
«ստեղծել է» նրա համար հայրը: Շիրինը մենակ չէ: Նա հարել է  
ժողովրդական պարտիայի անլեզալ կազմակերպությանը: Շիրի-  
նին չեն սարսափեցնում բանտն ու աքսորը, քանի որ նա կանգնած  
է իր ժողովրդի ազատության ճանապարհին:

Փաղափարական նույն սկզբունքով է գործում նաև Աշրաֆը,

<sup>1</sup> -58 հոգին», էջ 207:

<sup>2</sup> بزرك علوی، نامه‌ها، تهران ۱۹۵۲

«Դավաճան» պատմվածքում: «Մարդը պետք է լինի հասարակության սնդամ, անհատական շահերը չպետք է գերազանցեն հասարակական շահերին: Անհատները չեն ղեկավարում ժողովրդին»<sup>1</sup>: Ահա այն համոզմունքները, որոնցով առաջնորդվում է Աշրաֆը:

Մահլաղա-խանումը «Խայտառակություն» պատմվածքում հյուրերի առաջ դեմոնստրատիվ ձևով մերկացնում է իր ամուսին՝ Դորոսաֆարի «հեղինակության» ամբողջ գաղտնիքը:

Բողոքը Ալավիի պատկերած գյուղացի հերոսները թեև ճշմարտության մեջ, խարխափում են խավարի ու տգիտության մեջ, սակայն չեն հաշտվում իրենց վիճակի հետ: Կարևորն այն է, որ նրանց բողոքը ելնում է գյուղի ընդհանուր շահերից: Նրանք բողոքում են գյուղում տիրող խավարի, աղքատության ու շահագործման դեմ, գյուղն ու գյուղացուն մտացած քաղաքի դեմ:

Ծերունի Մաջ-Հուսեյնալին («Դեզաշուբ») <sup>2</sup> երեսուն տարի շարունակ մեջքն է ծռել ու մշակել աղայի այգին: Հենց այդ հետամնաց գյուղում էլ ծերունի այգեգործը տեսել է իրանական գյուղի կյանքը նրա իրական լույսի տակ, որտեղ և սկսվել են Մաջ-Հուսեյնալու մտքում բուն գնել նոր գաղափարներ ու նոր ցանկություններ: Երեսուն տարվա ընթացքում այդ ծերունին տեսել էր, թե ինչպես Թահրանից մղոններ հեռու գտնվող այդ գյուղում ապրում է մի ամբողջ ժողովուրդ, որի վրա ծանրացած է կյանքի ամենադժվար բեռը: Այդ մարդկանց գոյությունը կարծես նվիրաբերվել է զոհաբերության: Ազնիվ այդ ծերունին ոչինչ չի խնայում, տրպեսզի իր աղջիկը՝ Համիդեն քաղաքում բժշկություն սովորելուց հետո, վերադառնա գյուղ ու փրկի բնակչությանը հիվանդությունից ու մահից:

Այդ դառը իրականությունը լավ է ըմբռնում նաև «Ջուր» պատմվածքի հերոս՝ Ջաֆարը: Անարդարությունների դեմ պայքարելու պատճառով նա բանտարկվել, գանահարվել ու աքսորվել է: Նստած շոր բլրի վրա, հայացքը նետած դեպի մերկ ու անջրտի դաշտերը, նրա հիշողության մեջ արթնանում է գյուղացի երիտասարդ Թահրանի արևախանձ դեմքը: Թահրան գյուղի խանն ու ռեսը վռնդել էին գյուղից, զրկել տնտեսությունից, նրա նշանածին ձեռք ձգելու համար: Քաղցած ու ծարավ Թահրանը մեռել էր անապատի այրող արևի տակ:

Մեծ ոգևորությամբ է կերտված Գիլեցու հերոսական կերպարը:

<sup>1</sup> Նամակներ, էջ 187:

<sup>2</sup> Գյուղ՝ Թահրանի շրջակայքում:

«Գիլեցի» պատմվածքում: Երիտասարդ Գիլեցին համագյուղացի-  
ների հետ մեկտեղ ապստամբել է տարիներ շարունակ գյուղը թա-  
լանող ֆեոդալ տերերի դեմ: Նրանք արդեն լավ են հասկանում  
ժանդարմների կատարած անիրավությունները: «Դուք մեզ թալա-  
նում եք,— ասում են գյուղացիները,— վրնդում եք մեր տնից ու  
տեղից... Ձերբակալում եք գյուղացիներին: Էլ ոչ մի տնտեսու-  
թյուն չթողեցիք մեզ համար»:

Բողոք Ալավիի ստեղծագործության մեջ ուշագրավ են նույն-  
պես նրա սատիրական պատմվածքները, տրտեղ հեղինակն աշխա-  
տել է Իրանի ժողովրդին ներկայացնել հասարակության ընդերքում  
գոյություն ունեցող արատները, դրսևորելով նրանց իր կերտած  
բացասական հերոսների բնավորության գծերի ու սովորույթունե-  
րի մեջ:

«Պճնամուլ»<sup>1</sup> պատմվածքը Բ. Ալավին գրել է դեռ 30-ական  
թվականներին: Այն տեղավորված էր նրա «Չամադան» ժողովա-  
ծուրի մեջ:

30-ական թվականները դա մի ժամանակաշրջան էր, երբ  
Իրանի պրոգրեսիվ հասարակայնությունը մտահոգում էր երկրի  
տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը: Իրանական  
առաջավոր ինտելիգենցիան, այդ թվում և դեմոկրատ գրողները  
ուղիներ էին փնտրում կապ հաստատելու ժողովրդի հետ, ձգտում  
էին ծառայել իրենց հայրենիքի լուսավորությանն ու ազատու-  
թյանը նպաստող ազնիվ ու պատվավոր գործին:

Մակայն երիտասարդության մեջ քիչ չէին նաև դատարկագը-  
լուկա, բայց լիքը գրպանով մարդիկ, որոնք մի քանի փքուն ֆրազ-  
ներ անգիր արած, իրենց համարում էին ազգային իսկական ինտե-  
լիգենտներ: «Ինտելիգենտ» ֆրազի տակ նրանք հասկանում էին  
եվրոպական ճաշակով հագնվելը: Երգիծարանի մեծ հմտությամբ  
Բողոք Ալավին նկարագրում է այդպիսի մի եսասեր ու դատար-  
կապորտ «ինտելիգենտի»<sup>2</sup> պարոն Նավա-Փուրին:

Այս պճնամուլը ներկայանում է մեզ, որպես մի «կրթված» ու  
«դաստիարակված» մարդ:

Պարոն Նավա-փուրը մտադիր է ձմեռային արտակարգ նորա-  
ձևություն մի վերարկու պատվիրել: Չէ որ պարոնի կարծիքով  
«մարդուս դիրքը հասարակության մեջ մեծ մասամբ պայմանավոր-  
ված է նրա վերարկուով»: Միայն վերարկուի ձևի ընտրության  
համար պարոն Նավա-փուրը ուսումնասիրել է անգլիական և ամե-

<sup>1</sup> «Չամադան», شیک — պատմվածք:

րիկյան մողայի ավելի քան 20 ժուռնալներ, Երկու օր շարունակ բարձր ճաշակի տեր իր «ամկեղծ» ընկերների հետ խորհրդի էր նստել: Պարոն Նավա-փուրը ուսումնասիրել է այն բոլորը, ինչ որ անուղղակի կամ ուղղակի կերպով կապվում էր վերարկու հասկացողության հետ:

Այս պճնամուլի բացասական կերպարը ավելի է ողորմելի դառնում, երբ հեղինակն իր խոր դիտողությամբ նկարագրում է նրա մտավոր պաշարի «հարստությունը»: Զրույցի ժամանակ պարոն Նավա-փուրը սիրում է հաճախ գործածել «Բրիտանական էնցիկլոպեդիա» բառը: Նրա հասկացողությունը Դարվինի մասին սահմանափակվում է այսպիսի «ճշմարտությամբ», որ «Դարվինը այն մեծ հնարագետն էր, որի հնարած մեքենան կապկին հեշտությամբ կերպարանափոխելով մարդ դարձրեց»: Չնայած պարոն Նավա-փուրը որոշել է բանաստեղծ Սաադի նման կյանք վարել, այն է՝ երեսուն տարի ճամփորդել, երեսուն տարի ուսումնասիրել կյանքը և երեսուն տարի էլ ստեղծագործել, բայց նա հանդիսավոր կերպով հայտարարում է, որ ինքն ավելի բարձր է, քան Սաադին, որովհետև «Սաադին չգիտեր անգլերեն, չգիտեր, ո՞վ է էդիսոնը. չգիտեր կովերի արհեստական բեղմնավորման մասին»:

Բ. Ալավիի երգիծանքն այնպես նպատակասլաց է ու թունոտ, որ ընթերցողը ծիծաղելով հանդերձ, միևնույն ժամանակ ակամս կարեկցում է այդ մարդկանց ողորմելիությանը:

Պատմվածքի մեջ հեղինակը չի սահմանափակվում միայն պարոն Նավա-փուրի բացասական կերպարը խարազանելով: Պրճնամուլի զավեշտական այգ կերպարի միջոցով Բ. Ալավին պարսավանքի ու ծաղրի է ենթարկում Իրանի հասարակական կյանքում բո՞նս դրած թերի կողմերը: Նա ցույց է տալիս ժողովրդի շահերը վնասող կեղծ ինտելիգենտների և գրողների կատարած շարշիական մեքենայությունները, նրանց անգրագիտությունն ու օտարամոլությունը: Օրինակ Նավա-փուրի այն հայտարարությունը,

«ما یاید تر همه چیز از آرزوئی های آریائی نژاد پیرو کنیم»

որ «Մենք պետք է ամեն ինչի մեջ արիական ցեղին պատկանող եվրոպացիների հետևորդը լինենք»:

50-ական թվականներին Բ. Ալավին գրում է իր «Տասներկուսից հինգ րոպե անց» պատմվածքը:

Հեղինակի ուշադրության կենտրոնում են գտնվում կապիտալիստական հասարակության մեջ ապրող երկերեսանի ու զեղծա-

1 Բ. Ալավի, «Զամահան», էջ 109:



րար մարդկանց կերպարները: Երգիծաբանի սուր հայացքով Ալավին կարողանում է գտնել խճճված թելի ծայրը և բաց է անում ամբողջ կծիկը: Կաշառակերությունը սկսվում է պետական ապարատում աշխատող բարձրաստիճան պաշտոնյաներից և աստիճանաբար վարակի պես տարածվում է հիմնարկի ամբողջ աշխատողների մեջ: Նույնիսկ ամենահասարակ դոնապանին էլ ստիպում են, որ հտ շմնա ուրիշներից:

Հիմնարկները, կառավարական աստիճանավորները, պետական թևերը իրար միացած կազմում են մի այնպիսի անանցանելի ցանց, որի մեջ ընկնողը հազիվ է ելք գտնում գլուխն ազատելու:

Ոմն պարոն Քարբար նշանակվել է նոր պաշտոնի՝ անձնագրային կենտրոնական բաժնի վարիչ: Կառավարական թերթերը գովաբանում են նրա «պարտաճանաչությունը», «հայրենասիրությունը» և այդ նոր նշանակումը համարում են առաջադիմական մի մեծ քայլ հիմնարկների կատարելագործման աշխատանքի ճանապարհին: Սակայն իրականությունն այլ է: Պարոն Քարբարը իր շտաբն է հավաքել ստորադաս նախկին աշխատողներին և նոր մեթոդներով է վարում կաշառակերությունը:

Այդ մեթոդներից մեկը այն է, որ ժամը տասներկուսին այցելողներին պատճառաբանում են, թե ընդմիջում է, որովհետև ժամը 12-ից արդեն անց է: Սակայն այդ «անց» թույլները անիմաստ չեն: Յուրաքանչյուր թույլն արժե մեկ թուման փող: Ուրեմն եթե 12-ից անց է հինգ թույլ, դա նշանակում է, որ դիմողը պետք է հինգ թուման կաշառք տա, որպեսզի նրա գործն անմիջապես ընթացք ստանա, այլապես ամիսներ շարունակ պետք է մաշի հիմնարկի դոնները:

Բ. Ալավին իր պատմվածքի սյուժեն վերցրել է Իրանի առօրյա կյանքի իրականությունից: Հեղինակն ուժեղ ցասումով պարսավանքի է ենթարկում բուրժուական կարգերում տիրող բյուրոկրատիզմն ու նրան բնորոշ նողկալի ախտերը:

Հիմնարկի պետերը, պառլամենտի դեպուտատները, պարագիտիզմը գովաբանող կաշառված մամուլը՝ բոլորը աներևույթ թելերով կապված են միմյանց հետ:

Բ. Ալավիի երգիծանքում ցայտուն կերպով արտահայտված են բուրժուական հասարակարգի ընդերքից ելած այդ մարդկանց լացասական կողմերը: Հասարակ մարդը, դոնապանը և ամենաստորին ծառայողը ներկայացված են, որպես սոցիալական կյանքի զոհեր: Կյանքի այդ պայմանները ճահճի պես ներծծում ու կլանում են մարդկանց:

«Միթե ես չգիտեմ, որ իմ դիրեկտորը կաշառակեր է,— ասում է անձնագրային բաժանմունքի պաշտոնյան,— հույս ունենանք, որ կգա ժամանակ, երբ հիմնարկի դիրեկտորները կդադարեն կաշառք վերցնելուց, ես էլ իմ հերթին խոսք եմ տալիս անհապաղ ընթացք առնելու համար դիրեկտորի գործերին, թող դա լինի տասներկուսից անց կամ պակաս»:

Բ. Ալավին իր երգիծական պատմվածքներում չի դիմում միտումնավոր շահագնացությունների կամ գրոտեսկի: Նա նկարագրում է իրականությունը ինչպես որ կա, առանց շինծու ձևերի:

Պետք է ենթադրել, որ Բոգորդ Ալավին դիտավորյալ կերպով է հրաժարվել իր երգիծանքի մեջ հիպերբոլ պատկերներ մտցնելուց: Դա պետք է վերագրել այն բանին, որ Իրանի ժամանակակից զավեշտական թերթերում ու հանդեսներում մասսայաբար տպագրվում են անիմաստ ու էժանագիտական և երբեմն էլ ցինիզմի հասնող բազմաթիվ ոտանավորներ ու ֆելիետոններ, որոնք ընթերցողների մոտ մեծ ծիծաղ են առաջացնում: Այդ երևույթը այնքան տարածում է գտել ժողովրդի մեջ, որ աստիճանաբար նսեմացնելով երգիծանքի ու հումորի բուն նպատակն ու իմաստը վերածել է այն մի ինչ-որ ծիծաղելի ժամանցի:

Բոգորդ Ալավին անշուշտ նկատի է ունեցել այդ հանգամանքը: Հաշվի առնելով իրեն լսող աուդիտորիան նա աշխատել է խուսափել այն հիպերբոլային հնարվոր դետալներից, որոնք կարող էին լուրջ զվարճալից ծիծաղ պատճառել պարսիկ ընթերցողին, շեղելով նրան երգիծանքի սոցիալական խնդիրները շոշափող նշանակությունից:

Գուցե հեղինակի այդ մաներան իշեցնում է նրա երգիծանքի լիարժեք գնահատականը: Բայց և այնպես, Բ. Ալավինի այս երկու հումորեսկ ստեղծագործությունները, դարձյալ վկայում են հեղինակի լավատեսության, լավ ապագային հասնելու նրա շերտ հավատքի մասին:

Բ. Ալավինի գառը ծիծաղը բացահայտում է Իրանի հասարակության մեջ գոյություն ունեցող սուր հակասությունները: Նրա պարզ երգիծանքը պետք է համարել անաչառ քննադատության ձևերից մեկը: Հեզնանքը հեղինակի կողմից միջոց է, որի օգնությամբ նա ձգտում է կենտրոնացնել Իրանի հասարակայնության ուշադրությունը կյանքի մուսյլ ու բացասական կողմերի վրա:

\* \* \*

40-ական թվականների իրանական գեղարվեստական արձակի մանրամասն ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզմունքին, որ իրենց ստեղծագործություններում, ընդհանուր առմամբ, պարսիկ ժամանակակից գրողները արտացոլում են երկրի դասակարգային պայքարի ու սոցիալական կյանքի սուր հակասությունները:

Գրականության զարգացման ներկա էտապում իրանական հեղինակների մոտ դեռևս իրենց պատշաճ արտացոլումը չեն գտել աշխատավորության ու ժողովրդական մասսաների շարժումները, այն դեպքում, երբ իրանական ժողովրդի պայքարի պատմությունը կարող է մատուցել բավականին ուժեղ ու բովանդակալից թեմաներ, որոնց արժարժումը կարող է դրական մեծ նշանակություն ունենալ նոր սերնդի դաստիարակության հարցում: Ընտրված հերոսների կերպարները գլխավորապես հանդիսանում են առաջավոր ինտելիգենցիայի կամ գյուղացիական դասակարգի ներկայացուցիչները: Բանվորի կերպարը շատ հազվագյուտ է արդի իրանական գրականության էջերում: Մինչդեռ Իրանի բանվոր դասակարգը վերջին տարիների ընթացքում զգալիորեն աճել ու ամրապլնդվել է և նրա շարքերում քիչ չեն այնպիսիները, որոնց կերպարների գեղարվեստական մարմնավորումը առավել չափով կարող է հարստացնել նոր գրական ստեղծագործությունների գաղափարական բովանդակությունը: Մյուս կողմից այդ հեղինակների մոտ մասամբ անհամոզեցուցիչ է առաջադեմ գաղափարներով օժտված հերոսների կերպարները: Թվում է, թե նրանք աշխարհ են մտել ուղղուցիտն պայքարի բնածին հատկություններով: Այս հանգամանքը որոշ դեպքերում իշեցնում է ստեղծագործության գեղարվեստական արժեքը, տալով նրան սխեմատիկ բնույթ:

Սակայն Ալավին իր ստեղծագործությամբ որոշ չափով նպաստեց քննադատական ոեալիզմի զարդացմանը իրանական գրականության մեջ:

Բողորգ Ալավին խորապես զգալով սոցիալական կյանքի էական հարցերը, իր ժողովրդի ձգտումներն ու երազանքը, համարձակորեն խարազանեց նաև ժողովրդի թշնամիներին, կաշառված դատավորներին, վաշխառուներին, գյուղական ցեցերին և կեղծ ու դիմակավորված դեմոկրատներին: Նա տեսավ Իրանի աշխատավորության ու առաջավոր ինտելիգենցիայի դառը տանջանքները, անսահմանորեն սիրեց նրանց ու հավատաց նրանց ուժին:

Ալավին շահմանափակվեց միայն իշխող դասակարգի սոսկալի խոցերը ցույց տալով, նա ստեղծեց այնպիսի կերպարներ, որոնք հանդես են գալիս հասարակական կարգերի ստրկացնող գործոնների դեմ: Նրա հերոսները, թեկուզ իրենց ողբերգական վախճանով, միշտ ուժոված են նորի, առաջավոր գաղափարների համար մարտնչողի բարձր հատկանիշներով:

Ակնհայտ է այն փաստը, որ Բ. Ալավին տեսնում է իրանական ժողովրդի դիմաց կանգնած մի ընդհանուր անբարիշտ թշնամի— կապիտալիստական հասարակարգը: Ակնհայտ մարդիկ որքան էլ նրանք հանցավոր լինեն և դժբախտ, հասարակական կյանքի գոհ են:

Г. О. МОВСЕСЯН

## ОБРАЗ НОВОГО ГЕРОЯ В НОВЕЛЛАХ БОЗОРГА АЛАВИ

### Р е з ю м е

В годы второй мировой войны, после падения деспотического режима Реза-шаха, развитие демократических сил в Иране позволило прогрессивным писателям смелее выражать свои взгляды. В этот период впервые обнаруживается тенденция поставить литературу на службу народным интересам.

В борьбе против внутренней реакции и англо-американских империалистов появляется ряд передовых писателей, которые стремятся правдиво отразить события внутри страны и освободительную борьбу родного народа.

Одним из лучших писателей послевоенного периода по праву считается известный прозаик Бозорг Алави. В своих произведениях он бесстрашно бичевал врагов народа — продажных судей, взяточников и лжедемократов. Вместе с тем Б. Алави создал образы прогрессивных героев, выступавших против реакционных общественных порядков и традиций.

В его новеллах мы видим истинных сынов Ирана, стоящих на страже интересов народа. Герои Б. Алави наделены качествами, присущими борцам за новое, людям, не боящимся трудностей и смело смотрящим в будущее. Им чужды ограниченность, пассивное мироощущение и эгоизм. Эти герои были списаны писателем с жизни, где он зорким глазом подмечал все новое, растущее и прогрессивное.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ն. Ն. Հովնաճեհյան—Իրաքի աշխատավորների 1952 թվականի ելույթները և նրանց տեղը Իրաքի ազգային-ազատագրական շարժումները պատմության մեջ	5
Շ. Խ. Մճյան—Իրաքում քրդական ազգային ազատագրական շարժման հույսատերազմյան պատմությունից	24
Հ. Կ. Քուրյանց—Նավթի արարական կոնֆերանսները	44
Հ. Խ. Քոփուզյան—Հայ աշխատավորության մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-դեմոկրատական շարժումներին 1947—1952 թթ.	65
Ռ. Գ. Կոնդակչյան—Միջպարտիական պայքարը հույսատերազմյան թուրքիայում և դեմոկրատական պարտիայի անցումը իշխանության դուրս	87
Ռ. Ս. Դանիելյան—Տարրական և միջնակարգ կրթության վիճակը ժամանակակից Թուրքիայում	111
Ռ. Գ. Սանակյան—1920—1923 թթ. Սովետա-թուրքական հարաբերությունների մի քանի հարցերը ժամանակակից թուրք հեղինակների աշխատություններում	129
Ջ. Ս. Կիրակոսյան—Իրանում անգլիական իմպերիալիստական քաղաքականության պատմությունից (1918—1921 թթ.)	150
Ն. Յ. Լյուդշովեյա—Թուրքական ձախ սոցիալիստների կոնֆերենցիան Մոսկվայում 1918 թ. ամռանը	174
Հ. Մ. Եզանյան—Իրանում վակֆային հողատիրության ինստիտուտի պատմությունից	198
Հ. Գ. Ինճիկյան—Որիտասարգ թուրքերի շարժման զնահատականի շուրջը (Բ. Կնունյանցը երիտասարգ թուրքերի հեղափոխության մասին)	216
Բ. Գ. Բալայան—Միջազգային հարաբերությունները Արևելքում առևտրական հարկերի պատերազմի նախօրյակին	240
Տ. Հ. Հակոբյան—Ուշ-ֆեոդալիզմի դարաշրջանում (XVII—XVIII դդ.) Արևելքի երկրների զարգացման մի քանի առանձնահատկությունների մասին	262
Ա. Խ. Սաֆրառյան—XVII դարի թուրքական գիտական մտքի ներկայացուցիչներ Քյաթիբ Չելեբին և Էվլիա Չելեբին	283
Հ. Քուրյան—XI—XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից	301
Գ. Բ. Ակոսով—Քրդերի առաջացման պրոբլեմի մի քանի ասպեկտները հին իրանական դիցարանության լույսի տակ	313
Ա. Հ. Բուլայան—Սադեզ Հեղայաթի ոռոգումը	350
Հ. Հ. Մոսիսյան—Նոր հերոսի կերպարը Բոզորգ Ալավիի նովելներում	366

## СОДЕРЖАНИЕ

Н. О. Оганесян—Выступления трудящихся Ирака в 1952 году и их место в истории национально-освободительного движения в Ираке . . . . .	5
Ш. Худо (Мгоян)—Из истории послевоенного национально-освободительного движения курдов в Ираке . . . . .	24
А. К. Трянц—Арабские конференции по нефти . . . . .	44
О. Х. Топузян—Участие армянских трудящихся в национально-демократических движениях Сирии и Ливана (1947—1952 гг.). . . . .	65
Р. П. Кондакчян—Межпартийная борьба в послевоенной Турции и приход к власти Демократической партии . . . . .	87
Р. С. Даннелян—Состояние начального и среднего образования в современной Турции . . . . .	111
Р. Г. Саакян—Некоторые вопросы советско-турецких отношений 1920—1923 годов в трудах современных турецких авторов . . . . .	129
Дж. С. Киракосян—Из истории английской империалистической политики в Иране (1918—1921 гг.) . . . . .	150
Е. Ф. Лудшувейт—Конференция левых турецких социалистов в Москве летом 1918 года . . . . .	174
Г. М. Еганян—Из истории вакуфного землевладения в Иране . . . . .	193
О. Г. Инджикян—К оценке младотурецкого движения. (Б. Кнунянц о младотурецкой революции) . . . . .	216
Б. П. Балаян—К международным отношениям на Востоке накануне второй русско-иранской войны . . . . .	240
Т. А. Акопян—О некоторых особенностях развития стран Востока в эпоху позднего феодализма (XVII—XVIII вв.) . . . . .	262
А. Х. Сафрастян—Представители турецкой мысли 17 века Кятиб Челеби и Эвлия Челеби . . . . .	283
А. Туршян—Из истории египетской армянской колонии X—XI веков	301
Г. Б. Акопов—Некоторые аспекты проблемы происхождения курдов в свете данных древнеиранской мифологии . . . . .	318
А. А. Будагян—Реализм Садега Хедаята . . . . .	350
Г. О. Мовсесян—Образ нового героя в новеллах Бозорга Алавл	366



Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ տրեւելագիտական սեկտորի  
գիտական խորհրդի հանձնարարությամբ

Հրատ. խմբագիր՝ Ս. Ա. Անաստասյան  
Նկարչական ձեւավորումը՝ Կ. Թ. Տիրատուրյանի  
Տեխ. խմբագիր՝ Հ. Լ. Գորոյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Փ. Հ. Մադանյան


---

ՎՖ 06514, ԽՀԽ № 803, հրատ. № 2236, պատվեր 378, տիրած 1006

Հանձնված է արտադրության 24/IV 1968 թ., ստորագրված է տպա-  
դրության 24/1 1964 թ., տպագր. 23,75 մամուլ, հրատ. 20  
մամուլ, թուղթ 60×92<sup>1</sup>/<sub>16</sub>: Գինը կազմով 1 ա. 60 կոպ.:

---

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան,  
Բարեկամության 24:





О П Е Ч А Т К И  
Հ Ր Ի Պ Ա Կ Է Ե Ր

Стр. Եջ	Строка Տող	Напечатано Տպագրված է	Следует читать Պետք է լինի
19 23	1 снизу 6 сверху	նոյեմբերի 28-ին место в национально- освободительном дви- жение	նոյեմբերի 22-ին место в истории национально-освободительного движения
25, 28, 29 111	сноска сноска	Longriss Lucy	Longrigg Lucy
198	сноска	انطباعات	انطباعات
209 241	3 снизу 10 снизу	ղրված են русско-иранской войны английская	ցրված են в размере 200 тысяч ту- манов <sup>1</sup> и что «
286	14 снизу	Міное	Міног
299	15 снизу	Անաստիանի	Անաստիանի
317	10 сверху	X—XI веков	XI—XII веков
324	15 сверху	Переполис	Персеполис
347	сноска	معاصر	معاصر
351	7 сверху	«Գինգանի ջուր»	«Անտահանի ջուր»
362	13 сверху	»	»
362	14 сверху	«Արե Գինգե»	«Արե Գինգեգի»
364	4 сверху	«Բուֆե քուր»	«Բուֆե քուր»
365	15 сверху	Алявий	Алявийе
368	13 снизу	میدانند، توهای	میدانند، قوهای
379	3 сверху	շարժումները	շարժումների